15327

321
4-37

1906

Ֆ. Ազգագրության
26 SEP 2006
15 JAN 2010
321
Կ-37
12402

ԿԱՈՒՑԿԻ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Թարգ. ԽԱՆՁԱՍՏԱՆ

1906
Տպարան «ՀԵՐՄԻՆԷ» Ադրբեջան վիլ. Ն. Ֆ.
ԹԻՖԼԻՍ


ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Государственная Публичная Библиотека
(21)

20 MAY 2013

15327

4-37

83



ԿԱՄՈՒՑԿԻ

(Արտատպված «ՄՇԱԿ» լրագրից)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
Գոս. Գրադարան
ՀՍՍՀ-ԱրՄԿԿԻ
իմ. А. Мясн...
Մ. ՄԱՍՈՒՆԻԱՆԻ

9735-71

Անմիջական օրէնսդրութիւնը նախնական ժամանակներում

I

Ժողովրդային անմիջական օրէնսդրութեան կոչնակիցները սիրով օրինակ են բերում նախնի ժամանակները։ Նամանաւանդ նրանք օրինակ են բերում գերմանացիներին, ինչպէս որ նրանց նկարագրել են Տացիտը և Ցեզարը, և իսկոյն նկարագրում են այն հասարակական կազմակերպութեան ազատ ու երջանիկ պայմանների պատկերը, որ գոյութիւն ունէր մինչ այն ժամանակ, երբ պատմութեան ընթացքը վերջ դրեց ժողովրդային անմիջական օրէնսդրութեանը։ Քննենք մենք էլ այդ ժամանակները։ Քննելով ժողովրդային օրէնսդրութեան հիմունքները և նրա անկման պատճառները, մենք միևնոյն ժամանակ մեզ համար կը պարզենք և մի քանի այնպիսի հանգամանքներ, որոնք կարևոր են հասկանալու համար և ներկայումս կատարվող շարժումը յօգուտ ժողովրդային օրէնսդրութեան։

Ժողովրդային օրէնսդրութեան մասին, այս բառի իսկական իմաստով, խօսք էլ չէ կարող

լինել Ցեզարի ժամանակվայ գերմանացիների մօտ, ինչպէս և այլ ժողովուրդների մօտ, որոնք կուլտուրական զարգացման նոյն աստիճանի վրա էին կանգնած։ Զարգացման այդ աստիճանում դեռևս օրէնքները գոյութիւն չունեն։ Նախկին գերմանացիների ժողովրդային ժողովների դերը շատ քիչ է նմանում այն բանին, ինչ հիմա օրէնսդրութիւն է անուանվում։ Իսկապէս, ցեղի ազատ զինուորների ժողովը իրանից բարձրագոյն ատեանն էր ներկայացնում վճռելու համար այն բոլոր գործերը, ինչ որ ցեղին էր վերաբերում։ Այդ ժողովը պաշտօնեաներ էր ընտրում, դատում էր յանցաւորներին, լուծում էր ցեղի անդամների մէջ ծագած վէճերը, որոշում էր ցեղի յարաբերութիւնները դէպի ուրիշ ցեղերը և այլն։ Որովհետև այն ժամանակվայ հասարակական յարաբերութիւնները անփոփոխ էին մնում հարիւրաւոր տարիների ընթացքում, ուստի և ցեղի քննութեանը ներկայացված գործերն էլ առհասարակ նոյնանման էին։ Այդ պատճառով էլ գործերը վճռելու ժամանակ ժողովներում մեծ դեր էին կատարում սովորութիւնները և ցեղի ծերերը, որոնք իրանց յիշողութեան մէջ լաւ էին պահել սովորութիւնները։

Ինչպէս որ ամբողջ ցեղին վերաբերեալ գործերի համար բարձրագոյն ատեանը ցեղային ժողովն էր, այնպէս էլ ցեղի մի որևէ մասի համար բարձրագոյն ատեանը այդ մասի զինուորների ժողովն էր համարվում։

Եթէ մենք քննենք զարգացման աւելի առաջ եղած աստիճանը, այն աստիճանը, օրինակի համար, որի վրա կանգնած էին Հիւսիսային Ամերիկայի հնդիկները, Ամերիկան գտնելու ժամանակ, մենք կը տեսնենք, որ այստեղ աւելի դեմօկրատական կարգեր կային. այստեղ կանայք էլ իրաւունք ունէին ժողովրդային ժողովներում մասնակցելու։

Այսպէս ուրեմն, Ցեզարի և նոյն իսկ Տացիտի ժամանակների գերմանացիների մօտ, որոնց մեծ մասամբ օրինակ են բերում ժողովրդային անմիջական օրէնսդրութեան կողմնակիցները, «ժողովուրդ» բառի հասկացողութիւնը արդէն սահմանափակված էր։ Այդ հասկացողութեան մէջ մտնում էին միայն արդամարդիկ և այն էլ ոչ բոլորը, առանց բացառութեան. այստեղ-այնտեղ մենք պատահում ենք և ոչ ազատ տղամարդկանց, որոնք զրկված էին քաղաքական իրաւունքներից։

Արդ՝ ինչպէս պատահեց, որ կանանց դուրս գցեցին ժողովրդի միջից։ Այդ հարցի սովորական պատասխանը բռնութեան թէօրիան է, որի միջոցով շատ սիրում են բացատրել ըստ մեծի մասին ամեն մի հարստահարութիւն, կատարված մի դասակարգի ձեռքով միւսի վերաբերեալ. տղամարդիկ, իբրև աւելի ուժեղներ, հպատակեցրել են կանանց։ Այս բացատրութիւնը կարելի է թոյլ տալ—եթէ ներկայ կարգերի կողմնակիցներից ոմանք ընդունում են այդ թէօրիան — իբրև

եղրակացութիւն Դարվինի թէօրիայի։ Եւ որովհետև առանձին ինդիվիդների մէջ եղած ոյժի ու ժառանգական ընդունակութիւնների անհաւասարութիւնը միշտ եղել է և, հաւանական է, որ միշտ էլ կը լինի, ուստի այդ թէօրիան ոչ այլ ինչ է նշանակում, եթէ ոչ այն, որ հասարակական անհաւասարութիւնների հիմքը հէնց բնութեան մէջ գոյութիւն ունի և այդ անհաւասարութիւնները կը մնան մշտապէս։ Ամենաշատը այն կարող է լինել, որ դրանք իրանց ձևերը միայն կը փոխեն։ Բնութեան թէօրիայի այս եղրակացութիւնները ի նկատի առնելով, բոլորովին անհասկանալի է դառնում, թէ ինչո՞ւ դասակարգային անհաւասարութիւնների հակառակորդները այդ թէօրիային գերակշիռ նշանակութիւն են տալիս։ Բնութեան թէօրիան ոչ միայն մխիթարական չէ, այլ և ոչինչ չի էլ պարզում։ Եթէ մենք կարող ենք այդ թէօրիայից այնպիսի եղրակացութիւն անել, որ դասակարգային անհաւասարութիւնների հիմքը հէնց բնութեան մէջ է, որ այդ անհաւասարութիւնները մշտնջենական են, ուրեմն աւելի հեռուն գնալով, մենք կարող ենք այդ եղրակացութեանը յանգել, որ անհաւասարութիւնները միշտ գոյութիւն են ունեցել այն ժամանակից ի վեր, ինչ մարդկութիւնը գոյութիւն ունի։ Մինչդեռ, մենք գիտենք, որ այդ ճիշտ չէ։ Մենք նոյն իսկ աւելին գիտենք. գիտենք, որ նախնական հաւասարութիւնը միայն կամաց-

կամաց տեղի է տուել անհաւասարութեանը, և որ այդ ուղղութեամբ կատարված ամեն մի քայլը համապատասխան է եղել կուլտուրական զարգացման մի որոշ աստիճանին։ Աւելի ուժեղների և նուազ ուժեղների, աւելի ընդունակների և նուազ ընդունակների միջև ադած տարբերութիւնները միշտ եղել են և կը լինեն, և դրանք երբէք չեն կարող պարզել, թէ ինչու բոլոր ժողովուրդների մէջ, այս կամ այն կուլտուրական աստիճանում, այս կամ այն, իբր թէ, աւելի ուժեղ և խելօք մարդկանց խումբը պահանջ է զգացել հպատակեցնել աւելի յիմարներին ու թոյլերին և թէ ինչո՞ւ այդ բանը աջողվել է անել հէնց այս կամ այն զարգացման աստիճանում։ Այդ բացատրութիւնը պէտք է փնտռել, ի հարկէ, ոչ թէ «մարդու բնութեան» մէջ, այլ կուլտուրական զարգացման աստիճանի առանձնայատկութիւնների մէջ։ Միմիայն այդ առանձնայատկութիւնները, և ոչ թէ բնութեան թէօրիան, կարող են մեզ բանալի տալ հասկանալու այն դասակարգային անհաւասարութիւնները, որ առաջ են եկել այս կամ այն ժամանակ։

Բայց կուլտուրական զարգացման իւրաքանչիւր աստիճանի առանձնայատկութիւնների հիմքը կազմում է այդ աստիճանին յատուկ արդիւնաբերական եղանակը։ Այս վերջինիցն են բացատրվում զանազան դասակարգերի կատարած յատուկ հասարակական ֆունկցիաները, իսկ իւրաքանչիւր դասակար-

գի կատարած ֆունկցիան որոշում է նրա դերը հասարակութեան մէջ։

Աշխատանքի առաջին բաժանումը, որ մենք նկատում ենք պատմութեան մէջ, տեղի է ունեցել տղամարդի և կնոջ միջև։ Վայրենիութեան բարձր աստիճաններում միայն սկսեց զարգանալ տնային կեանքը և տնային գործեր վարելը կնոջը բաժին դարձաւ։ Տանից դուրս պղտոյքներ հայթայթելը աւելի ու աւելի տղամարգի բացառիկ գործը եղաւ։ Մենք կարող ենք միայն ենթադրութիւններ անել, թէ ինչ պատճառներ են ազդել այդ հանգամանքի վրա։ Բարբարոսութեան ամբողջ երկար ժամանակաշրջանում տեխնիկական առաջադիմութիւնը գլխաւորաբար կատարվում էր տնային աշխատանքների շրջանում, որոնց կատարողները կանայք էին։ Այդ պատճառով էլ կանանց աշխատանքի շրջանը բաւականին մեծացաւ։ Այն ժամանակներում թէ խաշնարածութիւնը և թէ հողագործութիւնը, որոնք դեռ ևս սազմային դրութեան մէջ էին գտնվում, կանանց աշխատանքի շրջանի մէջ էին մտնում։ Եւ այդ շրջանի մէջ էին մտնում և հում նիւթերից շաւելի պատրաստութիւնը, հիւսվածքներ կատարելը, ջուլհակութիւնը, կաւէ ամաններ պատրաստելը և այլն։ Մի քանի ցեղերի մէջ մինչև իսկ տուն շինելու ղժուարին գործն էլ բացառապէս կանայք էին կատարում։

Իսկ տղամարդկանց աշխատանքները բարբարոսութեան շրջանում շատ աննշան չափով և համեմատաբար չէին աւելանում։ Տղամարդիկ մընում են նոյնը, ինչ որ առաջ էին.—գիսւորներ և որսորդներ։ Այն տեղերում միայն, որտեղ խաշնարածութիւնը մեծ ծաւալ է ընդունում, տղամարդիկ էլ սկսում են արդէն այդ գործով զբաղվել, բայց այդ էլ միայն երիտասարդութիւնն է անում, որոնք դեռ զինուոր լինելու հասակին չեն հասել։ Զարմանալու ոչինչ չը կայ, եթէ զարգացման այդ աստիճանում կինը, տղամարդու համեմատութեամբ, մի տեսակ բեռնակիր կենդանի է դառնում։ Նա այնչափ բեռնաւորված է աշխատանքով, որ ժամանակ չէ մնում հասարակական գործերով զբաղվելու համար։ Բացի դրանից, նա չէ կարող երկար ժամանակով տանից բացակայել, որովհետև նրա ներկայութիւնը տան մէջ անհրաժեշտ է ամեն օր, նոյնիսկ ամեն ժամ։ Այդ պատճառով էլ, բարբարոսութեան շրջանի ընթացքում, կինը աւելի ու աւելի հեռանում է հասարակական կեանքից և հասարակական գործերին մասնակցում է միայն տղամարդկանց—իբրև իր ներկայացուցիչների—միջոցով, և վերջն էլ այլևս բոլորովին չէ մասնակցում։

Տղամարդը բոլորովին այլ դրութեան մէջ է գտնվում։ Նրա ներկայութիւնը տանը անհրաժեշտ չէ, նա կարող է բացակայել ամբողջ օրեր և շաբաթներ, և դրա պատճառով նրա տնտեսութիւնը ոչ մի վնաս չի կրի։

Եւ կուլտուրական զարգացման այդ աստի-

ճանուց տղամարդը կարող է իր ամբողջ ժամանակը հասարակական կեանքին նուիրել, ինչպէս նա անում էր վայրենութեան ժամանակաշրջանում. եթէ միայն կարելի է ասել, թէ այդ շրջանում հասարակական կեանք կար։ Բարբարոսութեան աւելի բարձր աստիճանում տղամարդը շատ աւելի աղատ ժամանակ ունի, քան առաջներում, չնորհիւ այն հանգամանքի, որ կնոջ աշխատանքը շատացել է և, այդ ժամանակներում, երբեմն արդէն օգտվում են և ստրուկ օգնականների աշխատանքով։ Այսպիսով, ժամանակների ընթացքում տղամարդկանց մէջ մի շատ վառվռուն, դեմօկրատական կեանք ենք նկատում, յաճախակի ամեն տեսակ ժողովներ են տեղի ունենում, որոնք ընդմիջվում են կռիւներով, ժողովներ, ուր ժողովուրդը քննում ու որոշում է ամեն կարգի գործեր։

Որչափ տնային աշխատանքը քիչ էր կապում տղամարդկանց, այն չափ էլ ընդարձակ ծաւալ էր կարողանում ստանալ հասարակական կեանքը, առանց մազաչափ անգամ կորցնելու իր դեմօկրատական հիմքը—«ժողովրդային անմիջական օրէնսդրութիւնը»։ Արդիւնաբերութեան միջոցների առաջադիմութիւնը առաջուանից աւելի մեծ թուով մարդկանց էր միջոց տալիս նոյն տերրիտորիայի վրա իրանց համար ապրուստի միջոցներ գտնել։ Իսկ տնային աշխատանքներից աւելի ու աւելի անկախ դառնալը տղամարդկանց նաև միջոց էր տալիս աւելի ու աւելի հեռաւոր ճանապարհորդութիւններ կատարել ժողովրդային ժողովներում մասնակցելու համար,

Այսպիսով բարբարոսութեան շրջանում աւելի ու աւելի է ընդլայնանում ցեղի սահմանները։ Վերջապէս գործ է այն տեղն է հասնում, որ շատ ցեղեր միանում և մի ժողովուրդ են կազմում, որի ժողովրդային ժողովը, ինչպէս էին ցեղի և տոհմի ժողովները, իրանից մի բարձրագոյն ատեան է ներկայացնում բոլոր հասարակական գործերի համար։

II

Զարկացումը կանգ չէ առնում բարբարոսութեան աստիճանին հասնելուց յետոյ։ Շատ ժողովուրդներ անցել են նրան և քաղաքակրթութեան են հասել։ Հողագործութեան զարգացումը ամենակարևոր խթանն է եղել դրա համար։ Հողագործութիւնը հետզհետէ աւելի ու աւելի առաջնակարգ տեղն է բռնում, իսկ որսորդութիւնն ու խաշնարածութիւնը (ի բաց առեալ այնպիսի տեղերը, որտեղ չափազանց անյարմար է հողագործութեամբ պարապելը) աւելի ու աւելի կորցնում էին իրանց նշանակութիւնը, և, վերջապէս, որսորդութիւնը ուտելիք հայթայթելու միջոցից դառնում է սպորտ, զուարճութեան մի միջոց։ Այդ յեղաշրջումը չափազանց արագութեամբ կատարվեց դերմանների կեանքում նամանաւանդ

հռոմայական կուլտուրայի ազդեցութեամբ, ազգերի տեղափոխութեան ժամանակներում։ Մենք, ի հարկ է, այստեղ չենք զբաղվի այն առանձնայատուկ հանգամանքներով, որ առաջ էին եկել հռոմայական կուլտուրայի ազդեցութեամբ, այլ կը քննենք միայն գերմանական ժողովուրդների զարգացման տիպիքական կողմերը։

Որչափ աւելի հողագործութիւնը, իսկ նրա հետ զուգընթացաբար և խաշնարածութիւնը, փոքրիկ համայնքների կամ նահապետական ընտանիքների համար հասոյթների միակ աղբիւրն էին դառնում, այնչափ աւելի էլ կանայք անկարող էին դառնում իրանց սեփական ոյժերով այդ բոլոր աշխատութիւնները կատարել։ Տայիտի ժամանակներում գիւղատնտեսական աշխատութիւնների մէջ արդէն ստրուկներն էին նրանց օգնում, ինչպէս և ընտանիքի ազատ, բայց զէնք կրելու անընդունակ արական անդամները. երեխաները, պատանիները, ծերերը։ Բայց շուտով գինուորներն էլ են ստիպվում այդ աշխատութիւններով զբաղվել։ Ազգերի տեղափոխութեան ժամանակ որսորդն ու գինուորը արդէն հողագործ է դառնում. հիմա նա էլ է տանը կապված, ինչպէս և կինը, և որովհետև այն ժամանակվայ հողագործութեան զարգացման աստիճանը այլևս թոյլ չէ տալիս բնակարանը տեղից տեղ փոխել, ուստի և այդ ժամանակվանից մարդիկ հողի հետ են կապվում և դառնում են նստակեացներ։

Արդիւնաբերութեան միջոցի մէջ կատարված այդ յեղաշրջումը արմատական փոփոխութիւն է առաջացնում և ամբողջ սոցիալական ու քաղաքական կազմի մէջ։

Կուլտուրական զարգացման աւելի նախկին աստիճաններում պատերազմը աչքի ընկնող դեր էր խաղում արդիւնաբերութեան մէջ. սովորաբար դա մի կոիւ էր արդիւնաբերութեան ամենակարևոր միջոցներ, (տերրիտօրիա (երկիր) ձեռք բերելու համար, որ անհրաժեշտ էին որսորդութեան կամ խաշնարածութեան համար, և որ անհրաժեշտ էր պատերազմով կամ խլել և կամ պաշտպանել։ Այնպիսի տեղերում, ուր մի վայրենի ցեղ դրացի էր լինում քաղաքակրթվածի, վիճելի տերրիտօրիայի համար, բացի պատերազմից, կատարվում էր և յափշտակիչ յարձակումն, մի ձեռնարկութիւն, որը յաղթող բարբարոսներին շատ հարուստ աւար էր բերում։ Այնպիսի բարբարոս ցեղեր կային, որոնց պիտոյքներ ձեռք բերելու ամենագլխաւոր միջոցը քաղաքակրթված հարևաններին կողոպտելու մէջ էր կայանում։

Այդպիսով, գինուոր լինելը այդպիսի հանգամանքների մէջ շատ օգտակար իրաւունք էր համարվում և շատ էժան էր նստում։ Զինուորի համար անհրաժեշտ զէնքը նոյնն էր, ինչ որ անհրաժեշտ էր և որսորդութեան համար, պիտոյքներ ձեռք բերելու այդ ամենակարևոր աղբիւրի համար։ Եւ, ինչպէս որ մենք

արդէն կարողացանք նկատել, պատերազմելու համար ժամանակի պակասութիւն չէր զգացվում։

Ինդիրը բոլորովին այլ կերպարանք է ստանում, երբ թափառաշրջիկ կամ կիսաթափառող որսորդների կամ խաշնարածների ցեղերը նստակեաց հողագործներ են դառնում։ Հողագործը այլ ևս մեծ օգուտներ չէ կարող սպասել պատերազմից։ Պատերազմով ձեռք բերված երկիրը գրաւելու համար նա ստիպված պիտի լինէր ձեռքից թողնել այն, ինչ որ ձեռք էր բերում նա ահագին աշխատանքով։ Կողոպուտն էլ նրան շատ հարուստ աւար չէ խոստանում. նրա դրացիներն էլ կուլտուրական զարգացման նոյն աստիճանի վրա են կանգնած, ինչ և ինքն է, կամ գուցէ և աւելի ստոր աստիճանի վրա։ Բայց եթէ պատերազմից ստացվելիք օգուտները նուազում են, դրա փոխարէն ընդհակառակը չափազանց մեծանում են պատերազմից առաջացած վնասները։

Հողագործութեան համար հնարված արդիւնաբերութեան նոր գործիքները չեն կարող այլևս պատերազմի համար զէնքի դեր կատարել։ Հողագործութեան տեխնիկայի հետ միաժամանակ զարգանում է և պատերազմական տեխնիկան. պատերազմի համար աւելի ևս թանկագին զէնք է պահանջվում, որ բոլորովին անպէտք է աշխատանքի գործածութեան համար։

Բայց ամենակարևոր հանգամանքը հետևեալն է. հողագործը կապված է իր անտեսութեան հետ. այնպիսի ժամանակներ են լինում, երբ նա չէ կարող իր հողը թողնել, առանց ահագին վնաս հասցնելու իր գործին։ Այդ պատճառով էլ երկարժամանակեայ արշաւանքը հողագործի և իր ընտանիքի գոյութիւնը վտանգի են ենթարկում։

Ազատ մարդու զինուորական իրաւունքը, որ առաջ նրա համար պարտութեան առարկայ էր, հիմա դառնում է զինուորական ծառայութիւն, որը գնալով աւելի ու աւելի ծանր է դառնում և հողագործին ահագին պարտքերի մէջ գցելով անանկութեան է հասցնում նրան։

Բայց պատերազմի մասին հարցը որոշվում է հողագործի կամքից բոլորովին անկախ կերպով։ Ջը խօսելով արդէն այն ժամանակաշրջանի գրաւումներ անելու համար կատարված պատերազմների պատճառների մասին, որոնց քննութիւնը ներկայումս աւելորդ տեղը կը բարդացնէր մեր առարկան, պիտի ասենք միայն այն, որ հողագործութեան տրւած բարեկեցութիւնն արդէն մի մեծ և շարունակական պատճառ էր, որպէսզի բարբարոս թափառաշրջիկ ցեղերը միշտ յարձակուէին անէին և այդպիսով ստիպէին հողագործներին՝ երևսի վրա թողնել իրանց գաշտային աշխատանքները, եթէ կասեցնում էին պաշտպանվել։

Ի՞նչպէս պիտի վարվի հողագործը այդպիսի դրութեան մէջ եղած ժամանակ։ Որպէսզի իր

ամբողջ ունեցածից չը զրկվի, նա ստիպված է զոհել այդ ունեցածի մի մասը։ Կուլտուրական զարգացման այդ աստիճանում աշխատանքը արդէն այն աստիճան արդիւնաւէտութեան է հասնում, որ սովորաբար աւելի շատ արդիւնք է տալիս, քան անհրաժեշտ է արդիւնաբերողին ու նրա ընտանիքին։ Արտադրութեան այդ աւելորդը հողագործին միջոց է տալիս իր համար պաշտպանները արձելու։ Մի յատուկ դասակարգի մարնկանց միջոցներ տալով՝ նրանց հողերը մշակելով, նրանց համար տներ շինելով ու քանդվածները նորոգելով, հողագործները այդ մարդկանց միջոց են տալիս նուիրելու պատերազմական արհեստին առանց իրանց տնտեսութեան համար մի որևէ վնաս իրելու, ճիշտ այնպէս, ինչպէս որ բարբարոսութեան շրջանում կանանց աշխատանքը միջոց էր տալիս տղամարդկանց հեռաւոր ճանապարհորդութիւններ կատարելու որսորդական կամ պատերազմական նպատակներով։

Մարդկանց այդ դասակարգը այդ ժամանակիկ ի վեր հողագործներին ազատում է շինւորական ծառայութիւնից և երկրի ու նրա բնակիչների պաշտպանն է հանդիսանում։

Այդպէս է շինւորական կաստայի առաջացման հիմքը։ Այդ կաստաները, նայած թէ ինչպիսի զանազան պատմական պայմանների տակ են առաջ եկել, միմեանցից չափազանց տարբեր ձևեր են ստանում, այդ շինւորական

Ց 735-Ա 9735

արիստոկրատիան կազմվում է կամ ցեղապետներից ու տոհմապետներից և համայնքի այլ պաշտօնեաներից, սրանց շքախմբերով ու ծառաներով հանդերձ, կամ թէ չէ՝ մի բոլորովին այլ բարբարոս ցեղ, զօռով ներս խուժելով երկիրը, այդ պաշտօնը իր վրա է վերցնում, դրա հետ իւրացնելով և ազնուականութեանը յատուկ բոլոր արտօնութիւնները, կամ վարձու հրոսակներն են կատարում այդ դերը և այլն։ Բայց որչափ էլ տարբեր լինեն շինւորական կաստաների ձևերը, այնուամենայնիւ մենք նրանց տեսնում ենք ամեն տեղ, ուր հողագործութիւնը արդէն արդիւնաբերութեան գլխաւոր ճիւղն է դառել,—ի հարկէ, ի բաց առեալ միանգամայն անառիկ ու անմատչելի տեղերը—զարգացման այդ աստիճանում շինւորական կաստան տնտեսական անհրաժեշտութիւն է ներկայացնում։ Դրան բոլորովին չէ հակառում այն հանգամանքը, որ շինւորական կաստաները մեծ մասամբ բռնութեամբ են կազմվում։

Չէ որ այժը նոր հասարակական կազմակերպութեան մայրը չէ, այլ դայեակն է։

Բայց հասարակական վարչութեան, օրէնսդրութեան և դատարանի հետ էլ նոյն բանը պատահեց, ինչ որ շինւորական ծառայութեան հետ էր պատահել։ Հասարակական յարաբերութիւնները գնալով տալիս ու աճում էին, զարգանում էր աշխատանքի բաժանումը, դասակարգային ու

Ա ՍՍՌՄ ԳԱ Գրադարան Ակադեմիկոս Ա. Ա. Օլդենբուրգի անվան Ленинградская Библиотека АН СССР им. акад. С. Ф. Ольденбурга

նալ տարբերութիւններ էին առաջանում, ժառանգաւոր սեփականութիւնը մեծածացաւ թէ քանակով և թէ իր նշանակութեամբ, հասարակութեան մէջ առաջացան միմեանց հակառակ շահեր, հասարակական վարչութեան, օրէնսդրութեան և դատարանի գործերը գնալով աւելի շատանում, բազմակերպ էին դառնում և դժուարանում էին։

Երբեմն-երբեմն այդ գործերը լուծելու համար գումարված ժողովրդային ժողովները, որոնք իրանց վճիռների մէջ ըստժեծի մասին հիմնվում էին հին սովորութիւնների վրա, այլևս բաւարար չէին համարվում։ Այդ ժողովներում քննվելիք խնդիրների բազմանալու հետ միաժամանակ ժողովրդի մէջ պակասում էր և այդ ժողովներին կարգով մասնակցելու ցանկութիւնը, իսկի մէջոց էլ չէր լինում ժողովների գնալու։

Հողագործը գնալով աւելի ու աւելի ձգտում էր իր քաղաքական ու դատաւորական ամենածանր պարտականութիւնները ուրիշներին յանձնել, ի հարկէ, նոյնպէս ոչ առանց դրանց համապատասխան վարձատրութեան, ինչպէս նա արդէն յանձնել էր զինուորական ծառայութիւնը։

Ամենից յարմարն էր՝ այդ պարտականութիւնները յանձնել հէնց այն մարդկանց, որոնք յանձն էին առել զինուորական ծառայութիւնը կատարել։ Իրապէս էլ, մենք նկատում ենք, որ ամեն տեղ, ուր այդ զարգացումը

կատարվում էր առանց այնպիսի հանգամանքի, որ բարձր կուլտուրան ազդող հանդիսանար աւելի ստոր կուլտուրայի վրա, ինչպէս օրինակ՝ եգիպտոսում, սկզբներում թագաւորում էր միայն մէկ դասակարգ կամ կաստա։

Ընդհանրապէս այդ դասակարգը յետակայում այնուամենայնիւ երկու դասակարգի է բաժանվում. զինուորների դասակարգ և այսպէս կոչված քուրմերի դասակարգ, որը վարչական ամենակարևոր գործերը տնօրինողն էր, այն է՝ օրէնսդրութիւնը և դատավարութիւնը։ Առանձնայատուկ պատմական պայմաններում, ինչպէս օրինակ, գերմանացիների մէջ, որոնք հռոմայական կայսրութիւնը ժառանգեցին, այդ դասակարգային բաժանումը մի անգամից է տեղի ունենում։

Այսպիսով, քաղաքակրթութեան սկզբնաւորութեան հետ հին ժողովրդային ազատութիւնները հետզհետէ անհետանում են։ Դրանք անհետացան ոչ թէ տէրտէրների խարդախութեան կամ թագաւորների տիրապետելու ցանկութեան պատճառով, այլ պարզապէս արդիւնաբերութեան միջոցների զարգացման շնորհիւ։ Այսպէս, օրինակ, կարելի է նկատել, որ արևմտեան գերմանացիների մէջ ժողովրդային ազատութիւնների անկման ժամանակ, ազգերի տեղափոխութիւնից յետոյ, առաջին դարերի ընթացքում, թագաւորները և պաշտօնեաները բոլորովին չէին ձգտում ժողո-

վըրդի ազատութիւնները սահմանափակել կամ խլել. ընդհակառակը նրանք միշտ աշխատում էին, որ ժողովուրդը մեծ չափով մասնակցէ իր վարչական գործերի մէջ. նրանք տուգանք էին վերցնում այն անձնաւորութիւններից, որոնք չէին յաճախում ինդիների (ժողովների):

Իսկապէս մինչև որ յատուկ կազմակերպութիւններ չէին առաջացել, որոնք իրանց վրա վերցնէին ժողովրդային ժողովների պարտականութիւնները, այդ ժողովների անկանոն գործունէութիւնը անգին ջնաս էր բերում աճող հասարակական կեանքին: Պատկերը, ի հարկէ, փոխվեց, երբ այդ կազմակերպութիւնները արդէն կազմվեցին և իշխանութեան ու հարստութեան աղբիւր դարձան: Այդ ժամանակվանից ի վեր հին ազատութիւնները վերականգնելու ամեն մի փորձ արդէն համարվում է ոճրագործութիւն ընդդէմ այդ կազմակերպութիւնների իշխանութեան և հարբսատութեան հիմունքների: Միւս կողմից, մի որևէ տեղ դեռ ևս մնացած ժողովրդային ազատութիւնների սահմանափակումը այդ ժամանակվանից ի վեր դարձել է մի միջոց այդ կազմակերպութիւնների իշխանութեան և շահագործութեան սահմանները ընդարձակելու համար: Սակայն հոգևորականութեան և պինդ օրգանական արիստոկրատիայի թագաւորութեան արմատը նրանց անտեսական անհրաժեշտութեան մէջ էր թաղված:

Այնուամենայնիւ, ժողովրդի ազատութիւնը քոլորովին չէ ոչնչանում ամբողջապէս հոգևորականութեան և ազնուականութեան թագաւորութեան ժամանակաընթացքում. Դա սկսվում է միայն բիւրոկրատիական կառավարութեան ժամանակներում: Ժողովրդային ազատութեան շրջանը միայն սահմանափակվում է: Դիւղացիք այլևս ժամանակ և միջոց չունեն մասնակցելու ցեղի և պետի գործերը կարգաւորելու մէջ: Բայց համայնական գործերի վարելը նրանց ձեռքն է մնում: Այդքանն էլ բաւական է նրանց համար: Ամեն մի գիւղական համայնք այժմ մի առանձին անտեսական միութիւն է կազմում, որը առհասարակ, որչափ քիչ առնչութիւն ունի արտաքին աշխարհի հետ, այնչափ էլ իրան աւելի լաւ է զգում: Հետաքրքրութիւնը դէպի ցեղի գործերը, ցեղային զգացմունքը աւելի ու աւելի թուլանում է, համայնքը գիւղացու աշխարհն է դառնում, նրա քաղաքականութիւնը աւելի ու աւելի սահմանափակվում է իր ծովով:

Որչափ այս էվոլիւցիան կատարվում ու զարգանում է, այնչափ աւելի նոր ու նոր հասարակութիւններ, պետութիւններ են առաջ գալիս նախկին ցեղերից ու ցեղային խմբերից, որոնք հետզհետէ կորցնում են իրանց օրգանական ամբողջութիւնը: Քաղաքակրթութիւնից առաջ եղած ժամանակներում ցեղը կազմվում էր նրա անդամների միջև հաստատած անխզելի կապի հիման վրա, իսկ պետու-

թիւնը, որի մասին այստեղ խօսում ենք, ինչպիսին օրինակի համար ներկայացնում է միջնադարեան ֆէօդալական պետութիւնը կամ արևելեան պետութիւններից շատերը, հիմնվում է համարեա թէ բացառապէս տիրապետող դասակարգերի միջև եղած կապի հիման վրա, այն է՝ արիստօկրատիայի և հոգևորականութեան: Առանձին համայնքը ոչ մի օրգանական կապ չունի պետութեան հետ:

Ցեղը կարելի էր ոչնչացնել կամ իր բնակավայրից դուրս քշել, բայց չէր կարելի նրանից ուզած ձևով մասերը անջատել և նրանց ուրիշ ցեղերի միացնել: Ցեղը իրանից մի անխզելի ամբողջութիւն էր ներկայացնում:

Իսկ միջնադարեան կամ արևելեան պետութիւնները իրանցից ներկայացնում են միայն համայնքների ու շրջանների մի-մի պարզ միութիւններ (ագրեգատներ), որոնցից կարելի է ամեն մի համայնք կամ շրջան բաժանել և մի այլ միութեան մէջ մտցնել, առանց համայնքի ներքին յարաբերութիւնների մէջ մի որևէ էական փոփոխութիւն անելու: Մի բաղդատող նուաճող կամ մի որևէ թագաւորող տուն, հեռատեսութեամբ ամուսնութիւն կատարելով, զարգացման այդ աստիճանում, շատ հեշտութեամբ կարող են մի շատ մեծ պետութիւն ստեղծել: Բայց այդպիսի մեծ պետութիւնը նոյն պէս շատ հեշտութեամբ կարող է բաժան-բաժան լինել, թշնամու հետ ընդհարվելով:

Գիւղական համայնքի անդամները շատ էլ

չեն հետաքրքրվում տիրապետող դասակարգերի մէջ եղած փոփոխութիւններով: Այդ փոփոխութիւնները նրանց մի առանձին չեն շահագրգռում. նրանց համար բոլորովին միևնոյն է թէ ում պիտի հարկ վճարեն ու ճորտային ծառայութիւն անեն՝ Յովհաննէսին թէ Սահակին: Բայց եթէ նոյն իսկ ցանկանան էլ հակառակել մի որևէ փոփոխութեան, այդ նրանց ոչ մի առանձին օգուտ չի բերի, որովհետև գիւղական համայնքը, իր մեկուսացած դրութեան շնորհիւ, համարեա թէ բոլորովին անզօր է ամբողջ պետութեան տիրապետող դասակարգերի կազմակերպված և շատ աւելի զերազանց ոյժի առաջ:

Այդ համայնքները, իրանց անկազմակերպութեամբ և անտարբերութեամբ դէպի պետական քաղաքականութիւնը շատ անիշխանականների (անարխիստների) համար իդէալ են համարվում: Բայց հէնց այդ յատկութիւնները, ինչպէս արդէն ինգելսն էր նկատել արևելեան բռնապետութեան վերաբերեալ, իրանցից ներկայացնում են տիրապետող դասակարգերի անսահման բռնապետութեան ամենամեծ հիմունքները, բռնապետութեան, որը յատուկ է կուլտուրական զարգացման այդ աստիճանին, միևնոյն է, թէ դա ինչ ձևով է արտայայտվում՝ զինուորական արիստօկրատիայի բռնապետութիւն, թէ քրմական կաստայի, թէ այդ երկու կաստաներից մէկի կամ հէնց երկուսի էլ գլխաւորի կողմից:

III

Քաղաքային դեմոկրատիան հին ժամանակներում.

—

Այնուամենայնիւ, որոշ բարեյաջող հանգամանքների մէջ, համայնական կեանքը հիմք էր ծառայում դեմոկրատիայի նորից գլուխ բարձրացնելուն։

Տնտեսական յարաբերութիւնների յետագայ զարգացումը առաջ բերեց և հաստատուն հողի վրա դրեց վաճառականութիւնն ու արհեստները այնպիսի առանձին ընկած համայնքների մէջ, որոնք մասնաւոր բարեյաջող աշխարհագրական ու քաղաքական պայմանների մէջ էին գտնվում։ Այդպիսի համայնքներում թէ բնակիչների թիւը և թէ սրանց բարեկեցութիւնը աւելանում էին, և դրանց մէջ կուտակված հարստութիւնները աւելի լաւ պաշտպանելու համար, նրանք իրանց շրջապատում էին պարիսպներով և դառնում էին ֆալտաներ։ Մասնաւոր բարեյաջող հանգամանքներում այս վերջինները բաւական զօրանում և մեծանում էին։ Նրանցից շատերին աջողվեց իրանց անկախութիւնը պահպանել կամ թէ վերադարձնել, եթէ կորցրած էր։ Նրանցից մի քանիսը նոյնիսկ այն աստիճանի հասան, որ իրանք տիրապետող դառան, ուրիշ համայնքներ հպատակեցրին իրանց և այնպիսի մեծ պետութիւններ հիմնեցին, որոնք երբեմն կայսրութիւնից աչնչով պակաս չէին, ինչպէս օրինակ՝ Աթէնքի պետութիւնը։ Ամէնքին յայտնի է, թէ ինչպիսի մեծ համաշխարհային պետութիւն կազմեց հռոմէական քաղաքային համայնքը։ Այդպիսի քաղաքային համայնքների ոյժն ու հարստութիւնը մեծանալու հետ զուգընթացապէս մի կատաղի նեղբլին կռիւ էր մղվում նոյն համայնքների մէջ։

Սկզբում գիւղական համայնքը բոլորովին նոյնն էր, ինչ որ հողատէրերի միութիւնը։ Այդ կը նշանակէ, որ հողաբաժիններն էլ դեռևս համայնքի մի սահմանափակ մասի սեփականութիւն չէին դառել, այլ պատկանում էին բոլոր համայնքներին. այս վերջիններս համայնական հողերից օգտվում էին կամ բոլորը միասին և կամ առանձին-առանձին, առանց համայնական որոշ կանոններով ղեկավարվելու։

Եթէ մի օտար երկրացի էր գալիս համայնքի մէջ,—ինչ շատ քիչ էր պատահում, որովհետև հողագործը սոխակված էր միշտ կատարեալ նստակեաց կեանք վարել,—նա լիակատար հաւասար իրաւունքներով համայնքի անդամ էր դառնում, եթէ միայն համայնքը նրան ընդունում էր իր անդամների թիւի մէջ։ Հնում չէ՞ որ աւելորդ հողեր շատ կային։ Իրերի այդ դրութիւնը փոխվեց նախ քաղաքներում։ Քաղաքները ընդհանրապէս

այնչափ առաւելութիւններ էին ներկայացնում, որ մի տեսակ ձգողական կէտ էին դառնում հարևան և հեռաւոր տեղերի բնակիչների համար, իսկ երբեմն նրանք դէպի իրանց էին քաշում և օտար երկրացիներին: Եկւորների թիւը բազմանում էր: Այլևս ազատ հողերի պակասութիւն էր զգացվում և հողը արդէն արժէք էր ստանում: Այդ իսկ պատճառով համայնքի հին անդամները դադարեցին այլևս եկւորներին էլ հողաբաժիններ տալ: Համայնքը սահմանափակ մի կազմակերպութիւն դարձաւ, որի անդամները այլևս համայնքի բոլոր բնակիչները չէին: Այդպիսով քաղաքային համայնքի մէջ հակառակութիւն ծագեց՝ հին համայնականների, որոնք արդէն հողատիրական, իսկ երբեմն էլ առևտրական արիստոկրատիա, պատրիցիաներ էին դառել,—և համայնքի մնացեալ բնակիչների, պլեբէյների միջև, որոնք ոչ միայն համայնական հողերով չէին օգտվում, այլ և իրաւունք էլ չունէին համայնական ժողովներում մասնակցել, այն ժողովներում, որ օրէնսդրական և մասամբ էլ դատաստանական իշխանութիւն ունէին, և հակում էին համայնական կառավարութեան վրա:

Ժողովրդի այն մասը, որ չէր օգտվում հին համայնականների բոլոր իրաւունքներով, իր իրաւազուրկ դրութեան հետ հաշտվում էր մինչ այն ժամանակ, քանի որ պայմանները նպաստաւոր էին պատրիցիաներին, քանի որ

համայնքի հին անդամները, թէով պլեբէյներից աւելի պակաս չը լինելով հանդերձ, տնտեսապէս շատ աւելի ուժեղ էին նրանցից: Բայց պատրիցիաների տնտեսական նշանակութիւնը կամաց-կամաց նուազում է, իսկ իրաւազուրկ համայնականները հետզհետէ աւելանում են թէով և տնտեսապէս էլ աւելի ուժեղ են դառնում: Հողագործութիւնը դադարեց քաղաքի տնտեսական հիմքը կազմել, առաջին տեղը բռնեցին վաճառականութիւնը և արդիւնագործութիւնը. տնտեսական ազդեցութիւնը հողատէրերից վաճառականներին և արհեստաւորներին անցաւ: Եւ որչափ առաջ էր գնում այդ զարգացումը, այնչափ էլ աւելի վաճառականներն ու արհեստաւորները իրանց մէջ ոյժ էին զգում, աւելի տոհմութեամբ էին տանում իրանց իրաւազուրկ դրութիւնը և նոյնչափ էլ աւելի համակրութեամբ էին նրանք—պլեբէյները ժխտում պատրիցիաների բացառիկ իրաւունքները համայնքում: Այս վերջինները ստիպված էին քայլ առ քայլ զիջումներ անել պլեբէյներին: Սրանք իրաւունք ստացան թէ քաղաքային վարչութեան մէջ մասնակցելու և թէ համայնական հողերով օգտվելու: Քաղաքային վարչութեան մէջ մասնակցելու աստիճանը կախված էր լինում այս կամ այն դասակարգի համեմատական ազդեցութեան աստիճանից: Երբեմն այն տեղն էր հասնում, որ բարձրագոյն ժողովը, որը բոլոր հասարակա-

կան գործերի ամենաբարձր ինստանցիան էր համարվում, որը ոչ միայն օրէնքներ էր հրատարակում, այլ և պաշտօնեաներ էր ընտրում և դատաստանական ֆունկցիա էր կատարում,—այդ բարձրագոյն ժողովը, ասում ենք, նորից, ինչպէս հին ժամանակներում, դառնում էր ամբողջ ժողովրդի մի ընդհանուր ժողով։ Աթէնք քաղաքը, որ մի մեծ պետութեան կենտրոն դարձաւ, իրանից մի վայելուն օրինակ է ներկայացնում այն հանգամանքի, թէ ինչպէս հին դեմօկրատիան վերածնվել է նոր հիմունքների վրա։

Բայց ի՞նչ հետևանքի հասցրեց այդ «անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնը»։

Մի մեծ պետութիւն կառավարելու գործը կապված է շատ և բազմատեսակ հոգսերի հետ. Աթէնքի ժողովուրդը ցոյց տուեց, որ այդ աշխատանքը իր ոյժերից վեր չէր, բայց նա ստիպված էր համարեա թէ իր ամբողջ ժամանակը կառավարչական գործերի վրա վատնել։

Բնական հետևանքը այն եղաւ, որ քաղաքական իշխանութիւնը իրապէս անցաւ ժողովրդի այն խաւերի ձեռքը, որոնք կարող էին իրանց ամբողջ ժամանակը պետական գործերին նուիրել։

Ոչ մեծահայ գիւղացիները, որոնք որոշ չափով քաղաքացիական իրաւունքները էին վայելում, ոչ էլ քաղաքային ազատ արհեստաւորները այդ խաւերին չէին պատկանում։

Պետական վարչութիւնը, օրէնսդրութիւնը և բարձրագոյն դատարանը այնպիսի մարդկանց ձեռքն ընկան, որոնք ուր-իշների հաշուով էին ապրում—ազրուկացած հարուստների և ազրուկացած մուրացկանների ձեռքը, այսինքն՝ խոշոր հողատէրերի, վաճառականների և գործարանատէրերի *) մի կողմից և Lumpen-պրօլետարիաների **) միւս կողմից։

Դասակարգերի շարքերից դուրս ընկած լումպէն-պրօլետարները զուրկ են որևէ դասակարգային շահերից։ Քաղաքական իշխանութիւնը նրանց ձեռքում երբէք չէ կարող մի միջոց ծառայել՝ պետութիւնը և հասարակութիւնը մի որոշ դասակարգի շահերի համաձայն ղեկավարելու համար. նա կարող է միայն մի միջոց դառնալ հասարակութեան այդ խաւի ներկայացուցիչներին անձնական և ժամանակաւոր շահերին գոհացում տալու հա-

---

[1]) Աթէնքում շատ գործարաններ կային,—ergasteria, որոնց մէջ ստրուկներն էին աշխատում։ Պելոպոնեսեան պատերազմի ժամանակ Աթէնքից փախան սպարտացիների ձեռքով գրաւած Դեկելիա ոչ պակաս քան 20,000 ստրուկներ։ Դրանց մեծ մասը գործարանական բանուորներ էին։ Դեմօկրատիական քաղաքագէտ «կլէօնը արհեստաւոր չէր, այլ կաշուի գործարանի տէր էր։

Ծ. Հ.

[2]) Լումպէն-պրօլետար կոչվում են այն անգործ և թափառաշրջիկ բանուորները, որոնք մեծ մասամբ մուրացկանութեամբ են ապրում։ Ռուսաստանում դրանք յայտնի են босякъ անունով։

Ծ. Թ.

մար։ Լումպըն-պրօլետարիատը իր քաղաքական ազդեցութիւնը ծախում էր նրան, ով աւելի էր վճարում, կը նշանակէ՝ հարուստներին, որոնք չունևորներին կաշառում էին տնական հանդէսներով և ողորմութիւններով —հաց և զուարճութիւն,—ինչպէս էր և Հռոմում, միայն թէ այստեղ զուարճութեան խաղերը այլ տեսակի էին։ Ստրկութիւնը դրա համար առատ միջոցներ էր տալիս։ Մասամբ այն հանգամանքից դրդված, որ միջին դասակարգերը միշտ աշխատում էին ոչնչացնել հարուստների անբարոյականացնող ազդեցութիւնը լումպըն-պրօլետարիատի վրայից, մասամբ էլ այն հանգամանքից, որ իրանք պրօլետարներն էլ միշտ ձգտում էին ուղղակի կառավարութիւնից ստանալ իրանց օգուտները, հետզհետէ կառավարչական վարձատրութեան զանազան ձևեր էին ծնունդ առնում, որ յետոյ կամաց-կամաց մի տեսակ օրէնք դարձաւ հասարակական պօրծերում մասնակցողներին առձիկ տալը։ Այսպէս օրինակ, դատական ժողովներում մասնակցողներին տրվում էր «հնլիաստների» առձիկ, ժողովրդական ժողովներում մասնակցողներին—«էկկլեսիաստների» առձիկ, մինչև իսկ տօնախմբութիւններում մասնակցելու համար էլ վարձատրութիւն էր տրվում, որ կոչվում էր «թէօրիկօն»։

Բայց ոչ բոլոր միջոցներ ձեռք բերվում այս ծախսերի համար։ Մասամբ ունևորներից վերցված հարկերից, այսինքն՝ նրանց ստրուկներից աշխատանքից, որոնք այս դէպքում էլ Աթէնքի տիրապետող ժողովրդին կիրակրողներ էին հանդիսանում, մասամբ էլ այն տուրքերից, որ վճարում էին ստորադրեալ «դաշնակից» համայնքները։

Եւ դա դեռ բոլորը չէ։ Պերիկլէսի ժամանակներից Աթէնքի պետական գործիչների ժողովրդականութիւն վաստակելու ամենասիրած միջոցն էր դառել—պարապած հնչանմիների հողերը դրաւել և բաժանել ժողովրդի անհատներին։ Դրաւված հողը մասերի էր բաժանվում, որոնք կոչվում էին կլերվի (klervi) և տրվում էին Աթէնքի մանաւոր քաղաքացիներին, որոնք դրա համար էլ հէնց կոչվում էին կլերուխաններ, այսինքն՝ կլեր ունեցողներ։ Եթէ այդ եղանակով ցանկանում էին չունևոր քաղաքացիներին հողատէր դարձնել, այդ միջոցը շատ սխալ էր ընտրված։ Լումպըն-պրօլետարները գերադասում էին առանց որևէ աշխատանքի ղուարճանալ Աթէնքում, քան միատեսակ գիւղական կեանք վարել և աշխատելով քրտինք թափել։ Նրանք գերադասում էին Աթէնքում ճնալ, իսկ հողը կապալով էին տալիս նրա նախկին տէրերին։ Այդպիսով կլերուխան միայն մի միջոց դարձաւ լումպըն-պրօլետարներին ճոռտ գիւղացիների տէրեր դարձնել, որոնք աշխատում էին նրանց համար։ Այդ սովորութիւնը որոշ չափով բացատրում է աթէնացիների անկուշտ կերպով հողեր դրաւելու ձգտումը, բայց դրանով բա-

գատրվում է և այն սոսկալի ատելութիւնը, որ կուտակվել էր Աթէնքի դէմ նրա հպատակ համայնքների մէջ։

Սակայն այդ միջոցը չը թուլացրեց հարուստների ազդեցութիւնը ժողովրդի ամենաաղքատ և անգործ խաւերի վրա։ Դա այն հնարանքը ունեցաւ միայն, որ աշխատաւոր միջին դասակարգերն էլ թողեցին իրանց աշխատանքը և սկսեցին իրանց համար վաստակ գտնել քաղաքական գործունէութեան ճանապարհով։ Այդպիսով, այդ միջոցը բացարձակապէս կրթում էր աւելի ու աւելի մեծ թւով լումպըն-պրօլետարներ։

Մինչև վարձու պրօլետարիատի հանդէս գալը դեմօկրատիան միշտ յենվում էր միջին բանւոր դասակարգերի վրա—գիւղացիների և արհեստաւորների։ Լումպըն-պրօլետարիատը միշտ ծախում էր իր ազատութիւններն ու իրաւունքները և երբէք չէր սիրտ անում նրանց համար կուելու։

Այդ պատճառով էլ հէնց որ Աթէնքի բնակիչների մասսաները լումպըն-պրօլետարներ դարձան, այլևս ժողովրդային ազատութեան անկումը անխուսափելի դարձաւ։

Ինչպէս յայտնի է, Հռոմում զարգացումը նոյն ձևով էր ընթանում։

Այսպէս ուրեմն, այստեղ էլ, ինչպէս և բարբարոս ժողովուրդների մէջ, մենք նկատում ենք, որ «անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնը» հիմնվում է ուրիշների աշխատանքի վրա, բարբարոսութեան ժամանակաշրջանում—կանանց աշխատանքի վրա, քաղաքակրթութեան ժամանակաշրջանում—ըստրուկների և հարկատուների աշխատանքի վրա։

Եւ ինչպէս որ նախնական ընդհանուր ազատութիւնը վերջացաւ բռնապետութեամբ, այնպէս էլ քաղաքային դեմօկրատիայի նոր բարձրանալը նոյն հետևանքին հասցրեց։

IV

Ներկայացուցչական սիստէմը

Ներկայացուցչական հիմնարկութիւնների հետքերը պատահում են շատ հին ժամանակաշրջաններում՝ դեռ բարբարոսութեան շրջանում։ Յիրաւի, հէնց որ մի քանի հասարակական գործերի ծաւալը ընդարձակվեց, հէնց որ նա սկսեց իր շրջանակի մէջ աւելի մեծ թւով առջեր առնել, այնպէս որ այլևս անհնարին էր դառնում այդ գործերը մէկ այնպիսի ժողովի մէջ որոշել, որին ներկայ լինէին բոլոր շահագրգռվող մարդիկ, շատ աւելի բնական էր դառնում շահագրգռվող մարդկանց ժողովները փոխարինել դրանց ներկայացուցիչների աւելի քիչ թւով մարդկանց ժողովներով։

Այդ տեսակ ժողովներ մենք հանդիպում ենք, օրինակի համար, մինչև իսկ իրոկեզների մէջ։ Բայց ներկայ ժամանակակից պարլամենտների և այդ ներկայացուցչական ժողովների մէջ անագին տարբերութիւն կայ ոչ

միայն նրանց արտաքին ձևով, այլ և նրանց էութեամբ: Վերցնենք, օրինակի համար, իրօկեզների կօնֆեդերացիան (համադաշնակցութիւնը): Ժամանակաւոր համաձայնութիւնները հետզհետէ զարգացան և փոխվեցին հինգ ցեղերի ամուր միութեան, որը սահմանվել էր իսկապէս ընդհանուր ոյժերով պատերազմ վարելու նպատակով: Այդ միութիւնը արդէն չափազանց մեծ ծաւալ էր ընդունում, որպէսզի կարելի լինէր նրա գործերը որոշել ընդհանուր ժողովրդային ժողովներով: Միութեան ընդհանուր գործերը կարգադրվում էին պատգամաւորների փոքրիկ ժողովով, որոնք ընդհանրապէս միշտ հինգ ցեղերի առաջնորդներն էին լինում: Բայց այդ ժողովը բարձրագոյն իշխանութիւն չունէր: Նա իրաւունք չունէր մի որևէ որոշում փոքրամասնութեան վրայ փաթաթել:

Առաջնորդները քուէարկում էին՝ ոչ թէ իւրաքանչիւրը առանձին, այլ ամեն մի ցեղ առանձին. իսկ վճիռը գործադրվելու ոյժ էր ստանում այն ժամանակ միայն, երբ միաձայնութեամբ էր նա կատարվել: Այդպիսի ժողովը նոյն չափով է օրէնսդրական պարլամենտ հանդիսանում, ինչ չափով որ միջազգային պօստային կօնգրեսն է: Եւ ամեն մի պատգամաւոր ոչ թէ ամբողջ հասարակութեան շահերի ներկայացուցիչ էր, ինչպէս որ պէտք է լինի, գոնէ ֆէօրիապէս, այժմեան պարլամենտական պատգամաւորը, այլ նա ներկայացուցիչ էր այն առանձին ցեղի յատուկ շահերի, որ նրան

ուղարկում էր պաշտպանելու իր շահերը բոլոր հինգ ցեղերի ժողովում: Այդպիսի բնաւորութիւն էին կրում և այն ներկայացուցչական ժողովները, որոնք առաջ եկան քաղաքակրթութեան ժամանակաշրջանում, երբև հետևանք անկախ քաղաքների ու համայնքների կամ շրջանների միմեանց հետ կապած միութեան: Այդպէս, օրինակ, շվէյցարական միութեան սէյմը, այսինքն՝ առանձին կանտոնների ներկայացուցիչների ժողովը առաջներում իրաւունք ունէր միայն համաձայնութիւններ կայացնել ընդհանուր գործերի վերաբերեալ, բայց ոչ թէ որոշումներ կայացնել ձայների մեծամասնութեամբ: Ոչ մի կանտոն պարտաւոր չէր հպատակվելու այն որոշումին, որի հետ ինքը համակարծիք չէր եղել:

Չեմսկի պաշտօնեաների ժողովները, որ միջին դարերի վերջերում արդէն բաւականին որոշ ձև էին ընդունել ֆէօդալական եւրօպայի միապետական երկրներում, շատ քիչ էին տարբերվում շվէյցարական սէյմերից: Այդ ժողովները իրանցից ներկայացնում էին նախկին ժողովրդային ժողովների շարունակական զարգացումը, որոնց մէջ դաշնակցական տարրեր էին մտնում, երբ հետզհետէ անհետանում էին ցեղային միութիւնը և ցեղային գիտակցութիւնը, և երբ հետզհետէ առանձին համայնքները մեկուսանում էին:

Մենք արդէն տեսանք, թէ ինչպէս նախնի ժողովրդային ապատութիւնները ոչնչացան:

Ընդհանուր պետական, զաւառական և գիւղական ժողովները, որ առաջ եկան ժողովրդի նստակեաց կեանք վարելու հէնց սկիզբներից և փոխարինեցին նախկին ժողովրդային, ցեղային ու տոհմային ժողովները, չը ոչնչացրին։ Այդ ժողովները դարձեալ առաջվայ նման գումարվում էին պաշտօնեաներ ընտրելու, հասարակական գործերն ու վէճերը որոշելու համար, սակայն այդ ժողովներին մասնակցելու իրաւունք ունեցող ազատ մարդկանց թիւը արագութեամբ նուազում էր։ Իսկ այդ ազատ մարդկանց միջից էլ շատ արագութեամբ նուազում էր և այնպիսիների թիւը, որոնք միջոց ունէին այդ ժողովներին գալու։

Ֆրանսիայում ամեն մի չափահասութեան հասած ազատ հպատակ իրաւունք ունէր ընդհանուր պետական ժողովի գալու։

«Բայց իսկապէս ժողովի գալիս էին, բացի թագաւորի բերած կամ յատուկ հրաւիրված հոգևորական ու աշխարհական բարձրաստիճան անձնաւորութիւններից, միայն մի քանի նշանաւոր մարդիկ, իսկ հասարակ բնակիչներից գալիս էին միայն նրանք, որոնք մօտիկ էին ապրում և կամ թէ մի մանաւոր գործ ունէին այդ ժողովին ներկայացնելու» [1]։

Վերջապէս, և այդ հասարակ բնակիչներն էլ դադարեցին ժողովների գալուց։ Զէ՞ որ թագաւորը բոլորովին չէր հետաքրքրվում

[1]) Ֆ. Դան. «Նախնի զերմանական և բոմանական ժողովուրդների պատմութիւնը»։

նրանց կարծիքով. նրա համար կարևոր էին այն մարդիկ միայն, որոնցից նա իսկապէս կախումն ունէր. խոշոր հողատէրերը, եպիսկոպոսներն ու վարդապետները, հերցոգները և կոմսերը։

Ընդհանուր պետական և զաւառական ժողովները զանազան քրիստոնեայ զերմանական երկրներում աւելի ու աւելի կերպարանափոխվում ու դառնում էին պարզ ազնուականների համագումարներ, որ գումարվում էին թագաւորների կամ այլ տեսակի միապետների պալատներում։ Այդ ժողովների նշանակութիւնը ակնյայտնի կերպով ընկնում էր։ Դրանք կորցրեցին պաշտօնեաներ ընտրելու իրաւունքը, որովհետև պաշտօնները ժառանգական դարձան, կամ թէ թագաւորը ինքն էր պաշտօնները բաժանում։ Բարձրագոյն դատարանի քննելիք խնդիրները անչափ բազմակողմանի դարձան, որ շուտով ազնուականների ժողովները այլևս չէին կարողանում նրանց լուծել, ինչպէս որ այդ միևնոյնր եղաւ և ժողովրդային ժողովների հետ։ Դատաստանական բաժինը աւելի ու աւելի անցաւ մասնագէտ դատաւորների ձեռքը։ Բայց դրա հետ միասին մասնագէտ դատաւորների ձեռքը անցաւ մի յայտնի չափով և նոր օրէնքներ մշակելու գործը։ Դատաստանական և օրէնսդրական իշխանութիւնների խիստ բաժանումը միայն վերջին ժամանակներում տեղի ունեցաւ, և այն էլ դեռ մինչև այսօր էլ ոչ ամեն տեղ։

Առաջիններում դատաւորները մեծ մասամբ ղեկավարվում էին ժողովրդի սովորութիւններով։ Բայց երբ պատահում էր մի որևէ արտաքոյ կարգի գործի սա՜ին քննութիւն կատարել, այդ պարագայում այդպիսի գործի մասին կայացրած վճիռը արդէն օրէնքի ոյժ էր ստանում։

Իսկ հասարակական յարաբերութիւնները կանոնաւորելու համար, դատաւորները այն ժամանակ, սովորութիւններից ու տրադիցիաներից զատ, օգտվում էին ոչ թէ ընդհանուր օրէնքներով, այլ առանձին պայմաններով, որ կապվում էին առանձին միմեանց նման հասարակութեանների կամ անհատների միջև։ Այսպիսով ազնուականների ժողովները այլևս կարիք չունէին օրէնսդրութեամբ զբաղվելու։

Եթէ, վերջապէս, ի նկատի առնել և այն հանգամանքը, որ զարգացման այդ աստիճանում պետութիւնը կամ թագաւորը իրանց մշտական եկամուտները ստանում էին իրանց հողերից, այլ ոչ թէ հպատակների վրա դրված որոշ հարկերից, այն ժամանակ պարզ կը լինի, որ ազնուականների կանոնաւոր և պարբերական համագումարները հետզհետէ աւելի ու աւելի աւելորդ էին դառնում.

Եւ միայն բացառիկ դէպքերում, երբ թագաւորը ցանկանում էր «իր ժողովրդին» մանաւոր պահանջներ ներկայացնել, նա հրաւիրում էր ազնուականութեանը, որպէսզի

նրա աջակցութիւնն ու օգնութիւնը ապահով դարձնի իր համար։

Քաղաքների զարգացումը խաչակրաց արշաւանքների ժամանակներից ի վեր նպաստեց նորից համայնական ժողովների նշանակութեան բարձրանալուն։ Զարգանում էին վաճառականութիւնը, արհեստները, երևան եկան շատ քաղաքներ, որոնք արագութեամբ մեծանում էին։ Այդ քաղաքներից մի քանիսը, բարեյաջող հանգամանքների շնորհիւ, մինչև իսկ անկախ հասարակապետութիւններ դարձան, իսկ մի քանիսն էլ մինչև իսկ, ոչ միայն անկախ, այլ և հին, վերոյիշեալ ջաղաքային հասարակապետութիւնների ոմանց նման, իրանք իշխողներ դարձան, և երբեմն նոյնիսկ չափազանց զօրաւոր իշխողներ, որոնք ընդարձակ պետութիւնների տէր էին։ Իրրև օրինակ, մենք կարող ենք մատնանիշ լինել վենետիկի հասարակապետութեան վրա։ Բայց մինչև իսկ այնպիսի տեղերում էլ, որտեղ քաղաքները չէին կարողանում այդ աստիճան զօրեղութեան հասնել, այնուամենայնիւ նրանք այնպիսի ոյժ էին ներկայացնում իրանցից, որ միշտ պէտք էր հաշուի առնել։

Ժամանակի ընթացքում թագաւորները ստիպված եղան ոչ միայն ազնուականութեանը դիմել, այլ և քաղաքների ներկայացուցիչներին, երբ կարևոր խնդիրներ էին ծագում, որոնց աջողութեան համար թագաւորը ցանկանում էր անհրաժեշտ օգնութիւնը ստանալ։

Այսպիսով, բարձրագոյն ժողովներում մի նոր տարր էլ մտաւ, կամ աւելի ճիշտ է ասել՝ երկու տարրեր մտան։ Բանը նրանումն է, որ հոգևորականութիւնը շատ էլ չէր հետաքրքրվում ազնուականների ժողովներում մասնակցելու իրաւունքից։ Ազնուականների ժողովներից դուրս հոգևորականութիւնը բոլորովին ուրիշ միջոցներ ունէր՝ իր շահերը պետութեան մէջ պաշտպանելու համար։ Իսկ հիմա, երբ բարձրագոյն ներկայացուցչական ժողովները,—այժմ արդէն կարելի է դրանց այդպէս անուանել,—նոր ոյժ և նշանակութիւն ստացան, քաղաքային պատգամաւորների նրանց մէջ յայտնվելու շնորհիւ, հոգևորականութիւնը նորից սկսեց մի առանձին ուշադրութիւն դարձնել այդ ժողովների վրա։

Այսպիսով այդ ներկայացուցչական ժողովները դարձան դասային ներկայացուցիչների ժողովներ։ Նրանք ամենաբազմազան ձևեր էին ընդունում։ Երբեմն ազնուականութիւնն ու հոգևորականութիւնը միանում էին և մի պալատ էին կազմում, իսկ քաղաքային պատգամաւորները—երկրորդ պալատ։ Երբեմն էլ ազնուականութիւնն ու հոգևորականութիւնը բաժանվում էին և այդպիսով ստացվում էր երեք պալատ։ Պատահում էր, որ ազնուականութիւնն էլ բաժանվում էր բարձր և ստորին մասերի։ Երբեմն այս վերջինի ներկայացուցիչները քաղաքային պատգամաւորների հետ մի պալատում էին նստում։ Բարեյաջող

հանգամանքներում պատահում էր և այն, որ պիւղացիներից շատերին աջողվում էր իրանց վրայից թօթափել ֆէօդալական պարտականութիւնների լուծը և ազատ հողագործներ դառնալ, և այդ պարագայում նրանք այնպիսի ոյժ էին ստանում, որ անկարելի էր այլ ևս նրանց արհամարհել։ Այդ ժամանակ գիւղացիական ներկայացուցչները էլ սկսեցին դասային ներկայացուցիչների ժողովներին մասնակցել, և այդ պարագայում, նրանք կամ քաղաքային պատգամաւորների հետ էին միանում և կամ թէ առանձին չորրորդ դասն էին կազմում։ Այդ դասային ներկայացուցիչների ժողովները արագութեամբ ոյժ և ազդեցութիւն ստացան, որովհետև, որքան շատ էին զարգանում արհեստներն ու վաճառականութիւնը, այնչափ էլ աւելի թագաւորական հողերից ստացված եկամուտները անբաւարար էին դառնում պետական ծախսերը ծածկելու համար։ Մասնագէտ դատաւորները, որոնք ռոճիկ էին ստանում,—մեծ մասամբ հռօմէական իրաւաբաններ,—գնալով աւելի բազմաթիւ էին դառնում։ Կարճ ժամանակում, նրանց ունեցած բարձրագոյն դատաստանական պաշտօնավարութիւնների վրա հետզհետէ աւելացան և ստորին դատարանական իշխանութեան ուրիշ ճիւղերն էլ։ Այն ժամանակներում՝ մօտաւորապէս 14-դ դարում, սկսեց տարածվել վարձով զօրք պահելու սովորութիւնը։ Դատարանն ու պատե-

բազմը, որ պետական իշխանութեան ամենանագլխաւոր լծակներն էին կազմում, գնալով աւելի ու աւելի թանգ էին նստում, աւելանում էին նաև շքեղութեան համար պէտք եղած ծախսերը, որ օրէցօր սաստիկ զարգանում էր թագաւորների պալատներում։ Թագաւորները սկսեցին աւելի ու աւելի փողի կարիք զգալ, և նրանց ագահութիւնը գնալով զարգացաւ։ Թագաւորները սկսեցին «կարօտութեան» մէջ ընկնել։

Բայց քանի գնում էր, այնքան աւելի ու աւելի ձեռքի տակ եղած միջոցները անբաւարար էին դառնում պետութեան և թագաւորութեան տան հետզհետէ բազմացող ծախսերը ծածկելու համար։ Բանի գնում էր, այնքան աւելի ու աւելի պահանջ էր զգացվում «հպատակներին» էլ մասնակից անել պետական ծախսերը հոգալու մէջ։ Սրա հետ միասին ժամանակները փոխուում էին, որ դրամական հարկերը հնացարվեցին։

Բայց թագաւորներին միշտ չէր աջողվում այդ հարկերը ստանալ, առանց իրանց կողմից մի որ և է զիջում անելու։

Գիւղացիներից կարելի էր ուզածին չափ վերցնել, բայց ուժեղ դասակարգերի յանդիմանման, որոնք իրանց ներկայացուցիչները ունէին դասային ժողովներում, թագաւորները ստիպված էին լինում իրանց ախորժակը չափաւորել։ Երբեմն գործը այն աստիճանի էր հասնում, որ դասային ներկայացուցիչները

էին էապէս ամբողջ պետութիւնը կառավարում, իրանց ընտրած կոմիտեների միջոցով, որի ձեռքում թագաւորը մի կրաւորական գործիք էր լինում միայն։

Դասային ներկայացուցիչների այդ ժողովները այժմեան պարլամենտների նախատիպերն էին։ Բայց նրանք իսկապէս հիմնված էին այն նոյն սկզբունքի վրա, ինչպէս և վերևում յիշված դաշնակից պետութիւնների և ցեղերի ներկայացուցիչների բարձրագոյն ժողովները։

Դասային ժողովի առանձին անդամը ոչ թէ ամբողջ ազգի (կամ մինչևիսկ մի առանձին դասակարգի) ներկայացուցիչն է հանդիսանում, այլ միմիայն մի շատ սահմանափակ կօրպօրացիայի և մի առանձին տերրիտօրիայի ներկայացուցիչ։ Այդ կօրպօրացիայի և այդ տերրիտօրիայի ներկայացուցիչ էր նա հանդիսանում մասամբ իր ընտրվելու եղանակի հիման վրա (իբրև քաղաքի կամ եկեղեցական կօրպօրացիայի պատգամաւոր), և կամ թէ իր՝ ժառանգաբար կամ բռնեյաջող դիպուածով՝ ձեռք բերած հասարակական դիրքի հիման վրա (իբրև աշխարհական կամ հոգևորական հողատէր)։

Իւրաքանչիւր առանձին կօրպօրացիայի կամ իւրաքանչիւր տերրիտօրիայի պարտականութիւնները պետութեան վերաբերմամբ որոշվում էին—յատուկ պայմանագրերով, և, առանց կօրպօրացիայի անդամների կամ այդ տերրիտօրիայի տիրոջ համաձայնութեան, անկարելի

էը նոր տուրքեր նշանակելը։ Այդ պատճառով էլ դասային ներկայացուցիչների ժողովներում ակզբները անկարելի էր լինում, որ մեծամասնութիւնը ճնշում գործ դնէ փոքրամասնութեան վրա։ Բայց որոշ հանգամանքներում փոքրամասնութիւնը կարող էր սպասել, որ պէնքի այժով իրան կը ստիպեն մեծամասնութեան կարծիքին միանալու։

Եթէ ժողովի անդամը տերրիտօրիայի կամ կօրպօրացիայի ներկայացուցիչ էր հանդիսանում իրրև ընտրված պատգամաւոր, այլ ոչ թէ իր հասարակական դիրքի շնորհով եկած, այն ժամանակ նրա կարծիքը պէտք է երբեմըն վաւերացվէր և նրան ընտրողների կարծիքով։ Բարձրաստիճան հոգևորականները պէտք է երաշխաւորութիւն տային իրանց վարդապետների կամ այլ կղերականների ժողովի համաձայնութեան մասին, իսկ քաղաքային պատգամաւորներն էլ—քաղաքային խորհրդի կամ համայնական ժողովի համաձայնութեան մասին։ *)

Որպէսզի դասային ներկայացուցիչների ժո-

*) Համեմատ. Գերմանիայի համար Ֆ. Վ. Ունդերն «Դասային ժողովների պատմութիւնը Գերմանիայում»։ Անգլիայի վերաբերեալ Լօռաթ Բուխերը ասում է. «Նախկին պարլամենտներում որոշումները միաձայնութեամբ էին ընդունվում, բայց երբ խնդիրը գալիս էր հարկերը որոշելուն, այն շրջանները, որոնց ներկայացուցիչները անհամաձայն էին գտնվում, պարտաւոր չէին հպատակվելու։ («Պարլամենտարիզմը, ինչպէս որ նա կայ»)։ Բուխերը մի քանի անգամ ցաւակցութիւն է յայտնում,

ղովը զարգանալով պարլամենտի ձև ստանար, իսկ այդ կարդի դաշնակցական ժողովից էլ նախնական ժողովը ստացվէր, դրա համար ամենից առաջ պէտք էր որ, համայնքների և կօրպօրացիաների հաւաքածուի (կօնգլօմերատի) փոխարէն, ինչպիսին էր միջնադարեան պետութիւնը, մի ամբողջական պետութիւն կազմվէր։ Դրա համար էլ անհրաժեշտ էր, որ այդ մանր կազմակերպութիւնների նեղ առանձնացումը փոխարինվէր ազգայնութեամբ։

Հէնց այդ էլ կատարվեց արդիւնաբերական կապիտալիստական եղանակի շնորհով։

Միապետական և պարլամենտական աբսօլիտիզմ

V

Արդիւնաբերութիւնը կապիտալիստական եղանակով կատարելու ժամանակ, որ սկսվում է զարգանալ 16-դ դարում, սովրանքները պատ-

որ այդ կարգերը այլևս գոյութիւն չունեն։ Նրա գիրքը շատ հետաքրքիր և սրամիտ է գրված, բայց նրա մասին էլ կարելի է ասել այն, ինչոր Մարկսը մի անգամ ասել է D. Urquharts-ի գրքի վերաբերեալ. «եթէ որևէ քննադատութիւն քննում և դատապարտում է ներկան, առանց նրան հասկանալ կարողանալու, այդ հանդամանքը միաժամանակ երևան է հանում այն քննադատութեան և այժը, և թուլութիւնը»։ (Կապիտալ, 1 հատ. 2-րդ հրատ. եր. 528)։ Ծ. Խ.

բաստեղն ու վաճառքի համար արդիւնաբերելը մի ընդհանուր ձև է դառնում արդիւնաբերութեան համար: Դրա հետ միաժամանակ հետզհետէ անհետանում է մասնաւոր ձեռնարկութեամբ՝ հէնց իրանց արդիւնաբերողների ու նրանց աղանների, եթէ այդպիսիները կան, սպառելու համար արդիւնաբերելը: Այդ ժամանակներում գիւղական և քաղաքային համայնքները այլ ևս անկարող են լինում իրանց առանձնացած դիրքը պահպանել, և իրանք իրանց պէտքերը հոգալու հնարաւորութիւնից զրկվում են: Արդիւնագործութեան առանձին ճիւղերը այդ ժամանակ արդէն կախումն են ունենում ներքին շուկայից, իսկ յաճախ այս վերջինի միջոցով կամ ուղղակի անմիջական կերպով և համաշխարհային շուկայից:

Բայց ներքին շուկայ ասելով, պէտք է հասկանալ այն ամբողջ տերրիտորիան, որի վրա տարածված է այս կամ այն պետութիւնը: Պետութիւնը իր տերրիտորիայի սահմանների մէջ, հնարաւոր եղածին չափ, պաշտպանում է իր արդիւնաբերողներին ու վաճառականներին օտար արդիւնաբերողների ու վաճառականների մրցումից: Նա նոյնպէս հոգ է տանում, որ իր երկրի ապրանքները նպաստաւոր կերպ վ վաճառվեն արտասահմանեան շուկաներում: Որչափ մեծ լինի պետութիւնը, որչափ զօրաւոր լինի իշխանութիւնը, նոյնչափ աւելի արդիւնաբերողներն ու վաճառականները կարող են յոյս ունենալ, թէ իրանց շահերը լաւ կը պաշտպանվեն:

Այդ ժամանակներից պետութիւնները սովորաբար տնտեսական հիմք են ստանում: Միջին դարերում, նուաճումների, ժառանգական բաժանումների, ամուսնութիւնների, վաճառումի և փոխանակութեան, մինչև իսկ գրաւ դնելու*) շնորհիւ զանազան թագաւորող տների կալուածների սահմանները շարունակաբար փոփոխութիւնների էին ենթարկվում: Որովհետև ամեն մի համայնք, կամ, գոնէ, ամեն մի շրջան իրանից մի առանձին ամբողջութիւն էր ներկայացնում, ուստի բոլորովին կարիք չէր զգացվում, որ միևնոյն թագաւորի զանազան կալուածները միմեանց կպած լինէին:

Այսպէս օրինակ, Հաբսբուրգները 14 դ դարում կալուածներ ունէին ոչ միայն այժմեան գերմանօ-աւստրիական շրջաններում, այլև Շվէյցարիայում, Շվաբիայում և Էլզասում:

Այնինչ այժմեան պետութիւնները, ընդհակառակը, իրանցից տնտեսապէս ամբողջ կերպով կապված շրջաններ են ներկայացնում, որոնք այնչափ աւելի միաձուլ են դառնում, որչափ աւելի երկար գոյութիւն ունի պետութիւնը, որչափ աւելի տնտեսական կեանքը նրա սահմաններում կապիտալիստական է և որչափ աւելի է արդիւնաբերութիւնը հա-

*) Ինչպէս յայտնի է, հէնց գրաւ դնելու մի գործողութեամբ է Հոհէնցօլլերների միապետութեան հիմքը դրվել: Ծ. Հ.

մապատասխան դառնում իր տրամադրութեան տակ գտնված ներքին շուկայի պահանջներին։ Այդ պարագայում պետութեան սահմանները ընդարձակելու հոգսը այլևս պատրում է միմիայն զինուորական կաստայից դուրս եկած թագաւորական տան գործը լինել։ Արդիւնաբերող դասակարգերն են այլևս այդ բանի մէջ շահադրգռված։ Այդ ժամանակ պետութիւնը դինաստիականից դառնում է ազգային։

Գիւղական և քաղաքային համայնքների բնակիչներին մի քանի դարերի վերջում այն հարցը, թէ արդեօք իրանց թագաւորը ուրիշ հողեր էլ ունի՞, նոյնչափ չէր հետաքրքրում, որչափ հիմա մի որևէ հողատէր ազնուականի բանւորներին չէ հետաքրքրում, թէ արդեօք սա ուրիշ կալուածներ էլ ունի՞։ Իսկ ժամանակակից պետութեան բնակիչների համար, ընդհակառակը, պետութեան սահմանների ամեն մի վոքրանալը արդէն մի կորուստ է համարվում նրանց տնտեսական կեանքի զարգացման համար, մինչդեռ պետութեան սահմանների ընդարձակումը նրանց համար ներքին շուկայի ընդարձակումն ու համաչափարհամային շուկայում լաւ պայմաններ ձեռք բերել է նշանակում։

Որչափ աւելի ամուր կապերով է կապված և աւելի զօրաւոր է նոր պետական օրգանիզմը, նոյնչափ աւելի շուտ են քայքայվում նրա

ժէջ մնացած հին քաղաքական ու սոցիալական կազմակերպութիւնները։

Այս վերջիններիի կատարած պաշտօնները մէկը միւսի ետևից անցնում են պետութեան ձեռքը և այդ կազմակերպութիւնները այլևս մի մի աւերակներ են հանդիսանում, որոնք խանգարում են յետագայ զարգացման ճանապարհը, ուստի և նրանց իսպառ ոչնչացնելը անհրաժեշտութիւն է դառնում։ Հասարակութիւնը «առօջանում է», մարդկանց փոխադարձ յարաբերութիւնները այլևս չեն որոշվում զանազան կօրպօրացիաների (կազմակերպութիւնների) փոխադարձ յարաբերութիւններով։ Այդ «առօջանալու» այսինքն պետութեան ժէջ հնացած կազմակերպութիւնների քայքայման հետ միաժամանակ կատարվում է պետութեան և հասարակութեան կենտրօնացումը։

Առևտրականութիւնը հին ժամանակներից արդէն կենտրօնացման տենդենցիա է ցոյց տուել։ Վաճառականութիւնը թէ ապրանքները և թէ գնողներին ու ծախողներին քաշում է որոշ այնպիսի կէտերի վրա, որոնք մանաւորապէս աչքի են ընկնում իրանց նպաստաւոր աշխարհագրական ու քաղաքական պայմաններով։ Արդիւնաբերութիւնը կապիտալիստական եղանակով կատարվելու ժամանակ, երբ ամբողջ արդիւնաբերութիւնը ապրանք լինելու համար է պատրաստվում և ուստի նա կախումն է ստանում վաճառակա-

նութիւնից, այս վերջինի կենտրօնացումը կենտրօնացնում է և ամբողջ տնտեսական կեանքը։ Ամբողջ երկիրը, ուղղակի կամ անուղղակի կերպով, առաւել կամ նուազ չափով, տնտեսապէս կախումն է ստանում թէ գլխաւոր քաղաքից և թէ կապիտալիստների դասակարգից։ Գլխաւոր քաղաքը, վաճառականութեան այդ կենտրօնը միևնոյն ժամանակ դառնում է և յաւելեալ արժէքների, երկրի աւելացած հարստութիւնների մի կենտրօնավայր. ճոխութեանն ու շռայլութեանը յաջորդում են գեղարուեստը և գիտութիւնները։

Տնտեսական կենտրօնացմանը համապատասխանում է և քաղաքական կեանքի կենտրօնացումը. վաճառականութեան կենտրօնական վայրը դառնում է և վարչութեան կենտրօնական վայր։

Մենք արդէն ասացինք, որ նոր կազմակերպվող դասակարգերը, որոնք ապրում են ապրանքները արտադրելով և վաճառականութեամբ, այնպիսի մի զօրաւոր իշխանութեան կարիք են զգում, որը կարողանար նրանց շահերը պաշտպանել թէ պետութեան ներսում և թէ դրսում։

Թագաւորը, վաղեմի ցեղապետի այդ յաջորդը, մինչին դարերում ոչ այլ ինչ էր, եթէ ոչ նոյն ցեղապետը, նոյն ցեղի զինուորական հրամանատարը, եթէ նա զինուորական կաստայի գլխաւորն էր, կամ նոյն ցեղի գլխաւոր դատաւորը, եթէ նա հոգևորական կաստայի

գլխաւորն էր։ Մինչև իսկ այն ժամանակներում, երբ թագաւորի պաշտօնը արդէն ժառանգական էր դառնում,—իսկ դա բոլորովին ամեն տեղի համար չէր,—նա դարձեալ միշտ կախումն ունէր իր ինքնուրոյն ու ինքնակամ վասալների ու նոյնչափ էլ ինքնակամ և ինքնուրոյն երարխիայի բարի կամքից։ Քաղաքների զարգացումը, ինչպէս մենք արդէն տեսանք, բոլորովին չը լաւացրեց նրա դիրքը. ընդհակառակը՝ քաղաքների զարգացման պատճառով, թագաւորը սկսեց, երկուսի փոխարէն, երեք դասերից կախումն ունենալ։

Համաշխարհային վաճառականական և կապիտալիստական արդիւնաբերութիւնը փոխեց դրութիւնը յօգուտ թագաւորների։ Այդ զարգացումը չունևորների մի ամբողջ բանակ ստեղծեց, և մինչև այն ժամանակ, քանի որ արդիւնագործութիւնը բաւականաչափ զարգացած չէր, նրանցից միայն մի մասն էր կարողանում վարձու բանուոր (Lohn-proletarier), դառնալ։ Իսկ նրանց մեծ մասը Lumpen-պրօլետար (անգործ բանուոր) էր դառնում և իրրև այդպիսիները նրանք մասամբ բռնապետութեան նեցուկ դարձան, Հռոմի լումպըն-պրօլետարների նման։ Միայն թէ հիմա նրանք ոչ թէ իրանց ձայների իրաւունքն էին ծախում բռնապետներին, այլ իրանց սեփական բռունցքները։ Թագաւորների վարձու զինուորների թիւը արագութեամբ աւելանում

էր [1]։ Միևնոյն ժամանակ անհետացան ասպետական զօրքերը, որոնք համարեա թէ անկախ էին թագաւորներից։ Եկամուտների ֆէօդալական աղբիւրները չորացան, կամ աւելի շուտ, նրանք կորցրեցին իրանց նշանակութիւնը։ Այժմ հասարակութեան մէջ դիրք ունենալը ոչ թէ ճորտեր ունենալու քանակից, զիւղատնտեսական մթերքներով ստացվող

[1]) 14-րդ դարի վարձու զինուորները տարբերվում էին 17-րդ դարի վարձու զինուորներից։ Առաջինները կազմվում էին սեփականատէր զիւղացիներից, որոնք զինուորական ծառայութեամբ պարապում էին կողմնակի վաստակ ունենալու նպատակով, որովհետև զիւղատնտեսութեան լաւ վիճակ ստանալը և բնակչութեան բազմանալը այն ժամանակ արդէն մի որոշ չափով աշխատող աւելորդ ձեռքեր էին ստեղծել։ Այդ պատճառով էլ զիւղական երիտասարդութեան մի մասը աւելորդ էր համարվում տանը. նրանք օտարութեան էին գնում, այն նպատակով միայն, որ յետոյ կրկին տուն վերադառնան և երկրագործութեամբ պարապեն։ Զինուորական ծառայութեան մէջ ձեռք բերած փորձառութիւնից նրանք օգտվեցին իրանց սեփական ազատութիւնը ձեռք բերելու համար։ Այդ հիմունքների վրա առաջ եկաւ շվեյցարացիների և չեխական հուսիտների ազատութիւնը։ Մինչդեռ 17-րդ դարի վարձու զինուորը սեփականազուրկ էր, զինուորական արհեստը նրա միակ պարապմունքն էր, նրա պրօֆեսիան էր։ Նա հարկ չէր զգում որևէ ազատութիւն պաշտպանել, բացի աւարառութեան ազատութիւնից։ Նրա գոյութիւնը ռոճիկից էր կախված։ Նա թագաւորի սարուկն էր և բռնապետութեան նեցուկը, նոյն իսկ և իր հայրենիքում։ Ծ. Հ.

հարկերից էր կախված, այլ դրանից։ Բայց որչափ էլ կամենային զիւղացիներից փող վերցնել, նրանցից շատ քիչ բան կարելի էր վերցնել։ Այդ պատճառով էլ հողատէրերը, ազնուականութիւնը և հոգևորականութիւնը պահանջ ղղացին իրանց համար մասնագիտութիւն դարձրած պաշտօնները ապրանքի վերածել. հոգևորականութիւնը սկսեց վաճառել իր արքեպիսկոպոսութիւնները, մեղքերի թողութիւնը, պաշտամունքները, իր հովուական պարտականութիւնների կատարելը։ Իսկ ազնուականութիւնը սկսեց զինուորական ծառայութեան մէջ վարժվել ամեն մէկի մօտ, ով նրան աւելի ձեռնտու վարձ կառաջարկէր։ Տնտեսապէս ինքնուրոյն վասալներից նրանք այժմ դարձան վարձկաններ, թագաւորական օֆիցէրներ, այսինքն՝ հրամանատարներ այն խառնիճաղանճութեան, որը հաւաքվել էր թագաւորների դրօշակների տակ։ Բայց հոգևորականութեան սրբազան առարկաներով վաճառականութիւն անելը վերջ ի վերջոյ այն աստիճան լրբութեան հասաւ, որ ժողովուրդը ապստամբեց նրա դէմ։ Ազնուականութեան նման հոգևորականութիւնն էլ չը կարողացաւ իր անկախութիւնը պահպանել։ Այդ ժամանակներից ի վեր, թէ կաթոլիկական և թէ բողոքական երկրներում, հոգևորականութիւնը իր ձեռքում պահած կամ վերջերում ստացած բոլոր կալուածներով ու եկամուտներով պարտական է միայն թագա-

ւորների շնորհներին։ Իբրև շնորհակալութիւն այդ բանի, հոգևորականութիւնն էլ պարտաւորվում էր թագաւորներին ծառայել։ Աղնւականութիւնն ու հոգևորականութիւնը ոչ միայն իրանց ինքնուրոյնութիւնից և մասամբ էլ իրանց հարստութիւններից զրկվեցին, այլ և նրանք աւելի ու աւելի աւելորդ էին դառնում իրանց էութեամբ։ Արդիւնաբերութեան նոր եղանակը և նոր պետութիւնը դատարանի և պետական վարչութեան առաջ այնպիսի խնդիրներ էին դնում, որ հին ֆէօդալական կազմակերպութիւնները, որոնց մէջ աղնւականութիւնն ու հոգևորականութիւնը այնչափ մեծ դեր էին խաղում, այլևս բոլորովին անկարող էին լուծել։ Այդ ժամանակներից ի վեր դատարանում գերակշիռ տեղ սկսեցին բռնել գիտնական իրաւագէտները (ամեն տեղ, բացի Անգլիայից, հռօմէական իրաւաբաններ)։ Նրանց թագաւորն էր նշանակում, նա էլ ուռճիկ էր տալիս նրանց, ուստի նրանք էլ կատարելապէս թագաւորից կախումն ունէին։ Ֆինանսների տնօրինութեան գործն էլ անցաւ թագաւորի կամ սրա հովանաւորութիւնը վայելող բիւրօկրատիայի ձեռքը։ Միջին դարերում հողատէր աղնւականներն ու ազատ քաղաքներն էին թագաւորին վճարում այն հարկը, ինչ որ նրանք պարտաւորվել էին տալ։ Պետական իշխանութիւնը ոչ մի գործ չունէր իմանալու, թէ ինչ ձևով է աղնւականը իր ղիւղացիներից հարկերը հաւաքում, իսկ քա-

ղաքն էլ իր քաղաքացիներից և այլ բնակիչներից հաւաքում։ Բայց հիմա այլևս հարկահանութիւնը լրված էր աղնւականներից ու քաղաքային վարչութիւններից. դա յանձնված էր կապալառուներին կամ հարկահան չինովնիկներին։

Աղնւականութիւնն ու հոգևորականութիւնը, իբրև այդպիսիներ, դադարեցին որ և է նշանակութիւն ունենալ պետական վարչութեան, դատարանի և զինուորական ծառայութեան համար։ Այդ երկու դասերը աւելի ու աւելի արու մեղուների նման անգործ և ծոյլ արարածներ են դառնում, որոնք իրանց վայելած արտօնութիւններով ու հարստութեամբ պարտական են ոչ թէ իրանց հասարակական գործունէութեանը, այլ միմիայն թագաւորական տան բարեհաճութեանը։ Այժմ նրանց միակ գործը թագաւորական իշխանութեանը նպաստելու մէջ էր կայանում։

Հոգևորականութեան և աղնւականութեան ինքնուրոյնութիւնը ոչնչանալուց յետոյ, դասային (сословный) ժողովները իրանց երկու գլխաւոր նեցուկներից զրկվեցին։

Բայց այդ ժողովների երրորդ նեցուկն էլ, քաղաքը, նոյնպէս աւելի ու աւելի ընկնում էր 17 և 18-րդ դարերի ընթացքում։ Ի հարկէ, արդիւնաբերութեան կապիտալիստական եղանակը նշանաւոր չափերով բազմացնում էր քաղաքային բնակչութեան—բուրժուազիայի և պրօլետարիատի—թիւը, բայց այդ

բնակիչները աւելի կենտրօնանում էին մի քանի մեծ քաղաքներում, որոնցից մայրաքաղաքը, իր հերթին, ամենից աւելի էր գերազանցում թէ իր մեծութեամբ, թէ ազդեցութեամբ և թէ հարստութիւնով։ Քաղաքներից մի ահագին մասը ոչ միայն չէր առաջադիմում, այլ և յետադիմում էր ու այն աստիճանի հասնում, որ նրան, ինչպէս օրինակի համար Անգլիայում, «հոտած աւաններ» էին կոչում։

Այդ աւանները անկարող էին ընդդիմադրութիւն ցոյց տալ զարգացող աբսօլիւտիզմի վիթխարի զօրութեանը։

Բայց մայրաքաղաքը՝ XVI-դ դարից սկսած, աւելի ու աւելի մի նշանաւոր քաղաքական գործօն է (ֆակտօր) դառնում արդի պետութեան մէջ։ Հենրիխ IV-դը ալդէն շատ լաւ գիտէր, որ Պարիզի «խաթրու» արժէ պատարագ անել, այսինքն՝ արժէ որ թագաւորը հպատակվի մայրաքաղաքի կամքին։ Կարլոս I-ը իր վրա փորձեց, թէ ինչ նշանակութիւն ունի Լօնդօնը պետական քաղաքականութեան մէջ[2]։

Բայց մայրաքաղաքի բնակիչների մեծա-

[2]) «Առանց աւելացնելու կարելի է ասել, որ եթէ Սիախի թշնամական տրամադրութիւնը չը լինէր, Կարլոս I-ը երբէք պարտած չէր լինի, իսկ Կարլոս II-դն էլ երբէք գահի վրա չէր բարձրանայ առանց Սիախի օգնութեան»։ Մակօլէյ. «Անգլիայի պատմութիւնը»։ Ծ. Հ.

մասնութիւնը բոլորովին շահագրգռված չէր, որ զեմսկի չինների ժողովների ազդեցութիւնը պահպանվի, որովհետև այդ՝ փոքրիկ քաղաքներում ապրող, յետամնաց աղնւականների ու ֆիլիստէրների թագաւորութիւնը պահպանել կը նշանակէր։ Ի՞նչ յոյսեր կարող է մայրաքաղաքը դնել այդ դասերի վրա։ Ամենից առաջ կարելի էր յուսալ, որ նրանք չեն համաձայնի նոր հարկեր նշանակելու խնդրում, այլ կաշխատեն կարելիին չափ մեծ խնայողութիւն անել։ Իսկ այդ բանը ընդհանրապէս չէր համապատասխանում այն ժամանակվայ մայրաքաղաքի բնակիչներից շատերի շահերին։ Մայրաքաղաքի բնակիչների նշանաւոր մասը իր ապրուստի միջոցները հայթայթում էր արքունիքի պէտքերը գոհացնելով։ Որչափ շատ էին ծախսում արքունիքում, այնքան աւելի այդ ձեռնտու էր մայրաքաղաքի համար։ Արհեստաւորները և ֆաբրիկանտները, որոնք ճոխութեան իրեր էին արդիւնաբերում, վաճառականները, որ ծախում էին այդ իրերը, վաշխառուները, միջի մարդիկ, արքունական բանաստեղծները և փիլիսոփաները մաղաչափ անգամ չէին տրանջում այն հանգամանքից, որ պալատականները չէին այդ հաստութիւնները ստեղծողը, որ նրանք մայրաքաղաքում ծախսում էին միայն այն, ինչ որ գիւղական ժողովրդից պլոկում էին իբրև հողատէր-աղնւականներ և կամ իբրև պետական ծառայողներ։ Չէ՞ որ դեռ հիմա էլ այն-

պիսի գիտնականներ են պատահում, որոնք այն սարկական միտքն են քարոզում, թէ իբր շռայլութիւնը միապետների ու նրանց պալատականների սոցիալական պարտականութիւնն է, որպէսզի «ժողովուրդը փող ստանայ»։

Թագաւորական իշխանութեան և դրա հետ միասին նաև պետութեան վրա ազդեցութիւն ձեռք բերած տարրերը հիմա այլ ևս այն չէին, ինչ որ զեմսկի սոտիճանների ժողովում ներկայացուցիչներ էին հանդիսանում։ Դրանք նոր կազմակերպված տարրեր էին, որոնք կարողանում էին թագաւորի վրա ազդել անմիջական կերպով, իրանց անձնական ազդեցութեամբ. այդ, ամենից առաջ, պալատական աղնւականութիւնն ու հոգևորականութիւնն էր իրանց չինօվնիկների ու սիրուհիների ամբողջ բանակով։ Դրանք իրանց նպատակներին հասնում էին ինտրիգների միջոցով։ Դրանցից զատ հիմա ազդեցութիւն էր ձեռք բերել մայրաքաղաքի բնակչութիւնը, որը իր նպատակներին հասնում էր ցոյցերի, իսկ երբեմն էլ ապստամբութեան միջոցով։ Եւ, վերջապէս, ազդեցութիւն էին ձեռք բերել վաճառականները, կապիտալիստները, որոնց վարկը նոր պետութեան ամենակրիտիկական նեցուկն էր ներկայանում։

Իրապէս, առանց կապիտալիստների օգնութեան, թագաւորական իշխանութիւնը երբէք չէր կարող ինքնակալութեան հասնել։ Որպէս զի իր բոլոր հակառակորդների դէմ կարողանար կռիւ մղել, յաղթել կամ կաշառել նրանց, որպէս զի իր կողմնակիցներին ու պաշտպաններին կարողանար վարձատրել, հնարաւորութիւն ունենար իրագործել այն բոլորը, ինչ առաջ անում էին առանձին համայնքներն ու ընկերութիւնները կամ ֆէօդալական պետութիւնները, բայց և որոնք այժմ պետական ֆունկցիաներն էին համարվում, և կամ որպէս զի կարելի լինէր իրագործել այն բոլոր նոր պարտականութիւնները, որոնք էին, օրինակի համար, պահպանողական ոստիկանութիւնը, հաղորդակցութեան միջոցները, ճանապարհներ և ջրանցքներ անցկացնելը, բերդեր և ռազմամթերքների պահեստներ կառուցանելը և այլն, և այլն,—այս բոլոր բաները գլուխ բերելու համար, ասում ենք, թագաւորները շատ աւելի մեծ քանակութեամբ փող պէտք էին ունենում, քան նրանք կարող էին սովորաբար իրանց հպատակներից ստանալ, իրրև հարկ կամ մաքս։ Այդ պատճառով էլ նրանք՝ գնալով աւելի ու աւելի հարկադրված էին լինում փոխառութիւններ անել հարուստ վաճառականներից, ինքնըստինքեան հասկանալի է, նրանց մի որոշ վարձատրութիւն տալով։ Այդ ժամանակից սկսած մինչև այսօր էլ վարկը (кредитъ) պետութեան ամենագլխաւոր նեցուկն է հանդիսանում։ Բիրժային կուրսերի բարձրանալն ու ընկնելը վերջին երկու դարի ընթացքում մի քանի կառավարութիւնների ճակատագիրն էր որոշում։

Ահա դրանք են այն ամենակարևոր գործօնները, որ որոշում էին եւրոպական պետութիւնների քաղաքականութիւնը մինչև ֆրանսիական յեղափոխութիւնը և մինչև իսկ նրանից յետոյ, իսկ երբեմն դեռ մեր ժամանակներում էլ են նրանք որոշում այդ քաղաքականութիւնը: Այդ գործօնների աղեցութիւնը չափազանց մեծ էր, բայց նա որոշված ու կարգաւորված չէր: Իրապէս կառավարում էր ոչ թէ թագաւորը, այլ առանձին մարդիկ, որոշ մարդկանց խմբակներ, որոնց միացնողը նրանց ընդհանուր շահն էր: Բայց նրանք կարող էին կառավարել միմիայն թագաւորի միջոցով: Միապետի իշխանութիւնը անսահման էր. մի քանի բարեյաջող պայմանների մէջ գտնվող անհատների ու խարդախների յաջողվում էր այդ իշխանութեամբ օգտվել և ջատագով իրանց սեփական շահերի, բայց ոչ ոք ամբողջ պետութեան մէջ չէր կարող դիմադրութիւն ցոյց տալ այդ իշխանութեանը:

Համայնական ժողովները, ընդհակառակը, աւելի ու աւելի էին կորցնում իրանց նշանակութիւնը: Մի քանի երկրներում այդ ժողովները իսպառ վերացան, իսկ մի քանիսներում էլ նրանք սկսեցին այնպիսի դեր խաղալ, ինչպէս օրինակ գործարաններում խաղում են բանւորական կոմիտեները. նրանց մնում էր միայն իրանց համաձայնութիւնը յայտնել կառավարութեան բոլոր առաջարկութիւնների

վերաբերեալ, իսկ մի քանի դէպքերում էլ նրանց վրա պարտականութիւն էր ընկնում ամենաղօր ոստիկանութեանը օժանդակութիւն ցոյց տալ:

Այդպէս էին Եւրոպայի զարգացման էական դծերը 17-րդ և 18-րդ դարերում: Բայց կային և բացառութիւններ: Մի քանի երկրներում թագաւորական իշխանութիւնը չը կարողացաւ համայնական ժողովները ոչնչացնել, և այդպիսի տեղերում այդ ժողովները արդէն իրերի դրութեան տէրը դարձան: Անգլիան իրանից ամենաաչքի ընկնող մի օրինակ է ներկայացնում այնպիսի երկրներից, ուր թագաւորների ինքնիշխանութեան ձգտելու տենդենցիան շեղվում է ընդհանուր օրէնքից:

Այն պատճառները, որոնց շնորհով Անգլիան այդ կողմից բացառութիւն կազմեց, շատ բազմազան էին: Նրանցից ամենագլխաւորները մենք համարում ենք հետևեալները: Այն է՝ 17-րդ դարի վերջում, երբ աբսօլիւտիզմը պէտք է Անգլիայում իր վերջին վճռողական կռիւը մղէր, անգլիական թագաւորական իշխանութիւնը սկովդիական թագաւորների ձեռքը անցաւ, որոնց պետութիւնը իրանից ընդհանրապէս այնպիսի յեռաւոյց շրջան էր ներկայացնում, ուր դեռ ցեղային կազմը պահպանվել էր իր ամբողջութեամբ, և թագաւորները էլ դեռ ևս համայնքների կատարեալ աղեցութեան տակ էին գտնվում: Ամբողջ 17-րդ դարի ընթացքում Սկօվդիան էր Սթիւ-

արտերի տան թագաւորների թուլութեան պատճառը, որոնք Անգլիայում անսահման իշխանութեան էին ձգտում ճիշտ այնպէս, ինչպէս որ Ունգարիան էր, մինչև վերջին ժամանակներս, շարունակ արգելք հանդիսանում Հաբսբուրգների ինքնակալական ձգտումներին։

Աւելի ևս մեծ նշանակութիւն ունէր Անգլիայի կղզիական դրութիւնը։ Նրա ոյժն ու ապահովութիւնը ոչ թէ ցամաքային զօրքն էր կազմում, այլ նաւատորմիղը։ Այդ պատճառով էլ, ապրանքները պատրաստող ու նրանց վաճառականութեամբ պարապող, բուրժուազիան ոչ մի հիմք չունէր միապետների զօրաւոր ու մշտական ցամաքային զօրք ստեղծելու ձգտումները պաշտպանել։ Անգլիան զրկված էր բռնապետութեան այդ ամենահաւատարիմ զէնքից անսահման իշխանութեան համար մղված կուի վճռական ժամանակներում։ Բայց Անգլիայի կղզիական դրութիւնը շատ մեծ նշանակութիւն ունեցաւ և այն պատճառով, որ 16-րդ դարից սկսած,—երբ դէպի Հնդկաստան ծովային ճանապարհ և, Ամերիկան գտնվելուց յետոյ, եւրոպա ան վաճառականութեան կենտրոնակէտը Միջերկրական ծովի ափերից տեղափոխվեց Ատլանտեան ովկիանոսի ափերը—Անգլիայում մասնաւորապէս նպաստաւոր հանդամանքներ ստեղծվեցին արդի կապիտալիստական բուրժուազիայի զարգանալու համար։ Առաջին ժամանակներում Անգլիան Պորտուգալիայի, Սպանիայի, Հոլանդիայի ծաղկած համաշխարհային վաճառականութեան մէջ մասնակցում էր միայն ծովի վրա աւազակութիւններ անելով, որից մանաւանդ աստիկ տուժում էր սպանական նաւատորմիղը։ Շուտով Անգլիան արդէն այն աստիճան ուժեղացաւ, որ այլևս կարող էր փոքր ինչ ձևակերպութեան մէջ դնել իր կողոպտիչ գործունէութիւնը. նա ինքն էլ սկսեց կօլոնիաներ նուաճել և ընդարձակ անդրովկեանեան վաճառականութիւն զարգացրեց, բայց, ի հարկէ, ոչ այն վաճառականութիւնը, որ հիմա օրինական են անուանում, այլ գլխաւորապէս մաքսանենգային և գերիների վաճառականութիւնը։ Լօնդօնը արագութեամբ զարգացաւ և համաշխարհային կենտրոնը դարձաւ, գերազանցելով Լիսսաբօնին և Անտվերպենին. 17-րդ դարի վերջում, վաճառականութեան տեսակէտով, նա միայն մէկ մրցակից ունէր՝ Ամստերդամը։ Իր բնակիչների քանակով նա այն ժամանակն էլ արդէն առաջին տեղն էր բռնում եւրոպական մեծ քաղաքների մէջ. նրա մէջ հաշւում էին մինչև 500,000 բնակիչ։ Բայց դրանից նա ժի բաւականին պատկառելի քաղաքային միլիցիա ունէր։ Բայց դրա հետ մէկտեղ Լօնդօնը աւելի նուազ ճոխութեան ու շռայլութեան քաղաք էր, քան պարզիզը. նրա ծաղկումը աւելի վաճառականութեան զարգացումից էր կախված, քան ար-

քունիքի և պալատականների շահայուբիւնից։ Նա զօրաւոր կառավարութիւն ունենալու կարիք էր զգում իր շահերը պաշտպանելու համար ոչ թէ պետութեան ներսում, այլ արտասահմանում։ Մինչդեռ Ստիւարտները իրանց ամբողջ ոյժը գործ էին դնում իրանց անսահման իշխանութիւնը հաստատել կարոդանալու համար ու բոլորովին հոգ չէին տանում զօրաւոր արտաքին քաղաքականութիւն պաշտպանել, որպէսզի Անգլիայի համաշխարհային վաճառականութիւնը պահպանվէր ու զարգանար։

Անգլիական և, նամանաւանդ, Լօնդօնի բուրժուազիան արդէն այն աստիճան ուժեղ, համարձակ և ինքնավստահ էր, որ նա հանգամանքների սիրոդականութիւնից դրդված դեռ 17-դ դարի մէջում, դաշնակցելով ազնուականութեան մի մասի, նոյնպէս և մանր բուրժուազիայի և գիւղացիութեան ճնշվորդների հետ, խիզախեց պատերազմ յայտարարել թագաւորական իշխանութեանը, որը յենւում էր ազնուականութեան միւս մասի և պալատական հոգևորականութեան վրա։ Բուրժուազիան յաղթեց այդ կուի մէջ, բայց այդ յաղթութեան հետևանքը այն եղաւ, որ մանր բուրժուազիայի և գիւղացիութեան մի ամբողջ բանակի դիկտատուրա ստացվեց։

Այստեղ նոյնը պատահեց, ինչ որ յետագայում կրկնվեց ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ և 1848 թւականին կօնտինենտի վրա. բուրժուազիան, աշխատաւոր դասակարգերի դիկտատուրայից սարսափած, նորից թագաւորական իշխանութեան և նրա յետևում կանգնած պալատական ազնուականութեան գիրկը նետվեց *)։ Նա դաշնակցութեան մէջ մտաւ հողատէր ազնուականութեան հետ, և այդ դաշնակցութիւնը տևեց մինչև ֆրանսիական յեղափոխութիւնից յետոյ և մինչև իսկ անքակտելի ճնշց մինչև 19-րդ դարի առաջին տասնամեակը։ Անգլիայի խորը հողատիրական ինքնուրոյն բնաւորութեան ստացած ձևը պատճառ եղաւ, որ խորը բուրժուազիան կարողացաւ այդչափ երկար ժամանակ դաշնակցութեան մէջ ճնշել խորը հողատէրերի հետ։ Կարմիր և սպիտակ վարդի երեսնամեայ քաղաքացիական պատերազմը համարեա թէ ընաջինջ արեց բարձրագոյն ազնուականութիւնը։ Նրա աւերակների վրա ծագեց նոր ազնուականութիւնը—խորը հողատէրերը։ Այդ ազնուականութիւնը ստեղծողը Հենրիխ VII-ը եղաւ, որը վերջ դրեց քաղաքացիական պատերազմին։ Հենրիխ VIII-ը և նրա որդին, Էդուարդ VI-ը, ազնուականութեան այդ նոր խաւը բազմացրին և հարստացրին ի հաշիւ եկեղեցու, գիւղերի և հիւանդանոցների, սրանց կալուածները գրաւելով։ Խորը հողատիրութեան երկրորդ նորոգումը կատարվեց Կարլ առաջինի և պարլամենտի մէջև ծա-

*) Նոյն բանը պատահեց և Թուսաստանում անցեալ դ. թ. 1905 թ.

գած քաղաքացիական պատերազմի շնորհով։ Ազնւականներից շատերը այդ ժամանակ կորցրին իրանց կալուածները, մասամբ գրաւումների, իսկ մասամբ էլ աւերումների ենթարկվելու պատճառով։ Նրանց կալուածները հարստացած բուրժուաների ձեռքը անցան։ Ստիւարտների բռնատիրացիան ազնւականներից շատ քչերին վերադարձրեց նրանց այն կալուածները, որ կորցրել էին քաղաքացիական պատերազմի ժամանակ։ Ոչ մի զարմանալու բան չը կայ, որ անգլիական հողատէրերը բոլորովին տարբեր դուրս եկան, քան կօնտինենտի արիստօկրատիան էր, օրինակի համար, Ֆրանսիայում։ Այս վերջինը պահպանում էր ֆէօդալական ժամանակների տարեդիցիան և արհամարհանքով էր վերաբերվում արդիւնաբերող և առևտրական դասակարգերին։ Փող վաստակելը այդ արիստօկրատիայի շրջանում արատ էր համարվում։ Նրա կալուածներից ստացվող հասոյթները գնալով նուազում էին, որովհետև պատւասիրութիւնը նուրբ զգացումը նրան թոյլ չէր տալիս բացիօնալ հողագործութեան մասին հոգ տանելու։ Բայց այդ նոյն զգացումը նրան չէր խանգարում իր դեֆիցիտները ծածկել մուրացկանութեամբ (թագաւորից), գողութեամբ (զանձարանից) և պարտքերով (կապիտալիստներից)։ Այդ արիստօկրատիան կատարելապէս անանկացաւ 18-րդ դարի ընթացքում։

Անգլիական խոշոր հողատէրերի մեծամասնութիւնը առաջ էր եկել ոչ-արիստօկրատիային պատկանող ճարպիկ մարդկանցից, որոնք արդէն ըմբռնել էին կապիտալիզմի ոգին։ Նրանք աշխատում էին իրանց կալուածները կապիտալիստական եղանակով շահագործել կապալառուների միջոցով, նրանք անպատւաբեր չէին համարում առևտրական գործերը և հասկանում էին, որ պէտք է բուրժուազիային, մանաւանդ հարուստ բուրժուազիային գնահատել։ Նրանք հարստանում էին հէնց կօլօնիական քաղաքականութեան մէջ մասնակցելով։ Կուտակված հարստութիւնները նրանք գործ էին ածում իրանց կալուածները ընդարձակելու և աւելի ու աւելի բարեկարգելու վրա։ Ճիշտ այն դարում, երբ ֆրանսիական արիստօկրատիան կատարելապէս սընանկացաւ, անգլիականը մի շատ մեծ դրամական ոյժ դարձաւ։ Անգլիական արիստօկրատիան, նոյնչափ եռանդուն և գործունեայ լինելով, ինչպէս և այն ժամանակվայ բուրժուազիան էր, ոչ միայն իր անձնական գործերով էր զբաղվում, այլև ամենաեռանդուն մասնակցութիւն էր ցոյց տալիս պետական գործերում։ Ամեն տեղ, ուր հնարաւորութիւն կար, արիստօկրատիան իր ձեռքում պահեց պետութեան վարչական գործերը, որի շնորհով բիւրօկրատիան Անգլիայում աւելի շատ զարգացաւ, քան եւրօպական ներկայ պետութիւններից որևէ մէկում։ Միևնոյն ժամանակ նա հասկանում էր, որ պետութիւնը վարած

ժամանակ պէտք է և խոշոր բուրժուազիայի շահերը ի նկատի ունենալ, որին նա այնքան մօտ էր զգում իրան:

Անգլիական հողային արիստոկրատիան, շնորհիւ իր վերանորոգութեանը 15-րդ և 17-րդ դարերում, շատ աւելի երկար պահպանվեց, քան մի այլ որևէ երկրի արիստոկրատիան, և միևնոյն ժամանակ Անգլիացի կապիտալիստական բուրժուազիան էլ մասնաւորապէս վաղ զարգացաւ:

Այդ երկու դասակարգերը անյաղթելի ոյժ դարձան շնորհիւ իրանց դաշնակցութեան, որ նրանք կապեցին այնպիսի նպաստաւոր պայմաններում, որ գոյութիւն ունէին Անգլիայում: Եւ թագաւորական իշխանութիւնը ստիպված էր խոնարհվել նրանց առաջ և նրանց ներկայացուցչութեան՝ պարլամենտի առաջ:

Ծայրագոյն արևմուտքում կատարված հասարակական յարաբերութիւնների զարգացման ընթացքի ճիշտ հակառակն ենք մենք տեսնում Եւրոպայի արևելքում՝ Լեհաստանում: Այնտեղ էլ արիստոկրատիան յաղթեց թագաւորական իշխանութեանը, այնտեղ էլ այս վերջինին չաջողվեց զեմսկի իշխանաւորների ժողովների վրա տիրապետութիւն ունենալ: Սակայն լեհական կայսրութեան ժողովը (սէյմը) բոլորովին այլ սոցիալական հիմունքների վրա էր հիմնված, քան անգլիական պարլամենտը: Լեհաստանում հողային արիստոկրատիան անսահման իշխանութեան հասաւ հասարակական յարաբերութիւնների յետամնացութեան շնորհով: Առևտրական ճանապարհների փոփոխութիւնները,—որ տեղի ունեցան դէպի Հնդկաստան ծովային ճանապարհ գըտնելու պատճառով,— նոյնպէս և թուրքերի առաջխաղացութիւնը Լեհաստանին շատ աւելի մեծ վնաս հասցրեցին, քան թէ Գերմանիային: Լեհական բուրժուազիան կատարելապէս ընկաւ, նա այլ ևս չը կարողացաւ կռիւ մղել արիստոկրատիայի գերադաս ոյժերի դէմ: Ֆէօդալական անարխիայի զարգանալուն խանգարող բոլոր արգելքները հեռացան. թագաւորը ոյժ չունէր կայսրութեան ժողովի առաջ, այս վերջինը ոյժ չունէր արիստոկրատիայի առանձին ներկայացուցիչների առաջ, որոնցից իւրաքանչիւրը իրան բռնում էր իրրև մի անկախ թագաւոր: Զեմսկի իշխանաւորների ժողովների այն առանձնայատկութիւնը, որ նրանք՝ այդ ժողովները, որոշելով գործերը ոչ թէ ձայների մեծամասնութեամբ, այլ միաձայնութեամբ, ծառայում էին միմիայն կարծիքների մէջ համաձայնութիւն կայացնելու համար, ոչ մի տեղ այնպէս խիստ կերպով չարտայայտվեց, ինչպէս լեհական սէյմում, որտեղ մէկ հատ ազնւականի veto-ն ամեն մի որոշում վաւեր էր դարձնում:

Բոլորովին տարբեր բնաւորութիւն էին կրում զեմսկի իշխանաւորների ժողովները Անգլիայում, որտեղ արիստոկրատիայի ոյժի գերակշռութիւնը թագաւորական իշխանու-

թեան վերաբերմամբ հիմնված էր նրա վրա, որ խոշոր հողատիրութիւնը յարմարվել էր արդիւնաբերութեան կապիտալիստական եղանակին և միացել էր կապիտալիստների դասակարգի հետ։ Ժամանակակից պետութեան առօմացնելու և կենտրոնացնելու տենդենցիաները նոյն չափով երևան եկան Անգլիայում, ինչպէս և արևմտեան Եւրոպայի մնացեալ միապետութիւններում։ Այդ տենդենցիաները այստեղ էլ, ճիշտ այնպէս, ինչպէս և Ֆրանսիայում, առաջացրին կենտրոնական իշխանութեան անպայման տիրապետութիւնը, որը թոյլ չէր տալիս ոչ մի ընդիմադրութիւն, ոչ մի քննադատութիւն։ Անգլիայի և Ֆրանսիայի միջև եղած տարբերութիւնը միայն նրա մէջ էր կայանում, որ Ֆրանսիայում բացարձակ կենտրոնական իշխանութիւնը պատկանում էր թագաւորին, իսկ Անգլիայում՝ պարլամենտին *)։

Բանի թագաւորական իշխանութեան և պարլամենտի միջև մղվող կռիւը աւելի էր զօրեղացնում այս վերջինի իշխանութիւնը, քանի առանձին կոմսութիւններն ու քաղաքները ձուլվում, մի ազգ էին կազմում, այնքան էլ պարլամենտի էական գծերը փոխվում էին։ Իւրաքանչիւր պատգամաւոր դադարեց իրան

*) Պարլամենտի ամենակարող լինելը շատ լաւ կերպով բնորոշվում է անգլիական առակով. «Պարլամենտը ամեն բան կարող է անել, նա չէ կարող միայն տղամարդին կին դարձնել»։ Ծ. Հ.

մի առանձին տերրիտօրիայի կամ առանձին կօրպօրացիայի ներկայացուցիչ ղռալ և այլևս իր պղտեցութիւնը չէր համարում իբրև ուղղակի հետևանք իրան պարլամենտ ուղարկող տերրիտօրիայի կամ կօրպօրացիայի ունեցած պղտեցութեան։ Պարլամենտը այլևս իրանից չէր ներկայացնում իբրև անկախ իշխանաւորի (կամ բարձրագոյն կազմակերպութիւնների ներկայացուցիչների) մի ժողով, այլ նա այլևս մի ամբողջութիւն դարձաւ. իր ամբողջութեամբ նա ամեն բանի տէրն էր հանդիսանում և պետութեան մէջ ամեն մի իշխանութեան աղբիւրն էր իրանից ներկայացնում։ Սակայն պարլամենտի գերիշխանութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նրա մէջ եղած մեծամասնութեան գերիշխանութիւնը։ Համայնքների և տերրիտօրիաների տնտեսականապէս ու քաղաքականապէս անկախութիւնից ոչնչանալով, ոչնչանում է և առանձին պատգամաւորների ինքնուրոյնութիւնը պարլամենտում։ Պարլամենտական վոքրամանութիւնը պարտաւոր է նոյնպէս անպայման կերպով հնազանդել մեծամասնութեանը, ինչպէս և ամբողջ երկիրն էլ պարտաւոր է պարլամենտին հնազանդել։ Պարլամենտական մեծամասնութեան կամքը դառնում է բարձրագոյն օրէնք. Լիւդովիկ XIV-դի նման, մեծամասնութիւնը կարող է ասել. պետութիւնը ես եմ։ Թագաւորներն ու մինիստրները նրա սպրուկներն են դառնում։

Եւ այդ սորուկները, ինչպէս և բոլոր ուրիշները, թէև երբեմն կարողանում էին ազդեցութիւն բանեցնել (մեծ մասամբ ամենաստոր միջոցներով) իրանց տէրերի վրա և ուղղել նրանց գործունէութիւնը, համաձայն իրանց սեպհական շահերի, բայց և այնպէս, այդպիսի միջոցներով ձեռք բերված սորուկի ազդեցութիւնը իր տիրոջ վրա մազաչափ չէ փոխում նրանց յարաբերութիւնների էութիւնը։

Պարլամենտի մեծամասնութիւնն ու փոքրամասնութիւնը, XVII-դ դարից սկսած, միաձոյլ կուսակցութիւնների են փոխվում. վիգիները և տօրիները **)։

Նախկին դասային ժողովների օրով պետութեան մէջ անկարող էին միաձոյլ կուսակցութիւններ գոյութիւն ունենալ. տեղական կօրպօրատիվ շահերի միմեանցից զերակշիռ լինելու պատճառով ոչ միայն պետութեան ամբողջ կազմը, այլ և նրա մէջ կազմվող կուսակցութիւնների կազմը պէտք է որ չափազանց անհաստատ լինէին։ Վերջիններս նոյն իսկ անդադար փոփոխվում էին։ Արդիւնաբերութեան արդի եղանակը և արդի պետութիւնը պէտք է նախ յաղթած լինէին դասերի, ցեխերի, համայնքների և այլն առանձնայատկութիւնները, որպէս զի սիևնոյն երկրում ապրող և միևնոյն դասակարգի անդամները իրանց դասակարգային ընդհանուր շահերի գիտակցութեանը հասնէին, որպէս զի կարելի լինէր այնպիսի դասակարգեր կազմել, որոնք կարողանային այս լինչ ազգի մէջ եղած իրանց բոլոր անդամներին միմեանց հետ միացնել. իսկ այդ ազգային դասակարգերի և դասակարգային շահերի հիման վրա էլ մշտական միաձոյլ կուսակցութիւններ կազմել։

Բայց որչափ մեծ ազդեցութիւն և այժ է ձեռք բերում պարլամենտը, որչափ նա աւելի է իրան հպատակեցնում պետական իշխանութիւնը, այնչափ էլ աւելի մեծ է լինում պարլամենտական այն կուսակցութեան վաստակը, որը կարողի մեծամասնութիւն դառնալ։ Այդ է պատճառը, որ քաղաքական գործիչները մեծ ջանքեր են թափում մէկ կուսակցութեան մէջ ամփոփել այն բոլոր տարրերը, որոնք իրանց ընդհանուր նպատակներով միանում են, թէև երկրորդական խնդիրների վերաբերեալ նրանք շատ էլ տարակարծիք լինեն։ Եւ այդ է պատճառը, որ մարդիկ ամեն կերպ աշխատում են երկրորդական խնդիրների վերաբերեալ եղած կարծիքների տարբերութիւնը խեղդել։ Այդ բոլորի հետևանքն է կուսակցական դիսցիպլինան, «կուսակցական բռնակալութիւնը». պարլամենտական միահեծանութեան հետ միաժամանակ առաջ է գալիս և կուսակցական մեծամասնութեան միահեծանութիւնը։

Սակայն, այդ «բռնակալութիւնը» և այդ

*) Վիգի և տօրի անուններով կոչվում են անգլիական պարլամենտի երկու մեծ կուսակցութիւնները։

Ծ. Թ.

«տերրօրիզմը» միմիայն պարլամենտարիզմի առանձնայատկութիւնները չեն։ Դրանք նկատվում են ամենուրեք, ուր որ աւել կամ նուազ թուով համախմբված մարդիկ լուրջ կռիւ են մղում, ուր որ յաղթութիւն կարելի է տանել ժիժիայն, երբ կուսակցութեան բոլոր անդամները սեղմված շարքերով և միահամուռ կերպով են գործում միևնոյն ուղղութեամբ։ Ոչինչ այնքան ծիծաղելի չէ, քան այն շանթերը, որ արձակվում են պրօֆեսսիօնալ միութիւնների տերրօրիզմի դէմ այն լիբերալ պօլիտիկոսների կողմից, որոնք հէնց իրանք են տնքում կուսակցութիւնների ֆրակցիաների լուծի տակ։ Բայց նոյնչափ և զուարճալի է, երբ անարխիստները գովաբանում են պրօֆեսսիօնալ միութիւնները, իբրև «ազատութեան» յենարանի, այսինքն՝ անտրխիստական թափթփածութեան, հակառակ պարլամենտական «բռնակալութեան»։

Ազատութիւն այն մարդով, ինչպէս որ անարխիստներն ու լիբերալներն են նրան հասկանում, գոյութիւն չունի ոչ պրօֆեսսիօնալ միութիւնների և ոչ էլ պարլամենտական կուսակցութիւնների մէջ։

V

Արդի դեմօկրատիան

XVIII-դ դարը միահեծանութեան ամենազարգացած կէտն է ներկայացնում իրանից։

XVIII-դ դարում պետութիւնը, ինչպէս Անգլիայում, այնպէս էլ ամբողջ Արևմտեան Եւրոպայում, իրանից մի ջերմոց էր ներկայացնում առևտրական և արդիւնագործական կապիտալիստներ աճեցնելու համար, իսկ դրանց հետ միաժամանակ աճում էր և պրօլետարիատը։ Միւս կողմից պետութիւնն էլ մի մեծ գործիք (ապարատ) էր ներկայացնում իրանից, ժողովուրդը կողոպտելու համար ի նպաստ աղնւականութեան մի մասի. Անգլիայում՝ ի նպաստ այն մասի, որը պետական գործերի տնօրինութեամբ էր զբաղվում, իսկ Արևմտեան Եւրոպայում՝ ի նպաստ պալատական աղնւականութեան և ֆինանսական արիստօկրատիայի։

XVIII-դ դարի ընթացքում ժողովրդի մէջ աւելի ու աւելի էր աճում դայրոյթը ընդդէմ պետութեան այդ երկու կողմերի էլ։ Հաղորդակցութեան ճանապարհները և արդիւնագործութիւնը այնպիսի խոշոր զարգացման հասան և այնպիսի քնաւորութիւն ընդունեցին, որ այլ ևս ծանրակշիռ պետական բիւրօկրատիայի հոգատար խնամակալութիւնը արգելք էր հանդիսանում արդիւնագործութեան միջոցների յետագայ զարգացմանը։ Այժմ տնտեսական կեանքի մէջ այլ ևս արտադիրների չէին հետևում, և կառավարչի մրցութեան մէջ յաղթութիւնը նա էր տանում, ով աւելի լաւ էր կարողանում յանկարծակի ծագող և նորից անհետացող նոր ու նոր հանգամանքներից օգտվել, ով կարողանում էր ուրիշներից աւելի շուտ օգտվել մի որևէ նոր դիւտից, ով

կարողանում էր ուրիշներից աւելի շուտ յարմարվել շուկայի ամեն մի տրամադրութեանը։

Այժմ կապիտալիստների լծուկը այլ ևս զարձել էր ազատութիւնը, այլ ոչ թէ պետական պահպանութիւնը։

Բայց բուրժուազիան ոչ միայն տնտեսական ազատութիւն էր պահանջում, այլ և քաղաքական։ Նա իրան այն աստիճան զօրացած էր զգում իր քանակով, իսկ աւելի ևս իր մտաւոր զարգացողութեամբ և տնտեսական ոյժով, որ Անգլիայում և Ֆրանսիայում նա իրան բաւականին ուժեղ զգաց արիստոկրատիայի լուծը թօթափելու համար։ (Ֆրանսիայում այդպիսի մի փորձ արվել էր դեռ XVII-դ դարի կէսում)։ Այդ լուծը թօթափելու առթիը այնչափ աւելի էր մեծանում, որչափ արիստոկրատիական իշխանութիւնները աւելի էին կողոպտում ժողովրդին։

XVI և XVII-դ դարերում ու XVIII-դ դարի առաջին կէսում խոշոր վաճառականութիւնը և կապիտալիստական արդիւնագործութիւնը գլխաւորապէս ծառայում էին ճոխութեան ու շռայլութեան համար։ Հաղորդակցութեան ճանապարհների պակասութեան պատճառով, ապրանքների փոխադրութիւնը դէպի հեռաւոր տեղեր կարելի էր լինում ծածկել այն դէպքում միայն, եթէ ապրանքները համեմատաբար բարձր գնանոց էին։ Անդրովկեանեան վաճառականութիւնը, ոսկու և արծաթի հետ, Եւրոպա էր բերում թանկագին ակներ, թանկ

հաժամեղէններ, շքեղ գործուածքներ և այլ այդ կարգի բաներ։ Եւրոպայի կապիտալիստական արդիւնագործութիւնը, այսինքն՝ այն արդիւնագործութիւնը, որը ապրանքներ էր արտադրում համաշխարհային շուկայի համար, ուղարկում էր մետաքսէ գործուածքներ, գօբլէններ*), ճենապակի և այլ այդ կարգի իրեր։ Այն ժամանակներում կապիտալիզմը իր օգուտները սատնում էր, շնորհիւ արիստոկրատիայի շահագործութեան և շռայլութեան։

Բայց հետզհետէ, հաղորդակցութեան ճանապարհների և արդիւնագործութեան միջոցների լաւանալու շնորհով, շքեղ իրերի հետ սկսում են արտադրվել և ընդհանրութեան համար գործածվող իրեր։ Եթէ շքեղ իրերի արդիւնագործութիւնը իր զարգացման համար հարուստ ու շռայլ դասակարգի կարիքն էր զգում և այնքան աւելի լաւ էր զարգանում, որքան որ արիստոկրատիան շատ էր կողոպտում ժողովրդին, ընդհանրութեան համար գործածվող իրերի արդիւնագործութիւնն էլ այնքան աւելի լաւ կարող էր զարգանալ, որչափ որ ժողովրդի գնելու ընդունակութիւնը բարձր լինէր և, ուրեմն, որչափ որ նա քիչ շահագործվէր հարուստ դասակարգերի կողմից։ Արդիւնագործութիւնը որչափ աւելի ու աւելի էր անցնում ընդհանրութեան համար գործածվող իրերի արտադրութեանը, այն-

* Գօբլէնը խալիների ամենանուրբ և շքեղ տեսակն է, որ պատրաստվում է Պարիզում։ Ծ. Թ.

քան էլ բուրժուազիայի համար աւելի անտանելի էր դառնում արիստոկրատիայի կողոպտիչ սիստեմը։

Եւ քանի արդիւնագործութիւնը ընդհանրութեան համար իրեր արտադրող էր դառնում, այնքան էլ երկրում աճում էր (արդիւնագործական բանւորների համար) կենսական պէտքերի և հում նիւթերի պահանջը։ Տեղական արտադրութիւնը այլ ևս անկարող էր հանդիսանում աճող պահանջին բաւականութիւն տալ։ Առաջին պէտքերի համար գործածվող իրերի և հում նիւթերի ներմուծումը, գնալով, աւելի ու աւելի կարևոր հարց էր դառնում արդիւնագործ դասակարգերի համար։ Իսկ հողատէրերի շահերը բոլորովին հակառակն էին։

Այս բոլոր հանգամանքները մի քանի երկիրներում բոլորն էլ ի մի առնված, իսկ միքանիսում էլ, գոնէ, առանձին առանձին, նախ Անգլիայում և Ֆրանսիայում, իսկ յետոյ և միւս եւրոպական երկիրներում, պատճառ էին դառնում բուրժուազիայի շարունակաբար աճող ատելութեան դէպի արիստոկրատիական կառավարութիւնը, ինչ ձևի տակ էլ սա արտայայտվելիս լինէր. թէ իբրև պարլամենտական պետութիւն և թէ անսահման միապետութիւն։

Բայց բուրժուազիայի հետ միաժամանակ սկսեցին շարժվել և ստորին դասակարգերը, գիւղացիները և մանր բուրժուազիան, որոնց

հետ մէացաւ և արդիւնագործական պրօլետարիատը։ Այս դասակարգը դեռ ինքնուրոյնութիւն չէր ցոյց տալիս և ձեռք ձեռքի տուած էր ընթանում մանր բուրժուազիայի աւելի յեղափոխական խաւերի հետ։ Այս դասակարգերի վրա էր ընկնում պետութեան ամբողջ ծանրութիւնը. գլխաւորապէս պետութիւնը գրանցից էր միջոցներ ստանում իր ծախսերը ծածկելու համար, ծախսեր, որոնք անհրաժեշտ էին բիւրօկրատիան պահպանելու և միլիտարիզմի համար։

Գիւղացիները, մանր բուրժուազիան և պրօլետարիատը—որչափ որ կարելի է պրօլետարիատի մասին խօսք լինել նախկին դարերում—հէնց սկզբից միշտ ցայտնի էին իրանց ատելութեամբ դէպի ծագող անսահման պետական իշխանութիւնը և դէպի արիստոկրատիայի կողմից պետութեան շահագործումը։ Բայց ամեն տեղ, ուր որ նրանք փորձում էին դիմադրութիւն ցոյց տալ, սովորաբար պարտութիւն էին կրում, իրանց առանձնացման և զատ-զատ համայնքների ու շրջանների միջև կապեր չունենալու շնորհով։ Այդ հանգամանքի շնորհով պետական իշխանութիւնը շատ հեշտութեամբ էր յաղթում նրանց։

Բայց ժամանակի ընթացքում պետական մեքենան և կապիտալիզմը—առևտուրը, պետական հարկերը, գինւորական ծառայութիւնը և այլն—սկսեցին ազդեցութիւն գործել ստորին դասակարգերի վրա։ Փոքր առ

փոքր անհետացաւ նրանց տեղային, ծխական քաղաքականութիւնը, մի տեղ աւելի վաղ, իսկ միւս տեղ աւելի ուշ։ Նամանաւանդ այդ քաղաքականութիւնից հրաժարվեցին մանր բուրժուազիան և պրօլետարիատը, մինչև իսկ փոքր քաղաքներում ապրողները, որոնք աւելի ու աւելի սերտ յարաբերութեան մէջ էին մտնում մեծ քաղաքներում ապրող իրանց ընկերների հետ։ Այս վերջիններից օրինակը իրրև մի նմուշ ծառայեց ամբողջ երկրի աշխատաւոր դասակարգերի համար։ Իսկ կապիտալիստական արդիւնագործութիւնը հիմա մեծ քաղաքներում կենտրոնացնում էր բազմաթիւ պրօլետարներ, բացի դրանցից նոյնպէս և մանր վաճառականներ ու մանր արհեստաւորներ, որոնք իրանց վաստակը ճարում էին պալատական շռայլութեան համար արտադրվող արդիւնագործութիւնից անկախ կերպով։ Պալատական պերճութիւնն էլ առաւել էր աշխատաւոր մասսաների գիտակցութեան մէջ դդալ տալիս իրանց սեփական աղքատութիւնը և թշուառների սրտերում առելութիւն էր կուտակում դէպի արքունիքը և դէպի նրանց պնակալէզ արբանեակները։

Բացի թշնամաբար տրամադրված կապիտալիստներից ու աշխատաւոր դասակարգերից, աբիսոկրատիական ըէժիմը շուտով մի երրորդ հակառակորդ էլ վաստակեց յանձին բուրժուազական ինտելիգենցիայի. վաստակաւոր

բանների, պրօֆեսսօրների, բժիշկների, գրականագէտների, նկարիչների և այլն։

16-դ և 17-դ դարերում այս դասակարգերը դեռ ևս ուղղակի կամ անուղղակի կերպով կախումն ունէին պալատական արիստոկրատիայից։ Միջին դարերում եկեղեցին էր իրրև ապաստարան ծառայում գիտութիւնների և արուեստների համար։ Իսկ րենեսանսից դէպս, այն ժամանակներից ի վեր, երբ եկեղեցին դադարեց այլևս այդպիսի ապաստարան լինել, ամեն մի գիտնական, ամեն մի բանաստեղծ, որը ապահովված չէր իր սեփական միջոցներով, կարող էր իր կոչմանը նուիրվել միմիայն մի որևէ նշանաւոր աղայի հովանաւորութեան տակ, որը պատիւ էր անում նրան, իր լաքէյների թւի մէջ ընդունելով։ Բայց քանի բուրժուազիան զօրանում էր, այնչափ էլ նրա հարստութիւնն էր աճում, իսկ դրա հետ մէկտեղ, գոնէ նրա մի քանի անդամների համար, աւելանում էին և հանգստեան ազատ ժամերը։ Քանի ընդարձակվող յարաբերութիւնները և աճող կարիքները մի առանձին ուսեալ մարդկանց դասակարգի անհրաժեշտութիւն էին ծագեցնում և մի տեսակ շուկա էին առեղծում այդպիսինների՝ վաստակաւորների, բժիշկների, ճարտարապետների, ուսուցիչների և այլոց համար, երբ վերջապէս, առօրեայ դասակարգերն էլ են սկսում, նամանաւանդ մեծ քաղաքներում, մասնակցութիւն ունենալ ազգի քաղաքական

և մտաւոր կեանքի մէջ, գրքեր, լրագրներ են կարդում և այլն,—քանի այս բոլորը, ասում ենք, հետզհետէ զարգանում են, ինտելիգենցիան էլ աւելի ու աւելի իրան անկախ է զգում պալատից ու արիստօկրատիայից։ Այդ ժամանակ գիտութեան և արուեստների մէջ էլ արդէն կարող էին այնպիսի տենդենցիաներ երևալ, որոնք թշնամաբար վերաբերվէին այդ իշխանութիւններին, և այդ տենդենցիաները շուտով վերակշիռ տեղ բռնեցին գիտութեան և արուեստի մէջ, որովհետև իրերի տրամաբանութիւնը արիստօկրատական բէժիմի հակառակն էր խօսում, և որովհետև ինտելիգենցիայի մեծամասնութիւնը բուրժուազիայից ծագումն ունէր և իր սոցիալական դիրքով ու իր շահերով աւելի նրան էր մօտիկ կանգնած։

Բայց ինտելիգենցիան իր լայն հայեացքների շնորհով բուրժուազիայի միւս խաւերից աւելի բարձր էր կանգնած և նրան, ընդհանրապէս, շատ հետաքրքրում էլ չէին այս վերջին ժամանակաւոր շահերը։ Այդպիսով, բուրժուազական ինտելիգենցիան բուրժուազիայի առաջաւոր մարտիկը դարձաւ, նրա հիմնական դասակարգային շահերի հետազօտողն ու ներկայացնողը եղան։ Սակայն այն, ինչ որ այն ժամանակներում պահանջում էր բուրժուազիան, միանգամայն համապատասխանում էր ամբողջ հասարակական զարգացման շահերին, ինչպէս և ստորին դասակարգերի շահերին,

որոնք ստիպված էին բարձր դասակարգերի հետ միասին կռիւ մղել մի ընդհանուր թշնամու դէմ, արիստօկրատների իշխանութեան և սրանց օգտին կառավարութեան կողմից ժողովրդին շահագործելու դէմ։

Այդ իշխանութեան լուծը այնչափ ծանր էր, շահագործութիւնը այն աստիճան անսահման, որ դրանց համեմատութեամբ բոլորովին նսեմանում էին ժողովրդի առանձին դասակարգերի միջև գոյութիւն ունեցող բոլոր հակառակութիւնները, ինչպէս օրինակ՝ քաղաքի և գիւղի միջև, վարձու բանւորի և կապիտալիստի միջև, արհեստների և խոշոր արդիւնաբերութեան միջև, այս վերջինի և վաճառականութեան միջև և այլն։

Բուրժուազական ինտելիգենցիան այն դասակարգն էր, որը ամենից աւելի նպաստեց ժողովրդի զանազան դասակարգերի միջև միութիւն հաստատելուն, որը այդ միութեան ամենաամուր օղակը եղաւ։ Այդ ինտելիգենցիան ամենից քիչ ենթարկվեց այն մօտիների ազդեցութեանը, որոնք բաժանումներ էին առաջացնում զանազան դասակարգերի միջև. նա բոլորից էլ աւելի լայն հակա-նում նրանց միմեանց հետ միացնող շահերը։

Դեմօկրատիական շարժումը, որ այդ միութեան պտուղն էր և որը զարգացաւ 18-րդ դարի վերջին տասը տարիների ընթացքում, իր վրա բուրժուազական ինտելիգենցիայի կնիքն էր կրում, որի շարքերից էլ հենց դուրս

եկան թէ այդ շարժումի ղեկավարները և թէ նրա առաջաւոր մարտիկները։

Դեմօկրատիայի առաջ երկու խնդիրներ կային լուծելու։ Նա պէտք է, հնարաւոր եղածին չափ, թուլացնէր կենտրօնական կառավարչական իշխանութեան ամենազօրութիւնը ժողովրդի վերաբերեալ, միևնոյն է թէ այդ իշխանութիւնը ումն էր պատկանում՝ միապետին թէ պարլամենտին։ Բայց այդ խնդրի իրագործումը հնարաւոր էր միայն մի որոշ չափով, որովհետև կապիտալիստական հասարակութիւնը իր զարգացման համար նոյնպէս կարիք ունէր ուժեղ կառավարչական իշխանութեան։ Այդ պատճառով էլ դեմօկրատիան ստիպված էր առաջին խնդրի հետ միաժամանակ լուծել և երկրորդ խնդիրը. կենտրօնական իշխանութիւնը արիստօկրատիայի ձեռքից առնելով ժողովրդի ղէնքը դարձնել։

Առաջին խնդիրը լուծելու համար պահանջվում էր հնարաւորութիւն ունենալ ազատ կերպով քննադատութեան ենթարկելու կառավարչական իշխանութիւնը ու նրա օրգաններին, պահանջվում էր պարլամենտական նիստերի կատարեալ դռնբացութիւն և խօսքի ու մամուլի անսահման ազատութիւն։ Ցեռոյ, այդ խնդիրը իրագործելու համար պահանջվում էր էլի, որ կառավարչական իշխանութեան ու նրա պաշտօնեաների իրաւասութեան տակ եղած մի քանի ֆունկցիաներն ու տիպողական միջոցները տրվեն համայնքներին ու գաւառներին, որոնց հարկաւոր էր ուրեմն ինքնավարութիւն տալ։ Բայց այդ ինքնավարութիւնը միջին դարերի առանձնացումի վերականգնելը չէ ներկայացնում իրանից։

Համայնքն այդպիսով այլևս նորից չէ դառնալու այն՝ ինքն իրան ճնշող ամբողջութիւնը, ինչպէս էր առաջ։ Նա մի ահագին ամբողջութեան՝ ազգի մի անդամն է ճիւմ, կարող է աշխատել նրա օգտին և նրա սահմանների մէջ։ Առանձին համայնքների իրաւունքներն ու պարտականութիւնները պետութեան վերաբերեալ այլ ևս չեն մշակվում առանձին դաշնագրերով։ Դրանք ամբողջ պետութեան կենտրօնական իշխանութեան կողմից մշակված և բոլորի համար հաւասարապէս պարտաւորեցուցիչ օրէնսդրականութեան արդիւնք են ներկայանում և որոշվում են ամբողջ պետութեան կամ ազգի շահերով, այլ ոչ թէ առանձին համայնքների շահերով։

Դեմօկրատիայի երկրորդ խնդիրը կայանում էր նրա մէջ, որ կառավարչական իշխանութիւնը ժողովրդից կախումն ունենայ։ Անգլիայի օրինակը այդ կողմից մի իդէալ էր հաւաքվում։ Ներկայացուցչական ժողովը, որին անգլիական պարլամենտի իրաւասութիւն էր տրված թագաւորական իշխանութեան վերաբերեալ, ամենաէական և միակ միջոցն էր, որով կարելի էր կօնտրօլի ենթարկել այն ահագին իշխանութիւնը, որ գտնվում է կառավարու-

թեան ձեռքում այժմեան՝ խիստ կենտրօնացման հասած՝ պետութեան մէջ, և որով հնարաւոր էր այնպէս անել, որ իշխանութիւնը ժողովրդից կախումն ունենայ, որի համար էլ հէնց սրան իրաւունք է տրւում իր պատգամաւորներն ընտրել ներկայացուցչական ժողովի համար։

Այդ պատճառով էլ պարլամենտական կարգերի համար մղւող կռիւը անխզելի կերպով կապված է քաղաքական կեանքի ծագման հետ եւրօպական պետութիւններում։ Ինչպէս յայտնի է, այդ կռիւը ամենուրեք այն հետեւանքն ունեցաւ, որ այնպիսի հաստատութիւններ հիմնվեցին, որոնց շնորհով կառավարութիւնները, ի հարկէ, ամեն հնարաւոր միջոց գործ դրեցին, որպէսզի մի ձեռքով լվվի այն բոլորը, ինչ-որ տրվել էր միւս ձեռքով, այսինքն՝ որպէսզի պարլամենտները հնարաւոր եղածին չափ անզօր հանդիսանան։

Բայց եթէ Անգլիան ապացուցեց, թէ որ աստիճան պարլամենտարիզմը վտանգաւոր է վիահեծան իշխանութեան համար, նա միևնոյն ժամանակ երևան հանեց և այն հանգամանքը, որ պարլամենտը բոլորովին դեռ ժողովրդային ներկայացուցչութիւն չէ հանդիսանում անպատճառ։

Ընտրողական իրաւունքի համար մղվող կռիւը նոյնպիսի կարևոր նշանակութիւն ստացաւ, ինչպէս և պարլամենտական հաստատութիւնների համար եղած կռիւը։

Ընտրողական իրաւունքի համաձայն, պարլամենտը մի գործիք է ներկայացնում իրանից արիստօկրատիայի կամ բուրժուազիայի դասակարգային թագաւորութեան համար, և կամ թէ նա մի ասպարէզ է դառնում բուրժուազիայի ու պրօլետարիատի միջև մղված դասակարգային կռւի համար։ Ընտրողական իրաւունքի համար մղված կռիւը շատ աւելի խիստ է լինում ու աւելի երկար է տևում, քան «սահմանադրական կառավարչական ձև» ունենալու համար եղած կռիւը։ Այդ կռիւը եւրօպական երկրներից շատերում մինչև այսօր էլ դեռ շարունակվում է։

Ընդհանուր, ուղղակի և հաւասար ընտրողական իրաւունքը չափազանց կարևոր, բայց ոչ միակ միջոցն է ներկայանում, որպէսզի պարլամենտը ժողովրդային մասսայից կախումն ունենայ և որ նա այդ մասսայում թագաւորող ձգտումների ճշգրիտ արտայայտիչը լինի։ Այդ նոյն նպատակին են տանում մի շարք այլ պայմաններ էլ, որոնք թէև այնչափ էլ կարևոր չեն, բայց բոլորովին էլ զուրկ չեն նշանակութիւնից. այդ պայմաններն են օրինակի համար՝ պարլամենտի իրաւասութեան նստաշրջանի կրճատումը, քուէարկութեան պաշտի լինելը, ընտրութիւնները կիրակի օր կատարվելը, ընտրողական համեմատական սիստեմը և այլն։ Կուսակցութիւնները ամեն տեղ կատարի

կռիւ են մղում այդ կարգի պայմանները ստեղծելու համար։

Այդ պայմանների թւումն են նաև րեֆե-րէնդումը և նախաձեռնութիւնը (ինիցիատիվա), որոնք մի յայտնի նշանակութիւն են ստացել դեմօկրատիական Շվէյցարիայում։ Րեֆերենդում կոչվում է այն, որ ժողովրդին իրաւունք է տրվում ընդհանուր ձայնատուութեան ենթարկել ժողովրդային ներկայացուցիչների ժողովի կողմից մշակելի օրէնքների նախագծերը։ Իսկ նախաձեռնութիւն կոչվում է այն, որ ժողովրդին իրաւունք է տրվում նոյնպէս ընդհանուր ձայնատուութեան ենթարկելու այն օրէնսդրական նախագծերը կամ օրէնքներ հրատարակելու առաջարկութիւնները, որոնց առաջարկողները հէնց ժողովրդի միջից են։

Շվէյցարիայի 1874 թ. դաշնակցական սահմանադրութեան 89-րդ յօդուածի հիման վրա, դաշնակցութեան գործերի վերաբերեալ օրէնքները և այն բոլոր կարգադրութիւնները, որոնք պարտաւորեցուցիչ են դաշնակցութեան բոլոր անդամների համար, պէտք է ենթարկվեն ժողովրդի վաւերացմանը, եթէ այդ կը պահանջեն 30,000 ձայնի իրաւունք ունեցող շվէյցարական քաղաքացիները, կամ թէ ութ կանտոններ։

Դաշնակցական սահմանադրութեան 123-րդ յօդուածով ժողովրդային ձայնատուութիւնը պարտաւորեցուցիչ է համարվում սահմանադրութիւնը վերաքննութեան ենթարկելու դէպքերում, (1891 թ. ապրիլի 8-ին Դաշնակցութեան կայացրած որոշումով այդ պարտաւորեցուցչութիւնը տարածվում է և այն դէպքերի համար, երբ սահմանադրութիւնը մասնակի վերաքննութեան պիտի ենթարկվի)։

Ժողովրդային նախաձեռնութեան իրաւունքը սովորական օրէնքների վերաբերեալ, դաշնակցական սահմանադրութեան մէջ բացակայում է։ Բայց դաշնակցական ժողովը պարտաւոր է ժողովրդի կամքին հպատակվել, եթէ 50,000 լիակատար իրաւունքներ ունեցող շվէյցարական քաղաքացիներ կը պահանջեն, որ սահմանադրութիւնը ամբողջապէս կամ մասնակի վերաքննութեան ենթարկվի (յօդ. 120 և 121 Դաշնակ. սահմանադրութեան)։

Էլ աւելի ընդարձակ են ժողովրդային իրաւունքները ներկայացուցչական հիմնարկութիւնների վերաբերեալ մի քանի կանտոնային սահմանադրութիւնների մէջ։ Նոր օրէնքներն ու որոշումները (մանաւանդ եթէ նրանք ֆինանսական բնաւորութիւն են կրում) անպատճառ պէտք է ընդհանուրի ձայնատուութեանը ենթարկվեն Ցիւրիխում, Բեռնում, Շվիցում, Զօլօտուրնում, Գրաուբիւնդտենում, Աարգաու, Տուրգաու, Վալիս կանտոններում և Բազելի հողում։ Մնացեալ կանտոնների մեծամասնութիւնը ոչ-պարտադիր րեֆերենդում, ինչպէս և ոչ-պարտադիր նախաձեռնութեան իրաւունք ունեն։ Ցրի-

բուրգը շվեյցարական կանտոններից միակն է, որը բոլորովին ոչ բեֆերենդում ունի և ոչ նախաձեռնութիւն։ Ժընէվը, Վոդը և Հէյնեբուրգը (Նեօշատել) իրանց կանտոններում մտցրել են միայն ոչ-պարտադիր բեֆերենդում։ Ոչ մի տեղ սակայն, բեֆերենդումն ու նախաձեռնութեան իրաւունքը ներկայացուցչական հիմնարկութիւնները մի աւելորդ բան դարձնելու ձգտումներ չեն ցոյց տուել։ Ընդհակառակը, նրանք շատ ամուր կապերով են կապված այս վերջինների հետ։ Օրէնքներ մշակելը համարեա թէ ամեն տեղ ներկայացուցչական ժողովներին է թողնված։

Բեֆերենդումը ժողովրդին միայն իրաւունք է տալիս ձայնատուութեան ենթարկելու այն օրէնքները, որոնք առաջարկվում են կանտոնային խորհրդի կամ դաշնակցութեան ժողովի կողմից։ Իսկ նախաձեռնութիւնն էլ ժողովրդին լոկ այն, ըստ մեծի մասին, որոշ կերպով ձևակերպված կամ սովորաբար իրականացման հասատուված, իրաւունքն է տալիս, որ նա առաջարկի կամ պահանջի իր պատգամաւորների ժողովից՝ այսինչ որոշ օրէնքը հրատարակելու, իսկ օրէնքի մշակումը ամբողջապէս ժողովի իրաւասութեանն է յանձնվում։

Բեֆերենդումն ու նախաձեռնութիւնը նպատակ ունեն ոչ թէ կենտրոնական օրէնսդրական իշխանութիւնը՝ պարլամենտը ոչնչացնելու, այլ միմիայն ժողովրդի ազդեցութիւնը

այդ իշխանութեան վերաբերեալ ուժեղացնելու, և որ նա ժողովրդից կախուած ունենայ։

Այս երկու պայմաններն էլ արդի ժամանակների վերջին խօսքն են ներկայացնում իրանցից։

VII

Րիտտինգհաուզէնի ծրագիրը

1848 թուականը նշանաւոր է նրանով, որ բուրժուազիական դեմոկրատիան իր զօրութեան գագաթնակէտին էր հասած։ Այդ ժամանակից սկսած նա սկսում է արագութեամբ ընկնել։ Իր կուրութիւնից զօրութիւն ստանալով, նա չէր նկատում ժողովրդային մասսաների մէջ եղած դասակարգային տարբերութիւնները։ Նա անյաղթելի էր դառել միմիայն նրա համար, որ զանազան դասակարգերին, բուրժուազիայից սկսած մինչև պրօլետարիատը, մի ընդհանուր զանգուած էր ենթադրում, և միմիայն նրա համար, որ նա չափազանցում էր այդ դասակարգերին միմեանց կապող ընդհանուր քաղաքական նպատակների նշանակութիւնը ու աչքաթող էր արել այն բոլորը, ինչ որ կարող էր դրանց բաժանել միմեանցից։ Բուրժուազիայի յաղթութեան օրը պէտք է նրա և անկման օրը լինէր։ Բոլոր կապերը, որոնցով կապված էին բանուորները կապիտալիստների, քաղաքը գիւղի հետ, կարատվեցին միահեծանութեան (Ֆրանսիայում — բարձր դրամական արիստօկրատիայի պարլամենտական միահեծանութեան) և պալատական արիս-

տօկրատիայի անկումով։ Այդ ժամանակից ի վեր իւրաքանչիւր դասակարգ ձգտում էր իր սեփական դասակարգային շահերի օգտին ծառայեցնել նոր նուաճած իրաւունքները. դեմօկրատական ազատութիւնը ոչ թէ դէպի սօցիալական խաղաղութիւն էր տանում, այլ դէպի սօցիալական պատերազմ. դեռ երէկվան դաշնակիցներն այժմ կատաղի թշնամիներ էին դառել, որի համար, ըստ մեծի մասին, հէնց իրանք էլ էին զարմանում, որովհետև դեմօկրատիան խնամքով միշտ խուսափում էր երևան հանելու իր ծոցում թագնված հակասութիւնները։ Դեմօկրատիայի անկումը, 1848 թ. յետոյ երևան եկած, այդ հակասութիւնների հետևանքն էր։ Դեմօկրատներից շատ-շատերը այդ բանը չը նկատեցին այն ժամանակ։ Այն հայեացքը, թէ ժողովուրդը իրանից մի ընդհանուր ու միատեսակ շահեր ունեցող զանգուած է ներկայացնում, այն ժամանակ դեմօկրատիայի մի տեսակ հիմքն էր կազմում։ Ամբողջ երկու մարդկային սերունդի ժամանակաընթացքում և մինչև իսկ աւելի, այդ գաղափարը ընդունվում էր բոլոր ժողովուրդների ամենամեծ և ամենավեհ խելքերի կողմից և եւրօպական ազգերի բոլոր մտածող ու մարդասէր ներկայացուցիչների ոգևորութեան աղբիւր էր ծառայում։ Այդ գաղափարը, իր հետ կապված բոլոր սխալներով ու իլլիւզիաներով հանդերձ, մի քանի մակերևութային դիտող գիտնականների արած

սխալի հետևանք չէր. նրան ժողովուրդների հասկացողութեան մէջ մտցրել էին ամբողջ մի դարի պատմական պայմանները։ Այդ տեսակ գաղափարից ազատվելը հեշտ բան չէ։ Իրանց անաջողութեան պատճառները դեմօկրատները փնտռում էին ոչ թէ հասարակութեան սօցիալական կազմի մէջ, ոչ թէ առանձին դասակարգերի (գոնէ, ստորին դասակարգերի) ունեցած տարբեր շահերի ու հասկացողութիւնների մէջ, այլ աւելի արտաքին պատճառների, առանձին անհատների կամ առանձին հաստատութիւնների գործած սխալների մէջ։ Ամենից մտածում էին, թէ դեմօկրատական յեղափոխութեան վիժելու պատճառները պիտի փնտռել այն ժամանակվայ պարլամենտներում, այն է՝ Ֆրանսիայի և Գերմանիայի ազգային ժողովներում, նրանց կազմի և եռանդի պակասութեան մէջ։ Միտքները յարձակվում էին պարլամենտարիզմի վրա ընդհանրապէս։ Այս վերջին տեսակի մարդկանց էր պատկանում և գերմանական դեմօկրատ Բիտտինգհաուզէնը։ Ներկայացուցչական սիստեմն է մեղաւոր, ասում էր նա, բոլոր հասարակական դժբաղդութիւնների մէջ։ «Անմտութիւն է,—գրում էր նա,—սպիտակը սևով փոխարինել, մանաւոր շահերի ներկայացուցիչներին ճիշտ դրանց հակառակ ընդհանուր շահերի պաշտպանութիւնը յանձնել։ Եթէ մանաւոր ու ընդհանուր շահերը միևնոյնը լինէին, այն ժամանակ կառավարու-

թիւն ունենալու բոլորովին հարկ չէր լինի, որովհետև խաղաղութիւնն ու արդարութիւնը ինքնըստինքեան կը թագաւորէին ամենուրեք։ Իսկ եթէ այդ շահերը միևնոյնը չեն, այդ պարագայում տրամաբանութիւնը թոյլ չէ տալիս, որ օրէնքներ մշակելու իրաւունքը և հասարակական երջանկութեան մասին արվեստիք հոգածութիւնը յանձնվի՝ մի քանի հարիւր մանուկ շահերի տէր մարդկանցից կազմված՝ խմբակին, թէկուզ դրանց շահերը, ըստ մեծի մասին, բուրժուազիայի գլխաւոր շահերից շատ էլ հեռու չը լինեն»[1]։

Ներկայացուցչական սիստեմը, Բիւտինգհաուզենի կարծիքով, պէտք է բոլորովին ոչնչացվի և փոխարինվի անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնով։ Այդպիսի փոփոխութեամբ ժողովուրդը կարող է իր կամքը արտայայտել, և այն ժամանակ «իսկական իրաւունքը», «ընդհանուրի շահը» ինքնաբերաբար կը սկսեն թագաւորել։ «Սօցիալ-դեմօկրատական հանրապետութիւնը կայանում է ներկայացուցչական սիստեմի ոչնչացնելու և անմիջական ժողովրդային օրէնսդրութիւն հաստատելու մէջ, և ես առանց քաշվելու կարող եմ ինձ

[1]) Բիւտինգհաուզեն։ Յօդուածներ 3-ղ տպագրութիւն, «Ներկայացուցչական սիստեմի խախուտ հիմունքները», Կէօլն, 1869 թ.։ Համեմատ. նոյն հեղինակի «Ժողովրդային ուղղակի օրէնսդրութիւն և նրա հակառակորդները», Բրիւսել, 1852 թ.

վերագրել այդ ճշմարտութիւնը յայտարարողի պատիւը»։[2]) Անմիջական ժողովրդային օրէնսդրութեան գաղափարը նոր չէր։ Ամեն մի կրթված մարդ ծանօթ էր նրա հետ Աթէնքի և Հռօմի պատմութիւնից, ինչպէս և նախնի գերմանների պատմութիւնից։ Այդ գաղափարը պահպանվել էր և միջին Եւրոպայի պետութիւններում։ Այդ նախնի՝ պարբերաբար գումարվող և հնուց համայնական կեանքում բարձրագոյն հեղինակութիւն վայելող ժողովրդային ժողովների ծնողները դեռ մինչև օրս էլ պահպանվել են Շվէյցարիայի մի քանի հեռաւոր ալպեան հովիտներում։

Այնտեղ գարնանը, հովիտների լեռները բարձրանալուց առաջ, բոլոր երկնքի տակ հասարակական ժողով է գումարվում, որտեղ կանոնի բոլոր չափահաս արու բնակիչները հասարակական գործերի քննութեամբ են զբաղվում, պաշտօնեաներ են ընտրում, օրէնքներ են հրատարակում և այլն։ Բայց ինչպէս հնուժը, այնպէս էլ հիմա անհրաժեշտ է համարվում, որ հասարակական գործերը քննվեն մի ընդհանուր ժողովում։ Այդպիսով անմիջական օրէնսդրութեան ամենաառաջին պայմանն է, որ կանոնը շատ փոքր լինի։

Նրա տարածութեան սահմանները այնքան

[2]) Բիւտինգհաուզեն։ «Ուղղակի ժողովրդային օրէնսդրութեան անհրաժեշտութիւնը», 2-ղ հրատ. եր. 18.

փոքր պիտի լինին, որ ամեն մի քաղաքացի հնարաւորութիւն ունենայ ժողովատեղին գնալու, առանց մի որևէ նեղութեան, առանց նիւթական ծախսեր անելու և առանց ուշանալու. կանտօնի բնակչութիւնն էլ չը պէտք է այնչափ բազմաթիւ լինի, որ ձայնի իրաւունք ունեցող քաղաքացիները չը կարողանան բոլորը մի անգամից հաւաքվել ժողովի և գործեր քննել [3]։

Բիւտինգաուզենից առաջ դեռ ոչ ոք, մինչև իսկ ներկայացուցչական սիստէմի այնպիսի խիստ քննադատը, ինչպիսին էր Ժ. Ժ. Րուսսօն, հնարաւոր չէր համարել ուղղակի ժողովրդային օրէնսդրութեանը յանձնել հասարակական գործերի հոգաբարձութիւնը փոքր ի շատէ նշանաւոր համայնքում։ Եւ միմիայն Բիւտինգաուզենը այն հնարաւոր գտաւ և միջոց առաջարկեց իր գաղափարը կեանքի մէջ անցկացնելու համար։ Այդ գաղափարը նոյնչափ քիչ նմանութիւն ունի հին ժամանակների ժողովրդային օրէնսդրութեան այն տեսակի հետ, որը մինչև հիմա էլ գոյութիւն

3) Դեռ 1860 թ. Ուրի կանտօնը 14,700 բնակիչ էր հաշվում։ Ունտերվալդենում անտառից վերը 13,000, իսկ ցածը—11,000։ Գլարուսում 33000։ Կանտօններից ոչ մեկը գիւղական համայնքների հետ միասին 50,000 բնակիչներից աւելի չէ հաշվում։ Հասարակական գործերը այս բոլոր կանտօններում այնչափ պարզ և այնչափ քիչ են, որ մի կամ երկու օրվայ ընթացքում տարվայ մէջ ժողովրդային ժողովը կարգի է բերում նրանց։ Ծ. Հ.

ունի շվէյցարական կանտօնների մի քանի գիւղական համայնքներում, ինչպէս և բնիկ-բնակութեան և նախաձեռնութեան հետ, որոնց միջոցով շվէյցարական ժողովուրդը կօնտրօլի է ենթարկում և ուղղութիւն է տալիս իր ներկայացուցչական հաստատութիւնների գործունէութեանը։

«Այդ ժողովուրդների մէջ (հռոմայեց'ների, յոյների և գերմանների),—ասում է Բիւտինգաուզենը,—անմիջական օրէնսդրութիւնը երբէք այնպիսի կազմակերպութեան չէ կրել, ինչպիսին ես առաջարկեցի, և որը անպատճառ կընդունվի, որովհետև դա միակ գործնական միջոցն է (que l'on adoptera infailliblement, puisque seule elle est rationelle)։

«Ես կարող եմ ինձ համար արժանիք համարել այս հանգամանքը, որ այդպիսի կազմակերպութեան այդ գաղափարը բացառապէս ինձ է պատկանում, որ ես ցոյց տուեցի դեռ բոլորովին անծանօթ այնպիսի ճանապարհներ, որոնց միջոցով կարելի է ազատ ու բնական կերպով օրէնքներ ստեղծել մի ամբողջ ժողովրդի ազատ ժողովներում, որ ես նոր դասընթացքում բացեցի օրէնսդրական գիտութիւնների համար»։

Իսկ ինչո՞ւմն է կայանում մեր լինքնավստահ գիւտ անողի նորութիւնը։

Բիսմարկը բոլորովին ասելով է համարում, որ օբենսդրական ժողովը անպատճառ մի հատ լինի։ Նա առաջարկում է, որ մի քանի հազար, միաժամանակ, բայց առանձին-առանձին նիստ ունեցող օբենսդրական ժողովները միևնոյն օբենքը մշակէին։ Ինչենք Բիսմարկի այդ ծրագիրը։

«Երբ մի որոշ, օբենքով թույլատրված քաղաքացիների թիւը պահանջում է, որ այս կամ այն խնդիրը ժողովրդի քննութեանը ենթարկվի,—երբ քաղաքացիների մի այդպիսի թիւ պահանջում է, որ մի որևէ խնդրի առիթով նոր օբենք, կամ մի ընթացիկ հրատարակվի, կամ թէ մի որևէ հին օբենք փոփոխութեան ենթարկվի, այդ ժամանակ մինիստրութիւնը պարտաւոր է մի որոշ ժամանակի ընթացքում ժողովրդին հրաւիրել նշանակված օրը ժողովի գալու, որպէսզի վճիռներ կայացնէ ու օբենսդրութեամբ զբաղվի։

«Օբենսդրական իր իրաւունքից օգտվելու համար, ժողովուրդը պէտք է սեկցիաների բաժանվի, սեկցիաներ, որոնցից իւրաքանչիւրը 1000 մարդուց պիտի բաղկանայ... Ամեն մի սեկցիա գումարվում է իր համար նշանակված շինութեան մէջ... Նա ընտրում է իր նախագահին, որը կը զեկավարի վիճաբանութիւնները։ Ամեն մի քաղաքացի պէտք է որ իր կարծիքը յայտնի ժողովում, որպէսզի խնդրի ընդհանուր լուսաբանութեան ժամանակ նրա կարծիքն էլ յայտնի լինի բոլորին։

«Երբ վիճաբանութիւնները վերջացած են, ամեն մի քաղաքացի իր քուէն է տալիս։ Քուէարկութիւնից յետոյ նախագահը հետևանքի մասին տեղեկացնում է համայնքի ներկայացուցչին, յայտնելով նրան միևնոյն ժամանակ իւրաքանչիւր հարցի մասին թեր և դէմ տրված ձայների թիւը։ Համայնքի ներկայացուցիչը հաշւում է իր համայնքի սեկցիաների քուէարկութեան հետևանքը, շրջանի ներկայացուցիչն էլ իր շրջանի համայնքների քուէարկութեան հետևանքն է հաշւում և այդ բոլորը յանձնում է տեղական բարձրագոյն ատեանին՝ մինիստրութեանը։ Այս վերջինը,—ի հարկէ, խիստ կօնտրօլի տակ,—պէտք է կարգի բերէ ամբողջ պետութեան մէջ կատարված քուէարկութիւնների հետևանքները և պէտք է յայտարարէ նրանց ու տպագրել տայ պաշտօնական օբգանում»։

Այդպէս է Բիսմարկի ծրագիրը։ Դրան չէ կարելի շփոթել Շվէյցարիայի օբենսդրական նախաձեռնութեան հետ։ Նախաձեռնութիւն հղած դէպքում ժողովրդին որոշ հարց է առաջարկվում, որին նա պիտի դրական կամ բացասական պատասխան տայ։ Նախաձեռնութիւն կազմողները բնակիչներին առաջարկում են կամ ձևակերպված օբենքի նախագիծը և կամ, ինչպէս սովորաբար լինում է, քուէարկութեան են առաջարկում որոշ օբենքի ոչնչացումը կամ ընդունելը։ Վերջին պարա-

գայում օրէնքի մշակելը ներկայացուցչական պարլամենտին են թողնում։

Այդ մասին Բիտաինգաուզէնը ոչինչ չէ ուզում լսել։ «Օրէնսդրութիւնը պէտք է քնաքան կերպով հէնց իրան՝ ժողովրդի միջից զարգանայ։ Միևնոյն ժամանակ, պէտք է բոլորովին ոչնչացնել օրինագծեր կազմելու սովորութիւն դրա համար հատատուած յատուկ հիմնարկութիւններում,՝ որոնք ժողովրդի քուէարկութեանը ներկայացնէին իրանց կազմած օրինագծերը»։

Բիտաինգաուզէնի պետութեան մէջ ոչ ոք իրաւունք չունի ամբողջ ժողովրդի առաջ մի որևէ հարց բարձրացնել կամ քուէարկութեան համար առաջարկ մտցնել։ Իրաքանչիւր սեկցիա բարձրագոյն իրաւունքի տէր է խնդիրը այս կամ այն եղանակով ձևակերպելու վերաբերեալ։

Եթէ ժողովրդի մի որևէ մասի կողմից առաջարկուում է մի որևէ խնդիր վճռել օրէնսդրական ճանապարհով, այդ ժամանակ դրա մասին առաջարկվող նախագծերը լոյս են տեսնում մամուլի մէջ և լուսաբանվում են ժողովներում ու հէնց այնտեղ էլ նրանք մանրամասն կերպով քննվում են։ Նախաձեռնողների կօմիտէը կամ կօնգրէսը սիստեմատիքաբար իր սեփական նախագծերն է կազմում ու առաջարկում, բայց երբէք չէ ձգտում ճընշում բանեցնել ժողովրդային խորհրդաժողովների վրա։ «Այդպիսով, մինչէ կարելի

է անգամ մտածել, թէ այդպիսի պայմաններում մի որևէ սեկցիայի նախագահը անկարող կը լինի ճշդութեամբ ձևակերպել սկզբունքային հարցը։ Կարելի՞ է մինչէ մտածել, որ սեկցիայի անդամները ուղղումներ չեն մտցնի, եթէ սկզբում խնդիրը սխալ դրված լինի»։

Այսպէս ուրեմն, Բիտաինգաուզէնը հաւատացած է, որ իսկապէս ամեն մի սեկցիայում խնդիրը միատեսակ ձևակերպված կը լինի. այդպիսով, դժուար չի լինի ժողովրդի կամքը հասկանալ՝ բոլոր սեկցիաներում կատարված քուէարկութիւնների հետևանքի հիման վրա։ Իր տեսակէտը ապացուցանելու համար, Բիտաինգաուզէնը մի օրինակ է բերում։ Նա ենթադրութիւն է անում, թէ «մի մեծ պետութեան քնակիչներից 200,000 հոգի այն համոզման են եկել, որ ներկայումս գոյութիւն ունեցող հողային մասնաւոր սեփականութիւնը կատարեալ հակասում է ամբողջ ժողովրդի շահերին և նա ժողովրդի համար մի ընդհանուր բան է համարվում»։ Եթէ այդ խնդիրը գրվի սեկցիանելուում, այն ժամանակ նրանց նախագահները, շատ քնական է, այդ հարցը պիտի ձևակերպէին հետևեալ կէտերով.

I. Պէտք է արդեօք, որ հողը մասնաւոր սեփականութիւն մնայ, թէ նա պիտի ազգային դարձնվի։

Մեծամասնութիւնը, քնական է, վերջին

դրութեան կողմն է կարծիք յայտնում։

II. Պէ՞տք է արդեօք, որ հողը յետ գնվի, եթէ ոչ նա կարող է ուղղակի ամբողջ ժողովրդի ձեռքը անցնել, առանց մի որևէ վճար տալու հողի նախկին տէրերին։

Մեծամասնութիւնը վճարով գնելու կողմն է։

III. Գնահատութեան ո՞րպիսի % կարելի է թոյլ տալ վճարելու համար հողատիրոջը նրանից գնված սեփականութեան համար։

Մի քանի թիւեր են առաջարկվում, որոնցից մէկը ընդունվում է ձայների մեծամասնութեամբ։

IV. Ի՞նչպէս պիտի կատարել վճարումը. կանխի՞կ դրամով, թէ՞ տոկոսաթղթերով։

Վերջինն է ընդունվում։

V. Ի՞նչպէս պէտք է պետութիւնը մշակի հողը. արդեօք մասնաւոր անձանց կամ ընկերութիւնների կապալո՞վ տալով, եթէ ոչ՝ հողի մշակումը միացած համայնքների հաշուի՞ն կատարելով։

Մեծամասնութիւնը վերջին առաջարկութիւնն է ընդունում։

Այսպէս հետևութեամբ, միայն մի օրվայ ընթացքում, սեկցիաներում հաւաքված ժողովուրդը, Իտալիոգաուզէնի պետութեան մէջ, որոշում է հողային սեփականութեան ամենակարևոր հարցը։ Սակայն ի՞նչպէս անել այն դէպքում, եթէ մեծ պետութեան մէջ ձայնի իրաւունք ունեցող բնակիչներից կազմված մօտաւորապէս 10,000 սեկցիաներից ամենքն

էլ Իտալիոգաուզէնի ցոյց տուած եղանակով չը ձևակերպեն դրված հարցը։ Իտալիոգաուզէնը ենթագրում է, թէ կարելի է մասնաւոր հողատիրութեան մասին պարզապէս կամ թեր և կամ դէմ կարծիք ունենալ։ Նա սխալվում է։ Նոյնիսկ հողատիրութեան կողմնակիցներից էլ շատերը կան, որոնք ցանկալի են համարում, որ հողի մի քանի կատեգորիաները պետութեան ձեռքում գտնվին։ Միւս կողմից, մասնաւոր հողատիրութեան ամենաստոյգ հակառակորդներից էլ շատ քչերը կան, որոնք ուղենային, որ երկրի ամբողջ հողային ֆոնդը յանկարծ և մի անգամից պետութեանը յանձնվի։

Խնդրի այդ ձևով վճռելը մեզ փոքր ինչ յիշեցնում է այն տեսակէտը, որի վրա յենվում են մեր հակառակորդները, երբ մեզնից ապազայ պետութեան ծրագիր են պահանջում. այդ այնպիսի մարդկանց տեսակէտն է, որոնց կարծիքով մենք կը ցանկանայինք 24 ժամվայ մէջ ամբողջ հասարակական կազմը փոխել։ Այդպիսի փոփոխութիւն կարելի է անել, ի հարկէ, միմիայն թղթի վրա. կարելի է պարզապէս բոլոր գոյութիւն ունեցող օրէնքները ոչնչացված հրատարակել և նոյնպէս պարզապէս մի ղեկրետ հրատարակել, ասելով որ արդիւնագործութեան միջոցները այլևս ամբողջ հասարակութեանն են պատկանում։ Բայց եթէ խնդիրը քննենք ոչ թէ իրաւաբանական, այլ տնտեսական տեսակէտից, եթէ

ուշադրութեան առնենք, որ մեզ հարկաւոր է արդիւնադործութեան նոր եղանակի զարգացման խնդիրը լուծել, այլ ոչ թէ միայն մի ոյժ իրաւաբանական նոր ֆօրմուլներ մշակել, այն ժամանակ մենք կը համոզվենք, որ ոչ մի հեռանքի չէ կարելի հասնել այնպիսի օրէնսդրական մերկ շաբլօններով, ինչպիսին Բիսմարքուզէնն է առաջարկում։

Եթէ այնպիսի մի երկրում, որտեղ դիւղացիութիւնը դեռ շատ ուժեղ է, սեկցիաներին հողատիրութեան հարցը առաջարկվի, այդ պարագայում հազիւ թէ մեծամասնութիւնը հողերը անպայման ընդհանրական դարձնելու կողմնակից լինի։

Կօլեկտիվ սեփականութեան բարեկամներից շատերն էլ կը ցանկանան, որ հետզհետէ միայն սեփականութիւնը ընդհանրական դարձնվի։

Ոմանք կը ցանկանան, որ հողերի համայնացումը չը տարածվի փոքր հողատէր գիւղացիների սեփականութեան վրա։ Միւսները, դուցէ, կուզենան, որ առայժմ միայն անտառները համայնացվեն, ոմանք էլ—միմիայն ածխահանքերը, շատերն էլ, վերջապէս, քաղաքային հողերի համայնացման կողմը կը լինեն, իսկ այս վերջիններից մի քանիսն էլ, կարելի է, անհրաժեշտ կը համարեն միմիայն այն հողերը համայնացնել, որոնց վրա կառուցվածքներ չը կան և այլն։ Իրապէս, հէնց առաջին հարցումը հարիւր տեսակ կամ

բնակիչների կարող է ենթարկվել։ Նոյնը կը լինի և միւս բոլոր հարցումների վերաբերեալ։ Բիսմարքուզէնը նախօրօք սաստիկ գովում է իր առաջարկած օրէնսդրական եղանակը, նրան շատ պարզ և հասկանալի անուանելով։ Նա խառնում է պարզութիւնը շաբլօնականութեան հետ։ Բնենք, օրինակի համար, հողատէրերին վարձատրելու հարցը։ Բիսմարքուզէնի ասելով, բոլոր հողատէրերն էլ, ունենց որ հողը վերցված կը լինի, պէտք է միատեսակ վարձատրութիւն ստանան։ Նրանցից ամեն մէկը պիտի հողի արժէքի միևնոյն տոկոսը ստանայ։ Վարձատրութեան այդ եղանակով ամենախոշոր հողատէրերը ամենավնասվին գիւղացուն են հաւասարեցվում. բացի դրանից, իսկ ինչպէս անկ գրաւականով վերցված պարտքի հետ։

Ինչպէս հողատէրերին վարձատրելը, այնպէս էլ հողի մշակումը պէտք է ամեն տեղ միևնոյն եղանակով կատարվեն, բոլորն էլ համայնքների հաշուին։ Կարծես թէ չէ կարելի մշակման ամենապարզամատեսակ եղանակները գործադրել, կարծես թէ սիմեանցից տարբեր մշակման եղանակները չեն կարող, կամ աւելի ճիշտ է, չը պէտք է միմեանց հետ կողք կողքի գոյութիւն ունենան։ Մինչ չէին գտնվի այնպիսի քաղաքացիներ, որոնք այն կարծիքի լինէին, թէ լաւ կը լինէր, որ անտառները պետութեանը յանձնվէին անմիջական շահագործութեան համար, թէ ածխահանքերը պէտք է որ

պետութեան համար մշակվէին բանաւորական պրօֆեսիօնալ միութիւնների միջոցով, թէ խորհր հողաբաժինները հարկաւոր է տալ կապալով խորհր երկրագործական ընկերութիւններին, իսկ բնակարանների մասին հոգացողութիւնը լաւ կը լինէր համայնքի կամ շրջանի վրա թողնել։ Մթթէ մի քանիսը այն կարծիքին չէին լինի, թէ պէտք է որ համայնքներն ու շրջանները առանձնակի տներ շինէին իրանց փոքրիկ պարտէզներով, անգլիական կօտէջների նման, ու դրանց վարձով տային առանձին-առանձին մարդկանց։ Այդ պարագայում կարելի կը լինէր համայնական հողերը շահագործել և մեծ պրօֆեսիօնալ միութիւնների միջոցով. և փոքր ընկերութիւնների միջոցով, և հէնց համայնքի կամ շրջանի ձեռքով, և, վերջապէս, նաև մասնաւոր անհատների ձեռքով։ Իրականութեան մէջ այդ յարաբերութիւնները կարող են դեռ էլի շատ բազմատեսակ լինել։ Իսկ Բիատինգաուզէնը, այդ բոլոր անսահման բազմատեսակութիւնը միևնոյն նեղ պարկի մէջ խոթելով ու միանգամայն այլանդակելով այն բոլորը, ինչ որ կենսունակութիւն կարող է ունենալ, ասում է, թէ պարզութիւն ու յստակութիւն է մտցնում օրէնսդրութեան ոլորտների մէջ։ Մինչդեռ, իրապէս, Բիատինգաուզէնի առաջարկած անմիջական ժողովրդային օրէնսդրութեան ծրագիրը ոչ-թէ պարզութիւն կը տանէր, այլ միայն դէպի անկանխելի խառնափնթորութիւն։

Օրէնսդրական աշխատանքը մի հատիկ ժողովից տասը հազար ժողովների մէջ տեղափոխելը, ժողովներ, որոնք պիտի գործեն միաժամանակ, բայց միմեանցից անկախ,—միայն մի հետևանք կունենար, այն է՝ քաոս։

Մենք այստեղ խօսում ենք օրէնսդրական աշխատանքի մի ժողովից տասը հազարի մէջ տեղափոխելու մասին։ Խիստ խօսելով, դա ճիշտ չէ։ Բիատինգաուզէնը օրէնսդրական ժողովներին օրէնսդրութեան գործողութեան ֆունկցիաներից միմիայն մէկն է տալիս։ Ինչ վերաբերում է միւս ֆունկցիաներին, նա ինքն էլ այնպէս է ենթադրում, որ դրանք կարող են իրագործվել միայն մի հատ ժողովում։ Բայց նա այս վերջին հանգամանքը պարզապէս չէ դիտում, որովհետև ոչինչ չէ ուզում լսել մի հատիկ օրէնսդրական ժողովի մասին։

Օրէնսդրական գործունէութիւնը միմիայն օրէնքներ քննարկելու մէջ չէ կայանում։ Եթէ ամբողջ պարլամենտական աշխատանքը միմիայն դրա մէջ կայանար, այն ժամանակ դա մի շատ հնչուն բան կը լինէր։ Բայց օրէնսդրութիւնը ամենից առաջ պէտք է հոգ տանի այն մասին, որ օրէնքի ձևակերպումը համապատասխան լինի իր նպատակին. իսկ երբ օրէնքը ընդունված է, պէտք է հոգ տանել նրան գործադրելու և գործադրութեան եղանակի մասին։

Օրէնքի մշակելը, ինչպէս տեսանք, շատ քիչ է զբաղեցնում Բիտաինգաուզէնին։

«Երբ սեկցիաներում կատարած քուէարկութեան հետևանքը կը պարզվի, այն ժամանակ մինիստրութիւնը, ինչպէս Բիտաինգաուզէնն է ասում իր յօդուածներում, կամ թէ «խմբագրական մասնաժողովը», ինչպէս նա առաջարկում է իր ֆրանսերէն բրօշիւրի մէջ, օրէնքի պարզ և հասկանալի այնպիսի մի տեկստ կը կազմի, որը այն առաւելութիւնը կունենայ, որ անկարելի կը դառնայ նրան զանազան տեսակ բացատրել, ինչպէս այդ տեղի է ունենում մեր պարլամենտներում մշակած օրէնքներից շատերի հետ, որոնք, կարծես, դիտմամբ այնպիսի ոճով են գրված, որպէս զի իրաւաբաններին խրախուսեն երկդիմութիւնների մէջ»։ Բիտաինգաուզէնը մեզ ոչինչ չէ ասում, թէ ինչու հէնց այդ խմբագրական մասնաժողովին այդպիսի աստուածային օրինութիւն պարգևած պիտի լինի, հակառակ սատանայական պարլամենտների։

Լուի-Բլանը արդէն ուսել էր այդ հարցումը ու բացատրել, թէ օրէնքի պարզ ու որոշ ձևակերպութիւնը խմբագրելու համար պէտք է որ խմբագրական մասնաժողովը աւելի ինքնիշխան լինի, քան ընդհանուր ձայնատուութեան օրէնքով ստեղծված մի որևէ պարլամենտ, որովհետև նա միշտ քուէարկութեան քաօսային խառնափնթորութեան հետ գործ ունի։

Դրան Բիտաինգաուզէնը պատասխանում է, որ, եթէ խմբագրական մասնաժողովը համարձակվի պարլամենտական իշխանութիւնը սևիսկանացնել իրան, ժողովուրդը անմիջապէս նրան գործերից կը հեռացնի։ Դժուար կացութիւնից կարիլի է դուրս գալ և առանց օրէնքի տեկստը ձևակերպելու։

Այս դէպքում, ինչպէս երևում է, նա ենթադրում է, թէ իւրաքանչիւր սեկցիայի ամէն մի նախագահ բոլոր դէպքերում էլ միևնոյն պարզ հարցումները պիտի ներկայացնի ժողովին։

Եւ վերջապէս օրէնքը գործնականապէս իրագործելու հարցը Բիտաինգաուզէնին բոլորովին դժուար չէ թւում։ Այդ ինքնըստինքեան է կատարվում։ Այսպէս, օրինակ, վերյիշեալ հողատիրական օրէնքի գործադրութեան մասին նա ասում է. «Հողի գնահատութիւնը պէտք է կատարվի համայնքներում ընտրված կոմիսիաների միջոցով, որոնք հասարակական կօնտրօլի կենթարկվեն։ Պետական այն օբլիգացիաների պատրաստելն ու բաց թողնելը, որոնք նշանակված կը լինեն նախկին հողատէրերին գոհացում տալու համար, պէտք է մանրամասն որոշված լինեն վերոգրեալ ձևով ժողովրդից մշակված օրէնքով, ինչ բոլորովին դժուարութիւն չէ ներկայացնում։ Եւ վերջապէս, հողերից օգտվելը պէտք է ամեն մի համայնքում կանոնադրված լինի համայնական

սեկցիաների որոշումներով, վերոյիշեալ նոր օրէնքի հիման վրա»։

Շատ ճիշտ է երևակայելը, թէ ինչ ձևով մասնաւոր սեփականատիրութեան օգտին քուէ տուած գիւղական համայնքները, իրանց, թէկուզ «ժողովրդային» կօնտրօլին ենթարկվող, կօմիսիաների միջոցով պիտի գործադրեն այդ նոր օրէնքը, ենթադրվով հանդերձ թէ այդ օրէնքը շատ պարզ ու որոշ է ձևակերպված։

Կամ, գուցէ, մինիստրութիւնը պէտք է միատեսակութիւն մտցնի համայնքների գործունէութեանց մէջ։ Այդ պարագայում ճիշտ է յանձնվում մինիստրութեան վրա ունենալիք կօնտրօլը։

Այս հարցումներին մենք նոյնչափ իզուր տեղը պատասխան պիտի որոնէինք, ինչպէս և այն հարցումին, թէ ով պիտի պետական քիւջէտը ղեկավարի։ Պարլամենտ չը կայ, մինիստրութիւնը նախաձեռնութեան իրաւունք չունի. այդպիսով, պետական հասոյթների ու ծախսերի որոշելը իւրաքանչիւր տարվայ համար թողնվում է ժողովրդի միջից պատահական կերպով արված առաջարկութիւններին։

Մենք բոլորովին չենք հասկանում, թէ ինչո՞ւ Բիտաինգաուզէնը հարկ էր տեսել անարխիզմը հերքելու։

VIII

Օրէնքներ կազմելը

Բիտաինգաուզէնը շատ քիչ նշանակութիւն

է տալիս օրէնքների ձևակերպութեանը։ «Եթէ, —ասում է նա,—ժողովրդային որոշումով իրապէս ճիշտ է արտայայտված սկզբունքը, այն ժամանակ բոլոր եզրակացութիւնները էլ այնպէս պարզ կերպով են նրանից բղխում և նրանք այնչափ փոքրաթիւ են լինում, որ իրաքանչիւրի համար վերին աստիճանի հասկանալի, պարզ և բնական են դառնում»։ Իսկ մեզ դա այնչափ էլ հասարակ բան չէ թուում։

Օրէնքը, հրամանի կամ արգելքի միջոցով, հասարակական յարաբերութիւններին յայտնի ուղղութիւն տալու մի փորձ է, ուղղութիւն, որը համապատասխան լինի պետութեան, կամ նրա մէջ թագաւորող դասակարգի, կամ նոյնիսկ դասակարգերի շահերին։

Բայց կառավարութիւնը միակ գործօնը չէ ներկայացնում իրանից, որը որոշ ներգործութիւն ունի հասարակական կեանքի վրա։

Ոչ թագաւորը, ոչ տիրապետող դասակարգը և ոչ էլ նոյնիսկ ամբողջ ժողովուրդը չեն կարող հասարակական կեանքը, պետական իշխանութեան միջոցով, փոփոխութիւնների ենթարկել, ղեկավարվելով միմիայն իրանց ցանկութիւնով։ Կառավարութիւնը հասարակական կեանքի մէջ գոյութիւն ունեցող բազմաթիւ գործօնների միայն մէկն է միայն, և այդ գործօնը նոյն չափով միւս գործօնների ազդեցութեանն է ենթարկվում, ինչ չափով որ ինքն է ազդում նրանց վրա, իսկ վերջին հաշուով, թէ այդ և թէ բոլոր միւս գործօնները կա-

խուճն ունեն տիրապետող անտեսական յարաբերութիւններից։ Մանչեստրականութիւնն *) ու անարխիզմը, պնդելով թէ պետական օրէնքները այդպիսի պայմանների մէջ կարող են միայն հասարակական կեանքի ընթացքը խանգարել, տաշտի միջից ջուրը թափած միջոցին երախան էլ հետն են դուրս նետում։ Անարխիստները սուտ են, թէ հասարակական կեանքը այնքան աւելի կատարելագործված ձևեր է ընդունում, որչափ նա աւելի քիչ է ենթարկվում պետական ինամակալութեանը և այդտեղից նրանք եզրակացնում են, որ կառավարութիւնը պէտք է բոլորովին ոչնչացվի։ Միևնոյն ժամանակ հարուստ մանչեստերցիները, միշտ իրանց դրպանների ապահովութեան մասին մտածելով, խորհուրդ էին տալիս կառավարութեանը միմիայն ոստիկանական պահապանի դեր կատարել և, որչափ կարելի է այդ դերը եռանդով կատարել։ Սակայն կառավարչական իշխանութիւնը, անտարակոյս, արգելքների է հանդիպում հասարակական յարաբերութիւնների կողմից, և օրէնքները այն ժամանակ են միայն իրական յայտնվում, երբ օրէնսդիրները հաշվի են առած լինում այդ յարաբերութիւնները։ Պետական օրէնքը, ի հարկէ, միմիայն սկզբունքը, հիմնական դրութիւնն է իրանից ներկայացնում։ Այդ սկզբունքը եղրակացնելու համար, դիտութիւնը ստիպված է լինում վերացական կերպով դատողութիւններ անել և դանց առնել այն բոլոր տարրերը, որոնք կարող են խանգարել այդ սկզբունքի իրագէտ երևան գալուն և իր ամբողջ մաքրութեամբ արտայայտվելուն։ Իսկ պետական օրէնքը, ընդհակառակը, պէտք է ի նկատի առնէ այն բոլոր գործօնները, որոնք կարող էին ոչ միայն նրա գործադրութիւնը սահմանափակել, այլ և նրան բոլորովին հակառակ ուղղութիւն տալ։ Հէնց միմիայն այդ հանգամանքը հարկաւոր է, որ օրէնքները, այնպիսի մի բարդ հասարակութեան մէջ, ինչպիսին մերն է, ոչ միայն իրանցից միմիայն մերկ հիմնական դրութիւնները չը ներկայացնեն, այլև նրանք պէտք է կազմված լինեն շատ մանրամասն ու չափազանց մեծ զգուշութեամբ, եթէ ցանկալի է, որ նրանք իրանց նպատակին հասնեն։ Բայց դա անհրաժեշտ է և նրա համար, որ մեր հասարակութեան մէջ օրէնսդրութիւնը կարող է հասարակական յարաբերութիւնների վրա ազդել միմիայն մասնակի և ոչ անմիջական կերպով։

Կապիտալիստական հասարակութիւնը ապրանքային արդիւնաբերութեամբ չափազանց բարձր զարգացման հասած հասարակութիւն է։

Նա հազարաւոր ու մինչև իսկ հարիւրհազարաւոր արդիւնագործական ձեռնարկու-

*) Մանչեստրականութիւն այն բուրժուազական սկզբունքն է կոչվում, որ յայտարարում է, թէ մարդիկ պէտք է բոլորովին ազատ լինեն մրցելու և շահագործելու մէջ։ Ծ. Թ.

թիւններից է կազմված, որոնք բոլորն էլ շուկայի համար են աշխատում, բայց և ոչ մէկը իր սեփական գործածութեան համար չէ աշխատում։ Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ այդ արդիւնագործական ձեռնարկութիւններից ամեն մէկը, իր արդիւնաբերութեան բոլոր միջոցներով հանդերձ, բոլորովին ինքնուրոյն ու անկախ է միւս ձեռնարկութիւններից և ամբողջ հասարակութիւնից. որ մանաւանդ սեփականատիրութիւնը արդիւնաբերութեան միջոցների վերաբերեալ թագաւորում է, և որ հասարակութիւնը չէ, որ շուկայում ղեկավարում ու համաչափութեան մէջ է դնում առանձին արդիւնագործական ձեռնարկութիւնների արտադրութիւնը. այդպիսի համաչափութիւն պահպանողը ազատ մրցումն է հանդիսանում։ Բայց արտադրութեան այդ եղանակով անտեսական յարաբերութիւնները և հասարակական յարաբերութիւնները ընդհանրապէս աւելի են աճում ու աւելի մեծ ծաւալ ստանում, քան ինքը հասարակութիւնը։

Մարդիկ այլևս անկարող են լինում իշխել նրանց վրա, և իրանք են նրանց իշխանութեանը ենթարկվում։

Օրէնսդրութիւնը կարող է այդ յարաբերութիւններին միջամտել միմիայն կողմնակի կերպով։ Օրէնսդրութեան ուղղակի կերպով միջամտութիւնը կարող էր լինել միմիայն այն դէպքում, երբ հասարակութեան հասարակական (կոլեկտիվ) օրգանիզմը իրա-

պէս արտադրութիւնը ղեկավարող հանդիսանար, այսինքն, երբ արտադրելու եղանակը սոցիալիստական լինէր։ Իսկ կապիտալիստական հասարակութեան մէջ կառավարութիւնը կարող է տնտեսական ու հասարակական յարաբերութիւններին խառնվել սովորաբար միմիայն ծուռ ու մուռ ճանապարհներով։

Երբ կառավարութիւնը տեսնում է, որ երկրում շատ քիչ հաց է մշակվում, նա չէ կարող օրէնքի միջոցով հրամայել, որ հողերի մեծ մասի վրա անպատճառ հացահատիկ ցանվի։ Նա կարող է միայն հացի մշակութիւնը խրախուսել պաշտպանողական մաքսերով, օրինակ, մրցանակներ նշանակելով և այլն, բայց այդ դէպքում էլ դեռ յայտնի չէ, թէ կառավարութիւնը կը հասնի իր նպատակին։ Այսպիսով, եթէ օրէնքը հիմնական դրութիւն է պարունակում իր մէջ, այսինքն, այն դէպքում, երբ նա մի ընդհանուր հրաման է, կարելի է ասել, որ դա դեռ բոլորովին բաւական չէ։ Ամեն ինչ կախված է այն առանձնապէս ձեռնարկած միջոցներից, որոնք գործ են դրվում օրէնսդրի նպատակին հասնելու համար։ Այդ միջոցները ոչ մի ժամանակ իրանք իրանց չեն ըղխում այն սկզբունքից, որ օրէնքի հիմքն է կազմում։ Այս կամ այն միջոցը ընտրելու որոշումը կարող է, կամ, պոնէ, պէտք է կատարվի գոյութիւն ունեցող յարաբերութիւնների մանրամասն քննութիւնից յետոյ. օրէնսդիրը պար-

տաւոր է ձեռնարկվող միջոցները ճշտութեամբ որոշել։

Բայց օրէնսդրութիւնը հասարակութեան վրա ոչ միայն անուղղակի կերպով է ազդում, այլև մասնակի կերպով. ոչ թէ մի հատիկ օրէնքի միջոցով, այլ մի ամբողջ շարք—անթիւ շարք—օրէնքների միջոցով։ Օրէնքներից իւրաքանչիւրը հասարակական կեանքի մի անկիւնին է միայն ծառայում։ Իսկ հասարակութիւնը այնուամենայնիւ մի ամբողջական օրգանիզմ է։ Օրէնսդրութիւնն էլ պէտք է ուրեմն մի ամբողջութիւն կազմի, որպէսզի իրական դառնայ. առանձին օրէնքները պէտք է միմեանց մէջ համաձայնութեան մէջ լինեն, նրանք չը պէտք է միմեանց հակասեն։

Օրէնսդրութեան մէջ սերտ համերաշխութիւն մտցնելն ու պահպանելը չափազանց կարևոր խնդիր է։ Նա իրաւաբանական գիտութիւնների շրջանի մէջ է մտնում և, այդ տեսակէտով, յիրաւի իրաւաբանների մասնակցութիւնը օրէնքներ կազմելու գործի մէջ անհրաժեշտ է համարվում։ Եւ որչափ բարեխիղճ լինի կառավարութիւնը ու բարեխղճաբար վերաբերվին տիրող դասակարգերը օրէնսդրական գործին, որչափ նրանց քաղաքականութիւնը սկզբունքային հողի վրա դրված լինի, այնչափ էլ հեշտ կը լինի օրէնսդրութեան մէջ սերտ համերաշխութիւն պահպանելը։ Ընդհակառակը, որչափ օրէնսդրական օրգանները աւելի են ղեկավարվում իրանց անմիջական շահերով և «ուժերների» յանկութիւններով, որչափ աւելի թեթևամտութեամբ են վերաբերվում իրանց գործին, այնչափ էլ մեծ խառնափնթորութիւն է առաջվում օրէնքների մէջ, այնչափ էլ նրանք քիչ են համապատասխանում իրականութեանը, որովհետև այդ պարագայում առաջվում են պատահական ու բացառիկ օրէնքներ, և վերջապէս, այնչափ էլ նշանակութիւնից զուրկ է դառնում դատարանը։ Աւատրիական այն օրէնքները, որոնցով որոշվում են ոչ մի կրօն չը դաւանող մարդկանց դրութիւնը, այդպիսի կիսախղճուկ, կիսավախկոտ օրէնսդրութեան մի նմուշ են ներկայացնում իրանցից, այսինքն՝ այնպիսի մի օրէնսդրութիւն, որը մի զոյգ իրը թէ հիմնական, բայց շատ թերի գործադրվող դրութիւններով է ղեկավարվում։ Այդ օրէնսդրութեան մէջ այնչափ պակասաւոր կողմեր, այնչափ հակասութիւններ կան, որ յետադիմական կառավարութիւններին միշտ աջողվում է այստեղ բաւականաչափ առիթներ գտնել օրէնսդրութիւնը իր իսկական նշանակութիւնից զրկելու համար։ Գերմանիան էլ «կուլտուր-կամպֆի» ժամանակներից ի վեր բաւականաչափ այդ կարգի բացառիկ, պատահական օրէնքներ է լոյս աշխարհ հանել ու խառնափնթորութիւն մտցրել դատավարութեան մէջ։

Մինչև իսկ հէնց այդ տեսակէտից անպայման անհրաժեշտ է համարվում, որ օրէնքը շատ խը-

նամքով պատրաստվի ու մանրամասն մշակված լինի։ Կայ և մի հանգամանք, որը, գուցե, և ամենից կարևորն է։ Ներկայ հասարակութեան մէջ, ուր զանազան հասարակական խաւերի շահերը չափազանց տարբեր և ուղղակի միմեանց հակառակ են, օրէնքներից շատ քչերը միայն կարող են չը խանգարել մշտապէս, կամ գոնէ, որոշ պայմանների մէջ, ժամանակաւորապէս,—անհատական կամ դասակարգային որոշ շահերին, թէև ամեն մի օրէնք դարձեալ որոշ շահերի է ծառայում։ Այդ պատճառով էլ ամեն մի մարդ, որ օրէնքի օգնութեանը դիմելու կարիք է զգում, միշտ աշխատում է կարելիին չափ իր սեփական շահերի համաձայն բացատրել նրան։ Մինչև իսկ մի որոշ մարդկանց՝ իրաւաբանների՝ դասակարգ է կազմվել, որոնց գործը նրա մէջ է կայանում, որ օրէնքի մէջ ամենանպատակաւոր բացատրութիւններ գտնեն իրանց կլիենտների օգտին։ Իրրև թէօրետիկ, իրաւաբանը միշտ ձգտում է, որ օրէնսդրութիւնը իրանից մի ամբողջութիւն կազմի, իսկ իրրև պրակտիկանտ, նա ստիպված է օգտավել օրէնքի բոլոր թերութիւններից, հակասութիւններից ու անորոշութիւններից, որոնք կարող են շատ նպաստաւոր լինել իրանց պաշտպանած գործի համար։ Այդ պատճառով էլ վերին աստիճանի անհրաժեշտ է, որ ամեն մի օրէնք կարելի եղածին չափ պարզ ու որոշ խմբագրված լինի, որպէսզի հնարաւորութիւն չը լինի նրան այլ բացատրութիւն տալ, քան այն, ինչ մտքով ու խմաստով որ նա խմբագրված է եղել։ Սակայն շատ էլ հեշտ չէ այն ժամանակ այդպիսի որոշ խմբագրութեան ձև գտնելը։ Մինչև իսկ մի որոշ օրէնքի կողմնակիցներն էլ շատ անգամ միմեանցից բոլորովին տարբեր հայեացքներ են արտայայտում այն մասին, թէ ո՞ր խմբագրական ձևն է աւելի համապատասխանում այս կամ այն օրէնքի նպատակին։ Այդ կը նշանակէ՝ դատարկ վիճաբանութեանը վերջ դնելու համար դատարկ վիճաբանութեան մէջ մտնել։

Բայց եթէ այս կամ այն օրէնքի կողմնակիցները, ցանկանալով նրան գործադրութեան մէջ տեսնել, կատարելապէս հիմք ունեն պնդելու, որ այդ օրէնքը կարելի եղածին չափ պարզ ու նպատակայարմար կերպով ձևակերպված լինի, նոյնպէս էլ այդ օրէնքի հակառակորդները կատարելապէս հիմք ունեն, եթէ չեն կարող այդ օրէնքի հրատարակութիւնը արգելել, գոնէ աշխատել, որ նրա ձևակերպութիւնը, հնարաւոր եղածին չափ, թուլացնի նրա ունենալիք ազդեցութիւնը։

Օրէնքները կեանքի մէջ անցկացնող իշխանութիւնների կամայականութիւնն էլ նոյնչափ իր գործունէութեան համար ազատ ասպարէզ է գտնում, որչափ որ օրէնքի խմբագրութիւնը աւելի մութն է։

Շահերի միմեանցից տարբեր լինելը մի ու-

բիշ տեսակէտից էլ անհրաժեշտ է դարձնում, որ օրէնքի խմբագրութիւնը շատ խնամքով կատարված լինի։ Եթէ ամեն մի օրէնք համապատասխանում է որոշ շահերի, նա մեծ մասամբ համապատասխանում է, ոչ թէ մի հատիկ շահի, այլ ընդհանրապէս շատ, միմեանցից տարբեր շահերի։ Շատ հաճախ կը պատահի, որ ամբողջական կառավարութեան մէջ ժողովրդի մեծամասնութեան կողմից օրէնքով այնպիսի որոշում ընդունվի, որ սա միմիայն մի դասակարգի, կամ ժողովրդի մեծ մի խաւի շահերին ծառայի։ Նոյնիսկ այնպիսի մի երկրում, ուր մի դասակարգը ժողովրդի մեծամասնութիւնը կազմէր, հէնց այդ դասակարգի մէջ էլ միմեանցից տարբեր համախմբումներ կը կազմվէին, իրանց՝ միմեանցից բոլորովին տարբեր շահերով։ Եւ վերջապէս հէնց այդ միևնոյն համախմբումների շահերի մէջ էլ, կամ թէ միևնոյն կուսակցութեան մէջ էլ կարող էին զանազան կարծիքներ ծագել, որոշ շահերին գոհացում տալու եղանակների մասին։

Կարճ ասելով, ամեն մի օրէնքի հիմքը մեծ մասամբ տարբեր շահերի, և կամ գոնէ տարբեր հայեացքների կոմպրոմիսն է կազմում։ Ամեն մի կոմպրոմիս մէջտեղից վերացնելը կը նշանակէր՝ անհնարին դարձնել որևէ օրէնսդրութիւն։ Այս ոչ միայն պարլամենտարական օրէնսդրութեանն է վերաբերվում, այլ և ուղղակի ժողովրդային օրէնսդրութեանը, որին

ապացոյց կարող է ծառայել Շվէյցարիայի օրինակը։ Բեֆերենդումով կամ նախաձեռնութեան միջոցով ստեղծված բոլոր օրէնքների մէջ միշտ մի քանի դասակարգեր և մի քանի կուսակցութիւններ են մասնակցում։

Եւ հէնց այն պատճառով, որ ամեն մի օրէնք իրանից կոմպրոմիս է ներկայացնում, հէնց դրա համար էլ բոլոր՝ այդ օրէնքով շահագրգռված դասակարգերը, կուսակցութիւնները ու խմբակցութիւնները պարտաւոր են ուշադրութեամբ հետևելու, որ օրէնքի ձևակերպումը իրանց մասնաւոր շահերի ու հայեացքների արտայայտութիւնը լինի։

Այսպէս ուրեմն, օրէնք կազմելը իրանից մի վերին աստիճանի կարևոր գործ է ներկայացնում, որը պահանջում է թէ մասնաւոր գիտութիւն և թէ չափազանց մեծ խնամք։ Ի զուր չէ, ուրեմն, որ պարլամենտներում այնպիսի կատաղի կռիւ են մղում օրէնքների խմբագրութեան ձևի համար, և ի զուր չէ, որ պարլամենտական փորձառութիւնը ամեն տեղ ձգտում է կարելի եղածին չափ շատ բացատրութիւններ մացնել, որպէս զի օրէնքները շտապով ու անկարգ կերպով թխված չը լինեն։

Մինչև իսկ մի որևէ կարևոր օրէնքի նախագծի փոքր ի շատէ բաւարար կերպով մշակվելը, որ պիտի յետոյ պարլամենտի քննութեանը ենթարկվի, իրանից ահագին դժուարութիւններ է ներկայացնում։

Բայց մեծ մասամբ, օրէնքներ կազմելու

նախաձեռնութիւնը, այսպէս կոչված «դրական» աշխատանքը, պէտք է պարլամենտական մեծամասնութեան, որ նոյնն է ասել՝ կառավարութեան կողմից լինի, միմիայն սա կարող է ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ իր նախագծերը նախապէս էլ չեն ընայ։ Բացի դրանից, նրա տրամադրութեան տակ են գտնվում բոլոր անհրաժեշտ իրաւաբանական և այլ մասնագիտական օժանդակիչ ոյժերը, անհրաժեշտ ստատիստիկա և այլ նիւթերը։

Ոչինչ այնքան ծիծաղելի ու սխալ չէ, քան այն, որ ամեն ժամանակ սոցիալ դեմօկրատիայի հասցէին յանդիմանութիւններ են անվում, թէ նա անկարող է որևէ մի դրական գործ կատարել օրէնսդրութեան մէջ, որ նա գիտէ միայն միշտ ամեն ինչ բացասել։ Եթէ պարլամենտներում սոցիալ-դեմօկրատիան բաւականանում է դիւաւորապէս միմիայն քննադատութիւն անելով, այդ ոչ թէ նրանից է, որ նա չէր կարողանայ մի որևէ դրական բան առաջարկել, այլ պարզապէս նրանից է, որ նա դեռ փոքրամասնութիւն է կազմում. իսկ փոքրամասնութեան դործը բոլոր պարլամենտական երկրներում էլ, ոչ թէ օրէնսդրութեան մէջ ակտիվ մասնակցութիւն ունենալն է, այլ այդ գործունէութեան քննադատութիւնն է։ Թէ մենք կարող ենք առաջարկութիւններ անել, դրան ապացոյց մեր ծրագիրն է։ Բայց առայժմ սոցիալ-դեմօկրատիան իրանից փոքրամասնութիւն է ներկայացնում, նա հաղուագիւտ դէպքերում կարող է իրապէս հնարաւորութիւն գտնել իր այս կամ այն առաջարկը օրէնքի վերածելու համար։

Սակայն, օրէնսդրական նախագծերը քննադատելու աշխատանքը միմիայն ներկայացված նախագծերը բացատրելու մէջ չէ կայանում։ Օրէնսդրական նախագիծը քննադատել, այդ, ըստ մեծի մասին, նշանակում է՝ աշխատել նրան աւելի լաւ դարձնել։ Այդ աշխատանքի մէջ մասնակցում է ամբողջ պարլամենտը, ոչ միայն մեծամասնութիւնը, այլ և փոքրամասնութիւնը, ոչ միայն նրանք, որոնք կողմնակից են օրէնքի սկզբունքին, այլ և նրանք, որոնք մերժում են նրան։ Օրէնքի վերջնական ձևակերպութիւնից է կախված և նրա ունեցած ազդեցութիւնը. հէնց այդ ազդեցութիւնը թուլացնելու մէջ է կայանում նրանց գլխաւոր գործը, որոնք համոզված են այդ օրէնքի վնասակար լինելու մէջ։

Որչափ էլ մեծ նշանակութիւն ունենան օրէնսդրական նախագծեր պատրաստելու նախնական աշխատութիւնները, այնուամենայնիւ յաճախ էլ աւելի մեծ աշխատանք է պահանջում նրա քննութիւնը պարլամենտում, ֆրակցիաների ու կոմիսիաների ժողովներում, և նորից ամբողջ պարլամենտական կազմի առաջ քննելիս։ Եթէ խօսքը մի շատ կարևոր օրէնքի մասին է լինում, այնպիսի օրէնքի,

որը չափազանց կարևոր շահեր է շոշափում, այն ժամանակ նրա քննութիւնը սովորաբար անվերջ վիճաբանութիւններ է առաջացնում, և անհամար ուղղումներ են անվում առաջարկված օրէնքի մէջ։ Ո՞վ կարող է հերքել, որ այդպիսի դէպքերում ահագին ժամանակ է կորչում ի զուր տեղը, և մարդիկ ի զուր ժամավաճառ են լինում։ Բայց մեղ ցանկալի է կարծել, որ այդ ոչ միմիայն պարլամենտարիզմի, այլ և ընդհանրապէս բոլոր ազատ ժողովների առանձնայատկութիւնն է, կամ, եթէ կուզէք, պակասութիւնն է։ Եթէ այդ բանը կարողանար պարլամենտարիզմի դէմ մի արգումենտ ծառայել, այն ժամանակ դա մի արգումենտ պիտի լինէր և ժողովներ գումարելու իրաւունքի և մամուլի ազատութեան դէմ։ Այդ չարիքը չէր կարող նուազել և այն դէպքում, եթէ տասը հազար պարլամենտներ գումարէին հազարական անդամներով, ինչպիսին Բուտինգաուզէնն է առաջարկում, մի հատիկ պարլամենտի փոխարէն։

Որչափ էլ պարլամենտական քննութիւնը քիչ գնահատվի, այնուամենայնիւ, եթէ չենք ցանկանում, որ օրէնքներ կազմելը մի խումբ մարդկանց մօնոպոլ իրաւունքը լինի, ներկայ հասարակական յարաբերութիւնների օրով նա միակ միջոցն է օրէնսդրական նախագծերը բարելաւելու համար, այսինքն՝ անհրաժեշտ է, որ պետական գործերի մէջ մասնակցութիւն ունենան զանազան կամ բոլոր կա-

րևոր հասարակական խմբերն ու կուսակցութիւնները։ Այդ նպատակին հասնելու համար մինչև օրս, գոնէ մի ուրիշ, աւելի լաւ միջոց պտնված չէ։

Օրէնքի մշակումը, օրինագծի բարելաւումը անկարող են տեղի ունենալ Բուտինգաուզէնի առաջարկած ժողովրդային անմիջական օրէնսդրական միջոցով։ Եւ շվեյցարական նախաձեռնութիւնը հէնց այն պակասութիւնը ունի, որ նա թոյլ չէ տալիս օրէնքի նախագծերի մէջ ուղղումներ մտցնել։ Դա նամանաւանդ շատ զգալի է լինում, երբ օրինագծերը առաջարկվում են հէնց ժողովրդի միջից։ Այդպիսի օրինագծերը պէտք է ընդունվեն կամ մերժվեն հէնց այն ձևով, ինչ ձևով որ նրանք առաջարկվում են։

Եթէ օրինագիծ առաջարկողը չը կարողացաւ հէնց առաջին անդամից նրա բովանդակութիւնը, իր բոլոր կէտերով, լաւ և ճիշտ ձևակերպութեան մէջ դնել, այն ժամանակ օրինագիծը կամ մերժվում է նոյն իսկ նրա մէջ շոշափված խնդիրների համար սրտացաւ կողմնակիցների կողմից և կամ նա ընդունվում է, բայց իր նպատակին չի հասնում։ Նախաձեռնութեան այն ձևը, որը, ներկայ ցուցչական սկզբունքը ժխրժելու տեսակէտով, ամենից մօտ է Բուտինգաուզէնի առաջարկութեանը և որը նրանից տարբերվում է այն կարևոր կէտի մէջ, որ Բուտինգաուզէնը ժողովրդային կամքի սահմանափակումն է հա-

մարում նոյն իսկ ձևակերպված օրինագիծ առաջարկելը,—հէնց այդ ձևն, ասում ենք, ամենից քիչ գործադրելի հանդիսացաւ կեանքի մէջ։ Մի քանի կանոններ միայն նախաձեռնութեան այդ ձևը մտցրին իրանց մէջ, և մենք դեռ չենք լսել, թէ նա մի առանձին նշանակութիւն է ստացել։ Կանոնների մեծ մասը, ինչպէս և ամբողջ շվեյցարական միութիւնը, նախաձեռնութեան այն ձևը միայն պիտանի, որը հնարաւորութիւն է տալիս ժողովրդին՝ իրանց ներկայացուցիչներին տեղեկացնելու, թէ այս ինչ օրէնքի մշակման կարիք է զգացվում։ Նրանք այդպիսով խոստովանում են, որ նպատակայարմար օրէնքները սովորաբար չեն կարող մասնաւոր մարդկանց գործ լինել, որ այդ կարևոր ֆունկցիան պէտք է յանձնել ներկայացուցիչների ժողովին։

Օրենսգիրքերի գործադրութիւնը

IX

Որչափ կարևոր է, որ օրէնքը խնամքով ձևակերպված ու խմբագրված լինի, այնուամենայնիւ ամենալաւ օրէնքն էլ ոչ մի դրօշ չարժէ, եթէ նա միայն թղթի վրա է մնում, կամ թէ չէ՝ գործադրվում է սրա կամ նրա քմահաճոյքով։ Այդ պատճառով էլ օրէնադրական ժողովների ամենակարևոր գործերից մէկն էլ այն պիտի լինի, որ նրանք հսկեն օրէնքների գործադրութեան վրա։

Օրէնքներին պարտաւոր են հնազանդվել ոչ միայն քաղաքացիները, այլ և պետական իշխանութիւնը, որի կամայականութիւնն էլ է սահմանափակվում օրէնքներով։ Օրէնքի պահապանները յաճախ նոյնչափ թամահ են անում ոչ-օրինական ճանապարհների դիմել, որչափ և «կաշկանդված դատակարգերը», այսինքն՝ ժողովրդի այն բոլոր տարրերը, որոնց վարքն ու գործողութիւնները, ձգտումներն ու հակումները մասնաւորապէս սահմանափակվում են օրէնքներով։ Իշխանութիւնների ոչ-օրինական ճանապարհներով օգտվելու թամահը այնչափ աւելի խիստ է լինում, որչափ որ աւելի քիչ է լինում նրանց վրայի կօնտրօլը և որչափ որ աւելի մեծ է նրանց ոյժը։ Այդ պատճառով էլ աբսօլիտիզմը ժամանակակից պետութեան մէջ շատ աւելի անտանելի է, քան, օրինակի համար, մի որևէ արևելեան բռնապետութեան մէջ։ Այնտեղ ինքնակալ կառավարութիւնը հանդիսանում է այնպիսի հասարակութեան վերին կառուցուածքը, որը, չը հաշվելով քաղաքային աննշան բնակչութիւնը, կազմված է բացառապէս գիւղական՝ անուսեալ ինքնուրոյն և միմեանց հետ ոչ մի օրգանական կապով չը կապված՝ համայնքներից։

Դեմօկրատիան ձգտում է կարելի եղածին չափ սահմանափակել բիւրօկրատական ըէժիմը, հնարաւոր եղածին չափ նորից համայնքների և միութիւնների ինքնագործունէութեանը վերադարձնել այն ֆունկցիաներից շատերը, որոնք այժմ կենտրօնացած են

չինովնիկների ձեռքում։ Բայց այդ ձգտումը սահմաններ ունի։ Թէ արդիւնաբերութեան կապիտալիստական եղանակը և թէ կապիտալիստական պետութիւնը շարունակ աւելի ու աւելի կենտրոնացման են ձգտում, իսկ հասարակութեան կողմից պետութեան կարգադրութեան յանձնված գործերը թէ աւելի ու աւելի բազմաթիւ են դառնում և թէ բարդանում են։ Այդ պատճառով դեմոկրատական պետութիւնների մէջ էլ շարունակ բազմանում են թէ կառավարչական չինովնիկները և թէ նրանց ֆունկցիաները։ Նամանաւանդ չափազանց կարևոր է դառնում հսկողութիւնը պետութեան կենտրոնական իշխանութեան՝ կառավարութեան վրա, որի ետևում կանգնած է պետութեան ամբողջ բիւրօկրատիան։ Բայց այդ հսկողութեան գործադրութեան համար մինչև հիմա դեռ յայտնի չէ մի այլ միջոց, բացի ներկայացուցչական ժողովից։ Մինչև իսկ անմիջական օրէնսդրութեան կողմնակիցներն էլ չեն կարողանում ոչ մի այլ միջոց առաջարկել։ Կառավարութեան ու նրա չինովնիկների վրա հսկողութիւն ունենալու իրաւունքը նամանաւանդ մեծ արժէք ունի փոքրամասնութեան, օպոզիցիա կազմող կուսակցութիւնների համար. այդ բանը նրանց համար բոլոր պարլամենտական իրաւունքներից ամենաարժէքաւորն է։ Օրէնսդրական խնդիրների մէջ, շատ բնական է, նրանք շատ աննշան ազդեցութիւն միայն կարող են ունենալ։ Իսկ կառավարչական վարչութեան մէջ զեղծումներ բանալ ու պատշաճաւոր կերպով նրանց խարազանել կարող է և մի առանձին պատգամաւոր, եթէ նա ազնիւ է, քաջութիւն ունի ու չիմար չէ։ Մի քանի, ոչ-բազմաթիւ, ազնիւ և ճակատով քաղաքացիների ներկայութիւնը մինչև իսկ այնպիսի մի անոյժ և ստրկական պարլամենտում, ինչպիսին աւստրիականն է, կառավարութեան համար մի կատարեալ փուշ է հանդիսանում և մի որոշ չափով սանձահարում է բիւրօկրատիայի կամայականութիւնն ու ինքնիշխանութիւնը։

Ներկայացուցչական սիստեմի ոչնչացումը նշանակում է միևնոյն ժամանակ և կառավարութեան վրա եղած որևէ իսկական կօնտրօլի վերացում։ Ով ժողովրդային ներկայացուցչութիւնը կը վերացնի, նա միևնոյն ժամանակ կը վերացնի և այն ամբիօնը, որի վրայից տիրապետող սիստեմի մեղադրողները կարող են ամբողջ ժողովրդին դիմել։ 10,000 սեկցիաներից իւրաքանչիւրում հեռուորը դիմում է միմիայն ժողովրդի տասհազարերորդ մասին. նրա առաջ մինիստր չը կայ կանգնած, որը պարտաւորված լինի ամեն բանի պատասխան տալ, կամ, գուցէ, հարկ պիտի լինի 10,000 մինիստր նշանակել. իսկ դրա եղրակացութիւնները նոյնպիսի աջողութեամբ կարող են ծածկել, ինչպէս որ հիմա ծածկում են շատ բան այն բոլորից, ինչ որ խօսում

են մանաւոր մարդիկ ժողովրդային ժողովներում և մինչև իսկ մաժուլի մէջ։ Որպէսզի այդպիսի պայմաններում կարելի լինի մի որևէ խնդիր առաջարկել ժողովրդի քննութեանը, հարկ պիտի լինէր ամենալաւ դէպքում 10,000 անգամ աւելի շատ աշխատանք թափել, քան պարլամենտական դերատեսների ժամանակ։

Բիտաինդաուղէնը, գուցէ, մոռացում էր, թէ նրա պետութեան մէջ, անշուշտ, չեն կարող մեզադրանքներ ծագել մինիստրների դէմ, որովհետև վերջիններս ժողովրդից ընտրված պիտի լինեն։ «Պետական գործերը ղեկավարելու համար նշանակված մինիստրների կոլլեգիան ընտրվում է ընդհանուր, ուղղակի ձայնատուութեան իրաւունքի հիման վրա» *)։ Բայց երբվանից է, որ ժողովրդի կողմից պաշտօնեայ ընտրվելը երաշխաւորութիւն է ներկայացնում ընտրվածի անաղարտ վարք ունենալու համար։ Հէնց ինքը Բիտաինդաուղէնն էլ չէ՞ ասում, որ անհնարին է ժամանաւոր շահեր արտայայտողներին ընդհանուրի շահերի պաշտպանութիւնը յանձնել, որ ժողովուրդը չէ կարող մազաչափ անդամ վստահանալ իր ընտրած օրէնսդիրներին։ Մի՞թէ նա չէ կրկնում Ժ. Ժ. Ռուսսոյի այն խօսքերը, թէ անգլիացիք ազատ են լինում միմիայն պարլամենտական ընտրութիւնների օրը, համ, գուցէ, նա ենթադրում է, թէ կարելի է

*) Սոցիալ-դեմոկրատական յօդուածներ, IV եր. 9։

պետական իշխանութիւնը ի չարը գործ դնելու առաջը առնել պարզապէս նրանով՝ որ այդ իշխանութիւնը յանձնված կը լինի ժողովրդի կողմից ընտրված մարդկանց։

Միթէ՞ մինիստրները աւելի քիչ փորձութեան են ենթարկվում, քան պարլամենտի անդամները, թէ՞ նրանք աւելի քիչ իշխանութիւն ունեն։ Պարլամենտի անդամները կարող են պետութեան վրա ազդել միմիայն կողմնակի կերպով, կառավարութեան միջոցով։ Իսկ այս վերջինը անմիջական կերպով է օգտվում իր ունեցած պետական անագին իշխանութեամբ։ Պարլամենտում միշտ լինում են միմեանցից բոլորովին տարբեր ուղղութիւնների ներկայացուցիչները, մեծամասնութիւնը փոքրամասնութեան քննադատութեանն է ենթարկվում։ Իսկ մինիստրութիւնը պէտք է միևնոյն ուղղութեան պատկանող անձերից կազմված լինի. եթէ մի տեղ խառն մինիստրութիւն է կազմված, այդ միայն ցոյց է տալիս, որ միացած կուսակցութիւնների միջև եղած տարաձայնութիւնը այլևս սկզբունքային չէ։ Պետութիւնը կարելի է կառավարել, չը ղեկավարվելով մի որևէ ոլոշ սկզբունքով, բայց անհնարին է նրան կառավարել, միաժամանակ տարբեր սկզբունքների վրա յենվելով։ Այսպէս ուրեմն, կառավարութեան մէջ փոքրամասնութեան կօնտրոլ չը կայ մեծամասնութեան վերաբերեալ, և կառավարութեան իշխանութիւնը արդի պետութեան մէջ աւելի ընդարձակ է ու

աւելի անմիջական, քան պարլամենտական իշխանութիւնը։ Եւ չը նայելով այդ բոլորին, Բիտանդատուղէնը դարձեալ ասում է, թէ ամեն մի պարլամենտ անպատճառ դաւաճանում է ժողովրդին մինչև իսկ այն ժամանակ, երբ նա կատարելապէս ժողովրդից կախումն ունի, երբ նա ընտրված է ընտրողական ամենա ընդարձակ իրաւունքների հիման վրա և ամենաազատ ընտրողական պայմանների մէջ, երբ նա ընտրված է շատ կարճ ժամանակվայ շրջանի համար—2 կամ 3 տարով—և բեֆեռենդումի ու նախաձեռնութեան կօնտրօլի տակ է դնվում, այնինչ մինիստրութիւնը, բաւական է որ նա ընտրովի լինի, դրանով արդէն նա ժողովրդի ամենախոնարհ ծառան կը դառնայ։

Երբեմն, սակայն, Բիտանդատուղէնի մէջ կասկածներ են յարուցում այն մասին, որ մի մեծ կենտրօնական իշխանութեանը իր պետութեան մէջ հակադրված է միայն 10,000 սեկցիաների բաժանած ժողովուրդը։ Մի քանի դէպքերում նա հակիչ կօմիսիայի մասին է ակնարկում, որը անհրաժեշտ կը լինէր, և որը, ի հարկէ, ընտրովի լինելով, կը հանդիսանար իբրև ներկայացուցիչների մի ժողով։ Անմիջական օրէնսդրութեան կողմնակիցները որչափ էլ աշխատում, այս ու այն կողմն էին ընկնում, այնուամենայնիւ նրանց բոլոր ջանքերը ի զուր էին լինում. եթէ նրանք ցանկանում են, որ օրէնսդրական ժողովների ֆունկցիաները ճշտութեամբ կատարվեն, նրանք ստիպված են լինում այդ ֆունկցիաները,—բացի օրէնքները վերջնականապէս քուէարկելու գործողութիւնից,—տեղափոխել նորից ներկայացուցչական ժողովները։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ բոլորովին միևնոյն է, թէ այդպիսի ժողովները կը կոչվեն պարլամենտ, խմբագրական կօմիսիա, թէ վերահսկիչ կօմիտետ. եթէ պարլամենտի հակառակորդների իդիօսինկրազիան (մի որևէ առարկայից հիւանդոտ տպաւորութիւն ստանալը) վերաբերում է միմիայն անուանը, այդ պարագայում շատ հեշտ է նրանց բժշկելը։ Ներկայացուցչական սիստեմը միշտ կը վերածնվի, որչափ էլ նրանց գլխին մահացու հարուածներ հասցնեն։

Խմբագրական կօմիսիան և վերահսկիչ կօմիտետը չեն կարողանայ գործ կատարել, առանց որոշ իրաւունքների. եթէ նրանց խորհրդակցութիւնները մի որևէ նպատակի պիտի ձգտեն, այն ժամանակ նրանք պիտի իրաւունք ունենան որոշումներ կայացնելու, իսկ կառավարութիւնն էլ պարտաւորված պիտի լինի արժանի յարգանքով վերաբերվել այդ որոշումներին։ Այդպիսով, անկարելի է նրանց մի յայտնի չափով ընդարձակ իրաւունքներ չը տալ։

Եթէ այդ ժողովներում պիտի մասնակցեն կարելի եղածին չափ բոլոր ընդհանուր և խմբական շահերի, բոլոր կուսակցութիւնների և ժողովրդի ամեն ուղղութիւնների ներկայա-

ցուցիչները, այն ժամանակ հարկ կը լինէր այդ ժողովի մէջ թողնելու այնպիսի մի մեծ թիւ մարդիկ,—որը շատ հարմարատասխան է և խորհրդակցական պարլամենտի նպատակներին,—հետևապէս և այնչափ մօտաւորապէս անդամներ, որչափ սովորաբար լինում են արդի պարլամենտներում։ Եւ վերջ ի վերջոյ ակներև կը դառնայ, որ միաժամանակ նիստ ունեցող երկու պալատների ժողովները, որոնք երկուսն էլ ընտրված են ուղղակի ձայնատուութեան իրաւունքով, ընդհանուր առմամբ կազմված, հետևապէս, և միատեսակ կուսակցութիւններից, իրանց միատեսակ համեմատական չափով, իրանց փոխադարձաբար ու յաճախ միմեանց հետ հիւսվող ֆունկցիաներով, բոլորովին իզուր տեղը ոյժերի վատնումն են ներկայացնում. վերջ ի վերջոյ ակներև կը դառնայ, որ իրապէս ոչինչ չի փոխվի, այլ ընդհակառակը այդ ներկայացուցչական հաստատութիւնների աշխատանքը շատ աւելի կը թեթևանայ ու պարզ կերպարանք կը ստանայ, եթէ բոլոր աշխատանքները մի պալատին յանձնվեն, խմբագրական կոմիսիան վերահսկիչ կոմիտեի հետ միացնելով։ Եւ այն ժամանակ մենք վերջապէս այն պայմաններին կը հասնենք, ինչ այժմ արդէն գոյութիւն ունեն Շվէյցարիայում՝ ժողովրդային ներկայացուցչութիւն, որը կօնտրօլի է ենթարկվում ժողովրդային ձայնատուութեամբ։

Բայց քանի որ մինոյն քաղաքացիներն են

մասնակցում ներկայացուցչական ժողովի ընտրութիւններին և այդ ժողովի օրինագծերը քուէարկելու ժամանակ, ուստի այդ քուէարկութիւնների հետևանքը այն կը լինի, որ ըստ մեծի մասին թէ օրէնսդրութեան և թէ, այսպէս ասած, օրէնքներ կազմող ժողովի համար տրված ձայները միևնոյնը կը լինեն։ Եւ միայն հազուագիւտ դէպքերում, երբ կուսակցութիւններից և ոչ մէկը վճռական մեծամասնութիւն չէ կազմում ժողովում կամ թէ երբ այնպիսի մի կարևոր օրէնքի մասին է լինում խնդիրը, որ ալեկոծութեան մէջ է դնում ժողովրդային մասսաներին ու քուէարկութեան է դրւում այնպիսի անտարբեր տարրեր, որոնք մի այլ ժամանակ քուէարկութեան չեն խառնվում, ուստի և դժուար է դրանց հաշիւ առնել. այդպիսի դէպքերում միայն կարելի է, որ երբեմն տարբերութիւն նկատվի ժողովրդի ու ներկայացուցչական ժողովի քուէարկութեանց հետևանքների մէջև, և այդ այն պարագայում միայն, ի հարկէ, երբ ներկայացուցիչները ընտրված լինեն կատարեալապէս ազատ կերպով և այն էլ կարճ ժամանակի շրջանի համար։

Այդ պատճառով էլ այս տողերի հեղինակը ենթադրում է, որ ինքը ոչ մի հիմք չունի ամենափոքրիկ փոփոխութիւն մտցնելու իր արդէն արտայայտած դրութեան մէջ, որը այնպէս վրդովել էր ուղղակի օրէնսդրականութեան կողմնակիցներին։ Մեր արտայայտած

դրութիւնը ասում է. «Մենք պէտք է անուշադիր թողնենք հիմա ժողովրդային ուղղակի օրէնսդրութիւնը։ Դա չէ կարող աւելորդ դարձնել պարլամենտը, գոնէ արդի մեծ պետութիւնների մէջ, իսկ այստեղ խօսքը հէնց այդպիսիների մասին է. ժողովրդային ուղղակի օրէնսդրութիւնը կարող է միայն առանձին դէպքերում գործել պարլամենտի հետ միաժամանակ, ուղղումներ մտցնելու նպատակով։ Միանգամայն անհնարին է ժողովրդային ուղղակի քուէարկութեանը թողնել ամբողջ պետական օրէնսդրութիւնը. նոյնչափ և անհնարին է նրան յանձնել պետութիւնը կառավարելու հսկողութիւնը, և, պէտք եղած դէպքում, նրան փոխելու իրաւունքը։ Թանի որ գոյութիւն կունենայ արդի մեծ պետութիւնը, քաղաքական գործունէութեան ծանրութեան կենտրոնը միշտ պարլամենտում կը լինի»*)։

Մենք նամանաւանդ քիչ պատճառներ ունենք այս տեսակէտից հրաժարվելու, քանի որ մինչև իսկ ժողովրդային ուղղակի օրէնսդրութեան կողմնակիցների փորձն էլ մեր օգտին է խօսում։

Ինչպէս որ արդի պետութեան զարգացումը անհրաժեշտութիւն դարձրեց նրա համար իր գործերը պատգամաւորական ժողովին յանձնելը, այնպէս էլ բոլոր կազմակերպութիւնները, որոնք առաջվում են պետութեան ամբողջ տերրիտորիայի վրա, կամ մինչև իսկ դուրս են գալիս նրա սահմաններից, այսինքն՝ ամենից առաջ, քաղաքական կուսակցութիւնները, ստիպված եղան իրանց գործերը վարելու համար նոյն միջոցին դիմել. մեր դարը ոչ միայն պարլամենտարիզմի այլ և կօնգրեսների դար է։ Շվէյցարիայում օրէնքները չեն արգելում սօցիալ-դեմօկրատական կուսակցութեանը Բիտտինգաուզէնի ընտելտով իր գործերը վարելու։ Սակայն, շվէյցարական սօցիալ-դեմօկրատիան հետևում է միւս կուսակցութիւնների օրինակին։ Ի՞նչու համար Բիտտինգաուզէնի կողմնակիցները չեն առաջարկում մեր շվէյցարական ընկերներին թողնել իրանց կուսակցական համաժողովները և կարգադրել իրանց կուսակցական գործերը, սակցիաներում քննութեան ենթարկելով ու քուէարկելով։ Թէ ինչու են նրանք կուսակցական համաժողովները մի ինչ որ անհրաժեշտ բան համարում, այդ ինքնըստինքեան հասկանալի է։

Ամեն տեղ սօցիալ-դեմօկրատական կուսակցական կեանքում ամենակարևոր որոշումները մինչև հիմա կայանում են համագումարներում, պատգամաւորական ժողովներում. համագումարները անհրաժեշտ են համակում նրա համար, որ կարելի լինի յաղթել բոլոր տարաձայնութիւնները և հաստացնել թիւրիմացութիւնները։ Պատգամաւորական ժողովները անհրաժեշտ են նրա համար, որպէսզի կամ ֆրակցիոներական խը-

*) Էրֆուրտի ծրագիրը. եր. 220—221։

դումները վաւերացնեն և կամ բաժանված մասերը միացնեն։ Նրանք նաև անհրաժեշտ են և նրա համար, որպէսզի քննեն ու որոշեն բոլոր կարևորագոյն սկզբունքային և տակտիքական խնդիրները։ Տեղական կազմակերպութիւններում կատարված քուէարկութեան նպատակն է, ամենից շատը, հաստատել համապատասխանների ընդունված որոշումները և մարդկանց ու տեղերի ընտրութիւններ կատարել։ Ներկայացուցչական սիստեմը միակ միջոցն է հանդիսանում, որի միջոցով ամբողջ կուսակցութիւնը կարող է հաւաքվել, բացատրվել և որոշումներ ընդունել։ Միայն համապատասխան է հնարաւորութիւն տալիս հաւաքական կամք արտայայտել, միայն համապատասխաններն են կուսակցութեան մէջ ամբողջութիւն պահպանում։ Մինչ սոցիալ-դեմոկրատիան ներկայացուցչական սիստեմը անհրաժեշտ կը համարի իր սեփական դործերը ներդաշնակութեան մէջ պահելու համար, նա շատ ծիծաղելի գրութեան մէջ կը դնի իրան, եթէ սկսի այդ միջոցը վնասակար և աւելորդ համարել պետական դործերը կարգաւորելու համար և պահանջի, որ նրան ոչնչացնեն։

Այդ տղայական, բայց ոչ անմեղ դուրգնուութիւնը մենք կարող ենք անարխիստներին թողնել. իրանց համապատասխաններում թող նըրանք բղաւեն, թէ ներկայացուցչական սիստեմը անբարոյականութիւն է։

X

Դատարան եւ մամուլ

Կարծում ենք, որ բաւականաչափ պարզեցինք Բիսմարկեան աւազարկած ժողովրդային ներկայացուցչութեան եղանակի անպէտքութիւնը։

Եւ յիրաւի, շատ զարմանալի կը լինէր, եթէ այդ եղանակը գործնական համարվէր, որովհետև դա միանգամայն պիտի հակասէր զարգացման ընդհանուր օրէնքին, որի համաձայն շարունակ աճում է դիֆերենցիացիան, այսինքն՝ աշխատանքի բաժանումը։

Ամեն բան ինքդ անելու պահանջը և այն վստահութիւնը, թէ ինքդ ամեն ինչ ուրիշներից աւելի լաւ ես հասկանում, ծագումն ունեն այն անցած գնացած ժամանակներից, երբ՝ ամբողջ տնտեսութիւնը և ամեն բան աւանդին տնտեսական կերպով կատարված ճեռնարկութեան օրով՝ մարդիկ իրանք էին արտադրում համարեա թէ ամեն ինչ, որ իրանց հարկաւոր էր լինում։ Մանր արհեստաւորն էլ դեռ ինքն է կատարում ամենաբազմատեսակ ֆունկցիաներ։ Նա ոչ միայն արդիւնագործական բանուոր է, այլ և ինքն է առնում հում նիւթը, ինքն է նրան տուն տանում։ Նա ինքն է իր արտադրած ապրանքները շուկայ հանում և ինքն է նրանց այնտեղ ծախում։ Նա ինքն է և իր տոմարները պահում, եթէ միայն նա տոմարներ պահելու

կարիք ունի, և այլն և այլն։ Բայց երբ մի որևէ արդիւնագործական ձեռնարկութիւն ընդարձակվում է, երբ նա խոշոր արդիւնագործութիւն է դառնում, այն ժամանակ այլ ևս ուղղակի անհնարին է դառնում, որ այդ արդիւնագործութեան տէրը ինքը կատարի այդ գործի համար պէտք եղած բոլոր կարևոր բաները։ Նա ստիպված է լինում ծառայողներ վարձել. հաշուապահ, գործարանական բանուորներ, կոմմի-վոյաժօրներ և այլն, և այլն։

Ի հարկէ, ծառայողների շահերը նրա շահերը չեն. ծառայողները առհասարակ այնպիսի ջանք չեն ցոյց տալիս, ինչպէս ինքը գործի տէրը. նրանք երբեմն նոյն իսկ կը խաբեն էլ նրան և կարող են նոյն իսկ նրան կործանել իրանց խաբեբայութեամբ ու անհոգութեամբ։ Բայց երբևիցէ այդ կարգի խորհրդածութիւնները մղել են մի որևէ արդիւնագործի՝ իր մանր արդիւնագործութիւնը խոշորի վերածելու, եթէ միայն նա դրա համար հնարաւորութիւն է ունեցել։ Շատ յաճախ ձեռնտու չէ լինում այն հանգամանքը, որ գործատէրը այլ ևս անկարող է ամեն գործ ինքը կատարել, և ստիպված է լինում մինչև օրս իր ձեռքով կատարած գործերից մի քանիսը ուրիշներին յանձնել. բայց այդ հանգամանքը սերտ կապված է մանր արդիւնագործութիւնից խոշորին անցնելու պրօցեսի հետ։ Սակայն խոշոր արդիւնագործութիւնից ստացվող ահագին օ-

գուտներն էլ սերտ կապված են վերոյիշեալ անյարմարութիւնների հետ։ Մթթէ պէտք է որ մենք դրա համար հրաժարվենք խոշոր արդիւնագործութիւնից։ Կամ մթթէ մենք անմիտ փորձեր պիտի անենք խոշոր արդիւնագործութեան այնպիսի մի ձև գտնելու համար, որ իւրաքանչիւր բանուոր առանձնապէս, նոյնպէս միայնակ, ինչպէս և մանր արդիւնագործութեան ներկայացուցիչը, ինքը կատարի այն բոլոր ֆունկցիաները, որոնք մտնում են այս վերջինի արդիւնագործական գործունէութեան շրջանի մէջ։ Ի հարկէ, ոչ։ Մենք միշտ հաւատարիմ կը մնանք աշխատանքի բաժանումի սկզբունքին և կը գտնենք միայն, որ հնարաւոր եղածին չափ սահմանափակենք այն բոլոր անյարմարութիւնները, որ կապված են այդ սկզբունքի հետ։ Արդիւնագործութեան տէրը աշխատում է իրան ապահովել իր ծառայողների ու բանուորների խաբեբայութիւնից և անձրաւապահութիւնից նրանով, որ նա շատ զգուշութեամբ է նրանց ընտրում, հնարաւոր եղածին չափ խիստ հսկողութիւն է նշանակում նրանց վրա և միշտ սպառնում է նրանց գործից արձակելու իր ունեցած իրաւունքով։ Այս պայմաններից զատ ուրիշ միջոցներ էլ կան աշխատանքի բաժանումի անյարմարութիւնները հեռացնելու համար, և այս դէպքում, ամենից առաջ, անհրաժեշտ է դառնում այնպէս անել, որ ամեն մի բանուորի շահերը կապված լինեն ամբողջ ձեռնարկութեան շա-

հերի հետ։ Արդէն հիմա էլ, երբ կապիտալիստական եղանակով է կատարվում արտադրութիւնը, գործատէրերը, այդ նպատակին հասնելու համար, աշխատում են բանւորներին էլ ժամանակից դարձնել ձեռնարկութիւնից ըստացված եկամուտների մէջ, բայց այդ նպատակին լիովին կարելի կը լինի հասնել միմիայն այն ժամանակ, երբ խոշոր արդիւնագործական ձեռնարկութեան մասին այստեղ ասվածները կարող են վերաբերվել և հասարակական ձեռնարկութիւններից այն ամենամեծ ձեռնարկութեանը, որ պետութիւն է կոչվում։ Ուղղակի անհրաժեշտ է երևակայել մի մեծ պետութիւն, որը առանձին-առանձին վարչութիւնների կամ ժողովների չը յանձնի այն բոլոր միմեանցից տարբեր ֆունկցիաները, որ առաջ կատարվում էին ընդհանուր ժողովրդային ժողովների միջոցով։ Այդ բանը անհրաժեշտ է դառնում ոչ միայն արտաքին անյարմարութիւնների պատճառով, ինչպէս օրինակ պետութեան տարածութեան ընդարձակվելը, բնակչութեան բազմանալը, այլ և ամենից առաջ այն պատճառով, որ ֆունկցիաները չափազանց շատացել են իրանց քանակով, որպէսզի ամբողջ ժողովուրդը կարողանայ նրանց բաւարար կերպով կատարել իր միւս աշխատանքների հետ միասին։

Չը պէտք է մոռանալ, որ այդ հանգամանքը արդէն իր նշանակութիւնը ունէր և բարբարոսական շրջանում, երբ օրէնսդրութեան համար շատ աւելի անդրադարձ խնդիրներ կային։ Մինչև իսկ այն ժամանակ էլ, երբ, ըստ երևոյթին, ժողովրդային օրէնսդրութիւնն էր թագաւորում, ժողովրդի մի մասն էր միայն օրէնքներ մշակում ամբողջ ժողովրդի համար. գերմանացիներից միմիայն տղամարդիկ էին օրէնսդիրները։ Հռոմում և Աթէնքում քաղաքացիական համայնքը օրէնքներ էր հրատարակում ոչ միայն կանանց, այլ և ստրուկների, օտարերկրացի գաղթականների, «դաշնակիցների» և ստորադրեալ ազգութիւնների համար։ Միջին դարերում արտադրութեան եղանակների զարգացումը այն հետևանքը ունեցաւ, որ օրէնսդրական ֆունկցիաները (որչափ որ այն ժամանակ կարող էր դրանց մասին խօսք լինել) անցան ազնւականների և նամանաւանդ հոգևորականութեան ձեռքը, որոնք այդ կատարում էին ազնւականութեան ու պալատական ժողովներում, սինօդներում և այլ հոգևորական ժողովներում։

Բայց մենք տեսանք, թէ ինչպէս հասարակական կեանքի զարգացումը հարկադրեց, որ օրէնսդրի ֆունկցիաները բաժանվին գործադիր ֆունկցիաներից։ Սկզբներում ժողովրդային ժողովը այդ երկու ֆունկցիաներն էլ միացնում էր իր մէջ։ Հիմա, գուցէ, անմիջական ժողովրդային օրէնսդրութեան ամենակատարեալ կողմնակիցներն էլ փորձ չեն անի

ժողովրդի, այսինքն ամբողջ ժողովրդի ձեռքը յանձնել դատարանական ֆունկցիաները։ Անհրաժեշտ է համարվել այդ ֆունկցիաները յատուկ պաշտօնեաների ձեռքը յանձնել։ Անհնարին է դատաստանական մասը այնպիսի դեմօկրատիկական ձևով կազմակերպել, որ ամեն մի իրաւաբանական խնդիր քննելու և լուծելու համար 10,000 սեկցիաներ գումարվեն, բայց կարելի է այնպէս անել, որ ժողովուրդը դատաւորների վերաբերեալ նոյն իրաւունքները ունենայ, ինչպիսի իրաւունքներ կապիտալիստը ունի իր ծառայողների վերաբերեալ. այդ՝ նշանակելու և կօնտրօլի իրաւունքն է։ Դատաստանական գործերի մէջ ժողովրդի մասնակցութիւնը կատարվում է, իր տեսակի մէջ, ներկայացուցչական սիստէմի միջոցով, երդուեալ դատաւորների սիստէմի միջոցով։ Բայց այս վերջիններն էլ դատաստանական ֆունկցիաներից միայն մէկն են կատարում։ Նրանք պնդում կամ հերքում են մեղաւոր լինելու հարցը։ Իսկ դատաստանական պրօցեսը վարելու, ինչպէս և պատժի չափը որոշելու խնդիրները յատուկ դատաւորների գործն են։

Բայց ոչ միայն օրէնսդրի ու դատաւորի ֆունկցիաներն են անցել յատուկ մարմինների ձեռքը, այլ և նոյնիսկ այնպիսի մի ֆունկցիա, որի մասին կարելի էր ասել, թէ նա ընդհանրապէս չէր կարող յատուկ մարդկանց ձեռքը անցնել։ Մեր խօսքը հասարակական կարծիքը արտայայտելու, հրատարակելու, հասարակական գործերի վերաբերեալ մտքերի փոխանակութիւն կատարելու գործի մասին է։

Շատ լաւ է ասում Լօտար Բիւխերը. «երկու անհատների միջև անմիջական կերպով կատարվող մտքերի փոխանակութիւնը այժմ կատարվում է դեղեգատների միջոցով, լրագիրների միջոցով։ Այս փոխոխութիւնը կատարվում է ներկայացուցչական սիստեմի զարգացման հետ զուգընթացաբար և ուղղակի կապ ունի նրա հետ։ Այդ կապը կարելի է շօշափելի կերպով ապացուցանել, որովհետև նա մաթեմատիքական ճշտութիւն ունի։ Լրագիրները իրանց մէջ արտացոլում են շատ հազարաւոր քաղաքացիների հայեացքները և անթիւ ու անհամար զանազան տեսակի կօմբինացիաներ, որ կազմում են անհատները, մնծ ու փոքր հասարակական շրջանները, որոնց այս կամ այն խնդրի մասին ունեցած ծանօթութիւնները, դիտողութիւնները ու մտքերը միմեանց հետ շփվելով, միմիանց վրա արդիւնաւէտ կերպով ազդելով, մի շարք հրապարակախօսական հակադրութիւններ ու տարբեր մեկնաբանութիւններ են ստացվում։ Երկրի և համայնքի հասարակական գործերով զբաղվում են արդէն ներկայացուցիչները. զբաղմունքները քաղաքական կամ պատասխանատու պարտականութիւն լինելուց դարձել

են մի տեսակ մասնագիտություն, պրօֆեսիա և այլն»*):

Ներկայացուցչական սիստեմի հետ արված համեմատությունը շատ ճիշտ է, բայց մամուլի և պարլամենտի միջև եղած տարբերությունը նրա մէջ է կայանում, որ բաժանորդը իր լրագրի վրա շատ աւելի քիչ է ազդում, քան ընտրողը պարլամենտի վրա: Վերջինը դեռ էլի ազատ կերպով է ընտրում թեկնածուներից մէկին կամ միւսին, իսկ ժուրնալիստները, ընդհակառակը, իրանք են իրանց ընտրում իբրև հասարակութեան ներկայացուցիչներ, կամ թէ չէ մի որ և է կապիտալիստ է նրանց այդ դիրքի մէջ հաստատում:

Ի հարկէ, ամեն մարդ ազատ է իր ուզած թերթը ընտրել կարդալու համար, բայց քանը նրանումն է, որ ընտրութիւնը շատ էլ մեծ չէ: Այս կամ այն լրագիրը անհրաժեշտութիւն է դառնում մարդու համար ոչ թէ նրա արծարծած հայեացքների համար, այլ շատ աւելի նրա հաղորդած տեղեկութիւնների պատճառով: Քանի որ, վերջ ի վերջոյ, համաշխարհային շուկան է ղեկավարում ամբողջ հասարակական կեանքը, ուստի ամեն ոք, ով հետաքրքրվում է քաղաքական կամ տնտեսական կեանքով, պարտաւոր է հետևել թէ ինչ է կատարվում ամբողջ աշխարհում, լրագրները այժմ այնպիսի ապպարատներ են, որոնք ամբողջ երկրագնդից տեղե-

*) Պարլամենտարիզմ, եր. 231.

կութիւններ են հաւաքում և հաղորդում հասարակութեանը: Այդպիսի մի ապպարատ սարքելն ու պահպանելը շատ թանգ է նստում, և քանի միջազգային յարաբերութիւնները զարգանում են, այնչափ էլ լրագիր պահելն է թանգանում: Այդ պատճառով մեծ օրաթերն էլ անխուսափելիօրէն կապիտալիստական ձեռնարկութիւն են իրանցից ներկայացնում: Բայց և միացեալ մամուլն էլ հետզհետէ աւելի ու աւելի կապիտալիստական շահագործութեանն է ենթարկվում: Այդ պատճառով էլ մամուլը, փոխանակ բոլոր հասարակական շահերի ներկայացուցիչը լինելու, միմիայն կապիտալի շահերի ներկայացուցիչն է դառնում:

Թէ որ աստիճան ընթերցողները աննշան ազդեցութիւն ունեն իրանց կարդացած թերթերի վրա, այդ շատ աչքի է ընկնում Վիեննայում, ուր լրագիր առնող հասարակութեան մեծամասնութիւնը անտիսեմիտներ են: Զը նայելով դրան, երկու անտիսեմիտական օրաթերթերը հազիւ հազ են իրանց գոյութիւնը քարշ տալիս: Վիեննայի ֆիլիստերը սաստիկ հայհոյում է «հրէական թերթերը», բայց և այնպէս ամեն անգամ առնում և կարդում է նրանց:

Ոչ մի պատասխանատուութիւն չկրելով ընթերցողների առաջ, մամուլը շատ աւելի լկտիացաւ, քան երբ և իցէ եղել էր պարլամենտարիզմը, մինչև իսկ նրա ամենավատ ձե-

ւերի ժամանակ։ Մամուլը շատ աւելի անսանձ կերպով է թագաւորում, քան որ և է մի պալատականներ, նա շատ աւելի անկախ է քննադատութիւնից, քան երբ և է այդ տեսակէտով անկախ են եղել եկեղեցին կամ թագաւորը։ Ոմանք ինչ նրա քննադատութեանն է ենթարկվում, բայց վայ նրան, ով մամուլին է քննադատում, այդպիսին բանադրանքի է ենթարկվում, կամ, ինչպէս հիմա են ասում, այդպիսի մարդուն բոյկոտի են ենթարկում։ Մամուլի դէմ ուղղված քննադատութիւնից ոչինչ չէ թաքցնում հասարակութեան լայն շրջանները, այնպէս որ մասսաների համար քննադատութիւնը գոյութիւն չունեցող մի բան է դառնում, եթէ մամուլը այդ մասին ոչինչ չէ յայտնում, թէկուզ այդ քննադատութիւնը շատ էլ կարևոր լինի։ Կատարեալ լռութիւն պահպանելու դաւադրութիւնը աւելի հաստատ կերպով է ոչնչացնում ամեն մի անհաճոյ թէօրիա, քան այդ կարելի էր լինում անել բանտերի, ինկվիզիցիայի միջոցով։

Ցիրաւի, եթէ համեմատենք մամուլն ու եկեղեցին, կարելի է նրանց մէջ մի որոշ նմանութիւն գտնել, բայց այդ նմանութիւնը ամենևին մամուլի օգտին չէ 1)

1) Հօտար Բիւխերն էլ արդէն ասում էր, որ եթէ հնում մարդիկ ծանօթ լինէին հասարակական կարծիքի հետ, նրանք նրան անպատճառ աստուածութիւն կը դարձնէին, ինչպէս Նեմեզիդային. մամուլը իսկական աստուածութիւն է ներկայանում և նրա համար, որ դէպի նա ունեցած հաւատը ոմանց համար փոխարինում է մտածելու անհրաժեշտութիւնը։ Եթէ մեր սիմվոլիզմն ու արուեստը այսպէս ընկած դրութեան մէջ չը լինէին, հիմա վաղուց այդ աստուածութեան համար տաճար կառուցված կը լինէր։ Այժմ նա ստիպված է բաւականանալ պաշտամունքի այն տուրքով, որ իւրաքանչիւրը արտայայտում է իր հասկացած ձևով։ Ինչպէս իսկական իդէօլօգ, շատ բնական է, որ Բիւխերը մամուլի ամենակարող լինելը բացատրում է ոչ թէ նրա հասարակական ֆունկցիաներով, այլ նրանով, որ մարդիկ նեղքին պահանջ են զգում ինքնայօժար կերպով հեղինակութեան ենթարկվել։ Հեղինակութեան ենթարկվելը նեղքին պահանջով բացատրելը փոքր ինչ յիշեցնում է այն բժշկական ուսանողին, որը օպէի քննող ազդեցութիւնը բացատրում էր նրան յատուկ քնաբեր զօրութիւնով։

Ծ. Հ.

Միջնադարեան ամենաչար տէրտէրներն էլ չէին կարող արդի լրագրական մամուլից աւելի անամօթաբար խաբել, շահագործել, տգիտութեան մէջ պահել և անբարոյականացնել ամբողջ հասատացեալ ժողովուրդին 2)։

Ընթերցողներն ու բուրժուազական թերթեր գնողները ոչ-համասեռ մասսա են ներկայաց-

2) Նոր եկեղեցին էլ, կարծես, արդէն իր նոր կրօնը ունի։ Նիցշէի գեր-մարդը, որը կանգնած է ոչխարային գիտակցութիւնից աւելի բարձր և բարու ու չարի միւս կողմում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ ժուրնալիստը, որը թքում է հասարակական կարծիքի վրա, թէև դրա ստեղծողը հէնց ինքն է, և որը, շնորհիւ այն հաւատին, որ մարդիկ ունեն դէպի հասարակական կարծիքը, դէպի բարին ու չարը, դեկավարում է ահագին հօտը և շահագործում է նրան։

Ծ. Հ.

նում իրանցից: Բոլորովին այլ կերպ է դրված բանւորների մամուլի գործը: Նա յաճախ մեծ կազմակերպութիւններից կախումն ունի:

Վարձու բանւորները, հասարակական այն յատուկ պայմանների ճնշման տակ, որ նրանք ապրում են, ստիպված են լինում համախմբվել մեծ մասսաներով, և այն էլ ոչ թէ միայն ժամանակաւոր, անցողակի նպատակների հասնելու համար: Նրանք միակ դասակարգն են իրանցից ներկայացնում, որը արդի պետութեան օրով կարողացել է հաստատուն ազգային և մինչեւիսկ միջազգային մասսայական կազմակերպութիւններ ստեղծել: Եւ իր կազմակերպութիւնների շնորհով, բանւոր դասակարգը կարողանում է իր սեփական մամուլը ստեղծել: Կազմակերպութիւնն էլ նշանակում ու ընտրում է նրա համար թէ ընթերցողներ և թէ գնողներ, և այդպիսով աւելորդ են դառնում այն անպէտ ծախսերի մեծ մասը, որ բուրժուազական թերթը անում է իր համար ընթերցողների շրջան ձեռք բերելու նպատակով: Բանւորական թերթերը միմիայն համեմատական չափով են մեծ կապիտալներ պահանջում նրանց հիմնելու համար. բարեյաջող պայմաններում, երբ բանւորական կազմակերպութիւնները մասնաւորապէս տարածված են, նրանց աջողվում է ամենօրեայ թերթ հիմնել առանց որևէ միջոցների և նրան ծաղկեալ վիճակի հասցնել: Այսպէս կարելի է ընկճել կապիտալի մենաշնորհի մամուլը

վրայից:

Բայց հէնց այն հանգամանքը, որ թոյլ է տալիս բանւորական թերթին երևան գալ և իր գոյութիւնը պահպանել, առանց նշանաւոր կապիտալի, նրան կատարելապէս իր ընթերցողներից կախումն ունեցողի դիրքի մէջ է դնում: Որովհետև նա իր ոյժը ստանում է ոչ թէ իր կապիտալից, այլ միմիայն նրա հետևում կանգնած բանւորական կազմակերպութիւններից, ուստի իրապէս նա հէնց նրանց ձեռքումն է գտնվում, մինչև իսկ և այն դէպքում, երբ իրաւաբանօրէն թերթը մասնաւոր ձեռնարկութիւն է ներկայացնում իրանից, այլ ոչ թէ մի որևէ պրօֆեսիօնալ կամ քաղաքական կազմակերպութեան սեփականութիւն: Այդպիսի բանւորական թերթի մէջ այն հարցը, թէ ո՞վ և ինչ մտքով պիտի խմբագրի, չէ վերաբերում նրա տնօրէնի կամ հրատարակչի մասնաւոր գործերին. դա վերջին հաշուով որոշվում է կազմակերպված բանւորների կողմից: Այստեղ ժուրնալիստը ոչ թէ հասարակական կարծիքի ստեղծողն է այն շրջանների, որոնց անունից նա խօսում է, այլ իրապէս նա միմիայն նրանց մտքերի արտայայտիչն է: Այսպիսի վերաբերմունքը միշտ յատ էր մղում բուրժուազական գրականագէտներին, հէնց որ նրանք հրապուրվում էին սօցիալ-դեմօկրատական մամուլով և կարծում էին, թէ այստեղ էլ «յիմար բանւորների» շրջանում այնպիսի ընթերցողներ կը գտնեն, որոնց աւելի հեշտ կը

լինի քթից քաշ ուալ և որոնց հաշւին շատ աւելի դիւրութեամբ ժողովրդականութիւն ստանալ, քան բուրժուազական մամուլի մէջ։ Եւ հէնց որ նրանք հաժոզվում էին, որ իրանք սխալվել են, նրանք սովորաբար սկսում էին ազազակել, թէ անհատական ազատութեան վրա ճնշում են բանեցնում, թէ շրջանը փըչացած է, և այդպիսինները առհասարակ վերջացնում էին նրանով, որ ծախվում էին մի որևէ կապիտալիստի, որպէսզի ազատված լինեն կուսակցական բռնակալութիւնից և ապականութիւնից։

Բայց հէնց այն, ինչ որ այդ կարգի գրականապէտներին,—որոնք չափազանց հասմոլ ու մեծամիտ են, որպէսզի կարողանան խոկապէս գործին ծառայել,—ստորացուցիչ է թըւում, բանւորական մամուլի իսկական արժանիքն է կազմում։ Բարոյագիտութեան տեսակէտից բանւորական մամուլը անմատչելի բարձրութեան վրա է կանգնած, բուրժուազական մամուլի համեմատութեամբ. մասնաւորական տեսակէտից էլ, եթէ ոչ բացարձակապէս, գոնէ միշտ համեմատական չափով, բանւորական մամուլը գերազանցում է բուրժուազականին, նամանաւանդ այն միջոցների վերաբերեալ, որոնցով նա օգտվում է։

Բանւորական մամուլը երբէք մատչելի չէ եղել կաշառվելու համար, նա երբէք գումարներ չէ ստացել մի որևէ գործից, ինչպէս օրինակ Պանամայի գործն էր, որպէսզի լուծթիւն պահպանի մի քանի ոչ-ցանկալի դէպքերի մասին։ Մամուլից և ոչ մէկին տիրող դասակարգերը այնպիսի հաճութեամբ չէին ցանկանայ կաշառել, ինչպիսին է բանւորական մամուլը, և ոչ մէկը այնպիսի ազքատ մարդկանց ձեռքով չէ հրատարակվում, ինչպէս որ դա է. բայց և այնպէս նա այնչափ մաքուր է մնացել, որ մինչև իսկ բանւորական շարժումի ամենաստոր զրպարտիչներն էլ չը համարձակվեցին նրան մեղադրել կաշառվելու մէջ։

XI

Պարլամենտարիզմը և կուսակցութիւնները Անգլիայում

Շատ տարածված է այն կարծիքը, թէ ներկայացուցչական սիստեմը անխուսափելիօրէն բուրժուազիայի տիրապետութիւնն է նշանակում։

«Եթէ կայ մի որևէ անհերքելի ճշմարտութիւն,—գրում էր Բիտտինգուէյնը 1869 թ.,—այդ՝ 20 տարի սրանից առաջ իմ յայտնած այն առաջադրութիւնն է, որ իրերի ամեն մի կարգ, որը որոշում է պետութեան մէջ ապրող քաղաքացիների փոխադարձ յարաբերութիւնները ու կանոնաւորում է նրանց կալուածական ու արտադրական յարաբերութիւնները, անպատճառ հաժապատասխանում է կառավարչական մի այնպիսի յատուկ ձևի, որը նրանց համար միաժամանակ թէ գործա-

դեր և թէ պաշտպանողական (охранительный) օրգան է։

«Ազնւականութիւնն ու բուրժուազիան, յամենայն դէպս, մինչև որոշ աստիճան, հասկացել են այս ճշմարտութիւնը, բայց այն չափով միայն, ինչ չափով որ դա վերաբերւում է նրանց սեփական շահերին։ Այդ երկու դասերն էլ գիտակցում էին, որ իրանցից առաջինի դասակարգային տիրապետութիւնը սերտ կապված է բռնապետական միապետութեան կառավարչական ձևի հետ, այնինչ երկրորդի տիրապետութիւնը, ընդհակառակը, կարող է լինել ու պահպանվել միմիայն, այսպէս կոչված, ներկայացուցչական սիստեմով։ Բայց այդ գիտակցութիւնն էլ զուրկ չէր մի քանի կօպիտ սխալներից. այսպէս, օրինակ, բուրժուազիան հասկացողութիւն չունէր այն մասին, թէ իր համար այնչափ սոսկալի թւացող ընդհանուր և ուղղակի ընտրողական իրաւունքի ընդունվելը չէր կարող ոչ մի էական փոփոխութիւն մտցնել ներկայացուցչական սիստեմի մէջ» [1]։

Ցաւօք սրտի, մենք սահմանված ենք առնակարական ձևով հերքել այստեղ առաջադրված ամենաանհերքելին բոլոր ճշմարտութիւններից։ Պատմութեան վրա հէնց առաջին հայեացքը գցելով, իսկոյն խորտակվում է ներկայացուցչական սիստեմի ու բուրժուազիայի տիրապետութեան միջև եղած անքակտելի կապի վերաբերեալ առակը։ Ներկայացուցչական սիստեմը քաղաքական մի ձև է, իսկ նրա բովանդակութիւնը միշտ եղել է և կարող է լինել շատ ու շատ բազմատեսակ։

Եւրօպական պետութիւններից շատերում ներկայացուցչական սիստեմը չէ, որ բուրժուազիայի տիրապետութիւնը, աբսօլիտիզմը մացրեց։ Այն պետութիւնների մէջ, ուր մենք նախորդ դարում սահմանափակ միապետութիւն ենք տեսնում, ներկայացուցչական սիստեմը մի միջոց էր ազնւականութեան դասակարգային տիրապետութեան համար։

Այդ բանը կարելի է ասել ոչ միայն Լեհաստանի ու Շվեցիայի մասին, այլև Անգլիայի մասին, ինչպէս որ մենք արդէն կատողացանք համոզվել։

Անգլիական պարլամենտը, ինչպէս յայտնի է, երկու պալատներից է կազմված. վերին՝ լօրդների պալատը և ստորին՝ համայնքների պալատը։ Առաջինը, բնական է, հէնց սկզբից խոշոր հողատէրերի դասակարգի ներկայացուցիչն էր և այդպիսին էլ նա մնացել է մինչև այսօր։ Նա կազմվում էր և կազմվում է գլխաւորաբար խոշոր ազնւական ցեղերի ներկայացուցիչներից։

Բայց թէև պատճառներ կային, որ անգլիական ստորին պալատը 18-դ դարում մի միջոց դար-

[1]) Բլոտինգաուզէն. «Անգլիական ժողովրդային օբլնոզրութեան անհրաժեշտութեան մասին»։

Ծ. Հ.

ձաւ հողային արիստոկրատիայի տիրապետութեան համար։ Մի կողմից այն հասարակական նշանակութիւնը, որ անգլիական խոշոր կալուածատէրերը կարողացան իրանց վերաբերնել իրաւունքները պահպանել և աւելի զօրեղացնել, հակառակ միւս դասակարգերի, իսկ միւս կողմից այն ընտրողական իրաւունքը՝ որ համապատասխան էր աղնւականութեան շահերին։

Ընտրողական շրջանների բաժանումը Անգլիայում կատարվում էր, և հէնց հիմա էլ կատարվում է այն ձևով, ինչպէս որ հին ֆէօդալական ժամանակներում էր. երկիրը բաժանվում է կոմսութիւնների, գիւղական և քաղաքային ընտրողական շրջանների։

Գիւղական շրջաններում հէնց սկզբից հողատիրութիւնն էր թագաւորում. ընտրողական իրաւունք ունէին միմիայն այն հողատէրերը, որոնք 40 շիլինգից*) աւելի հողային եկամուտ ունէին։ Որչափ 18-դ դարի ընթացքում մանր հողագործինները աւելի էին միմեանց միանալով խոշոր հողագործիններ կազմում, այնքան էլ գիւղական շրջանները աւելի ու աւելի էին կենտրոնանում խոշոր կալուածատէրերի ձեռքում։ Բայց այս վերջիններիի համար խնդիրը շատ աւելի նպաստաւոր պայմանների մէջ էր դնվում և քաղաքներից շատերում։ Մենք արդէն մատնանշեցինք այն հանգամանքը, որ արտադրութեան կապիտալիստական եղանակը միշտ ձգտում է ժողովրդին կենտրոնացնել մի քանի մեծ քաղաքների մէջ, իսկ հաղորդակցութեան ճանապարհներից հեռու գտնված փոքր քաղաքների աճումը կանգնեցնում է նա և մինչևիսկ կատարեալ անկումի է ենթարկում դրանց։ Այդ բանը շատ խիստ երևան եկաւ Անգլիայում։ Արդարութեամբ աճող քաղաքների մեծ մասը, բացի Լօնդօն Միտիից*), նոր ժամանակներում է հիմնվել, և նրանք դասաւորված են մի քանի խոշոր կալուածատէրերի գիւղական շրջաններում։ Այդ քաղաքները բոլորովին գոյութիւն չունէին ընտրողական իրաւունքի համար։

Հին քաղաքներում ընտրողական յարաբերութիւնները շատ բազմաեսակ էին. սկզբում ամէն մի քաղաք ինքը որոշեց իր ընտրողական իրաւունքները։ Որչափ այդ քաղաքները աւելի ու աւելի անկման վիճակի էին հասնում, որչափ կեանքը նրանցից աւելի ու աւելի հեռու էր գնում, այնչափ էլ նրանց ընտրողական սիստեմը աւելի քաղցած ու արուեստական ձևեր էր ընդունում, և այնչափ էլ աւելի ընտրողական իրաւունքով օգտվողների թիւը սահմանափակվում և արտօնեալների մի փոքրիկ խումբ էր դառնում։

Մինչև 1832 թ., երբ հրատարակվեցաւ

*) Մէկ շիլինգը մօտաւորապէս 50 կօպ. է։ Ծ. Թ.

*) City անգլիերէն քաղաք է նշանակում, բայց այդ անունով կոչվում է Լօնդօնի կենտրոնական մասը, որը հէնց ամենահին քաղաքն է եղել։ Ծ. Թ.

ըէֆօրմի Բիլը այն քաղաքային շրջաններին վերաբերեալ, որոնք 200-ից պակաս ընտրողներ ունէին միայն. այդ կարգի շրջանների թիւը 111-ի էր հասնում, որոնցից 46-ը 50-ից էլ պակաս ընտրողներ ունէր: Իսկ Old Sarum անունով շրջանը մինչև իսկ միմիայն 12 ընտրողներ ունէր: Այդ դեռ բաւական չէ, քուէարկութիւնն էլ կատարվում էր հրապարակով, ձեռքերը բարձրացնելով: Ոչինչ զարմանալու չէ ուրեմն, որ այն ժամանակ միշտ ճնշումներ էին տեղի ունենում ընտրողների վրա և, նամանաւանդ, շատ տարածված էր կաշառքը: Եւ ընտրողների այդպիսի փոքր քանակութեան դէպքում շատ հեշտ էր կաշառելը, և այնչափ աւելի հեշտ, որչափով անկման վիճակի մէջ գտնված փոքր գաւառական քաղաքները աւելի զուրկ էին վաստակ ունենալու հնարաւորութիւնից: Շատերի համար ընտրողական ձայնի ծախելը ամենաարդիւնաբեր գործն էր համարվում [2]:

[2] 18-դ դարի վերջում, մանր ընտրողական շրջանները փոդով գնելու մասին արված հաշիւը ցոյց տուեց, որ դրա համար ծախսվել է 1,260,000 ֆունտ ստերլինգ (12,500,000 րուբլ. աւելի): Որպէսզի յաճախ սուիլված չը լինեն այդպիսի թանգ զուարճութեան դիմելու, պարլամենտը, դեռ Գէորգ առաջինի օրով, երկարեցրեց իր լիազօրութեան շրջանը 3-ից մինչև 7 տարի: Մինչև օրս էլ դեռ այդ ժամանակաշրջանն է պահպանվում:

Ծ. Հ.

Կաշառքը պաշտօնապէս Պիտտը ընդունեց իբրև մի կանոնաւոր և օրինական եկամուտ, և 1782 թ-ին նա մի նախագիծ մտցրեց պարլամենտ, որով 36 ամենափչացած ընտրողական շրջանները պէտք է կորցնէին իրանց ընտրողական իրաւունքը: Պիտտը առաջարկեց նրանց, իբրև վարձատրութիւն իրանց ձեռք բերած իրաւունքը կորցնելու համար, մի շատ չնչին կաշառք, ընդամենը 1,000,000 ֆունտ ստերլինգ (մօտ 10 միլիոն րուբլի:) [3]: Սեփականութիւնը սուրբ է!: Չը պէտք է, սակայն, մտածել, թէ ընտրութիւնների ժամանակ կաշառելը յատուկ է բացարձակապէս պարլամենտարիզմին: Կաշառքը մեծ դեր էր խաղում ժողովրդային ժողովների համար պաշտօնական անձինք ընտրելու ժամանակ էլ Հռօմում և Աթէնքում, կը նշանակէ, և անմիջական ժողովրդային օրէնսդրութեան օրով էլ: Կաշառքը ընտրութիւնների ժամանակ գոյութիւն ունէր և «ազնիւ» շէյցարացիների դիւղական համայնքներում էլ, ինչ որ ապացուցանում են դրա դէմ հրատարակված օրէնքները: Կաշառակերութիւնը նկատվում է այն բոլոր կանոններում, որոնք իրանց իշխանութեան ներքոյ և իրանց կողմից շահագործվող հողեր ունէին: Նամանաւանդ շատ արդիւնաւէտ էր այդ՝ իշխանու-

[3] Գնէյստ: «Անգլիական պարլամենտը 9-դից մինչև 19-դ դարի վերջը»: Բերլին, 1886, 2-րդ հրատ.:

Ծ. Հ.

թհան տակ եղած՝ հողերում «ֆօգտ»-ի պաշտօնը, և այդ պաշտօնը ձեռք դնելու համար արժէր ընտրողներին կաշառել ոչ միայն ճաշկերոյթներով, այլ և ուղղակի դրաժով էլ։ Մինչև որ ընտրովի պաշտօնը շահագործութեան մի միջոց կը լինի,—կամ, գոնէ, այդ բանին կը ձգտի,—կաշառքները ընտրութիւնների ժամանակ չեն անհետանայ։

Բայց արիստոկրատիան այդ ընտրողական սիստեմով էլ չէր բաւականանում։ Իր աջողութիւնը կատարելապէս ապահով դարձնելու համար, նա որոշեց, որ գիւղական համայնքի պատգամաւորը պէտք է 600 ֆունտ ստերլինգ (մօտ 6 հազար րուբլի) հողային րենտա ստանայ։ Քաղաքային պատգամաւորն էլ պէտք է կալուածատէր լինէր, որի ստացած րենտան գոնէ 300 ֆունտ ստերլինգ պիտի հասնէր։

Այսպիսի ընտրողական օրէնքներով արիստոկրատիան իր նուաճած տիրապետութիւնը ապահովեց։ Այդպիսով պարլամենտը կալուածատէրերի դասակարգային տիրապետութեան գործիքը դարձաւ։

Բայց հէնց իրանք կալուածատէրերը երկու կուսակցութիւնների բաժանվեցին։ Մի կողմում մենք տեսնում ենք արդի կալուածատէրերին, կապիտալիզմի կողմնակիցներին, որոնք իրանց օգուտները ստանում են կապիտալիստական սիստեմի զարգացումից, վաճառականութիւնը խնամակալելուց, կօլօնիական քաղաքականութիւնից, կապիտալիստական կապալային սիստեմից։ Իսկ միւս կողմում մենք տեսնում ենք պահպանողական կալուածատէրերին, որոնք ֆէօդալական սիստեմով շահագործելու կողմնակից են։ Առաջիններըը, «վիգի»-ները, իրանց կողմնակից ունէին բուրժուազիային, նրանք տնտեսական տեսակէտից գերազանցում էին միւս դասակարգերը և այն հայեացքի կողմնակից էին, թէ արդի պայմանների մէջ պարլամենտի տիրապետութիւնը ազնուականութեան շահերին համապատասխանող ամենալաւ ձևն է, նրա դասակարգային տիրապետութիւնը պահպանելու համար։ Իսկ վերջիններըը՝ «տօրի»-ները իրանց տնտեսական զարգացումով յետ մնացած լինելով, ընդհակառակը, ամենից լաւը համարում էին, որ հողային արիստոկրատիան ձգտէր պետութեան մէջ նշանակութիւն ձեռք բերել նոյն ճանապարհով, ինչպէս և ֆրանսիական ազնուականութիւնը՝ թագաւորական իշխանութիւնը շահագործելու ճանապարհով։ Եթէ «վգի»-ները պարլամենտական ամենակարողութեան կողմնակիցներ էին, «տօրի»-ներն էլ անսահման միապետութիւն էին պահանջում։ Զը նայելով դրան, տօրիների բնոյթը 18-դ դարի ընթացքում փոխվեց։ Պարլամենտի տիրապետութիւնը այնքան խորը արմատներ գցեց, որ ոչ մի քաղաքական անձ լրջութեամբ չէր կարող ժտածել այդ տիրապետութիւնը խախտել։ Միևնոյն ժամանակ

տօրինների էլ նոյն չափով կապիտալիստական շահերով շահագրգռվեցին, ինչպէս և վիգինները։ Հետզհետէ այդ երկու կուսակցութիւնների միջև եղած տարբերութիւնները նուազեցին և, վերջապէս, նրանք այլևս աւելի չէին այն տարբերութիւններից, ինչ որ ծագում էին այդ երկու կուսակցութիւններից իւրաքանչիւրի միջև։ Եւ եթէ, այնուամենայնիւ, տարաձայնութիւնները երկու կուսակցութիւնների միջև շարունակվում էին, դրա պատճառը լոկ այն հանգամանքն էր, որ պետական դեկը շատ քիչ էր ասպարէզ տալիս նրանց միաժամանակ գործունէութիւն ունենալու։

Այդ պատճառով էլ պայքարը պարլամենտում աւելի ու աւելի էր կորցնում իր սկզբունքային բնաւորութիւնը. նա հետզհետէ աւելի ինտրիգների կերպարանք էր ստանում, որոնց միջոցով մարդիկ ձգտում էին աստիճանների ու պատիւների հասնել, որպէսզի հնարաւորութիւն ստանան ոչ թէ պետութիւնը իրանց ուզածի պէս կառավարելու, այլ նրան շահագործելու։ Դրա հետ միաժամանակ ընտրողական իրաւունքի սիստեմն էլ հետզհետէ ընտրող մասսաներին կաշառելու աստիճանին էր հասնում. քաղաքական կուիւը չարչիական սպեկուլացիա դարձաւ։

Անգլիական պարլամենտարիզմը, կարծես թէ, անանկութեան էր մատնում։ Բայց իսկապէս պարզվեց, որ պարլամենտարիզմը մի

այնպիսի ձև է ներկայացնում իրանից, որի բովանդակութիւնը շատ բազմատեսակ կարող է լինել։ Ոչ թէ պարլամենտարիզմը անանկացաւ, այլ միմիայն կալուածատէրերի միահեծանութիւնը, որը պարլամենտարիզմի միջոցով էր իրագործութիւն ստացել։

Մենք արդէն նախորդ գլուխներից մէկում ասացինք, որ ներկայ դարի վերջերում կալուածատէրերի ու նրանց հետ կապված ֆինանսական արիստօկրատիայի հետ կողք-կողքի, նոր զօրաւոր դասակարգեր էլ առաջացան, որոնց շահերը միանգամայն հակառակ էին կալուածատէրերի շահերին։ Ամենագլխաւոր նշանակութիւնը ունէր արդիւնագործական կապիտալիստների դասակարգի և արդիւնագործական պրօլետարիատի դասակարգի ծագումը։ Վաճառականութեան և հողատիրութեան միջև բաւականին լաւ յարաբերութիւններ կային, իսկ արդիւնագործութիւնը հողատիրութեան հետ բոլորովին չը հաշվեց։ Որչափ աւելի զօրաւոր կերպով էր զարգանում արդիւնագործութիւնը, այնչափ աւելի էր զգալի դառնում արդիւնագործական բուրժուազիայի համար իր իրաւազուրկ լինելը։ Նա ապստամբեց՝ պետութիւնը կալուածատէրերի ձեռքով կառավարելու դէմ, և իր ոյժերը զօրեղացնելու համար դաշինքի մէջ մտաւ մի՛ւս՝ քաղաքականապէս իրաւազուրկ՝ դասակարգերի հետ. մանր բուրժուազիայի և պրօլետարիատի հետ, որը շատ արագութեամբ էր զարգանում,

բայց և որը դեռ չափազանց քիչ ինքնագիտակցութիւն ունէր, որպէսզի բուրժուազիան կարողանար վստանգ նախատեսել՝ նրան քաղաքական կուի մէջ դցելուց։ Այդ դաշինքի հետևանքը բուրժուազական - արմատական կուսակցութիւնը եղաւ, որը կալուածատիրական դասակարգի թշնամին հանդիսացաւ։

Ընտրողական իրաւունքը այն ժամանակվանից ի վեր քաղաքական պայքարի գլխաւոր առարկան դարձաւ։ Այդ ընտրողական իրաւունքի առանձնայատուկ կողմերը հնարաւորութիւն տուեցին յաղթական արիստօկրատիային պարլամենտը բացառապէս իր շահերի ներկայացուցչութիւնը դարձնել։ Եւ միմիայն ընտրողական իրաւունքի ձևափոխութիւնը կարող էր այդ ներկայացուցչական սիստեմը դարձնել բուրժուազիայի շահերի ներկայացուցչութիւն։ Ամեն բան ընտրողական իրաւունքի շուրջն էր դառնում։

Բուրժուազիան յաղթող հանդիսացաւ ընտրողական իրաւունքի ձևափոխութեան համար մղված կուի մէջ։ Պրօլետարիատը նրա համար կրակից շագանակներ հանեց. նա իր ուսերի վրա էր տանում կուի ամբողջ ծանրութիւնը, նա այդ բարեկործութեան օգտին եղած շարժումը անընկճելի դարձրեց,—մասամբ ճիշտ այնպէս և միևնոյն միջոցներով, ինչպէս որ վերջին ժամանակներում արեցին մեր քաջ ընկերները Բելգիայում,—բայց նա ընտրողական իրաւունքներ չը ստացաւ։

1832 թ. բարեկործութեան վերաբերեալ քիլը 88 մանր ընտրողական տեղեր վրկեց, կամ բոլորովին և կամ մասնակի կերպով միացրն, իրանց առանձնայատուկ ներկայացուցչութիւնից (մի քանի տեղեր դեռ ևս միայն մի պատգամաւոր ուղարկում էին երկուսի փոխարէն), և 42 հատ նոր քաղաքային ընտրողական շրջաններ ստեղծեց։ Գիւղական շրջաններում հիմա ընտրողական իրաւունք էին ձեռք բերում կալուածատէրերից բացի և ամենախոշոր կապալառուները, որոնք առնուազն 20 տարվան կապալի պայմանագիր ունէին և 50 ֆունտ ստերլինգից աւելի րենտա (կապալավարձ) էին վճարում։ Իսկ մանր հողատէրերը ընդհակառակը զրկվեցին ընտրողական իրաւունքներից։ Մինչ այդ ժամանակ այդ իրաւունքով օգտվում էին բոլոր այն հողատէրերը, որոնք 40 շիլինգից (2 ֆ. ստ.) պակաս հողային րենտա չէին ստանում իրանց կալուածներից, իսկ հիմա այդ իրաւունքով կարող էին օգտվել միայն նրանք (շատ չնչին բացառութեամբ), որոնց ստացած հողային րենտան գոնէ 10 ֆ. ստերլինգ էր կազմում։ Քաղաքներում ընտրողական իրաւունքներ ստանում էին նրանք, ով առանձին բնակարան ունէր, այսինքն՝ ով տուրքեր էր վճարում. բնակարանի, լուսամուտների և ազքատների համար, ինչպէս և առնուազն 10 ֆ. ստ. բնակարանի վարձ։

Այդ էֆօրմի շնորհով ընտրողների թիւը

400,000-ից երկու անգամ աւելացաւ։ Քուէարկելու ձևը միաց բացարձակ, ընտրվելու իրաւունք ունենալու ցենզը չէր փոխված*), պատգամաւորներին ոռճիկներ չէին նշանակված, ընտրութիւնների համար եղած ծախսերը պէտք է հոգային—մինչև այսօր էլ հոգացվում են—հենց իրանք թեկնածուները, որոնք մինչև իսկ ստիպված էին լինում կանխաւ գրաւական ներկայացնել հարկ եղած գումարը, երբեմն մօտ 1000 ֆ. ստերլինգ (մօտաւորապէս 10,000 րուբլի)։ Գիւղական շըրջանները և քաղաքային ընտրողական մանր շրջանների մի մասը, որոնք յամենայն դէպս բոլորն էլ ղրկված չէին ընտրողական իրաւունքից ոչ այդ ընտրողական օրէնքից առաջ և ոչ էլ յետոյ, խոշոր կալուածատէրերի սեփականութիւնն էին միայն։ Բայց քաղաքային ընտրողական շրջանների մի մասը հիմա արդիւնագործական շահերի ներկայացուցիչներ էր ուղարկում պարլամենտ։ Նոր ընտրողական իրաւունքը պարլամենտին էլ նոր բնաւորութիւն տուեց։ Կալուածատիրական բուրժուազիայի դասակարգային տիրապետութեան մի-ջոցից նա դարձաւ կուի ասպարէզ, ուր կալուածատիրութիւնն ու արդիւնագործական կապիտալը ժամանակատաղի կուիւ էին մղում։

Կալուածատէրերը դեռ ևս մեծ հասարակական դիրք էին գրաւում, ընտրողական իրաւունքը դեռ ևս նպաստաւոր էր նրանց համար։ Արդիւնագործական բուրժուազիան երկար ժամանակ չէր կարողանում իր ամենագլխաւոր պահանջը՝ առևտուրի ազատութիւն ստանալ։

Բայց նա չէր սահմանափակում իր կռիւը միմիայն պարլամենտական ասպարէզով։ Իրապէս ոչինչ այնչափ անհեթեթ չէ, քան այն, որ, կուռղ պրօլետարիատի աչքում պարլամենտարիզմը վարկաբեկ անելու նպատակով, հաւատացնում են, թէ իբր այն կուսակցութիւնը, որը իր ներկայացուցիչներն ունի պարլամենտում և մասնակցում է պարլամենտական պայքարի մէջ, այլևս բոլորովին հրաժարվում է քաղաքական կուի միւս բոլոր ձևերից։ Դրանից էլ աւելի սխալ բան չը կայ։

Ոչ մի տեղ պարլամենտական կուսակցութիւնները այնչափ յաճախ չեն դիմում պարլամենտական կեանքից դուրս ծագած մասանների օգնութեանը, որչափ այդ անում են պարլամենտարիզմի հայրենիքում. ոչ մի տեղ այն աստիճան կատարելագործուած չեն ժողովրդային մասսաների ընդարձակ շարժումների միջոցով պարլամենտի ու կառավարութեան վրա ճնշում գործելու եղանակները, ինչպէս Անգլիայում։ (Հիմա էլ մենք նորից տեսնում ենք, թէ ինչպէս ծայրայեղ պահպանողական մինիստրները Ուլստերում դրդում են ժողովրդին ապստամբելու, որպէսզի Հոմ. լուլը տապալեն)։

*) Դա փոխվեց միայն 1858 թուականին։

Նոյն բանն էր անում և հացահատիկների վրա եղած մաքսի հակառակորդների լիգան։ Նա էլ էր մասսաներին դիմում, իսկ երբ իր շահերին ձեռնտու էր լինում, նա ապստամբութեան և մինչև իսկ ընդհանուր գործադուլի էր հրաւիրում նրանց։

Մի ւս կողմից հողատէրերն էլ իրանց կողմից էին աշխատում իրանց կողմը գրաւել բանւորներին։ Գործարանատէրերը նրանց ասում էին, թէ էժան հաց կունենան, եթէ հացահատիկների վրա եղած մաքսը ոչնչացվի, իսկ հողատէրերը 10-ժամեայ աշխատանքի օր էին խոստանում նրանց։

Բայց թէ հողատէրերը և թէ գործարանատէրերը յամառութեամբ խուսափում էին այն բանից, ինչ որ կազմակերպված բանւորների ամենագլխաւոր պահանջն էր. ընդհանուր ընտրողական իրաւունքից։

Անգլիայի պետական մարդիկ շատ լաւ էին իմանում պարլամենտի նշանակութիւնը, որպէս ազի ի դուր տեղը թոյլ տային, այնտեղ մտնելու կապիտալիստական հասարակութեան թշնամիներին։ 1846 թ. կուրը, վերջապէս, վճռողական դարձաւ, հացի մաքսերը վերացվեցին։ Ազատ առևտուրի շրջանը սկսվեց, և, զանազան հանգամանքների զարմանալի զուգադիպութեամբ, դրա հետ միաժամանակ տնտեսական կեանքը այնպիսի մի ոյժով զարգացաւ, որպիսին աշխարհը դեռ ևս չէր տեսած։ Անգլիան համաշխարհային շուկայի միահեծան տէրը դարձաւ։

Երկրի խոշոր արդիւնագործութիւնը առասպելական արագութեամբ էր զարգանում, նրա եկամուտները հրաշալի էին։ Տնտեսական զարգացումը այնպիսի մեծ չափերի էր հասնում, որ համարեա թէ բոլոր դասակարգերն էլ օգտվում էին նրանից։ Ծախսերը օտար պետութիւնների գրպանից էին դուրս գալիս։ Հողատէրերը հաշտվեցին նոր կարգերի հետ։ Հողային ռենտան, ինչպէս որ նրանք վախենում էին, չիջաւ, այլ, ընդհակառակը, էլ աւելի բարձրացաւ։ Դրա հետ միաժամանակ հողատէրերն էլ սկսեցին արդիւնագործական ձեռնարկութիւնների մէջ մասնակցել, իբրև ակցիոներական ընկերութիւնների անդամներ, և այդպիսով նրանք էլ շահագրգռվեցին արդիւնագործութեան ծաղկելու մէջ։ Հիմա էլ նոյն բանը կրկնվեց, ինչ որ տեղի էր ունեցել անցեալ դարի երկրորդ կիսում։ Ինչպէս այն ժամանակ վիգների ու տօրիների մէջ, այնպէս էլ այժմ լիբերալների ու պահպանողականների տարաձայնութիւնները կորցրեցին իրանց սկզբունքային բնաւորութիւնը։ 1848 թուականից յետոյ եկած մօտակայ տասնամեակներում մենք մի շատ նշանակալից երեւոյթ ենք նկատում, մենք տեսնում ենք, թէ ինչպէս պահպանողական մինիստրութիւնները լիբերալների ծրագիրն են իրագործում և մինչև իսկ իրանց լիբերալիզմով պերազանցում են նրանց։ Եւ եթէ երկու կուսակցու-

թիւններն էլ դեռ ևս չէին ձուլվում միմեանց հետ, դրա պատճառը դարձեալ գլխաւորապէս այն հանգամանքն էր, որ պետական մսուրգները չափազանց փոքր էին, որպէսզի կարողանային իրանց մէջ տեղաւորել այն ամենին, ով ձգտում էր նրանց պարլամենտի միջոցով: Պարլամենտական քաղաքականութիւնը դարձեալ բոլորովին կորցրեց իր սկզբունքային բնաւորութիւնը, պարլամենտական պայքարը նորից մի կատարեալ կօմիդիա դարձաւ, որ խաղում էին փառք ու պատիւների ձգտող մարդիկ ու իրանց արուեստով քաղաքագէտները: 1867 թուականի ընտրողական րեֆօրմը սկզբում շատ քիչ փոխեց իրերի դրութիւնը: Տնտեսական կեանքի ապահովութիւնը ոչ միայն հողատէրերին հաշտեցրեց կապիտալիստական կարգերի հետ, այլ և նոյն իսկ բանուորներից մի մասին էլ: Այդ ապահովութիւնը հնարաւորութիւն տուեց բանուորների աժենաեռանդուն և աւելի ապահով խաւերին պրօֆեսիօնալ միութիւնների միջոցով բաւականին բարելաւել իրանց դրութիւնը:

Եւ որովհետև արդիւնագործութեան արդիւնքներն էլ այդ ժամանակ անհամեմատ մեծացել էին, ուստի կապիտալիստներն էլ հաշտվում էին բանուորների տարած յաղթութիւնների հետ: Մի տեսակ բանուորական արիստոկրատիա ստեղծվեց, որը հաւատում էր կապիտալի և աշխատանքի ներդաշնակութեան դօգմային: Մի հանգամանք էր միայն այդ ներդաշնակութիւնը խանգարում. բանուորների քաղաքական իրաւազուրկ վիճակը:

Թէ լիբերալները և թէ պահպանողականները չէին կարողանում շատ առարկութիւններ անել, բանուորական արիստոկրատիային քաղաքականապէս արտօնեալ դասակարգերի շարքերը մտցնելու հակառակ: Դա, ընդհակառակը, մի միջոց էր՝ նրանց բանուոր դասակարգի մասսաներից անջատելու համար: Այդ պատճառով էլ՝ մի քանի անանձնդ փորձերից յետոյ, քաղաքային աւելի ապահովված բանուորները ձայնի իրաւունք ստացան 1867 թուականի օրէնքի համաձայն, որի զօրութեամբ ամեն ոք, ով առանձին բնակարան էր վարձում քաղաքային շրջանում, ընտրողական իրաւունք էր ստանում: Այդ ճանապարհով ընտրողների թիւը եռապատկվեց: Ընտրողների թիւը մէկ միլիօնից մօտաւորապէս 3 միլիօնի հասաւ, որոնցից մեծ մասը քաղաքացիներն էին կազմում: 1872 թ. հրատարակվեց այն օրէնքը, որով քուէարկութիւնները գաղտնի էին դարձվում:

Բայց պատգամաւորներին ռոճիկ չը տալը միաց, որ և գոյութիւն ունի մինչև այսօր էլ, ինչպէս և միաց այն աւելի ճնշիչ կարգադրութիւնը, որի համաձայն թեկնածուները, որոնք յաճախ ահագին գումարներ են ծախսում ընտրութիւնների վրա, պարտաւոր են դեռ մի այդչափ գումար էլ թեկնածու նշանակվելու ժամանակ ներկայացնել, վերջին հանգամանքը

թեան դօգմային: Մի հանգամանք էր միայն այդ ներդաշնակութիւնը խանգարում. բանուորների քաղաքական իրաւազուրկ վիճակը:

Թէ լիբերալները և թէ պահպանողականները չէին կարողանում շատ առարկութիւններ անել, բանուորական արիստոկրատիային քաղաքականապէս արտօնեալ դասակարգերի շարքերը մտցնելու հակառակ: Դա, ընդհակառակը, մի միջոց էր՝ նրանց բանուոր դասակարգի մասսաներից անջատելու համար: Այդ պատճառով էլ՝ մի քանի անանձնդ փորձերից յետոյ, քաղաքային աւելի ապահովված բանուորները ձայնի իրաւունք ստացան 1867 թուականի օրէնքի համաձայն, որի զօրութեամբ ամեն ոք, ով առանձին բնակարան էր վարձում քաղաքային շրջանում, ընտրողական իրաւունք էր ստանում: Այդ ճանապարհով ընտրողների թիւը եռապատկվեց: Ընտրողների թիւը մէկ միլիօնից մօտաւորապէս 3 միլիօնի հասաւ, որոնցից մեծ մասը քաղաքացիներն էին կազմում: 1872 թ. հրատարակվեց այն օրէնքը, որով քուէարկութիւնները գաղտնի էին դարձվում:

Բայց պատգամաւորներին ռոճիկ չը տալը միաց, որ և գոյութիւն ունի մինչև այսօր էլ, ինչպէս և միաց այն աւելի ճնշիչ կարգադրութիւնը, որի համաձայն թեկնածուները, որոնք յաճախ ահագին գումարներ են ծախսում ընտրութիւնների վրա, պարտաւոր են դեռ մի այդչափ գումար էլ թեկնածու նշանակվելու ժամանակ ներկայացնել, վերջին հանգամանքը

չը խանգարեց բանւորներին պալամենտ մըտնելու։ Բայց նա առաւելապէս նպաստեց այնպիսի բանւորների պարլամենտ մուտք գործելուն, որոնք «բանւորների բարեկամ» ունեւոր մարդկանց հովանաւորութիւնն էին վայելում և որոնց փոխարէն այդ «բարեկամները» էին վճարում ընտրութիւնների համար պէտք եղած բոլոր ծախսերը։

Սաստիկ ընդարձակված պրօֆեսիօնալ միութիւնները նեղ կաստային ոգու և ցէխային առանձնացման աղբիւր դարձան, և այդ հանգամանքի շնորհով բանւոր-արիստօկրատների ընդհանուր դասակարգային գիտակցութիւնը բաւականին թուլացաւ։ Ամբողջ բանւորական մասսաներից նրանց անջատվելը և քաղաքականապէս արտօնեալ դասակարգերի շարքը մտնելը վերջնականապէս սպանեց նրանց մէջ դասակարգային գիտակցութիւնը։ Բանւորական ատորին խաւերում կանգնած մարտիկ գընդերից նրանք դարձան նոյն խաւերին ճնշողներ։ Բանւորների այդ խաւերը, որոնք տնտեսականապէս այնպէս ամուր և ընդարձակ կազմակերպութիւն էին ներկայացնում իրանցից, բայց և որոնք զուրկ էին դասակարգային գիտակցութիւնից ու միացած չէին մի ինքնուրոյն, համախմբված քաղաքական կազմակերպութեան բանւորական կուսակցութեան մէջ, քաղաքականապէս նոյն անկապ մասսան էին ներկայացնում իրանցից, ինչպէս և բուրժուազիայի միջին խաւերը։ Նրանց պարլամենտա-

րիզմի շրջանի մէջ մտնելը բոլորովին չը փոխեց պարլամենտի բնաւորութիւնը։ Սա առաջվան պէս մնաց բուրժուա դասակարգի ներկայացուցչութիւն։

Սակայն, պարլամենտական այդ անդորրութեանը վիճակված չէր տևողական լինել։

Տնտեսական զարգացումը շարունակում էր առաջ ընթանալ և քայքայում էր կապիտալից ստացվող վաստակի, հողային րենտայի և օրավարձի միջև եղած ընդհանուր ներդաշնակութեան հիմքերը։ Անգլիայի կողքին հետզհետէ նոր արդիւնագործական պետութիւններ առաջ եկան, որոնք արդէն ընդունակ էին նրա դիրքը խախտել համաշխարհային շուկայում։ Այդ պետութիւններն էին Միացեալ Նահանգները, հարաւային նահանգների հետ եղած պատերազմի ժամանակներից ի վեր, և Գերմանիան՝ Ֆրանսիայի հետ ունեցած պատերազմից յետոյ։ Համաշխարհային շուկայում մրցումը աւելի ու աւելի սաստկանում էր։ Դրան աւելացան և քայքայիչ կրիզիսները, գործերի կանգ առնելը, որոնք այնպիսի մեծ ծաւալ ընդունեցին և այնչափ երկար տևեցին, որ մինչև այդ ժամանակ տեսնված բան չէր։ Կապիտալից ստացվող վաստակները սկսեցին նուազել։

Միևնոյն ժամանակ հողային րենտան ու օրավարձն էլ իջան։ 70-ական թուականներից սկսած, Անգրօվկեանեան հաղորդակցութեան զարգացումը սկսեց անգլիական շուկային աւելի

ու աւելի մեծ քանակութեամբ էժանագին կենսական մթերքներ մատակարարել։ 70-ական թուականներից սկսած տեղի ունեցաւ այն, ինչից որ կալուածատէրերը վախենում էին դեռ 50-ական թուականներին, իբրև հացի մաքսը վերացնելու հետևանք, այն է՝ հողային րենտայի շարունակական նուազումը, ինչ չափով որ դա պայմանաւորվում էր երկրագործական աշխատութիւններով։ Այդ ժամանակներից ի վեր պաշտպանողական մաքսերի ձգտումը նորից արթնանում է հողատէրերի շրջանում։ Բայց միայն հողային րենտան չէ, որ նուազում էր։ Գործերի երկար ժամանակով կանգ առնելը իջեցրեց և օրավարձը։ Մինչև իսկ այն տեղերում, ուր օրավարձը ուղղակի կերպով չէր իջել, աշխատաւորների տարեկան վաստակը իրապէս պակասեց, որովհետև աշխատանքները կանոնաւոր չէին ընթանում, իսկ բանուորների համար պարտադիր տօների թիւը տարւայ ընթացքում միջին հաշուով շատացել էին։

Պրօֆեսիօնալ միութիւնները, որոնք 50-ական թուականներից մինչև 70-ական թուականները մի շարք փառաւոր յաղթութիւններ տարան, հիմա յաճախ ոչ մի ազդեցութիւն չէին կարողանում այլևս ունենալ և յաճախ անկարող էին հանդիսանում դիմադրութիւն ցոյց տալ օրավարձի վրա եղած ճնշումներին ու պէտք եղած չափով օգնել անգործներին։ Կապիտալի և աշխատանքի միջև կօնֆլիկտները աւելի ու աւելի շուտ-շուտ էին կրկնվում և կատաղի էին դառնում։ Նոր թշնամական ոգին կապիտալիզմի դէմ սկսեց երևան գալ նախկին ցեխային պրօֆեսիօնալ միութիւնների մէջ, և դրանց հետ զուգընթացաբար սկսեց աճել մի նոր բանուորական շարժում, նոր պահանջներով դէպի պետութիւնը և հասարակութիւնը։

Այս փոփոխված նոր պայմանների ազդեցութեան տակ բուրժուազիան երկու բանակների բաժանվեց։ Առաջին բանակում բանուոր դասակարգին համարում էին ամենավտանգաւոր թշնամի և նրա վախից աւելի ամուր սեղմվեցին կալուածատէրին։ Հարկ չը կար այս վերջինների պաշտպանողական մաքսերի մասին ունեցած ձգտումներից վախենալու։ Անգլիական կալուածատէրերից ամենահեռատեսները շատ լաւ գիտէին, որ Անգլիայի գոյութիւնը այն ժամանակ ամբողջապէս կախված էր նրա արդիւնագործութեան զարգացումից, այլ ոչ թէ գիւղատնտեսութեան։ Եւ առհասարակ խոշոր հողատէրերն էլ շահագրգռված են արդիւնագործութեան զարգացումով, այսինքն՝ նրանք էլ են ցանկանում, որ կապիտալի արդիւնքները մեծանան։

Պահպանողական կուսակցութիւնը, որը 30-ական և 40-ական թուականներին դեռ զուտ կալուածատիրական կուսակցութիւն էր և որը աշխատում էր բանուորներին գործարանատէրերից հեռացնելով իր կողմը գրա-

ւել, 60-ական թւականներին երկու կապիտալիստական կուսակցութիւններից մէկը դարձաւ և, իր ախոյեան՝ լիբերալ կուսակցութեան նման, բանւորական արիստոկրատիայի հետ՝ բարեկամական խաղեր էր խաղում։ 70-ական թւականների վերջերից նա աւելի ու աւելի առհասարակ ունևորների կուսակցութիւն է դառնում, հակառակ բանւորական դասակարգի։ Երբեմն-երբեմն նա թոյլ է տալիս իր անդամներին անհատականապէս դեմագոգիական բարեկամութիւններ անել բանւորների հետ, բայց նա վճռական կերպով միշտ հակառակ է ամեն մի գործնական միջոցի, որը կարող է բանւոր դասակարգի շահերին ծառայել։

Երկրորդ բանակում այն բուրժուազիան էր գտնվում, որը արմատական տրադիցիաներ էր պահպանել ընտրողական իրաւունքին վերաբերեալ առաջին րեֆօրմի համար մղված կուի այն ժամանակներից, երբ կալուածատէրերը բուրժուազիայի ամենագլխաւոր թշնամիներն էին համարվում, ուստի սրա դէմ պէտք է սեղմված շարքերով կռիւ մղէին կապիտալիստները, մանր բուրժուազիան և բանւորները։

Բայց այդ բուրժուազիան, «արմատականները» իրանց հոգու խորքում մտածում են, որ ունևոր դասակարգերի համախմբվելը մէկ ընկերային կուսակցութեան մէջ ամենալաւ միջոցը կը լինի առաջացնել այն, ինչից որ

կամենում են խուսափել հէնց իրանք ունևորները։ Այդպիսով բանւորը ուղղակի ստիպված կը լինի բոլորովին անջատվել ունևոր դասակարգերից և, իբրև սրանց հակադիր ոյժ, իր առանձին կուսակցութիւնը կազմել, որը շատ կարճ ժամանակից յետոյ անյաղթելի կը դառնայ։ Բանւոր դասակարգին բուրժուազիայի տրամադրութեան տակ պահելու միակ միջոցը կայանում է նրանում, որ բուրժուազիան նրա գլուխը անցնի կեանքի աւելի լաւ պայմանների համար մղված կուի մէջ, նրան մի քանի զիջումներ ունի, այնպիսի զիջումներ, ի հարկէ, որոնք գլխաւորապէս կալուածատէրերի հաշւին կը լինեն, որոնց վերաբերեալ կապիտալիստներն ու պրօլետարիատը ընդհանուր շահեր ունեն։ Լիբերալ կուսակցութիւնը այժմ դառնում է այն, ինչ էր պահպանողական կուսակցութիւնը 30-ական և 40-ական թւականներին, այն է, բարեգործներ և բանւորների բարեկամ կուսակցութիւն։ Դերերը փոխվել են։

Այսպէս, անտեսական զարգացման ճնշումի տակ երկու նոր կուսակցութիւններ են գոյանում նոյն շրջանակների մէջ և նոյն անունների տակ, իսկապէս և նախկին կուսակցութիւնները։ Պարլամենտը ն րից դադարում է միմիայն կօմպրոմիսների փառք ու պատիւների ձգտող ինտրիգանների համար աստիարէզ լինելուց, նա նորից լուրջ կռիւ, դասակարգային կռիւ, արմատականապէս հակասու-

թիւնների մէջ գտնվող կուսակցութիւնների կուի ասպարէզ է դառնում:

Ընտրողական բեֆօրմը, որը 1885 թ. օրէնք դարձաւ, կուսակցութիւնների այդ զարգացման առաջին կարևոր հետևանքն էր: Այդ ընտրողական բեֆօրմով լիբերալ կուսակցութիւնը ընտրողական իրաւունք տուեց գիւղական բանուորներին, որպէսզի այդպիսով հողատէրերի ազդեցութիւնը ոչնչացնի գիւղական ընտրողական շրջանների վրայից: Առանձին բնակարան ունեցողներին տրված ձայնի իրաւունքը, որ առաջ վերաբերում էր միմիայն քաղաքային ընտրողական շրջաններին, այժմ տարածվում էր և գիւղական շրջանների ու կոմսութիւնների վրա: Լիբերալ կուսակցութիւնը յոյս ունէր այդպիսով իր տիրապետութիւնը երկար ժամանակով ամրացնել: Բայց այդ հաշիւը սխալ դուրս եկաւ: Նա սխալ չէր լինի այն դէպքում միայն, եթէ այդ կուսակցութիւնը կարողանար իր նախկին կողմնակիցներին՝ բուրժուազական շրջաններից իր կողմը պահել: Բայց նա չէ կարող որևէ զիջում անել բանուոր դասակարգին, հէնց դրանով իսկ չը հեռացնելով իրանից մի շարք բուրժուազական տարրեր: Այդ կուսակցութիւնից բուրժուազական կողմնակիցների հեռանալով նա նորից էլ աւելի կախումն է ունենում բանուորներից: Իր բանուոր կողմնակիցների ազդեցութիւնը մեծացնելու համար, լիբերալ կուսակցութիւնը պէտք է նրանց նոր քաղաքական իրաւունքներ տայ, գլխաւորապէս կան իրաւունքները. նա ստիպված է լինում նրանց տնտեսական զիջումներ էլ անել, որպէսզի կարողանայ իր կողմնակից բանուորների թիւը շատացնել, կամ, գոնէ, նրանց իր կողմում միշտ պահել: Եթէ պահպանողականները կը կազմեն ունևորների կուսակցութիւնը, լիբերալ կուսակցութիւնն էլ հետզհետէ այնպիսի կացութեան է մօտենում, որ նա կարող է յենվել բացառապէս բանուորական կուսակցութեան վրա:

Բայց բուրժուազիայի բարեկամութիւնը բանուորների հետ Անգլիայում չէ կարող երկար ժամանակ սահմանափակվել այնպիսի ծրագրով, թէ սոցիալական բեֆօրմները պէտք է կատարել հողատէրերի հաշւին: Տնտեսական զարգացումը շարժման մէջ դրեց բանուորական մասսաների այնպիսի խաւեր, որոնք բանուորական արիստոկրատիայից աւելի ստոր աստիճանի վրա էին կանգնած, իսկ 1885 թ. ընտրողական բեֆօրմը նրանցից շատերին ընտրողական իրաւունքներ տուեց: Նրանք քաղաքական գործօններ դարձան: Սակայն, այդ խաւերը դեռ ևս բոլորովին էլ վարակված չեն բուրժուազական րադիկալիզմով, նրանց սոցիալական դրութիւնն ու պատմական պայմանները շատ աւելի ընդունակ են դարձնում նրանց ըմբռնելու ժամանակակից սոցիալիզմը, քան բանուորական արիստոկրատիան, որը

այժմ նոյնպէս հետզհետէ կորցնում է իր զբաղումանքը դէպի սոցիալիզմը։

Այդ խաւերը թշնամաբար են վերաբերվում դէպի ամբողջ կապիտալիստական հասարակութիւնը։ Նրանք պահանջում են, որ իրանց սոցիալական դրութիւնը դրական կերպով փոխվի, որ իրանց աշխատանքի պայմանները լուրջ վոփոխութիւնների ենթարկվեն։ 80-ական թւականների սկզբներում անգլիական բանւորները դեռ ամենամեծ նշանակութիւնը հողային բեֆօրմին էին տալիս։ Հենրի Ջորջը օրվայ հերոսն էր։ Իսկ հիմա 8 ժամեայ աշխատանքի օրն է լօզունգ ծառայում, և լիբերալ կուսակցութեան մասսանները, որոնք դեռ երէկ կատաղի կռիւ էին մղում այդ պահանջի դէմ, այժմ ստիպված են վերջ դնել իրանց հակառակութեանը։ Բանւոր պրօլետարիատի ունեցած տնտեսական նշանակութեան և ընտրողական իրաւունքից ստացած քաղաքական այժի շնորհով, լիբերալ կուսակցութիւնը իրապէս նրա գերին է հանդիսանում։ Լիբերալները հիմա էլ արդէն մեծ վշտով նկատում են, որ իրանք ստիպված են բանւորներին զիջումներ անել, ոչ միայն կալուածատէրերի հաշւին, այլ և արդիւնագործական կապիտալիստների հաշւին։

Միանգամայն պարզ է, թէ ինչ հետևանքների կը հասցնի և պէտք է որ հասցնի այս զարգացումը. կարճ ժամանակից յետոյ լիբերալ կուսակցութիւնը այնպիսի դրութեան

պիտի հասնի, որ նա պէտք է որոշի, թէ արդեօք ցանկանում է ինքը բուրժուազական կուսակցութիւն մնալ, թէ ոչ՝ զուտ բանւորական կուսակցութիւն դառնալ։ Եթէ նա առաջին իմաստով որոշում կայացնի, այն ժամանակ նա կը փտրվի բանւորներից և այդպիսով իր մահվան դատավճիռը կը ստորագրի, որովհետև նրա բուրժուազական կողմնակիցները հետզհետէ նուազում են և այդ պատճառով էլ չեն կարող նրա կենսունակութիւնը պահպանել։

Լիբերալ կուսակցութեան յետևում կանգնած է բանւորական անկախ կուսակցութիւնը, որը նոր ու նոր կենսունակ նիւթեր է դուրս քաշում նրա ամեն մի ոտտանումից, ամեն մի հակառակութիւնից, որ նա ցոյց է տալիս պրօլետարիատին, և որը, հէնց այն րօպէին, երբ լիբերալները կուզենան բանւորներին ապաղակել. «մինչ այստեղ, և սրանից յետոյ ոչ մի քայլ այլևս չենք կարող զիջել», նրա տեղը կը բռնի իսկոյն։

Եթէ լիբերալները այդպէս անելու համար քաջութիւն չեն ունենայ և կը շարունակեն իրանց նախկին զիջումների ճանապարհով ընթանալ, այդ պարագայում հաւանական է, որ նրանք կը խանգարեն զուտ բանւորական կօլլեկտիվ կուսակցութիւն կազմվելուն։ Բայց դա կարող էր լիբերալ կուսակցութեանը աջողվել միայն այն դէպքում, երբ իր սեփական զարգացումը նրան կօլլեկտիվիզմի հասց-

նէր. նրա միջից կանհետանային այն բոլոր տարրերը, որոնք շահագրգռված են կապիտալիստական կարգերով, և նրա կազմի բուրժուազական մասերից կուսակցութեան մէջ կը ճնային միմիայն այն տարրերը, որոնք, պրօլետարական շարքերը անցնելով, կտրել են իրանց կապերը կապիտալիստական հասարակութեան հետ։

Ի հարկէ, շատ քիչ հաւանականութիւն կայ, թէ Անգլիայի զարգացումը հէնց այս ուղիով կը գնայ, չը նայելով որ անգլիացիք շատ սերտ են կապված իրանց հին ձևերի հետ և սիրում են նոր գինին հին տիկերի մէջ լցնել։

Այնուամենայնիւ թող լինի այն, ինչ որ լինելու է։ Այստեղ խօսքը միայն այն մասին է, որ անգլիական կուսակցութիւնների յաջորդութիւնների զարգացման օրինակով ապացուցվի, թէ որ աստիճան սխալ է այն կարծիքը, թէ պարլամենտարիզմը օգտակար է բացառապէս կապիտալիստների դասակարգին։

Մենք արդէն տեսանք, թէ ինչպէս ներկայացուցչական սիստեմը, նայելով տնտեսական զարգացման աստիճանին և ընտրողական իրաւունքի բնաւորութեանը, ծառայում էր միմեանցից ամենատարբեր դասակարգային շահերին և բազմատեսակ ձևեր էր ընդունում։

Անգլիական ներքին պալատը, մէկ ու կէս դար արիստոկրատիայի դիկտատուրայի համար գործիք ծառայելուց յետոյ, մի կէս դար էլ արդիւնագործական կապիտալիստների դիկտատուրայի համար գործիք դարձաւ։ Բայց վհրջինները արդէն կորցրել են իրանց բացարձակ իշխանութիւնը, պրօլետարիատը արդէն կարողանում է պարլամենտում և պարլամենտի միջոցով իր օգտին փոխել երկրի ներքին քաղաքականութիւնը, և մօտ է այն օրը, երբ անգլիական ամենակարող պարլամենտը նրա դիկտատուրայի գործիքը պիտի դառնայ։

XII

Պարլամենտարիզմը եւ բանւորական դասակարգերը

—

Եթէ մենք պնդում ենք, որ պարլամենտարիզմը երկու տեսակ է լինում, որ պարլամենտարիզմի ձևը մի տեսակ զէնք է ներկայացնում իրանից, որը կարող է ծառայել և ծառայել է միմեանցից բոլորովին տարբեր կուսակցութիւններին ու դասակարգերին, դրանով սակայն, մենք բոլորովին չենք ուզում ասել, թէ ժողովրդի որոշ խաւերը պարլամենտարիզմից աշակցութիւն են տեսել, իսկ միւսները ոչ։ Մենք արդէն տեսանք, որ պարլամենտի կատարած ֆունկցիաները շատ էլ հասարակ չեն։

Պատգամաւորի գործունէութիւնը պարլամենտում, ինչպէս և ամեն մի ուրիշ պաշտօն, արդի աշխատանքի բաժանման պայմանների

մէջ, պահանջում է մասնաւոր գիտութիւն և պատրաստականութիւն ունենալ. նա պահանջում է՝ խօսելու շնորհք ունենալ, լայն աշխարհահայեացք, որը կարողանայ ընդգրկել ընդհանուր ազգային և միջազգային նշանակութիւն ունեցող հարցերը. նա պահանջում է, վերջապէս, որոշ չափով իրաւաբանական, տնտեսական և պատմական ուսումն ունենալ, գոնէ պարլամենտի այն բոլոր անդամների համար, որոնք ցանկանում կամ պարտաւոր են մի քիչ աւելի բարձր կանգնած լինել, քան միմիայն քուէ տուող ոչխարների հօտը:

Այդ պատճառով էլ պարլամենտի անդամները գլխաւորաբար ընտրվում են այն դասակարգերից, որոնք, հէնց իրանց մասնագիտական պարապմունքների պայմանների շնորհով, վերոյիշեալ յատկութիւններն ունեն. այդպէս են՝ փաստաբանները, պրոֆեսօրները, ժուռնալիստները, չինովնիկները և ուրիշներ: Կամ թէ չէ, ընտրվում են այն դասակարգերից, որոնք բաւականաչափ ազատ ժամանակ ունեն, այնպէս որ նրա անդամները, ցանկացած դէպքում, կարող են ձեռք բերել պէտք եղած գիտութիւններն ու պատրաստականութիւնը. այդպիսիներն են խոշոր կապիտալիստները, կալուածատէրերը և այլն:

Այս տեսակէտից մի որոշ չափով հիմք կայ ասելու, որ պարլամենտարիզմը միմիայն բուրժուազիայի ներկայացուցչութիւն է նշանակում, բուրժուազիա խօսքը ընդունելով իր ամենալայնդարձակ իմաստով:

Այդ հիմքը կար այն ժամանակ, երբ Բիտտինգհաուզէնը իր՝ անմիջական ժողովրդային ներկայացուցչութեան՝ գաղափարն էր արծարծում: Հիմա այդ հիմքը չը կայ: Այն և ներկայ ժամանակների միջև կայ բանւոր դասակարգի հակայական զարգացման շրջանը:

Բանւոր դասակարգը, ինչպէս և մանր բուրժուազիան ու սակաւահող գիւղացիութիւնը ակիզբներում բոլորովին զուրկ էին այն բոլոր պայմաններից, որ անհրաժեշտ են իրանց միջից պարլամենտական գործիչ պատրաստելու համար: Բայց բանւորական շարժումի հետ այդ հանգամանքը փոխվեց:

Մենք արդէն տեսանք, թէ ինչպէս տնտեսական յարաբերութիւնները միմեանցից անջատում էին գիւղական համայնքները և մանր քաղաքները: Դրանցից ամեն մէկը իր համար սեփական պետութիւն էր կազմում: Այդ անջատումը մեծ մասամբ դեռ շարունակվում է: Արտադրութեան կապիտալիստական եղանակի ու կապիտալիստական պետութեան զարգացումը, այն է՝ միլիտարիզմը, պետական հարկերը, երկաթուղային հաղորդակցութիւնը և լրագրները, ի հարկէ, գիւղերում էլ, փոքր քաղաքներում էլ զարթեցրին ազգային գիտակցութիւն և հետաքրքրութիւն դէպի պետական գործերը: Բայց և այնպէս գիւղական համայնքներում և փոքր քաղաքներում տեղա-

կան շահերը դեռ ևս առաջնակարգ նշանակութիւն ունեն հասարակական կեանքի մէջ, և միմիայն մասնաւորապէս յուզիչ մոմենտներում, ինչպէս են՝ ընդհանուր ընտրութիւնները, պատերազմի սկզբում և այլն, այնտեղ էլ է քաղաքական կեանքը կենդանութիւն ստանում, և ժողովուրդը համախմբվում է կուսակցութիւնների շուրջը, պետութեան այս կամ այն մեծ կուսակցութեանն է միանում: Բացի այդ մոմենտներից, շատ քիչ է պատահում, որ այդտեղ ժողովուրդը շարունակական կերպով գործական մասնակցութիւնը ցոյց տայ քաղաքականութեան մէջ և շարունակական քաղաքական կազմակերպութիւններ պահպանի: Իսկ խաղաղ ժամանակներում գիւղերի և մանր քաղաքների քաղաքական գործունէութիւնը սահմանափակվում է աննպատակ «գեալլՅինների» քաղաքական գործերի մասին: Ընդհրը շատ աւելի լաւ դրութեան մէջ է մեծ քաղաքների մանր բուրժուազիայի շրջաններում:

Այս դասակարգի ներկայացուցիչները ապրում են մեծ քաղաքական կուի հեղեղի մէջ, նրանց չեն կարող նրա ալեկոծութիւնից զերծ ՅԱալ և միշտ դրդվում են շարունակ ժամանակ-ցութիւնը ցոյց տալ պետական քաղաքականութեան մէջ: Այնուամենայնիւ, նրանք էլ դժուարութեամբ են մշտական քաղաքական կազմակերպութիւնների մէջ համախմբվում: Բանը նրանումն է, որ նրանք էլ են միւսեան-

ցից անջատվում, և հէնց իրանց աշխատանքի զօրութեամբ: Իւրաքանչիւրը աշխատում է առանձին փոքրիկ ձեռնարկութեան մէջ: Բայց նրանք ոչ միայն միասին չեն աշխատում, այլ և մրցում են միմեանց հետ. մրցումը ստիպում է իւրաքանչիւրին առաջ գնալ իր ընկերների հաշւին:

Եւ ամեն տեղ, ինչպէս քաղաքում, այնպէս էլ գիւղում, մանր բուրժուազիայի միջև կայքերի և եկամուտների անսահման անհաւասարութիւն կայ. աւելի ունևորը արհամարհանքով է նայում նուազ ունևորի վրա, իսկ այս վերջինը նախանձով է նայում առաջինի վրա: Այս բոլորը համարեա թէ անյաղթելի արգելքներ են յարուցանում ամբողջ մանր բուրժուազիային կամ գիւղացիութեանը մի մեծ, ամուր կազմակերպութեան մէջ համախմբվելու համար: Հազիւ է պատահում, որ այս դասակարգերը մանր համքարային կամ տեղական միութիւններից հեռու գնան, միութիւններ, որոնք միմիայն ժամանակաւոր նպատակներ ունեն:

Իսկ վարձու բանւորներին, բոլորովին ընդհակառակը, արդիւնագործութիւնը մի քանի հազարներով համախմբում է մի քանի կենտրոններում, ուր նրանք աշխատում են միասին, միևնոյն պայմանների մէջ:

Կազմակերպութիւնների մէջ ունեցած դրծունէութիւնը, որ բանւորների կեանքի պայմանների անհրաժեշտ հետևանքն է, բնական

անհրաժեշտութեամբ բանուորների մէջ զարգացնում է հէնց այն յատկութիւնները, որոնք հարկաւոր են պարլամենտական գործչին. խօսելու ընդունակութիւն, լայն աշխարհայեացք, կազմակերպչական ու ադմինիստրական հարցերի ըմբռնումն և իրաւաբանական դիտութիւններ: Այս վերջիններով իրանց կազմակերպութիւնների մէջ աշխատող բանուորները պարտական են կառավարութեանը, որը ամենուրեք թշնամաբար է վերաբերվում բանուորների հաժախմբմանը, և ամենուրեք օգավում է այն բոլոր միջոցներով, որոնք թոյլ են տրվում օրէնքի բառացի իմաստով,—իսկ յաճախ չեն էլ թոյլ տրվում,—որպէսզի խանգարի բանուորներին կազմակերպվելու: Այստեղ բանուորների առաջ բոլորովին պարզվում է, որ ամեն մի օրէնքի մէջ նշանակութիւն ունի ոչ միայն նրա սկզբունքը, այլ և նրա տեկստը. այստեղ նրանք ծանօթանում են իրաւաբանութեան բոլոր մուտքերի ու ելքերի հետ, այստեղ նրանք հարկադրվում են ուսումնասիրել օրէնքները ու օրէնքների ոգին, թէ օգտվելու համար օրէնքով իրանց վերապահված իրաւունքի ամեն մի կաթիլով և թէ նրա համար, որ թոյլ չը տան իրանց վերաբերեալ որևէ ապօրինի վարմունք գործադրելու:

Բայց և դասակարգային դրութիւնն էլ բանուորի համար աւելի, քան մանր բուրժուազիայի ու գիւղացիութեան համար, մատչելի է

դարձնում ոչ միայն պարլամենտական պատրաստականութիւնը, այլ և ընդհանուր քաղաքական կրթութիւնը: Գիւղացին կապված է իր մի կտոր հողի հետ և իր շրջակայքից այն կողմը ուրիշ աշխարհ չէ ճանաչում: Վարձու բանուորը հողի հետ կապված չէ, նա ճանապարհորդում է, օտար երկրների հետ է ծանօթանում, իսկ իր հայրենիքում աշխատելիս էլ օտարների հետ միասին է աշխատում: Հէնց այդ հանգամանքը միայն խիստ լայնացնում է նրա աշխարհայեացքը, ազատում է նրան շատ նախապաշարումներից, նրան հնարաւորութիւն է տալիս շատ բան սովորել: Բայց աւելի կարևոր է և մի այլ հանգամանք: Արհեստաւորը, ինչպէս և գիւղացին, ոչ միայն բանուոր է, այլ և առևտրական է: Իր աշխատանքը վերջացնելուց յետոյ, նա դեռ ևս ազատ մարդ չէ. աշխատանքից յետոյ էլ նա դեռ ամուր կապված է իր գործի հետ, նա հիմա պէտք է իր արտադրութիւնը ծախելու մասին մտածի, և դրա համար նա պէտք է ղանազան հաշիւների ու ենթադրութիւնների վրա գործ դնի իր մտաւոր էներգիայի այն փոքրիկ կաթիլը, որ դեռ մնացել է նրա մէջ աշխատանքից յետոյ, և որչափ վատ են գնում նրա գործերը, այնչափ էլ աւելի նա լարված ուղեղով պիտի իր հաշիւների մասին մտածէ:

Այսպիսով, բանուորական շարժումը այնպիսի հոստորներ ու քաղաքագէտներ է առաջ քաշում, որոնք, գուցէ, ոչ մի բանով էլ պակաս

չեն բուրժուազական քաղաքական գործիչնե-
րից, և որոնք կարող են ոչ միայն իրանց բան-
ւորական առանձին շահերը պաշտպանել, այլ և
ամբողջ հասարակական առաջադիմութեան շա-
հերը։ Կուսող պրօլետարիատը այն դասակար-
գերի շարքերն է մտնում, որոնցից պարլա-
մենտական գործիչներ են ընտրվում։ Այնտեղ,
ուր զարգացած բանւորական շարժում կայ, և
ուր ընդհանուր ընտրողական իրաւունք է
մտցված, պարլամենտական գործունէութեան
մէջ գործնականապէս մասնակցելը դադարում
է ունևոր դասակարգերի բացառիկ արտօնու-
թիւնը լինելուց։

Բայց մաքառող պրօլետարիատը ոչ միայն
ընդունակ է իր միջից պարլամենտական գոր-
ծիչներ արտադրել, այլ և նա կարողանում է
նրանց գործունէութիւնը հսկողութեան տակ
առնել։ Իսկ այս վերջին ընդունակութիւնը ա-
ռաջինից շատ աւելի կարևոր է։ Ոչ մի բան
այնքան սխալ չէ, քան այն կարծիքը, թէ հա-
սարակութեան մի որևէ խաւի շահերը պար-
լամենտում պաշտպանելու համար անհրաժեշտ
է, որ պատգամաւորները նոյն այդ հասարա-
կական խաւից լինեն ընտրված, և թէ իբր
այդպիսի պատգամաւորները միանգամայն ա-
պահովում են իրանց պաշտպանած շահերը։
Քաղաքական գործիչներից շատերը, որոնք
բուրժուազական շրջաններից են դուրս եկել,
բանւոր դասակարգի ամենաառաջաւոր և լաւ
մարտիկներն են համարվում, իսկ բանւոր-

ներից շատերը դաւաճանել են իրանց դա-
սակարգին։ Մի դասակարգ այն ժամա-
նակ միայն կարող է վստահ լինել, թէ իր
շահերը պարլամենտում ամենալաւ և նպա-
տակայարմար ձևով են պաշտպանվում իր
ներկայացուցիչների կողմից, երբ նա չէ բա-
ւականանում միմիայն պարլամենտի համար
ընտրութիւն կատարելով, այլ և միշտ հսկում
է նրանց պարլամենտական գործունէութեան
վրա ու ազդում է նրանց վրա։

Մանր բուրժուազիան և սակաւահող գիւ-
ղացիութիւնը անկարող են այդ բանը անել,
և այդ պատճառով էլ այն տեղերում, ուր
նրանք ընտրողների մասսան են կազմում,
մեծ մասամբ նրանք խաբվում են, և այնչափ
աւելի են խաբվում, որչափ աւելի մեծ ազդե-
ցութիւն ունի պարլամենտը։ Ազատ առևտու-
րի կողմնակիցների կարծիքի հակառակ, արդի
պետութիւնը մի ահագին տնայնական ձեռ-
նարկութիւն է իրանից ներկայացնում, և նրա
ազդեցութիւնը երկրի ամբողջ տնայնական
կեանքի վրա հիմա էլ արդէն անչափ է։ Եւ
այդ ամբողջ ահագին իշխանութիւնը, ըստ
մեծի մասին, գտնվում է պարլամենտական
գործիչների ձեռքում այն երկրներում, որոնք
կառավարվում են կենտրօնացած պարլամեն-
տի միջոցով, նրանց է պատկանում նաև ոչ
միայն դասակարգային շահերի, այլ և հազար
ու մի մասնաւոր շահերի հարցերը որոշելու
իրաւունքը։ Միանգամայն հասկանալի է, թէ

*ուրախի փորձութիւնների են ենթարկվում պարլամենտական գործիչները, և նրանցից ուրչափ քչերն են ընդունակ լինում չը թուլանալ այդ փորձութիւնների առաջ այնպիսի մի հասարակութեան մէջ, որտեղ հարստութիւնը ստիպում է մոռացութեան տալ ամեն մի ստորութիւն *)։*

Բայց մինչև իսկ այդպիսի ապականութիւն չեղած դէպքում էլ մանր բուրժուազիան ու գիւղացիութիւնը մինչև օրս խարխում էին իրանց պարլամենտական ներկայացուցիչների կողմից։ Եւ այդ նրա համար, որ այդ դասակարգերը, անկարող լինելով մի առանձին զօրաւոր կուսակցութիւն կազմել, մինչև օրս միշտ յենվում էին ունևոր դասակարգերից մի որևէ ֆրակցիայի վրա. կամ կապիտալիստների և կամ խոշոր կալուածատէրերի վրա։ Նրանք ոչ միայն դրանց շրջանից էին ընտրում իրանց ներկայացուցիչներին, այլ և

) Պարլամենտարիզմի հակառակորդները շատ սիրով մատնանիշ են անում նրա կաշառակերութիւնը, իբրև նրա մի անբաժան ուղեկիցը։ Նրանք մոռանում են, որ կապիտալիզմի անբարոյականացնող ազդեցութիւնը պետութեան վրայից չէ վերանում և պարլամենտարիզմի վերացումով։ Այն ժամանակ կաշառակերութեան կենտրօնակէտը կանցնի միայն պարլամենտից բիւրօկրատիայի շրջանի վրա, իսկ այս վերջինը շատ աւելի մեծ անամօթութեան է հասցնում իր կաշառակերութիւնը, երբ պարլամենտական մերկացումներից աւելի ապահով է, և իր խայտառակութիւնները նա շարունակում է մինչև որ ամբողջ սիստեմն է ընկնում։ Ծ. Հ.

նրանց յանձնարարում էին միաժամանակ խոշոր և մանր կալուածատէրերի շահերը պաշտպանել։ Ինքնըստինքեան հասկանալի է, որ այդ անհնարին է, և որ այդ շահերի փոխադարձ ընդհարման դէպքում պատգամաւորները, որոնք հարուստ դասակարգերի շարունակական աղդեցութեան տակ են գտնվում և իրանք էլ հէնց այդ շարքերից են դուրս եկած, միշտ այս վերջիններիի կողմը կը բռնեն։

Վերջապէս, պէտք է ի նկատի առնել և այն հանգամանքները, որ գիւղացիութիւնն ու մանր բուրժուազիան կազմալուծվող դասակարգեր են, որոնց դասակարգային շահերը յաճախ հակասում են հասարակական զարգացման ամբողջ ընթացքին։ Հէնց ունևոր դասակարգերի տեսակէտից մանր բուրժուազիան ու գիւղացիութիւնը շատ դէպքերում ստիպված էլին այնպիսի պահանջներ ներկայացնել, որոնք վերջը անիրագործելի էին լինում։

Այդ իսկ պատճառով էլ այն պարլամենտական գործիչները, որոնք ունևոր դասակարգերի տեսակէտի վրա են կանգնած և որոնք ընտրվել են գիւղացիութեան և մանր բուրժուազիայի կողմից, իբրև իրանց դասակարգային շահերի ներկայացուցիչներ, ստիպված են համարեա թէ միշտ խարել իրանց ընտրողներին, նոյնիսկ այն ժամանակ, երբ նրանք կարողանում են իրանց անհատական մաքրութիւնը պահպանել և հաւատարիմ մնալ իրանց քաղաքական սկզբունքներին։

Ամեն տեղ, ուր վարձու բանւորները դեռևս այն աստիճանի չեն հասել, որ իրենց առանձին քաղաքական կուսակցութիւնը կազմեն, նոյն դրութեան մէջ են գտնվում, ինչպէս են մանր բուրժուազիան և գիւղացիութիւնը։ Բայց վաղ կամ ուշ դասակարգային կռիւը ամեն տեղ բերում և այդպիսի կուսակցութիւն կազմելուն է հասցնում։ Ինչպէս որ կեանքի պայմանները սկզբում բանւորներին ստիպում են համախմբվել անտեսական պրօֆեսիօնալ հսկայական կազմակերպութիւններ ի մէջ, ճիշտ այդպէս էլ, վերջ ի վերջոյ, նրանք ստիպված են լինում իրանց պրօֆեսիանների սահմաններից դուրս գալ և մի այնպիսի քաղաքական կազմակերպութիւն ստեղծել, որը պէտք է իր մէջ առնի պետութեան մէջ եղած ամբողջ բանւորական դասակարգը։ Տիրող պայմանները նոյն անհրաժեշտութեամբ, ինչպէս որ հարկադրում են բանւորներին ինքնուրոյն քաղաքական կուսակցութիւն կազմել, այդ կուսակցութեանը յեղափոխական ընաւորութիւն են տալիս—եթէ նա դեռ այդպիսին չէր եղել հէնց սկզբից—և նրան կօլեկտիվիզմի տեսակէտին են հասցնում։ Բանւորական կուսակցութիւններին յատուկ է նոյն սերտ համախմբումը, նոյն դիսցիպլինան և նոյն «բռնակալութիւնը», ինչպիսին և ունեն բանւորական անտեսական կազմակերպութիւնները։

Եւ այդ դիսցիպլինան պարտաւորեցուցիչ է

ոչ միայն ժասսաների, այլ և նրա ներկայացուցիչների համար, նրա ղեկավարների համար։ Նրանցից և ոչ մէկը, ինչ դիրքի տէր էլ լինի նա, իրաւունք չունի մի որևէ քաղաքական գործ ձեռնարկել իր ընկերների կամքի հակառակ կամ նոյնիսկ առանց նրանց համաձայնութեան։ Պրօլետարական պատգամաւորը, իբրև այդպիսին, ազատ մարդ չէ,—որչափ էլ վիրաւորական հնչի այս խօսքը,—այլ մխիթարի իր կուսակցութեան հաւատարմատարը։ Եթէ նրա հայեացքները հակասական են իր կուսակցութեան հայեացքներին, այն ժամանակ նա այլևս չէ կարող նրա ներկայացուցիչը լինել։

Բիտեֆինգաուզէնն ու Լօսաը Բիւխերը ցաւ են յայտնում այն մասին, որ պարլամենտի արդի անդամը այլևս իր կուսակցութեան այնպիսի լիազօր ներկայացուցիչը չէ, ինչպէս որ միջին դարերի վերջերում էին զեմսկի ժողովների համար ընտրված անդամները։

Հիմա անհնարին է հրամայողական մանդատների դիմել, ինչպէս որ անում էին հնումն։ Այդ կը հակասէր արդի պետութեան էութեան ոգուն, որը այդ պարագայում աւելի կամ նուազ ինքնուրոյն մանր պետութիւնների (ընտրողական շրջանների) մի հասարակ միութիւն կը դառնար։

Այժմեան պարլամենտական պատգամաւորը լիազօր է ներկայանում ուրիշ մաքով. նա լիազօր է հանդիսանում ոչ թէ իր ընտրողական

շրջանի կողմից, այլ իր կուսակցութեան կողմից, եթէ ոչ իրաւաբանօրէն, բայց գոնէ ըստ էութեան: Սակայն, ոչ մի կուսակցութիւնից պատգամաւորը այնչափ լիազօրութիւններ չէ ստանում, որչափ սոցիալ-դեմօկրատական կուսակցութիւնից: Եւ մինչ բուրժուազական կուսակցութիւնների մէջ դիսցիպլինան իրապէս գոյութիւն ունի միմիայն փոքրիկ խմբակների համար, որոնց եռևում կան միայն ընտրողների չը կազմակերպված մասսաներ, սոցիալ-դեմօկրատիայի համար դիսցիպլինան մի անհրաժեշտութիւն է յայտնվում ամբողջ կազմակերպութեան համար, որը ընդգրկում է մարտնչող ինտելիգենտ պրօլետարիատի ամբողջ մասսաները և որը հետզհետէ ընդարձակվում ու իր մէջ է առնում ամբողջ բանւորական դասակարգը:

Այսպիսով, սոցիալ-դեմօկրատական պատգամաւորը նորից դառնում է այն, ինչ որ էր դեմակի ժողովի համար ընտրված պատգամաւորը, այն է՝ ժողովրդի լիազօրը, բայց ոչ թէ մի փոքր համայնքի բնակիչների լիազօրը. նա դառնում է մի այնպիսի կուսակցութեան լիազօրը, որը տարածված է պետութեան ամբողջ շրջանի վրա և ձգտում է իր մէջ առնել պետութեան մէջ եղած ամբողջ բանւոր ժողովրդին:

Այն տեղերում, ուր պրօլետարիատը մի առանձին գիտակցական կուսակցութիւն է կազմել և ուր նա, իբրև այդպիսին, մասնակ-

ցում է պարլամենտի համար և պարլամենտում մղված կռւին, այնտեղ նա դադարում է այն կուսակցութիւններին պատկանել, որոնք կարող են միշտ սպասել, որ իրանց պարլամենտական ներկայացուցիչները կարևոր խնդիրների ժամանակ կարող են դաւաճաններ ու խաբեբաներ դուրս գալ իրանց ընտրողների վերաբերեալ: Ինչպէս մամուլի մէջ, այնպէս էլ պարլամենտում, մարտնչող պրօլետարիատի կազմակերպութիւնն ու դիսցիպլինան կաշառվելու առաջ ամրապինդ արգելքները են դնում: Ոչ մի կուսակցութիւն չը կայ, որը այն աստիճան իր ձեռքերի մէջ պահէր իր պատգամաւորներին և որը կարողանար այն աստիճան վստահութիւն ունենալ նրանց վրա, ինչպիսին է բանւորական կուսակցութիւնը:

Թող այդ բոլորը հէնց այդպէս էլ լինի, պատասխանում են պարլամենտարիզմի հակառակորդները: Մէկ բանի մէջ, սակայն, բանւոր դասակարգը միշտ ունևոր դասակարգերից ստոր է կանգնած. ներկայ գոյութիւն ունեցող կարգերի օրով, հէնց այն հանգամանքի պատճառով, որ բանւոր դասակարգը տնտեսականապէս միշտ կախումն ունի ունևորներից, նա երբէք չի կարողանայ բոլորովին ազատ կերպով իր ներկայացուցիչներին ընտրել: Ամեն մի ընտրութեան ժամանակ բանւորներից հազարաւորները ամենաբազմազան միջոցներից ազդված,—կաշառքից, գործից զրկվելու վախից, ճնշումից և այլն,—ստիպված են լի-

նում ոչ միայն իրանց շահերի ամենալաւ ներ-
կայացուցիչներին չը տալ իրանց քուէները,
այլ և իրանց հակառակորդներին տալ նրանց։
Այդ պատճառով էլ անմտութիւն է նշանաւոր
հետևանքներ սպասել այն բանից, որ արտա-
դրութեան արդի կապիտալիստական եղանակի
տիրապետութեան օրով պրօլետարիատը ժա-
նակցում է պարլամենտական ընտրութիւն-
ներին [1]։

Մենք, ի հարկէ, չենք հերքի, որ բանւոր-
ների կախումն ունենալը շատ է նրանց խան-
գարում ընտրողական պայքարի ժամանակ և
նրանց զրկում իրանց ամբողջ զօրութիւնը
հրապարակ հանելու հնարաւորութիւնից։

---

[1]) «Որչափ երկար ժամանակ է գոյութիւն ունե-
նում պարլամենտարիզմը մի որևէ երկրում,—ասել էր
Բիսմարկը դեռ 1869 թ.,—այնչափ աւելի է նա
դեմոկրատական շարքերի մէջ մոցնում «ամուլ հիաս-
թափութիւն և հաշտ նախատեսութիւն»։ Միևնոյն
ընտրողական օրէնքի տիրապետութեան օրով, ամեն
մի նոր օրէնսդրական ժողով աւելի վատ պիտի լինի
իր նախորդից։ Իւրաքանչիւր բանւոր գիտէ, որ իր՝
այս կամ այն թեկնածուի համար տուած քուէն, մինչև
իսկ այդ թեկնածուի ընտրվելը հազիւ թէ կարող է
ազդեցութիւն ունենալ ժողովրդային կուսակցութեան
ոյժի վրա ժողովում, բայց բանւորը գիտէ նոյնպէս և
այն, որ այն վճռասը, որ կարող է իրան հասցնել իր
քուէն—կառավարչական, գործատէրերի կամ եկեղեցու
ոստիկանութեան շնորհով,—բոլորովին ոչ մի կապ
չունի այն օգուտների հետ, որ նա կունենայ, եթէ իր
կուսակցութեան համար աշխոյժ ընտրութիւն կա-
տարվի իր շրջանում»։

Ծ. Հ.

Բայց մենք միանգամայն ժխտում ենք այն
կարծիքը, թէ այդ հանգամանքը միմիայն
ընտրողական պայքարին է յատուկ։ Ինչ ճա-
նապարհի վրա էլ որ կանգնի բանւոր դասա-
կարգը իր դրութիւնը բարելաւելու և հասա-
րակութեան մէջ աւելի մեծ ոյժ ձեռք բերելու
համար, ամենուրեք էլ կառավարու-
թիւնն ու կապիտալը նրա դէմ դուրս
կը գան և ամեն միջոց գործ կը դնեն ու
իրանց ամենալաւ ոյժերը հրապարակ կը
հանեն, որպէսզի նրա աշխուժութիւնների ա-
ռաջը առնեն։ Մի քանի Բիսմարկզէնի կոմ-
նակիցները կարծում են, թէ ընդհանուր ժո-
ղովրդի կողմից օրէնքներ քուէարկելը կարող
է աւելի քիչ կողմնակի արգելքների հանդի-
պել, քան պատգամաւորներ ընտրելը։ Կամ
թէ, մի կողմ թողնելով բանւոր դասակարգե-
րի քաղաքական գործունէութիւնը, այլ մի-
միայն պրօֆեսիօնալ միութիւնները քննելով,
մի քանի մենք չենք տեսնում, թէ որպիսի բազ-
մազան միջոցներ են ձեռք առնվում, որպէսզի
խանգարեն այդ միութիւնների զարգացումն
ու աճումը։

Այսպիսով, եթէ մենք պարլամենտարիզմի
մասին արված վերոյիշեալ յանդիմանութիւնը
ընդունենք, այն ժամանակ մենք պէտք է
մտովին դատավճիռ կարդանք բանւորական
շարժման դէմ ընդհանրապէս, կամ, գոնէ,
նրա այն բոլոր ձևերի դէմ, որ ներկայումս
ունենն։

Անկարելի է, սակայն, հաստատապէս ասել, թէ ներկայացուցչական հաստատութիւնների համար եղած ընտրութիւնների ժամանակ բանւորների վրա աւելի ճնշում են բանեցնում, քան նրանց գործունէութեան մի՞ւս այն բոլոր դէպքերի ժամանակ, որոնք դասակարգային կռւին են վերաբերում։ Ընդհակառակը, ճնշումը կարելի է բոլորովին հեռացնել, գոնէ, քուէարկութեան ժամանակ, ընտրողական պայքարի ամենավճռական մոմենտին, գաղտնի ձայնատուութեան միջոցով, որ և արդէն գոյութիւն ունի համարեա թէ բոլոր պարլամենտական երկրներում, թէև ամեն տեղ էլ դա դեռ այնպիսի կատարեալ ձևի չէ հասած, որ կարողանայ բոլորովին իր նպատակին ծառայել։ Գաղտնի քուէ տալը բանւորին աւելի անկախ է դարձնում ընտրութիւնների ժամանակ, քան նրա դասակարգային կռւի մի որևէ այլ ձևի ժամանակ։ Մինչև իսկ Գերմանիայում, ուր ընտրութիւնների եղանակը շատ աւելի վատ է դրված, քուէարկութիւնը գաղտնի անելու համար, քան օրինակի համար Անգլիայում, այնուամենայնիւ բանւորներից շատերը, որոնք չեն համարձակվում պրօֆեսիոնալ միութիւնների մէջ մտնել կամ սօցիալիստական թերթ ստանալ, կարողանում են իրանց քուէն սօցիալ-դեմօկրատներին տալ։

Կարճ խօսելով, ինչ կողմից էլ որ մենք քննենք ներկայացուցչական սիստեմը, մենք անկարող կը լինենք այնպիսի մի գիծ դուրս

գտնել, որը բանւոր դասակարգի համար հիմք ծառայէր իրան հեռու պահելու պարլամենտից, այն պարլամենտից, որը մի անգամ ընդմիշտ ներկայանում է և, ներկայ հասարակական կարգերի օրով, անխուսափելիօրէն պէտք է ներկայանայ մեր քաղաքական կեանքի կենտրօնը։

Այժմ բուրժուազիան էլ այլևս չէ ընդունում Բիսմարկ-Շէնհաուզէնի ու նրա հետևողների այն կարծիքը, թէ ներկայացուցչական սիստեմի ամեն մի ձևը, թէկուզ դեմօկրատականն էլ, նրա տիրապետութիւնն է ապահովում։

Բուրժուազիան դեռ կարող էր ընդհանուր ընտրողական իրաւունքը անվտանգ համարել այն ժամանակ, երբ Բիսմարկ-Շէնհաուզէնը իր գաղափարն էր արտայայտում անմիջական օրէնսդրութեան մասին, և երբ Բիսմարկը համաձայնեց գաղտնի ընտրողական իրաւունք մտցնել (հիւսիսային գերմանական միութիւնը հաստատելու ժամանակ, 1867 թ.)։ Այդ պատճառով էլ ընտրողական իրաւունքը չէր կարող այստեղ պարլամենտարիզմի էական գծերի մէջ յեղաշրջում առաջացնել։

Բօնապարտեան կարծեցեալ պարլամենտարիզմը չէր կարող շատ էլ հետաքրքրել բանւորներին։ Գերմանական ըէյխստագի իրաւասութիւնները անգամ շատ մեծ բան կարելի է համարել, ֆրանսիական կայսրութեան օրէնսդրական մարմնի համեմատութեամբ,

նամանաւանդ կայսրութեան առաջին շըրջանում *)։

Այսպէս ուրեմն, ֆրանսիական երկրորդ կայսրութեան օրով, կատարված ընդհանուր ընտրողական իրաւունքի փորձերը չէին կարող 1867 թ. վախեցնել ոչ Բիսմարկին և ոչ էլ Դիզրայէլիին այն աստիճան, որպէսզի նրանք զգուշանային ընտրողական իրաւունքը ընդարձակելուց։

Բայց հէնց Անգլիայում ու Գերմանիայում ընտրողական իրաւունքի ընդարձակելուց ստացված հետևանքները,—ընտրողական իրաւունքը Անգլիայում մինչև իսկ դեռ ևս ընդհանուր չէր,—բացեցին տիրող դասակարգերի աչքերը։ Անգլիայում ընտրողական իրաւունքի ընդարձակումը այն հետևանքը ունեցաւ, որ երկու մեծ կուսակցութիւններից մէկը, որոնք մինչև այդ ժամանակ փոփոխակի կերպով

*) Օրէնսդրական մարմինը ոչ իրաւունք ունէր իր համար նախագահ ընտրելու, ոչ օրէնսդրութեան նախաձեռնութեան իրաւունք ունէր, ոչ կարող էր պետիցիաներ ընդունել, ոչ հարցապնդումներ անել կառավարութեանը։ Այդ օրէնսդրական մարմնի մէջ կարող էին քննութեան առնվել միմիայն այն օրէնքները, որոնք արդէն անցել էին Պետական Խորհրդից, ու եթէ օրէնսդրական մարմնի անդամներից մէկը ցանկանար ուղղում մտցնել օրէնքի մէջ, այդ ուղղումներն էլ պէտք է նախ Պետական Խորհրդից անցնէին և ապա միայն քննութեան ենթարկվէին։ Պետական բուէչը պալատի կողմից թոյլատրելու իրաւունքի մասին խօսք անգամ չէր կար սահմանադրութեան մէջ։ Միմիայն մարտի 22-ին (1852 թ.) հրատարակված հրովարտակով որոշվեց, որպա-

միշտ թագաւորում էին պետութեան մէջ, ըստ կոչ կատարելապէս բանւորներից կախումն ունենալ։ Իսկ Գերմանիայում, չը նայելով ընտրողական իրաւունքի բոլոր թերութիւններին, ինչպիսին են՝ պարլամենտի անպատասխանատուի առաջիկ չը ստանալը, ընտրութիւնների ոչ բաւականաչափ գաղտնի լինելը, ընտրական իրաւունք ստանալու համար մեծ տարիք ունենալը և մանաւանդ այն հանգամանքը, որ թոյլ չէ տրվում երկիրը ընտրողական շրջանների բաժանել, որով ահագին մասս է հասցնվում արագութեամբ աճող խոշոր կեդրոնական քաղաքներին ի նպաստ յեռատնտես բնակիչներից զրկվող գիւղական շրջանների,—չը նայելով, ասում ենք, այս բոլոր թերութիւններին, գոյութիւն ունեցող ընտրողական

լաւը իրաւունք ունի, ինչպես և մինչև այդ ժամանակն էր լինում, բիւջեը թոյլատրել քննելու կէտ առ կէտ։ Դա մի այնպիսի իրաւունք էր, որը, ինչպես և եղել էր առաջներում, կարելի էր միշտ խլել կամ կրճատել։ Կարելի է համարեա թէ մի մեծ չնորհ համարել այն հանգամանքը, որ այդ կարգի կօլլեգիանների խորհրդակցութիւնները պէտք է հրատարակութեան տրվէին ոչ թէ իրըև անկախ հաշուետուութիւններ, այլ պաշտօնական պրօտօկօլների ձևով. բայց այդ սահմանափակութիւնով էլ, ի հարկէ, արմատից կտրվում էին այն յոյսերը, որ կարող էին դեռ օպօզիցիային գրաւել այդ կօլլեգիայի մէջ մտնելու համար, որպէսզի նրանք հնարաւորութիւն ունենային ամբիոնի վրայից մի ապատ խօսք ևեռել ամբողջ երկրին»։

Սահմանադրական բիւր, 2-դ կայսրութեան պատմութիւնը։ Բերլին, 1890 թ. եր 20. Ծ. Հ.

իրաւունքը Գերմանիայի բանւորական կուսակցութեանը պետութեան մէջ ամենազօրաւոր պարլամենտական կուսակցութիւնը դարձրեց, նրա համար տրված ձայների քանակութեան տեսակէտից, և միմիայն ժամանակի հարց է այն մօմենտը, երբ, հէնց նոյն այդ ընտրողական իրաւունքի օրով, նա ամենազօրեղը կը լինի նոյնպէս և իր պատգամաւորների քանակով։ Իրապէս, գերմանական բուրժուազիայի յոյսերը այլևս բոլորովին պարլամենտարիզմի վրա չեն դրված. նա այլևս չէ հաւատում, թէ այդ սիստեմը ամեն պայմանների մէջ կարող է իր տիրապետութիւնը ապահովել, նրա յոյսերը այժմ գերմանական պարլամենտարիզմի Թոյլ լինելու վրա են և այն հանգամանքի վրա, որ Գերմանիայում էապէս տիրապետում են աբսօլիւտիզմն ու միլիտարիզմը։ Մինչև իսկ Ֆրանսիայում էլ է բուրժուազիան սկսել վախ զգալ ընդհանուր ընտրողական իրաւունքից, չը նայելով որ այստեղ սօցիալ-դեմօկրատիան միայն վերջին ժամանակներում սկսեց ընտրողական պայքարի մէջ մասնակցել, և որ նրան սաստիկ խանգարում են պատմական տրադիցիաները։ Շատ ժամանակ չէ անցել, երբ բուրժուազական քաղաքական գործիչները սաստիկ սիրում էին բանւորներին դէպի ընտրողական Թերթիկները մղելու. նրանց ասում էին, Թէ իրանց ճարպար պա-

հանջները» նրանք աշխատելու են ձեռք բերել ոչ Թէ զէնքի զօրութեամբ, այլ ընտրողական Թերթիկների միջոցով։ Այժմ այդպիսի խօսքեր այլևս բոլորովին չեն լսվում։ Հիմա այլևս ոչ մի բուրժուական կառավարութիւն Թեթև սրտով ընդհանուր ընտրողական իրաւունք չէ տալիս։ Բանը նրանումն է միայն, որ եթէ բուրժուազիայի աչքերը բացվել են այդ իրաւունքի տակ Թագնված՝ իրան սպառնացող՝ վտանգի վերաբերեալ, պրօլետարիատն էլ հիմա ամեն տեղ գիտէ, որ այդ իրաւունքը մի շատ ահեղ յեղափոխական զէնք է հանդիսանում իր համար։

Եթէ Բիսմարկն ուզէր իր հետևողները իրաւացի լինէին, այն ժամանակ բանւոր դասակարգի կողմից կատարեալ անմտութիւն կը լինէր մինչև իսկ մատ ժատի խփել ընդհանուր ընտրողական իրաւունքի համար, այսինքն՝ պարլամենտարիզմի մէջ մասնակցութիւն ունենալու համար։ Բայց դրա փոխարէն մենք հիմա տեսնում ենք, որ ամենուրեք կատաղի կռիւ է մղվում ընդհանուր ընտրողական իրաւունքի պատճառով։

Այն տեղերում, ուր այդ իրաւունքը դեռ չը կայ, բանւոր դասակարգը ամենածայրայեղ զոհաբերութիւններ ու ջանքեր է անում նրան ձեռք բերելու համար, ինչպէս որ այդ շատ վառաւոր կերպով ապացուցվեց Բելգիայում և գուցէ, շատ շուտով կապացուցա-

նեն և աւստրիական բանւորները *)։

Միմիայն քաղաքականութեան մէջ կոյրը հիմա կը ջանայ պնդել, թէ ներկայացուցչական սիստեմը ընդհանուր ընտրողական իրաւունքի օրով էլ բուրժուազիայի տիրապետութիւնն է ապահովում, և թէ, այս վերջինին տապալելու համար, հարկաւոր է նախ ներկայացուցչական սիստեմը ոչնչացնել։ Հիմա արդէն ակնյայտնի է դառնում, որ իսկական պարլամենտական ըէժիմը նոյնպիսի աջողութեամբ կարող է բանւոր դասակարգի դիկտատուրայի համար գործիք ծառայել, ինչպէս որ նա ծառայում է բուրժուազիայի դիկտատուրայի համար։ Կառավարչական իշխանութեան հասնելու համար մղված կռւի մէջ բանւոր դասակարգի ամենագլխաւոր գործը կայանում է, ոչ թէ ներկայացուցչական սիստեմը, այլ կառավարութեան պարլամենտի վրա ունեցած իշխանութիւնը ոչնչացնելու մէջ։ Բացի դրանից, նա պէտք է աշխատի, որ բանւոր դասակարգի առաջ կարելի եղածին չափ լայն ճանապարհ բացվի պարլամենտ գնալու համար։ Իսկ դրան կարելի է հասնել, երբ ընտրողական շրջանները համահաւասար չափերով բաժանված կը լինեն, երբ ընտրութիւնները կատարելապէս գաղտնի կը դառնան, երբ պարլամենտական նստաշրջանները կը կարճացվեն, երբ մամուլի, ժողովները անելու, միութիւններ կազմելու լիակատար ազատութիւններ ձեռք կը բերվեն և երբ, որ ամենից գլխաւորն է, ընտրողական իրաւունքը կը տարածվի պետութեան մէջ ապրող բոլոր 20 տարեկանի հասած քնակիչների վրա։ Ոչ մի տեղ, համարեա, բանւոր դասակարգը մի անգամից կատարեալ քաղաքական իշխանութեան չէ հասնում։

Իսկական պարլամենտական երկրներում առանձնակարևոր քայլը սոցիալական յեղաշրջման ճանապարհի վրա ընդհանուր ընտրողական իրաւունքն է հանդիսանում։ Իսկ կարծեցեալ սահմանադրական երկրներում դրա վրա աւելանում է և մի այլ շատ կարևոր խնդիր. իսկական պարլամենտական կարգեր պէտք է նուաճել։ Անմիջական ժողովրդային օրէնսդրութեան գաղափարները Բիտտինգհաուզէնի արտայայտած իմաստով վերին աստիճանի անդամալուծող ու մթագնող ազդեցութիւն միայն կարող են ունենալ այդ մղվող կռւի վրա։

Այդ գաղափարները դեռ էլի վտանգ չեն կարող սպառնալ այնպիսի տեղերում, ուր դեմօկրատիան արդէն ամուր դիրքեր է բռնել, բայց նրանց քարոզիչը միանգամայն պիտի հեռացնել այն տեղերից, ուր բանւոր դասակարգը դեռևս ստիպված է կռիւ մղել պարլամենտ մտնելու իրաւունք ձեռք բերելու և կամ պարլամենտի իրաւունքները՝ ա-

*) Ինչպէս յայտնի է, դրան ամենամեծ ապացոյցն տուեց և դեռ շարունակում է տալ Ռուսաստանի պրօլետարիատը։

ւելի զօրաւոր կառավարութեան վերաբերեալ՝ ընդարձակելու համար։

XIII

Անմիջական ժողովրդային օրէնսդրութիւն եւ դասակարգային կռիւ։

Կարծում ենք, որ մենք արդէն ապացուցեցինք, որ արդի մեծ պետութեան մէջ քաղաքական գործունէութեան կենտրոնակշիռը պարլամենտում է գտնվում։ Մենք ապացուցված ենք համարում և այն, որ այդ հանգամանքը բոլոր-ովին մի դժբաղդութիւն չէ պրօլետարիատի համար, որովհետև իր դասակարգային կռւով նա իր մէջ մի շարք այնպիսի ընդունակութիւններ է զարգացնում, որոնք նրան հնարաւորութիւն են տալիս պարլամենտարիզմը իր նպատակներին ծառայեցնելու։

Ուղղակի ժողովրդային օրէնսդրութիւնը կարելի է թոյլատրել այն մտքով միայն, ինչ ձևով որ նա արդէն գոյութիւն ունի Շվէյցարիայում և ինչպէս որ նրան բացատրում է գերմանական բանւորական կուսակցութեան ծրագիրը. ոչ թէ իբրև մի միջոց ներկայացուցչական սիստեմը ոչնչացնելու համար, այլ միմիայն նրան աւելի դեմօկրատիական բնաւորութիւն տալու և աւելի մեծ չափով նրան ժողովրդի կօնտրօլին ենթարկելու համար։ Անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնը այդ մտքով՝ բնթերևնդում ու նախաձեռնութիւնը, որ յամենայն դէպս շատ աւելի

ձիշտ կը լինի անուանել պարզապէս՝ ժողովրդի անմիջական մասնակցութիւն օրէնսդրութեան մէջ, բնական է, շատ աւելի համեստ դեր է կատարում քաղաքականութեան մէջ, քան, օրինակի համար, ընտրողական իրաւունքը։ Բանը նրանումն է, որ օրէնսդրութեան գործում այդպիսի մասնակցութիւնը քաղաքական գործունէութեան կենտրոնակշիռը թողնում է պարլամենտում, իսկ այս վերջինի համար ընտրողական իրաւունքը, որից կախված է նրա՝ պարլամենտի թէ կազմը և թէ գործունէութիւնը, շատ աւելի մեծ նշանակութիւն ունի, քան կօնտրօլի կամ նախաձեռնութեան իրաւունքը, որով երբեմն-երբեմն են միայն օգտվում, և այն էլ հէնց նոյն մարդիկ, որոնք արդէն իրանց կամքը արտայայտել են ընտրութիւններ կատարելով։

Մեզ մնում է այժմ քննել, թէ ինչ նշանակութիւն կարող է ստանալ պրօլետարիատի դասակարգային կռւի համար անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնը այս՝ աւելի նէղ իմաստով։

Հին դպրոցի արմատական դեմոկրատիան, բնական է, որ պէտք է անմիջական օրէնսդրութիւնը, ընդունելով դրան միմիայն վերոյիշեալ նեղ իմաստով, համարի, ամեն պարագայում, վերին աստիճանի օգտակար բան։ Դա բացատրվում է նրանով, որ դեմոկրատիան իր ամբողջ ուշադրութիւնը դարձնում է միմիայն «ժողովրդի» վրա, իսկ ժողովրը-

դի իշխանութիւնը առաջին հայեացքից, յաջենայն դէպս, աւելի մեծ է թուում անմիջական օրէնսդրութեան ժամանակ, քան պարլամենտարիզմի ժամանակ։ Սոցիալ-դեմոկրատիան այդ բոլորի վրա այդպէս էլ հասարակ կերպով չէ նայում։ Դեմոկրատիան, ինչպէս որ մենք արդէն պարզեցինք, այն հանգամանքի արդիւնք էր, որ հարկ եղաւ ժողովրդի բոլոր դասակարգերին միացնել ընդդէմ աբիսոկրատիական միահեծանութեան լծժիմի։ Այդ լծժիմը նա կարող էր տապալել միմիայն ժողովրդային մասսաների մէջ գոյութիւն ունեցող դասակարգային հակասութիւնները մի կողմ թողնելով։ Այն տեղերում, ուր արիսոկրատիական-միահեծանութեան լծժիմը արդէն տապալված է, հրապարակ է գալիս սոցիալ-դեմոկրատիան, չնորհիւ պրօլետարիատի ու բուրժուազիայի միջև եղած դասակարգային հակակրութիւնների, որոնք անխուսափելիօրէն այդ դէ[illegible]ջրի երես են դուրս գալիս։

Ինչպէս որ դեմոկրատիայի պ[illegible]ական դերը պահանջում է նրանից՝ մերձացնել բուրժուազիայի ու պրօլետարիատի միջև եղած դասակարգային հակառակութիւնները, այնպէս էլ սոցիալ-դեմոկրատիայի պատմական դերը թելադրում է նրան, անհրաժեշտօրէն ժխտակացնել այդ դասակարգային հակառակութիւնները և ամենամանրամասն կերպով միշտ յիշեցնել այդ մասին պրօլետարիատին։ Սոցիալ

-դեմոկրատիան պրօլետարիատի շահերի ներկայացուցիչն է հանդիսանում, սակայն, պրօլետարիատ և ժողովուրդ բառերը միևնոյն նշանակութիւնը չունեն։ Եւ չունեն ոչ թէ նրա համար, որ սոցիալ-դեմոկրատիան կարող է բացառապէս պրօլետարիատի շահերը պաշտպանել։ Ընդհակառակը, նրա պատմական դերը սահմանում է նրան զարկ տալ հասարակութեան զարգացմանը ամեն տեղ, ուր որ նա կարող է ազդեցութիւն ունենալ և պաշտպանել շահագործվողներին ու կեղեքվողներին։ Կարող է պատահել, որ մանր բուրժուազիայից ու գիւղացիներից էլ շատերը կը միանան սոցիալ-դեմոկրատիային այն բոլոր տեղերում, ուր որ նա մի ջօրաւոր քաղաքական կուսակցութիւն կը դառնայ։

Այս վերջին պարագան կարող է պատահել հէնց այն պատճառով, որ մանր բուրժուազիան ու գիւղացիութիւնը, ինչպէս տեսանք, անընդունակ են իրանց սեփական քաղաքական կուսակցութիւնը ունենալ, նրանք կարող են միայն յարել, լինի դա ունևորների, թէ չունևորների կուսակցութեանը, և յարած դէպքում, նրանք այնչափ աւելի կը թեքվեն վերջինի կողմը, որչափ որ աւելի նրանց կը նեղի կապիտալիստական շահագործութիւնը, որչափ որ նրանք աւելի չունևորներ կը զգան իրանց։

Այդպիսով շատ հեշտ կարող է պատահել, որ մինչև իսկ այնպիսի երկրներում, որտեղ

վարձու բանւորները մեծամասնութիւն չեն կազմում, սոցիալ-դեմոկրատիան կարող է իր կողմը գրաւել ժողովրդի մեծ մասը։

Բայց ներկայումս մենք դեռ շատ հեռու ենք այդպիսի դրութիւն ունենալուց։ Եւ որչափ արագութեամբ մենք մօտենանք այդ դրութեանը, այնուամենայնիւ, մարտնչող բանւորական դասակարգը մինչ կուսակցութեան կոճղը կը կազմի, և այդ կոճղի յատկութիւններով էլ պայմանաւորված կը լինի կուսակցութեան բնաւորութիւնը։ Մենք սիրով կը դիմաւորենք մանր բուրժուազիային ու գիւղացիներին, եթէ նրանք կուզենան մեզ միանալ ու մեզ հետ ընթանալ, սակայն բանւոր դասակարգն է, որ միշտ ուղեցոյցը կը լինի։ Բայց եթէ, ոչ միայն վարձու բանւորները, այլ և գիւղացիութիւնն ու ու մանր բուրժուազիան —արհեստաւորները, ամէն կարգի գալաները, սաորին պաշտօնեաները, և այլն—մի խօսքով՝ այն բոլոր տարրերը, որոնց «հասարակ ժողովուրդ» են անուանում, եթէ այդ բոլորն, ասում ենք, այն մասսան են կազմում, որտեղից սոցիալիստական կուսակցութիւնը միշտ իր համար հետեւողներ է գտնում, միևնոյն ժամանակ պիտի ասել, որ հէնց այդ նոյն դասակարգերն են, բացի գիտակից վարձու բանւորներից, որ նոյնպէս կազմում են այն մասսան, որտեղից հետեւողներ են գտնում և մեր հակառակորդները. սրանց քաղաքական իշխանութիւնը, թէ առաջներում և թէ հիմա էլ, պահպանվում է

այդ դասակարգերի միջոցով։ Այդ պատճառով էլ ժողովրդին քաղաքական իրաւունքներ տալով, դեռ ևս ոչ մի դէպքում չէ կարելի ասել, թէ պրօլետարական շահերը կը պաշտպանվեն, կամ թէ հասարակութեան զարգացմանը այդպիսով զարկ կը տրվի։ Ինչպէս յայտնի է, ընդհանուր ընտրողական իրաւունքը դեռ ևս ոչ մի տեղ սոցիալ-դեմոկրատական մեծամասնութիւն չէ տուել։ Ընդհանուր ընտրողական իրաւունքի հետևանքը յաճախ այն է լինում, որ շատ աւելի յետամնաց տարրերն են մեծամասնութիւն կազմում, քան այլ հաւասար պայմանների մէջ, երբ ընտրողական իրաւունքը հիմնված է ցենզի վրա։ Կարող է նոյնիսկ պատահել, որ ընդհանուր ընտրողական իրաւունքի շնորհով լիբերալ կառավարութիւնը ստիպված կը լինի տեղի տալ պահպանողական կամ նոյնիսկ յետադիմական կառավարութեան առաջ։ Այդպիսի դէպքերում լիբերալները ասում են, թէ ժողովուրդը դեռ չէ «հասունացել» ազատութեան համար։ Զը նայելով դրան, բանւոր դասակարգը պարտաւոր է, յամենայն դէպս, դեմոկրատիական հաստատութիւններ պահանջել հէնց այն հիման վրա, որ քաղաքական իշխանութեան հասնելուց յետոյ միայն ինքը կարող է իր դասակարգային տիրապետութիւնից օգտվել՝ ամէն մի դասակարգային տիրապետութեան վերջ դնելու համար։ Զուտևոր բանւորները հասարակական ամենաստորին խաւն են կազմում,

և այդ խաւը չէ կարող ընդարձակ քաղաքական իրաւունքներ ձեռք բերել, մինչև որ այդ իրաւունքներից չեն օգտվում բոլորն էլ։ Ամեն մի այլ դասակարգ որոշ պայմանների մէջ կարող է արտօնեալ դասակարգ դառնալ, իսկ բանւոր դասակարգի հետ այդպիսի բան չէ կարող պատահել։ Այդ պատճառով էլ պիտակից բանւոր դասակարգի կուսակցութիւնը դեմոկրատիական ձգտումների ամենավստահելի յենարանն է ներկայանում, շատ աւելի վստահելի, քան ինքը դեմոկրատիան։ Թէև, սակայն, սոցիալիստական կուսակցութիւնը ամենավճռողական մարտնչողն է դեմոկրատիկական պահանջների համար, այնուամենայնիւ նա չէ կարող դեմոկրատիայի ցնորքները ունենալ։ Նա պէտք է յիշէ, որ ամեն մի ձեռք բերված իրաւունք ժողովրդի համար կարող է զէնք ծառայել ոչ միայն իր կուսակցութեան ձեռքում, այլ և իր հակառակորդների ձեռքում. որոշ պայմաններում նա պէտք է նոյն իսկ հաւատացած լինի, որ ձեռք բերված դեմոկրատիական իրաւունքները սկզբում հէնց դրանց համար պիտի աւելի օգտակար լինեն, քան թէ իր համար։ Բայց, ի հարկէ, միայն սկզբում, որովհետև, վերջ ի վերջոյ, դեմոկրատիական հաստատութիւնները մտցնելը, անշուշտ, բանւոր դասակարգին պիտի ծառայի։

Պիտակից բանւոր դասակարգը այնպիսի հաւատ ունի դէպի հասարակական զարգացումը և դէպի ինքը, որ ոչ մի կուսից չէ վախենում մինչև իսկ այնպիսի մի հակառակորդի հետ, որը իր ոյժերով գերազանցում է իրան։

Ինչպէս որ սոցիալիստական կուսակցութիւնը դեմոկրատիայի ցնորքները չունի, այնպէս էլ նա դեմոկրատիայից տարբերվում է նոյն չափով, ինչ չափով որ նա դեմոկրատիական առանձին հաստատութիւններն է գնահատում։ Այդ գնահատութիւնը անելու ժամանակ, նա ոչ միայն ինքն իրան հարցնում է, թէ արդեօք այդ հաստատութիւնները աւելացնո՞ւմ են ժողովրդի իշխանութիւնը ընդհանրապէս, այլ և հարցնում է, թէ արդեօք նպաստո՞ւմ են նրանք բանւոր դասակարգի իշխանութեանն ու զարգացմանը, և ինչ չափով։ Այդ տեսակէտից նա մի առանձին նշանակութիւն է տալիս այնպիսի մի քանի դեմոկրատիական պահանջներին, որոնց բուրժուազական դեմոկրատիան բոլորովին առաջնակարգ տեղ չէ տալիս, և ընդհակառակը։ Այսպէս օրինակ, կօալիցիայի (միութիւններ կազմելու) իրաւունքը բանւորների համար մի կենսական պայման է համարվում, բայց մանր բուրժուազիայի ու գիւղացիութեան համար նա բոլորովին մի անհրաժեշտ բան չէ, մանաւանդ անհրաժեշտ չէ նա կապիտալիստներին, որոնց համար նա մինչև իսկ վերին աստիճանի անյարմար բան է համարվում։ Այդ պատճառով էլ բուրժուազական դեմոկրատիան երբէք մի առանձին եռանդով չէ պաշտպանել այդ պահանջը։ Ֆրանսիական

յեղափոխութիւնից յետոյ, մինչև իսկ ուղղակի արգելված էին ամեն տեսակ կօալիցիաներ։ Իսկ բանւոր դասակարգի համար ճիշտ ընդհակառակը. կօալիցիայի իրաւունքը նրա առաջնակարգ պահանջներից մէկն է։

Այդ պատճառով էլ մենք չենք գոհանայ բեֆերնդումի և նախաձեռնութեան հարցի մէջ միմիայն նրանով, որ մեզ կը հաւատացնեն, թէ այդ ճանապարհով ժողովրդի իշխանութիւնը աւելանում է։ Մենք պէտք է հարցնենք. ինչ աստիճան դա կը նպաստի բանւոր դասակարգի զօրանալուն և զարգացմանը։ Այդ հարցի պատասխանից է կախված, գլխաւորապէս, անժխտական ժողովրդային օրէնսդրութեան գնահատութիւնը։

Մենք արդէն տեսանք, որ արդի ներկայացուցչական սիստեմը շատ էլ նպաստաւոր չէ նամանաւանդ հողագործական շրջանների գիւղացիութեան և մանր բուրժուազիայի համար. ներկայացուցչական սիստեմի ժամանակ ամենից առաջ օգտվում են խոշոր կապիտալիստների, խոշոր կալուածատէրերի, ինտելիգենցիայի դասակարգերը, և կուռդ գիտակից արդիւնագործական բանւորական դասակարգը, եթէ ընտրողական սիստեմը դեմօկրատիական է։ Ընդհանուր առմամբ, այսպիսի եզրակացութիւն կարելի է անել. պարլամենտարիզմը նպաստում է մեծ քաղաքների բնակիչներին, հակառակ գիւղական բնակիչների։ Ժողովրդի բոլոր վերոյիշեալ խաւերը, դրանց թւում և

իրանց կալուածներում ապրող խոշոր հողատէրերը, մեծ քաղաքների հետ կապված են ամենաբազմատեսակ յարաբերութիւններով և նրա ազդեցութեան տակ են գտնվում։ Իսկ երկրի բոլոր մեծ քաղաքներից աւելի մայրաքաղաքն է, որ ամենից աւելի ու մանաւանդ ազդեցութիւն ունի պարլամենտի վրա։ Մենք արդէն նախորդ գլուխներից մէկում ասացինք, որ արտադրութեան արդի եղանակների կենտրոնացման ձգտող տենդենցիանները մայրաքաղաքի բնակիչներին են նպաստում աւելի մեծ չափով ազդեցութիւն ունենալ կառավարութեան վրա,—որը անհրաժեշտօրէն ստիպված է գտնվել պետութեան տնտեսական ու քաղաքական կենտրոնում,—քան երկրի միւս բնակիչներին։ Բայց պարլամենտական երկրներում պարլամենտն էլ նոյն անհրաժեշտ պատճառների զօրութեամբ ստիպված է մայրաքաղաքում գտնվել, ուր և կառավարութիւնն է։ Մրջնադարեան օրէնսդրական ժողովները, ինչպէս և ինքը կառավարութիւնը, բոլորովին կապված չէին մի որևէ տեղի հետ։ Ճիշտ դրա հակառակ, յետադիմական կառավարութիւնների բոլոր փորձերը մեր դարում՝ գաւառական մի որևէ քաղաքի մէջ տեղափոխել պարլամենտը, որպէսզի մայրաքաղաքի ազդեցութիւնից զերծ պահել նրան՝ միմիայն կարճ ժամանակով յայ ի դուր փորձեր ճնացին։ Մայրաքաղաքի ազդեցութիւնը պարլամենտի վրա շատ բազմատեսակ է։ Որոշ ժամանակաշրջաններում

այդ ազդեցութիւնը կարող է այն աստիճանի հասնել, որ մայրաքաղաքի բնակիչները պարլամենտին ուղղակի իրանց կամքն են թելադրում, և սա պարզապէս մի գործիք է դառնում մայրաքաղաքի բնակիչների ձեռքում: Բայց խաղաղ ժամանակներում էլ պատգամաւորը հազիւ թէ կը կարողանայ մայրաքաղաքի ազդեցութեան տակ չընկնել: Գիւղական պատգամաւորների բարքերի պարզութիւնը, գուցէ, կը տուժի այդ հանգամանքից, բայց նրանց քաղաքական հորիզոնը դրանից, անշուշտ, կընդարձակվի: Անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնը պարլամենտարիզմի այդ տեսակէտներին թոյլ չէ տալիս զարգանալու: Եթէ այս վերջինը ձգտում է քաղաքական կենտրօնակշիռը մեծ քաղաքների ժողովրդի մէջ տեղափոխել, անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնն էլ այդ կենտրօնակշիռը տեղափոխում է այն ժողովրդային մասսաների մէջ, որոնք, գրեթէ ամենուրեք, բացի Անգլիայից, դեռ հիմա էլ գլխաւորաբար ապրում են գիւղերում և գաւառական փոքր քաղաքներում: Անմիջական օրէնսդրութիւնը մեծ քաղաքների բնակիչներից խլում է նրա սպեցիֆիկ քաղաքական ազդեցութիւնը և նրան հպատակեցնում է գիւղական բնակչութեանը:

Մենք առաջ էլ նկատեցինք, թէ արտադրութեան գիւղական եղանակները որ աստիճան անջատում են մարդկանց միմեանցից: Արտադրութեան կապիտալիստական եղանակները և արդի պետութիւնը, ի հարկէ, հարկային սիստեմի, զինւորագրութեան, երկաթուղիների և լրագրների միջոցով սաստիկ նպաստում են գիւղացիական մեկուսացման վերջ դրվելուն: Բայց և այնպէս, որչափ աւելի է քաղաքը գիւղի հետ շփվում, այնչափ էլ գիւղացին աւելի է զգում իր մեկուսացումն ու դատարկութիւնը, և նրան, ի հարկէ, մեծ ցաւ է պատճառում:

Այդ շփումը նրան, իբրև գիւղացու, բարձրացնում է, բայց և նրա մէջ քաղաքում ապրելու խիստ ցանկութիւն է զարթեցնում, գիւղից քաղաք է մղում ամենահետանդուն և ինքնուրոյն մտածող տարրերին, գիւղից խլում է նրա ամենալաւ ոյժերը: Այսպիսով արդի հասարակական կեանքի զարգացումը նպաստում է գիւղական կեանքի ամայանալուն և մեկուսանալուն, փոխանակ նրա մակերևոյթը բարձրացնելու:

Իրապէս էլ ամեն մի պետութեան մէջ գիւղական ժողովուրդը թէ քաղաքականապէս և թէ տնտեսապէս միւս խաւերից աւելի յետամնաց է: Սրանով մենք չենք ուզում նրան յանդիմանած լինել. դա նրա դժբաղդութիւնն է. բայց դա մի իրողութիւն է, որ պէտք է հաշւի առնել: Մենք հազիւ թէ հիմք ունենք գերակշռութիւն տալու անմիջական ժողովրդային օրէնսդրութեանը, թէկուզ շատ երկար ժամանակ ու ամենազարգացած Շվէյցարիայում նա լինի, չը նայելով որ, գուցէ, Շվէյ-

ցարիայի գիւղական ժողովուրդը շատ էլ աւելի բարձր է կանգնած, քան Եւրոպայի միւս բոլոր երկրներում։

Ժողովրդային ուսումնարանների լաւ սիստեմը, շատ դէպքերում երկար ժամանակայ դեմոկրատիկական փորձառութիւնը և վերջապէս այն հանգամանքը, որ կապիտալիստական արդիւնաբերական ձեռնարկութիւնները մեծ մասամբ տարածված են բոլոր գիւղական շրջաններում, շվէյցարական շինականին խելքի ճկունութիւն են տալիս և ընդարձակում են նրա մտաւոր հորիզոնը։ Բայց միւս կողմից, շվէյցարական վարձու բանւորը ընդհանրապէս շատ աւելի պահպանողական է, քան նրա ընկերների մեծ մասը Եւրոպայում։

Արդիւնաբերութեան սփռվելը ամբողջ երկրում, բարձրացնելով նրա, իբրև գիւղացու, ժառանգ ժակերևոյթը, միևնոյն ժամանակ ցածրացնում է նրա այդ մակերևոյթը, իբրև վարձու բանւորի։ Տնտեսականապէս էլ նա դեռ շատ հեռու չէ գնացել գիւղացուց, նա դեռ մի կտոր հող ունի, որ իր սեփականութիւնն է համարում։

Բացի դրանից, Շվէյցարիայում չը կայ մի այնպիսի մեծ քաղաք, որը դեկավարող դեր կատարէր։ Այդ պատճառով էլ, այդտեղ քաղաքի և գիւղի միջև եղած տարբերութիւնը շատ աւելի քիչ է նկատվում, քան արդի մի որ և է մեծ պետութեան մէջ։ Եւ, չը նայելով այդ բանին, շվէյցարական քաղաքականա-

դէտներից շատերը բեֆերենդումին պահպանողական ազդեցութիւն են վերագրում[1]։

Յեղափոխական պրօլետարիատի համար այդ անհպատ ազդեցութեանը միանում է և մի այլ բան։

Մենք ասացինք, որ պարլամենտարիզմը անխուսափելիօրէն մեծ և խստացած պետական կուսակցութիւններ է առաջացնում։ Առանձին

[1]) Ինչպէս կուբարին, այնպէս էլ Դեպլուաժը իրանց գրուածքների մէջ մի շարք պատճառաբանութիւններ են բերում յօգուտ անմիջական օրէնսդրութեան։ Ի միջի այլոց, հետևեալ փաստերը ևս ուշադրութեան արժանի եմ համարում. շվէյցարական դաշնակցութեան ժողովը, այսինքն՝ պարլամենտը 1862 թ-ականին սահմանադրութեան նախագիծ էր մշակել, որով ժողովրդի իրաւունքները պիտի ընդարձակվէին և նրան նախաձեռնութեան ու ոչ-պարտադիր բեֆերենդումի իրաւունք պիտի տրվէին։ 1872 թ. մայիսի 12-ին, սահմանադրութեան այդ օրինագիծը ժողովրդային քուէարկութեան ենթարկվեց և 261,072 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 255,609 ձայնի մերժվեց։ Դրանից յետոյ Դաշնակցական նոր ժողովը սահմանադրութեան մի նոր օրինագիծ է մշակում, որի մէջ թէև բեֆերենդումի իրաւունքը մտցված էր, բայց նախաձեռնութեան խնդիրքը դուրս էր գցված։ Եւ այդ օրինագիծը ընդունվեց 340,199 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 198,013 ձայնի։ Պարլամենտի անդամները աւելի դեմոկրատականներ դուրս եկան, քան ժողովուրդը։

Դեպլուաժը հաղորդում է մեզ, որ պահպանողականները աւելի սիրով են բեֆերենդումի դիմում, իբրև մի միջոցի, որը կարող է օրէնսդրութեան առաջադիմութիւնը դանդաղեցնել։ Նա ասում է. «Բերն քաղաքի ստատիստիքական բիւրոյի նախկին դիրեկ-

դասակարգերը կարող են պարլամենտական պետութեան մէջ նշանակութիւն ստանալ միայն այդպիսի կուսակցութիւնների մէջ համախմբվելով։ Ընտրողական իրաւունք ու-

---

ժօր պ. Շտաըլէնը մի ազիւսակ էր կազմել, որտեղ ցոյց է տրվում թէ քանի՞ քուէ է տրված իւրաքանչիւր կանտօնում յօգուտ բեֆերենդումի։ Կաթօլիքական (արխի-պահպանողական) կանտօնները բեֆերենդումի կողմնակիցներից առաջին տեղն են բռնում. նախ գալիս է Ֆրիբուրգը, նրան հետևում են՝ Ուրի, Վալլիս, Օբվալդէն։ Դրանցից յետոյ գալիս են Ժընեվի և Վոյի կանտօնները։ Իսկ արմատական կանտօնները—Տուրգաու, Զօլոտուրն, Գլարուս և Ցիւրիխ—ամենաքիչ քուէով քուէներ են տուել։ Պ. Շտաըլէնի ստատիստիքան հիմնված է դիտողութիւնների վրա 5 տարվայ ընթացքում, բայց նրա բերած այդ հաշիւները հիմա էլ ճիշտ են, իմ ստացած տեղեկութիւններին նայելով։

«Բեֆերենդում Շվէյցարիայում». Բրիւսել, 1892 թ., եր. 102։

Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ Ժիրօնդիստները բեֆերենդումը մի լաւ միջոց էին համարում յեղափոխական մայրաքաղաքի առաւելութիւնը ընկճելու և յեղափոխութիւնը խեղդելու համար։ Երբ Լուդովիկոս VI-րդը մահուան դատապարտվեց, նրանք պահանջում էին, որ այդ առիթով ժողովրդային ձայնատուութիւն լինի, հաստատ հաւատացած լինելով, որ այդ եղանակով կարող են նրան փրկել։ «Մօնտանիար»-ների կուսակցութիւնը եռանդուն կերպով կռիւ էր մղում բեֆերենդում մտցնելու այդ փորձի դէմ, համարելով դրան իբրև մի հակայեղափոխական միջոց։ Այդ է պատճառը, որ Լուի-Բլանը իր պօլեմիքական մի գրքուվածքին, որը ուղղված է անմիջական օրէնսդրութեան դէմ, հակառակ Բիւտինգաուզէնի ու Կօնսիդերանի, այսպիսի վերնագիր է դրել. «Այլ ևս Ժիրօնդիստներ չը կան»։ Ծ. Հ.

նեցող ամբողջ ժողովուրդը ընտրութիւնների ժամանակ շատ շուտ է կուսակցական պայքարի մէջ խառնվում։ Թեկնածուները ընտրողներին ներկայանում են ոչ թէ իբրև անհատներ, այլ իբրև որոշ կուսակցութիւնների ներկայացուցիչներ. ընտրողների առաջ պարզում ու բացատրում են իրանց կուսակցական ծրագիրը և առաջարկում են նրանց՝ որոշում կայացնել։

Պարլամենտարիզմի անկեալ շրջաններում, այսինքն՝ երբ պարլամենտում պայքարը մղվում է այնպիսի կուսակցութիւնների միջև, որոնք իրարից չեն տարբերվում արժատապատկէս ու չեն պայքարում իրանց սկզբունքային պահանջները իրականացնելու, այլ միմիայն տիրապետող դիրքի հասնելու համար, այդպիսի շրջաններում, ասում ենք, այն բոլոր աննշան տարբերութիւնները, որ թեկնածուները ներկայացնում են ընտրողներին, կամենալով իրանց հակառակորդների միջև եղած տարբերութիւնը պարզել, անշուշտ, միայն շատախտանութիւն են. այդ դէպքում ընտրողական պայքարը չի կրթում ընտրողներին, այլ միմիայն թիւրիմացութիւնների մէջ է գցում նրանց։

Բայց ընտրողական պայքարը բոլորովին այլ բան է դառնում, երբ հրապարակի վրա հակադիր շահեր են դուրս գալիս, այսինքն՝ մեր ժամանակներում և հէնց այն երկիրներում, ուր սոցիալ-դեմոկրատիան է հրապարակ գալիս։ Սա անհաշտ հակառակութեան մէջ է գտնվում

բոլոր կուսակցութիւնների հետ, և նրա ամենաէական շահերը ստիպում են նրան այդ հակառակութիւնը իր ամբողջութեամբ պահպանել։ Շատ բնական կերպով անհրաժեշտութիւն է դառնում, որ ընտրողական պայքարը աւելի ու աւելի կարևոր սկզբունքների համար մղվող պայքար դառնայ. ամենուրեք, ուր հրապարակ է գալիս սոցիալ-դեմոկրատիան, ժողովուրդը նոր գաղափարների հետ է ծանօթանում և նա ստիպվում է անհրաժեշտօրէն նրանցով զբաղվել։

Բայց խոշոր հակառակութիւնների զարգացումը նպաստում է և այն բանին, որ մանրամունր տարբերութիւնները, երբեմն նոյն իսկ միևնոյն դասակարգի մէջ գանազան պրօֆեսիաների ու խաւերի միջև եղած տարաձայնութիւնները՝ առանձին վոքրիկ և ժամենակ շահերը յետ են մղվում աւելի մեծ, երկարատև և ընդհանուր շահերի առաջ։ Նպաստելով պարլամենտական, մանաւանդ ընտրողական պայքարին այն բոլոր դէպքերի ժամանակ, երբ այդ պայքարը իրանց շահերով միմեանցից բաժանված դասակարգերի կուիւ է ներկայացնում, նրանք՝ խոշոր հակառակութիւնները միւս կողմից նպաստում են կուռ դասակարգերից ամեն մէկի մէջ եղած առանձին տարրերի միմեանց հետ միանալուն։ Դասակարգային խոշոր հակառակութիւնները ամենազօրաւոր միջոց են դասակարգային գիտակցութիւնը զարթեցնելու և ամրացնելու համար. նրանք զօրաւոր միջոց են պրօլետարներին մէկ դրօշակի տակ համախմբելու, նրանց մէջ էնտուզիազմ զարթեցնելու և նրանց լայն նպատակներով ոգևորելու համար. վերջապէս, նրանք մի զօրաւոր միջոց են պրօլետարներին ստիպելու, որ նրանք սեղմված շարքերով կուի դուրս գան յանուն այդ նպատակների։

Այսպիսով ընտրողական շարժումը նպաստում է ժողովրդի կուսակցութիւնների բաժանվելուն, այսպիսով նա մի զօրաւոր լծակ է դառնում թէ կազմակերպութեան ու դիսցիպլինայի և թէ մասսաներին կրթելու ու պրօպագանդայի համար։ Ընտրողական պայքարի այդ կողմը այնպիսի մեծ նշանակութիւն ունի, որ գլխաւորաբար հէնց դրա համար բանւորական կուսակցութիւնը ամենավճռական կերպով ընդհանուր ընտրողական իրաւունքի կողմնակից է հանդիսանում, մինչև իսկ այնպիսի երկրներում, որտեղ պարլամենտը ոչ մի պարապայում վճռողական դերծօն չէ հանդիսանում և շատ համեստ դեր է կատարում կառավարութեան համեմատութեամբ, և որտեղ հետևապէս պարլամենտը կարող է շատ քիչ դրական աղդեցութիւն ունենալ օրէնսդրութեան և պետութեան վարչական գործերի վրա։ Բայց և հէնց այդ պատճառով էլ բուրժուազական կուսակցութիւնները մի առանձին վախ են զգում ամեն մի ընտրողական պայքարից այն բոլոր երկրներում, ուր զօրեղ բանւորական շարժում

կայ և ուր բանւորները օրինական հնարաւորութիւն ունեն ընտրութիւններին մասնակցելու։

Անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնը ճիշտ հակառակ կերպով է ազդում։ Այս պարագայում ժողովուրդը հրաւիրվում է իր քուէն տալու ոչ թէ քաղաքական ու սոցիալական փովոխութիւններ անելու նպատակով մշակված ամբողջական ընդարձակ ծրագրի համար, այլ միմիայն այս կամ այն մասնաւոր կառավարչական միջոցի կամ առանձին օրինագծի մասին իր կարծիքը յայտնելու համար, և հէնց այդ պատճառով էլ քէարկութեան ենթարկվող օրինագիծը պէտք է համաձայնութեան մէջ դրված լինի հասարակութեան ու պետութեան մէջ եղած ոյժերի յարաբերութեան հետ, եթէ ցանկանում են, որ օրինագիծը գործնական նպատակների ծառայի, այլ ոչ թէ միմիայն դեմօստրացիայի նիւթ դառնայ։

Վերևում մենք արդէն նկատեցինք, որ օրէնքը սովորաբար կոմպրոմիսի հետևանք է լինում։ Նոյնը կարելի է կրկնել և այս դէպքում, երբ քաղաքական բեմի վրա հրապարակ են գալիս այնչափ շատ կուսակցութիւններ, իսկ հին բուրժուազական կուսակցութիւնները այնչափ անջատված են միմեանցից։ Շատերը պարլամենտական դաւաճանութիւնը այդ՝ օրէնսդրական գործունէութեան հետ կապված՝ կոմպրոմիսներ անելու անհրաժեշտութեան հետևանք են համարում։ Մենք գտնում ենք, որ դա չափազանցութիւն է։ Չէ՞ որ կուսակցութիւնները պարլամենտի համար ընտրում են իրանց ամենահեռատես ու փորձված քաղաքագէտներին. այս վերջիններս կոմպրոմիս անելիս սովորաբար շատ լաւ են հասկանում, թէ ինչ են անում իրանք. կոմպրոմիսը նրանց սխալանքի մէջ չէ գցում և չէ խախտում նրանց սկզբունքային հայեցակէտը։

Եթէ օրինագծերի առիթով կոմպրոմիսներ տված ժամանակ թուլամորթութիւն ու սկզբունքի պակասութիւն են երևան գալիս, այդ դեռ ոչինչ չէ ապացուցանում, որովհետև այդ հատկութիւնները առաջ էլ գոյութիւն ունէին։ Կոմպրոմիսը չէ որ դրանց ստեղծեց, այլ նա միմիայն երևան հանեց նրանց։

Անմիջական օրէնսդրութեան կողմնակիցները այլ կերպ են նայում այդ խնդրի վրա։ Բայց օրէնքների քուէարկութիւնը ամբողջ ժողովրդի ձեռքը յանձնելով, նրանք կրակից դուրս գալով բոցերի մէջ են ընկնում, որովհետև այդ ոչ այլ ինչ է նշանակում, եթէ ոչ՝ դաւաճանութեան պատճառը պարլամենտից ժողովրդի մէջ տեղափոխել։ Առանց կոմպրոմիսի օրէնսդրութիւն չէ կարող լինել. բայց մասսաները, որոնք մասնագէտ-քաղաքական գործիչներից չեն կազմված, իսկական պարլամենտական քաղաքականագէտներից շատ աւելի շուտ սխալանքների մէջ կը կնեն և ուղիղ ճանապարհից կը շեղվեն։ Եթէ կոմպրոմիսը իրապէս անբարոյականացնող ազդեցութիւն է անում օրէնքներ քուէարկելու ժամանակ, այդ պարագայում անմիջական ժո-

ղովրդային օրէնսդրութեան օրով այդ ազդեցութիւնը շատ աւելի մեծ չարիք պիտի բերէր, քան պարլամենտական օրէնսդրութեան օրով։

Կասկածից դուրս է, սակայն, հետևեալը. հարիւր թէ կարիլի է արդի օրէնսդրութիւնից այնպիսի գործնական պահանջ անել, ինչպիսին կարող էր յատուկ լինել բացառապէս մի որևէ կուսակցութեան։

Այսպիսով, երբ ոչ թէ ամբողջ կուսակցութեան ծրագիրը, այլ միմիայն առանձին օրէնքներն են առաջարկվում ժողովրդին ընդունելու կամ մերժելու համար, այն հետեւանքն է միայն ստացվում, որ բոլոր այդ օրէնքով շահագրգռված առանձին կուսակցութիւնները, որոնք մինչ այդ ժամանակ շատ էլ թշնամաբար էին վերաբերվում միմեանց, յանկարծ սկսում են միևնոյն ուղղութեամբ աշխատել և մինչև իսկ, մի յայտնի աստիճան, ձեռք-ձեռքի տուած ընթանալ։ Կարելի՞ է միթէ յուսալ, թէ այդ ճանապարհով աւելի հեշտ կը լինի լուսաւորել մինչ այդ ժամանակ անտարբեր ճաշած մասսաները։ Անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնը ձգտում է ոչ թէ նպաստելու, այլ խանգարելու ժողովրդին կուսակցութիւնների բաժանվելուն. նա ամէն անգամ նորից ու նորից միմեանց է ժամանցնում բոլորովին հակառակ ուղղութեան կուսակցութիւնները։ Միևնոյն ժամանակ նա խանգարում է, որ միևնոյն կուսակցութեան անդամները աւելի ու աւելի սերտ կապվեն միմեանց հետ։ Ոչ թէ որոշ մօմենտի պա-

հանջները, ոչ թէ կուսակցութեան կողմից առաջարկված առանձին հարցերի մասին արտայայտված կարծիքը, այլ վերջնական նպատակներն են, որ նպաստում են քաղաքական կուսակցութիւններին խտացնել իրանց շարքերը։

Ամեն մի կուսակցութեան մէջ էլ պատահում է, որ նրա անդամները միմեանցից տարբերվեն, թէ իրանց հեռատեսութեան աստիճանով, թէ տեմպերամենտով, շահերով, տրադիցիաներով, և այլն, և դրա հետևանքը այն է լինում, որ նրանք բազմաթիւ հարցերի վերաբերեալ տարբեր հայեացքներ են ունենում։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ կարծիքների այդ տարբերութիւնները կարող են միմիայն մօտակայ խնդիրներին վերաբերվել, այլ ոչ թէ վերջնական նպատակներին ու այն սկզբունքներին, որոնցով գլխաւորաբար պէտք է օգտվել այդ նպատակներին հասնելու համար։ Այդ աստիճան միմեանցից տարբեր տարրերին մէկ կուսակցութեան մէջ համախմբելը անմտութիւն կը լինէր, առանց այդ էական կէտերի վերաբերեալ համախոհութիւն ստեղծելու։

Կարծիքների տարաձայնութիւն, ինչպէս որ արդէն ասված է, միշտ եղել է միևնոյն կուսակցութեան անդամների մէջ. երբեմն այդ տարբերութիւնները սպառնական աստիճանների են հասնում։ Բայց նրանք այնքան աւելի նուազ են սպառնում կուսակցութեանը բաժանումների ենթարկվելու, որչափ աւելի ուժեղ է նրա անդամների մէջ իրանց ընդհա-

նուր մեծ նպատակի գիտակցութիւնը ու որչափ աւելի է այդ նպատակը ոգևորում նրանց. այնպէս որ մօմենտի պահանջներն ու շահերը յետ են մղվում այդ մեծ նպատակի առաջ։ Բանւորական կուսակցութեան համար այդ տեսակէտից էլ անգնահատելի է հանդիսանում ընտրողական պայքարը, որը այդ կողմից թէ ոգևորիչ և թէ կրթիչ աղդեցութիւն է գործում։

Անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնը ճիշտ հակառակ տենդենցիա ունի. նա, ընդհանուր սկզբունքային խնդիրներից մարդկանց հետաքրքրութիւնը հեռացնելով, կենտրոնացնում է նրանց մասնաւոր կօնկրէտ խնդիրների վրա։ Որչափ խիստ է արտայայտվում այդ տենդենցիան, այնչափ աւելի զօրաւոր կերպով է նա խախտում իւրաքանչիւր կուսակցութեան մէջ եղած սերտ համախմբուժը, գոնէ, այդ խնդիրներից մի քանիսի վերաբերեալ։ Իսկ այն վիճաբանութիւնները, որոնք ընդհանրապէս տեղի են ունենում միայն կուսակցութեան սահմանների մէջ, այժմ փոխադրվում են ժողովրդային մասսաների և այնպիսի խաւերի մէջ, որոնք դեռ նոր են սկսում կուսակցութեան հետ շփվել, և որոնք, բօզէական տարաձայնութիւնների պատճառով, շատ հեշտութեամբ կարող են անջատվել կուսակցութիւնից։

Անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնը կարող է միայն աղանդաւորութիւնն ուժեղացնել, որը միակողմանի կերպով կողմնակից է հանդիսանում այս կամ այն օրէնքի, այլ ոչ թէ կուսակցութեան օրգանիզմը ամրացնել։ Եթէ հնարաւորութիւն լինէր ներկայացուցչական սիստեմը փոխարինել անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնով, այն ժամանակ բոլոր կուսակցութիւնները կը կազմալուծվէին։ Դրա հետ համաձայն էին և այդ կարգի օրէնսդրութեան կողմնակիցներն էլ, որոնք մինչև իսկ այդ բանը ժողովրդային օրէնսդրութեան առաւելութիւններից մէկն էին համարում։ Սակայն, գործը, ի հարկէ, այդպիսի կազմալուծութեան չի հասնի, որովհետև օրէնսդրութիւնը ժողովրդի մէջ տեղափոխելը ընդհանրապէս անհնարին է։ Բայց բեֆերէնդումն ու նախաձեռնութիւնն էլ այն ձևով, ինչպէս որ Շվէյցարիայում է, որոշ պայմանների մէջ, կարող են սաստիկ արգելք հանդիսանալ կուսակցական հակառակութիւնների սուր կերպարանք ստանալուն մի կողմից, և կուսակցութեան անդամների միմեանց հետ սերտ կապվելուն ու դիսցիպլինայի ենթարկվելուն միւս կողմից։

Բայց այդ բանը բոլորովին ձեռնտու չէ բանւորական կուսակցութեան համար։ Միւս կուսակցութիւնները կարող են կշեռքի նժարի վրա գցել իրանց առանձին անդամների հարստութիւնը կամ ազդեցութիւնը։ Իսկ սոցիալիստական կուսակցութիւնը կարող է նշանակութիւն ձեռք բերել միմիայն կուռող պրօլետարիատի ամբողջ մասսայի միացած ոյժերի միջոցով։

Մի քանի շրջաններում հիմա ընդունված է

արհամարհանքով վերաբերվել կուսակցութիւններին։ Դա նորութիւն չէ։ Այսօրվան անարխիստական և միւս սոցիալիստական գրականութիւնն էլ կրկնում է միայն այն, ինչ որ տքնում էին հաստատել երկու սերունդ մեզանից առաջ, բայց այդ բանը շատ աւելի պարզ կերպով ու առանց էֆֆեկտների և առանց ինքնահաւանութեան, աշխատում էին հաստատել ուտոպիստ-սոցիալիստները։ Նոյն բանը սկսեցին ընդգծել յետոյ և ժողովրդային օրէնսդրութեան գաղափարի առաջին կողմնակիցները։

Այդ հայեացքը հասկանալի էր այն ժամանակ, երբ քաղաքականութեան մէջ տիրապետում էին բացառապէս բուրժուազական կուսակցութիւնները, (բացի Անգլիայից, որտեղ հակայական կերպով աճում էր չարտիստների շարժումը), և երբ դասակարգային կռիւը դեռ ևս աղօտ կերպով էր էմանսիպացիայի լծակը համարվում։ «Կոմմունիստական Մանիֆեստի» տեսակէտից այդ հայեացքը անմիտ է։

Բանւոր դասակարգը իր ամբողջութեամբ կարող է մի զօրաւոր ու մշտական կազմակերպութեան մէջ համախմբվել միմիայն իբրև քաղաքական կուսակցութիւն։

Զուտ տնտեսական կռիւը անմիջականապէս միշտ շօշափում է միայն մի կամ մի քանի պրօֆեսիաներ և այն էլ մեծ մասամբ այնպիսի պրօֆեսիոնալ միութիւնների անդամների շահերը, որոնք ապրում են մի սահմանափակ շրջանի մէջ՝ քաղաքում կամ գաւառում։ Ամեն մի այդպիսի կռիւ ինքնըստինքեան դեռ ևս դասակարգային կռիւ չէ։ Այդ դէպքում հարցը ամենից առաջ ոչ թէ ամբողջ բանւորական դասակարգի շահերի մասին է, այլ միմիայն արդիւնագործութեան մի որևէ որոշ ճիւղում աշխատող բանւորների մասնաւոր շահերի մասին։

Այն բոլոր տեղերում, ուր բանւորներին չէ աջողվում մի ինքնուրոյն բանւորական կուսակցութեան մէջ համախմբվել, ուր նրանք սահմանափակվում են զուտ տնտեսական կազմակերպութիւններով, պրօֆեսիոնալ միութիւններով ու ինքնօգնութեան կասսաներ հիմնելով, այդպիսի տեղերում, ասում ենք, առանձնայատուկ պրօֆեսիոնալ շահերն են, որ ամենից աւելի առաջնակարգ տեղ են բռնում, իսկ դասակարգային գիտակցութիւնը չէ արթնանում։ Այն բանւորը, որը իրան իր դասակարգի անդամ չէ զգում, այլ միմիայն իրան մի գրաշար, մի գլխարկ կարող կամ մետաղագործական գործարանի մի բանւոր է համարում, որը սովորել է միմիայն գրաշարների, գլխարկ կարողների կամ մետաղագործ բանւորների շահերը պաշտպանել, կարող է միևնոյն ժամանակ շատ արմատական հայեացքներ ունենալ զանազան հարցերի վերաբերեալ, բայց նրա արմատական լինելը միշտ ձևում է մի այնպիսի անպտուղ զեվզեկութիւն, ինչպէս և մանր բուրժուազիայի վայրենացած ներկայացուցչի զեվզեկութիւնը, որը սիրում է թունդ յեղափոխական երևալ ամեն տեղ։ Այդպիսի բանւորի գործունէութիւնը չէ կարող

ազդեցութիւն ունենալ հասարակական յարաբերութիւնների փոփոխութեան վրա, այդ խօսքի իսկական իմաստով։

Մինչդեռ զուտ տնտեսական կազմակերպութիւնները, իբրև միմիայն պրօֆիսիօնալ կազմակերպութիւններ, կարող են իրանց նպատակների իրագործութիւնը փնտրել տիրող արտադրական յարաբերութիւնների սահմանների մէջ, բանւորական կուսակցութիւնը, իբրև ամբողջ բանւորական դասակարգի դասակարգային շահերի ներկայացուցիչ,—եթէ սկզբում նա նոյն իսկ սոցիալիստական տեսակէտի վրա կանգնած էլ չը լինի,—վաղ կամ ուշ գալիս է այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է կռիւ մղել այդ արտադրական յարաբերութիւնների դէմ, որոնց տիրապետութեան օրով անհնարին է բանւոր դասակարգի ազատութիւնը։ Ինչպէս որ զուտ պրօֆեսիօնալը ինքնըստինքեան պահպանողական է, որչափ էլ նա արմատական հայեացքներ յայտնի, այնպէս էլ ամեն մի ինքնուրոյն բանւորական կուսակցութիւն, իր էութեամբ, միշտ առաջադիմական է, մինչև իսկ այն դէպքերում էլ, երբ նա «չափաւոր» է, թէ իր գործունէութեան եղանակով և թէ նոյն իսկ իր անդամների գիտակցութեան աստիճանով։

Այդ պատճառով էլ մենք ոչ մի առիթ չունենք ցանկանալու, որ «կուսակցութիւնները հալվեն ազգի մէջ», ինչպէս որ այդ պահանջում է կօնսիդերանը։ Եւ ինչ չափով որ անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնը

ազդում է այդ ուղղութեամբ, նոյն չափով էլ նա կարող է միայն արգելք հանդիսանալ բանւորական դասակարգի ազատագրութեան ձգտումներին։

Մենք չենք ուզում, սակայն, սրանով ասել, թէ անմիջական ժողովրդային օրէնսդրութիւնը, (անշուշտ, նրա այն ձևերի մասին է խօսքը, որոնց տակ նա կարող է ընդհանրապէս իրականութիւն ստանալ), ինչ պայմանների մէջ էլ ուզում է թող լինի, անպէտք է արդի հասարակութեան համար, դասակարգային ու կուսակցական հակասութիւնների հասարակութեան համար։ Այդպէս ասել, կը նշանակէր՝ տաշտի ջուրը նետելով մանուկն էլ հետը դուրս շպրտել։ Մեր կարծիքով, բերած ապացոյցներից հետևում է միայն այն, որ բեֆերենդումի ու նախաձեռնութիւնը իրանցից մի այնպիսի դեմօկրատական հաստատութիւններ չեն ներկայացնում, որպէսզի բանւորական դասակարգը պէտք զգար դրանց ցանկանալու ամեն տեղ և ամեն պայմանների մէջ։ Բեֆերենդումն ու նախաձեռնութիւնը կարող են երբեմն շատ օգտակար լինել, թէև չը պէտք է նրանց օգտակարութեան նշանակութիւնը չափազանցել, բայց մի այլ անգամ էլ նրանք կարող են և շատ նշանաւոր ջնաս հասցնել։ Այդ պատճառով էլ ոչ-ամեն տեղ և ոչ էլ ամեն պայմանների մէջ պէտք է ձգտել բեֆերենդում ու նախաձեռնութիւն մտցնել, այլ միմիայն այնպիսի տեղերում, ուր որ առաջուց յայտնի նպաստաւոր պայմաններ կան դրա համար։

նող դասակարգերը չը պէտք է այդ ստուերը զրկեն իր ոյժերի ճնացորդներից. դա ինքնասպանութիւն կը լինէր: Նրանք այդպիսով մեծ ծառայութիւն մատուցած կը լինեն կառավարութեանը: Նրանց պարտականութիւնը աւելի նրա մէջ է կայանում, որ կենդանութիւն տան այդ ստուերին, նրա մէջ արիւն լցնեն և ընդունակ դարձնեն կառավարութեանը դիմադրելու: Երբ Շվէյցարիայի մեր կուսակցական ընկերները եռանդուն կերպով անմիջական օրէնսդրութեան կողմնակիցներ են հանդիսանում, դա միանգամայն հասկանալի է մեզ համար: Նպաստաւոր պայմանները դրա համար ոչ մի տեղ այնպիսի զարգացման չեն հասել, ինչպէս շվէյցարական դաշնակցութեան մէջ: Եւ արդի մօմենտի պայմանները այնտեղ ուղղակի հէնց այդպիսի գործունէութիւն են թելադրում: Շվէյցարիայում, իր տեսակի մէջ, դասակարգերի հաւասարակշռութիւն է ստեղծվել. ոչ մի դասակարգ ոյժ չունի իր հաժար մի որևէ մեծ գործ ձեռնարկելու: Միւս կողմից, մեր շվէյցարական ընկերները այնքան բաղդաւոր են, որ քաղաքական իրաւունքների տեսակէտից նրանք, իսկապէս, արդէն ունեն այն բոլորը, ինչ որ կարելի էր պահանջել:

Եթէ նրանք կամենում են դրական կերպով աշխատել, եթէ ցանկանում են դրական գործունէութիւն ունենալ, եթէ նրանք չեն ուզում իրանց գործունէութիւնը սահմանափակել միմիայն ագիտացիայով ու ցոյցեր կազմակերպելով, այն ժամանակ նրանք կա-

րող են միմիայն այստեղ կամ այնտեղ մի քանի փոքրիկ բարեկարգութիւններ ու զարգացրանքներ մտցնել այն քաղաքական շէնքի մէջ, որը, ընդհանուր առմամբ, արդէն պատրաստ է:

Բայց չէ կարելի միևնոյն բանը ամենքի համար էլ ցանկանալ: Մենք՝ գերմանացիներս ու աւստրիացիները բոլորովին ուրիշ անելիք ունենք: Մենք պէտք է մի մեծ և անողոք կռիւ մղենք միլիտարիզմի դէմ: Այդ կռիւ ամբողջ ծանրութիւնը համարեա թէ միմիայն սօցիալ-դեմօկրատիայի վրա է ընկնում: Բուրժուազիան արդէն վաղուց է, որ պարլամենտը չէ համարում մի այնպիսի կատարելագործված գործիք, որը միշտ իրան հաւատարիմ մնար և որի միջոցով նա կարողանար իր դասակարգային տիրապետութիւնը պահպանել: Նա զգում է, որ անհնարին է բանւոր դասակարգին հեռու պահել պարլամենտից, նա հասկանում է, որ արդէն մօտ է այն ժամը, երբ աւստրիական բանւոր դասակարգն էլ ընդհանուր ընտրողական իրաւունք և պարլամենտ ձեռք կը բերի *): Նա զգում է, որ պարլամենտարիզմի իրագործութիւնը կոչնչացնի իրան, ուստի նա իր համար փրկութիւն է որոնում ոչ թէ պարլամենտարիզմի մէջ, այլ սրա հակադիր միլիտարիզմի մէջ:

50-ական և 60-ական թւականներին, երբ բուրժուազիան անսահման կերպով թագաւորում էր պարլամենտներում,—ինչ չափով

*) Ինչպէս յայտնի է, հրանք արդէն ձեռք բերիցին այդ իրաւունքը այս տարի: Ծ. Թ.

որ այն ժամանակներում կային դրանք,—կարելի էր մտածել, թէ քաղաքականապէս տիրապետելու համար մղված կռիւը պէտք է ձգտի պարլամենտարիզմը ոչնչացնելու։ Իսկ հիմա աւելի ու աւելի ակնյայտնի է դառնում, որ—գոնէ, արևելեան Եւրոպայում—այդ կռիւը մղվում է յանուն պարլամենտարիզմի և ընդդէմ միլիտարիզմի։

Րէն գետից դէպի արևելք գտնվող եւրոպական բուրժուազիայի իրական թուլութիւնն ու վախկոտութիւնը մարդուն ենթադրել է տալիս, որ բիւրօկրատիական-զինուորական թագաւորութիւնը անկարելի պիտի լինի ընկճել նախ, քան բանւոր դասակարգը չը կարողանայ քաղաքական իշխանութիւն ձեռք բերել, և որ այդպիսի անմիջական հետևանքի կարող է հասցնել զինուորական աբսօլիտիզմի անկումը։

Մի բան միայն անկասկած է. մինչև պրօլետարիատի յաղթութիւնը, թէ Գերմանիայում ու Աւստրիայում և թէ եւրոպական միւս պետութիւններից շատերում, երբէք չեն կարող իրականութիւն ստանալ ոչ այն նախնական պայմաններր, որոնք անհրաժեշտ են ժողովրդային օրէնսդրութեան յաջողութեան համար, և ոչ էլ պէտք եղած դեմօկրատական հաստատութիւնները։ Ժողովրդային օրէնսդրութիւնը, գուցէ, կարողանայ ամենից առաջ մի որոշ նշանակութիւն ստանալ Միացեալ Նահանգներում, Անգլիայում և անգլիական կօլօնիաներում։ Որոշ պայմաններում նա կարող է նշանակութիւն ստանալ և Ֆրանսիայում, իսկ մեզ՝ արևելեան եւրոպացիներիս համար, նա միմիայն ապագայ պետութեան ինվենտարին, պահեստի պաշարին է վերաբերում։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԵԱՄՆԻԿՅԱՆԻ
Անվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0198619